

Գ. ՄԻՐՈՇՆԵՒԳԵՆԿՈ

ՅԵՐԻՑԲԱՆԱԿ



ՊԵՏՂՐԱՏ

891.745
Մ-76



30 MAY 2011



Գ. ՄԻՐՈՇՆԻԶԵՆԿՈ

891.71 Մ.

Մ-76

ԱԿ

ՅԵՐԻՏԻԱՆԱԿ

02 JUL 2013

9309



3403
39

ՌՈՄԵՆ ՌՈՒԼԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ «ՅԵՐԻՏԻԱՆԱԿ»
ՎԻՊԱԿԻ ՄԱՍԻՆ

Ձեր այս փոքրիկ գիրքը, վորը իմ կինը մեծագույն հետաքրքրությամբ կարդաց և բովանդակությունը պատմեց ինձ (նա մի քանի տեղեր էլ թարգմանեց), շատ հուզիչ է: Յես նույնիսկ պետք է ասեմ, վոր չնայած այդ գիրքը յերեխաների համար է, սակայն նա ձեր յերկրում տեղի ունեցած քաղաքացիական կռիվների մասին իմ կարդացած գրքերի մեջ ամենահուզիչ գրքերից մեկն է (հարկավ, յես ծանոթ եմ այդ թեմայի շուրջը գրված այն գրքերին միայն, վորոնք թարգմանված են ֆրանսերեն, այնպես վոր յես այդ ուղղությամբ կարող եմ դատել վորչ լրիվ կերպով): Այդ փոքր գիրքը կրկին անգամ ցույց է տալիս մեզ, թե ձեր յերկրում ինչպես է ստեղծվում նոր մարդկություն՝ գիտակից և ազատ: Վերջին եջերը, վորտեղ դուք պատմում եք այն մասին, թե այնուհետև ինչ պատահեց «առաջ գնալ» ցանկացող ձեր ընկերների ու անձամբ ձեզ հետ, ամենամեծ բավականությունը պատճառեց ինձ:

Սեղմում եմ ձեր ձեռքը, թանկագին բնիկեր, և ցանկանում ձեզ հաջող աշխատանք, առողջություն և բախտավորություն:

Ռոմեն Ռոլլան

Վիլնեվ. 19 մարտ 1936 թ.

ԵՇԵԼՈՆՆԵՐՆ ԱՆՅԱՆ

Յերկաթուղու գլխավոր մագիստրալի վրա, համարյա կառամատույցի մոտ, փայլատակեց նարնջադույն մի բոց, տրաքեց ու խեղդվեց գորշադույն ծխի մեջ: Խուլ ու ծանր հարվածեց պայթյունը: Այս ու այն կողմ թռան քարերը, ավազը. ճթճթացին կայարանի ապակիները:

Կայարանից վոչ հեռու, գինվորական պետքերին ծառայող գծերի վրա, տախտակյա յեւրանով շտապ վագոններն եյին քշում նիհար ու քոսոտ ձիեր: Ձիերը փնչացնում, խրխնջում եյին, դուփում սմբակներով ու յերկչոտ նայելով չորս կողմ՝ մտնում եյին վագոնները:

Բաց պլատֆորմների վրա բարձում եյին թնդանոթներ, շարժական խոհանոցներ, յերկանիվ սայլակներ:

Հենց կայարանի մոտ արկը շառաչյունով պոկեց ուլսը, ցրիվ տվեց փուխը հողն ու կոճերի սևացած կտորտանքը:

Գրասենյակից դուրս թռավ կայարանապետը: Նա գիտեց սեմաֆորը և գլուխը ձեռների մեջ առնելով՝ յետ վագեց գրասենյակ:

Կարմիր բանակայինները խոտ եյին բարձում. նրանք յերկու-յերեք հոգով միասին բռնում եյին ձեռքերին չենթարկվող հակերը, ջղայնությամբ շուռ

ու մուռ տալով հրհրում եյին ու հուպ տալիս պլատֆորմի վրա:

— Ա՛հ, սատանան տանի, ինչպես ել քոր ե գալիս, — ասաց մի կարմիր բանակային, վոլորելով վոտքի փաթաթանը:

— Ծխի՛ր, յեղբայր, — առաջարկեց նրան հարեվանը՝ գրպանից հանելով մախոբկան. ծխի՛ր, կռիվը՝ կռիվ, բայց տեղը վոր յեկել ե, ծխի՛ր:

— Իսկ դու գիչերն ե՞լ ես ծխում:

— Ծխում եմ:

— Ուղեկալումն ե՞լ ես ծխում:

— Ծխում եմ: Միայն թեվքումս, կամ թե չե՛ շինելիս տակ: Առանց ծխելու չեմ կարող: Են ըոպեյին գլուխս ել կտրեն, կծխեմ:

Հանկարծ ուղիղ հրապարակի վրա՝ եչելոնների մոտ ընկավ ումբը: Կարմիր բանակայինները կպան գետնին: Ռումբը պայթեց: Ձիերը վրնջացին:

— Ո՛ր, զզվելիներ, — ասաց կարմիր բանակայինը՝ բարձրանալով գետնից:

— Թխում են, ախպե՛ր... գոնե մի քսան արկ ել ունենայինք, մենք նրանց...

— Այո՛, յեթե ունենայինք... ասաց հարեվանն ու փովեց քարերի վրա: Նրա ձեռքից պապիրոսը վայր ընկավ:

Յերկար նայեց կարմիր բանակայինն ընկերոջ գլխակին, հետո լուռ բարձրացրեց, շալակեց ինչպես խոտի հակ և սարավ նրան սանիտարական վագոնը:

Կառամատույցում քսանի չափ կարմիր բանակայիններ շրջապատել եյին կայարանապետին ու պահանջում եյին ուղարկել եչելոնները:

— Իրավունք չունես եչելոններն ուշացնել:

— Մի անգամ վոր ըռխին ծեփեն, տես ի՛նչպես ձանապարհն իսկույն շինել կտա:

Բայց կարմիր գլխարկով փոքրիկ մարդը միայն ուսերն եր թոթվում ու միշտ միևնույնը կրկնում:

— Ընկերներ՛ր, յես չեմ կարող զինվորական եչե-
լոններն ուղարկել: Բոլոր ճանապարհները բռնված
են: Հենց սեմաֆորի մոտ արկերը քանդել են ճանա-
պարհը: Ի՞նչ կարող եմ անել:

Այդ բուպեյին գրասենյակից դուրս յեկավ եչելոնի
հրամանատարը՝ կուրծքը խաչաձևած հնամաշ փոկով:

— Սարտաժ են սարքում եդ կայարանականները,
ընկեր՛ր հրամանատար: Չեն ուղարկում, — գորգոռում
եյին կարմիր բանակայինները՝ նայելով հրամանա-
տարի վրա:

— Իսկ ինչո՞ւ չեն ուղարկում, — հարցրեց հրա-
մանատարը:

Բայց ինչպե՞ս ուղարկեմ, ե՛... բոլոր գծերը փակ
են, — կրկին մըթմըթաց կայարանապետը:

Յեվ իրոք, հենց սեմաֆորի մոտ — այն կողմը,
ինչ ուղղությամբ պետք է ուղարկվեյին եչելոն-
ները, հակառակի պես քանդված ուղիների մոտ կանգ-
նած եր հինգ-վեց ապրանքատար վազոն:

— Իսկ ինչո՞ւ մինչև այժմ վարպետներ չեն կանչ-
ված:

— Չեն լսում ինձ... Խամացել են... Չգիտեմ...


— Իսկ յես գիտեմ, — ասաց հրամանատարը կլու-
րուկ ու բարձր. — արհեստավորները կողնեն մեզ:

— Վոչինչ, փորձեցե՛ք, յեթե կամենում եք, — ասաց
կայարանապետը՝ կկոցելով մի աչքը: Բայց մի
բան դուրս կգա՞ արդյոք: Այնտեղ՝ սեմաֆորի մոտ
ուռվերը քանդել են ուղիը, ապրանքատար վազոնա-
շարը մնացել է կես ճանապարհին... Այստեղինը դեռ
դատարկ բան է, իսկ այնտեղ...

— Այնտեղ ել գործը դժվար չէ, — հանկարծ ամ-
բոխի միջևից վրա բերեց մի յերիտասարդ բանվոր:

Նա վաղուց եր կանգնել կայարանապետի մոտ և
լսում եր նրանց խոսակցությունը:

— Նախ հարկավոր է սեմաֆորի մոտ կանգնած
վազոնները դառնվալից ցած իջեցնել, ապա կանչել



ճանապարհի վարպետին: Յես ել բանվորներին կհա-
վաքեմ: Պետք է նախ ունենալ փոխել: Այլապես բան
չի դուրս գա:

Նա միանգամից շուռ յեկավ և ուր-վոր վազեց:
Կայարանապետը մռայլ հայացքով նայում էր
վարպետի հետևից:

— Ո՞ւր գնաց նա՝ եղ արհեստավորը, — անհան-
գիստ խոսում էին կարմիր բանակայինները: Կզա՞
ելի, թե՞ այլևս չի վերադառնա:

— Կզա, — պատասխանեց հրամանատարը, բայց
յերևում էր, վոր ինքն ել էր կասկածում:

Ռումբերը թափվում էին ջրհորի մոտ: Սկզբում
նրանք շեղվում ու ընկնում էին կայարանի շենքի հե-
տևը, բայց հետո ուղիղ ջրհորի ցեմենտե պատերի
տակ:

— Բերանների համը դիտեն: Յեվ հլա մտքերով
ի՛նչ է անցնում, — ասաց հրամանատարը՝ ցույց տա-
լով ջրհորը կարմիր բանակայիններին:

— Կատարյա՛լ հիմարություն. բայց ինչո՞ւ հա-
մար հենց ջրհորի մոտ, — հարցրեց մի կարմիր բանա-
կային:

— Իսկ այդ նրա համար, վոր ջրհորի մոտ նկա-
տել են մեր դիտողին:

— Ահա թե ի՛նչ...

Թնդանոթային զարկերն սկսեցին ավելի ուժգին ու
ավելի մոտիկից լավել: Ուղում պայթեց շրայնելը:

Մեքենավարը խոժոռ դեմքով դուրս էր նայում
չողեքարչի պատուհաններից ու հայհոյում:

— Սատանան տանի, չողեքարչը պատրաստ է,
իսկ քչել չես կարող:

Այդ միջոցին կայարանի անկյունից դուրս պրծավ
ամբողջովին քրտնած արհեստավորը: Նրա հետևից
արագ քայլում էր կիսասպիտակած ու թիկնեղ մի
մարդ — դա ճանապարհի վարպետն էր — և էլի մի
քանի արհեստավորներ: Բանվորները տանում էին
բրիճանջ, լինգեր, անջատող բանալիներ:

— Ընկե՛ր հրամանատար, այժմ կարմիր բանա-
կայիններ տո՛ւր, — ասաց ճանապարհի վարպետը:

Հրամանատարը նայեց կարմիր բանակայիններին
և համրեց 10-15 հոգի:

Կարմիր բանակայիններն ու վարպետները վազե-
ցին դեպի սեմաֆորը. վազում էին, սայթաքում՝
դիպչելով ունենալին ու քարերին:

— Կարելի չէր և վտառով գնալ, — ասում էր հրա-
մանատարը ճանապարհի վարպետին՝ հասնելով նը-
րան, — բայց յես ունեմ կես եշելոն տիֆով հիվանդ-
ներ ու վիրավորներ, իսկ նրանց թողնել թշնամու քը-
մահաճույքին — հանցադորժություն կլինի: Չեմ
կարող:

— Ի՛նչպես կարելի չէ: Յեթե թշնամիների բան-
դան հասնի նրանց, բոլորին սրախողխող կանի, —
ասաց ճանապարհի վարպետը՝ թեքով սրբելով ճակա-
տի քրտինքը:

— Վոչի՛նչ, կուղարկենք, միայն թե վազոնները
պետք է հեռացնել, — ձայն տվեց հետևից մի արհես-
տավոր:

Մոտեցան սեմաֆորին: Ճանապարհի վարպետը
կցկտուր հրամաններ էր տալիս.

— Քանդե՛լ բոլտերը. վերցնե՛լ ունենալները.
փոխե՛լ կոճը:

Բանվորները հանեցին բոլտերը, ժանգոտած բա-
հերով ցրեցին խիճը և հեռացրին ունի կտորները:
Յերկուսով, յերեքով, վեց հոգով հաղիվ էին կարո-
ղանում ունի կտորները զառիվայրից գլորել ցած:
Աշխատում էին լուռ:

Հանկարծ հենց վազոնների մոտ շրխկաց արկը:
Սպիտակներն էին, այժմ թնդանոթային կրակն ուղ-
ղել էին յերկաթգծի վրա:

Մեկը մյուսի հետևից արկերն սկսում էին ընկնել
հենց կողքներին: Նրանց բեկորները քերծում էին
ճանապարհը, դիպչում սեմաֆորի մոտ կանգնած վա-
զոնների կտուրներին:

Ճանապարհի վարպետն շտապեցնում եր բանվորներին: Նա ինքը զատում եր վագոնները, ինքը շուռու մուռ տալիս վուված ունի կտորը:

— Մի՛ վհառեք, տղե՛րք, — ասում եր նա հանդիստ... Մինչև նրանք այնտեղից նշան բռնեն, մենք արդեն ճանապարհը կարգի կրեքենք:

— Կանենք, — վրա բերեց կարմրատակած յերիտասարդ մի բանվոր, բահով շուռու մուռ տալով քարերը:

— Հեշտ ու սովորական գործ է, — համաձայնեց մյուսը, ձեռքի կռանով ուժգին հարվածելով ունին:

Ծանր կռանը թափով իջնում եր պողպատի վրա, դրնդում ու յետ-յետ ցատկոտում: Թույլ բաղխյունները ունիների վրայով թավալվում էին հեռո՛ւ, հեռո՛ւ:


Վերջապես ունիներն անջատվեցին: Բանվորներն ուսերով հավեցին վագոններին: Վագոնները դժվարությամբ սողացին ներքև: Դեռ քանդված ճանապարհի մեջտեղը չհասած՝ նրանք թեքվեցին կողքի վրա, շուռ յեկան, և ինչպես փայտյա արկղներ, գլորվեցին դառիվայրից ներքև:

Վերևում պայթեց շրապները. կարծես կարկուտ տեղաց. նրանից հետո՝ յերկրորդը, յերրորդը: Հրամանատարն ու ճանապարհի վարպետը տրորում էին ավազով լցված իրենց աչքերը: Կարմիր բանակայիններն ու արհեստավորները լուռ հրհրում էին դեռ գծերի վրա մնացած վագոնները:

Ամեն անգամ, յերբ լավում եր շրապների վրնդվրնդոցը, արհեստավորները տազնապալից նայում էին դեպի վեր, իսկ կարմիր բանակայինները միայն գլուխները կախ էին գցում—նրանք սովոր էին այդ բանին:

Հանկարծ՝ հենց աշխատանքի վայրում շրմվազ շրապներն ու ցրիվ յեկավ:

Բանվորները գլխիվայր գլորվում էին դառիվայրից ներքև. արյունով ցողվել էին անխից սևացած



հողը, ուելսերի կտորներն ու գծերի մոտ աճած՝ չորացած խոտերը:

Իսկ այնտեղ, կայարանի մոտ, ուղիղ կրակի տակ՝ դեռ կանգնած էյին յերկու վազոն հիվանդ ու վիրավոր զինվորներով:

— Ընկերներ՛ք, գործի՛, — ինչքան ուժ ունեք, դուռաց հրամանատարը, — Արհեստավորներ՛ք, այստեղ:

Վերքերը սեղմած՝ արհեստավորները սողալով կրկին բարձրացան թումբը: Ներքևում՝ դատիվայրի տակ մնացել էյին միայն մեռածները:

— Դե՛հ, տղե՛րք, նորից մի անգամ կպե՛ք, — ասաց ճանապարհի վարպետը:

Վերջին վազոնը խուլ զղրղոցով ընկավ կողքի վրա ու գլորվեց ներքև:

Վարպետներն ու կարմիր բանակայիններն սկսեցին գծերն ամրացնել բևեռներով: Միացնում էյին արագ: Շտապում էյին:

Սպիտակները վերջին անգամ բաց թողին նորից մի քանի ուռմբ, բայց կարմիր բանակայինները կանգնել էյին մեկնելու արդեն պատրաստ վազոնաչարի մոտ ու մնաս բարով էյին անում արհեստավորների հետ:

— Մի՛ վհատեք, ընկերներ՛ք, կգանք: Իսկ դուք ել ձեր հերթին ձեռներդ ծալած մի՛ նստեք, — ասում էր հրամանատարը:

— Այդ մասին անհող կացե՛ք, ընկե՛ր հրամանատար, — պատասխանեց նրան ճանապարհի վարպետն ու գլուխը թափահարեց:

Ձինվորական գնացքը, դժվարությամբ վերցնելով անհրաժեշտ արագություն, շարժվեց տեղից՝ առանց սոււրցի: Նրան հետևեց յերկրորդը, յերրորդը: Նրանց հետքերով դանդաղ առաջ շարժվեց և «Կոմունիստ» զրահապատը:

Բլրի հետևից յերևացին սպիտակների փափախները. հեծելազորը, եչելոնների նահանջը քողարկելու համար, արշավում էր դեպի սպիտակները. վազում

էյին նաև հետևակ կարմիր բանակայինները. նրանք առանց կանգ առնելու լցնում էյին իրենց հրացանները:

Կայարանապետը տեղի-անտեղի դուրս էր վազում կռամատույցը ու շիտթված՝ շարժում էր ազդանշանի դրոշները:

Արդեն լավում էյին հրացանային զարկերը. սկզբում սակավ ու մեկ-մեկ, ապա հետզհետե ավելի ու ավելի խտացած ու ճարձատուն:

Թնդանոթային դղրղյունը մերթ հանդարտվում էր, մերթ կրկին ուժեղանում: Արկերն ընկնում էյին սեմաֆորի մոտ, ջրհորի կողքին, կայարանի վրա: Գետնի վրա գալարվում էր թանձր ու դորշ ծուխը:

Յերբ հիվանդներով ու վիրավորներով գնացքն անցնում էր արհեստանոցների մոտով, հրամանատարը դուռաց:

Մնաք բարով, ընկերներ՛ք: Պինդ կացե՛ք: Մենք կգանք:

Իսկ բլրակի ստորոտում անկանոն ժապավենի նման ձգվել էր սպիտակների զորաշղթան: Նա շարժվում էր դեպի կայարան:

Կազակների հեծելազորը սրննթաց անցավ հեղեղատը: Մերկացրած սրերը պտտելով՝ կազակները սլանում էյին զրահապատի հետևից:

Կրակոցներն ավելի ու ավելի թիչ էյին լավում: Կայարանը հանդատացավ:

Կարմիրները նահանջեցին:

3403
39

И Г Л О Т С
Ն Կ Ո Ի Ղ Ո Ի Մ

Յես ընկերոջս՝ Վասիլայի հետ թափառում էյի զինվորական կռամատույցի վրա:
— Վոչ կարմիրներ, վոչ սպիտակներ, — ասաց Վասիլան:



Մի տեղ հանկարծ պայթեց մի կրակոց: Յեւ
շուրջն նայեցի:

Վա՛սկա, ա՛յ Վասկա, տուն պետք է գնալ, դար-
ձյալ մեկը կրակում է:

— Ձե՛, Գրիշկա, ի՞նչ կա տանը, ավելի լավ է՝
գյուղ գնանք, — ասաց Վասկան և վազեց դեպի կա-
յարան:

Կայարանի մուտքի մոտ դրված էր մի ահագին
աղբի արկղ: Վասկան նայեց նրա մեջ, բարձրացրեց
կափարիչը և դժվարութեամբ բարձրանալով ձեռքերի
վրա, ցատկեց արկղի մեջ:

— Ձինվորական պիտույքներ, — կանչեց նա, —
նայի՛ր, Գրիշկա, փամփշտակալ՝ կտորից, գնդացրա-
յին թիթեղներով:

Վասկան մատով ճանկեց գտածը և մինչև գլուխը
բարձրացրեց մի կեղտոտ, յուղոտված փամփշտակալ:

— Դե՛ն գցի՛ր, — ասացի յես: — Նոր լինե՛ր, ելի մի
բան եր, թե չե՛, տե՛ս, ի՛նչ սոսկալի կեղտոտ է:

Վասկան փամփշտակալը շարտեց փողոցի վրա,
մի քիչ ել փորփորեց արկղն ու դուրս յեկավ:

— Դե գնանք, — ասաց նա, ուղղելով ծոծրակին
նստած հոր ահագին գլխարկը:

— Յես գյուղ չեմ գա, արի բարձրանանք են
պետական շենքի կողմը, այնտեղից ամեն բան
տեսնվում է:

— Լավ, բարձրանանք, — համաձայնեց Վասկան:

Մենք ճանապարհ ընկանք դեպի կայարանի կողքին
ընկած աղյուսե մեծ շենքը:

Մեր գյուղի ամենամեծ շենքն էր այդ: Ներքին
հարկում ապրում էր կայարանապետը, իսկ վերևում՝
հեռագրատան ու յերկաթուղային յերթեկուցյան
պետերը: Այս տան կողմից պարզ յերևում էր գյու-
ղը, յերկաթուղին և տափաստանը՝ մինչև Կրուտոյ
սարը:

Յերբ մենք անցնում էինք հրապարակով, Վաս-
կան ինչ-վոր կծկվեց և ասաց.

— Իսկ գիտե՞ս, այնուամենայնիվ սարսափելի յե:
— Յես ինքս ել, յերբ չորս կողմը խաղաղ է, վա-
խենում եմ:

Յերկուսով ել նայեցինք մեր չորս կողմը: Շշուկ
անգամ չե՛ր լսվում: Կարծես ամեն ինչ մեռած էր:

— Մենակ կգնա՞յիր, — հարցրի յես Վասկային:

— Վո՛չ, վոչ մի կերպ:

Մենք անցնում էինք մի փայտյա յերկար ցանկա-
պատի յերկարութեամբ: Հանկարծ յես լսեցի ձիու
դուփյուհ:

— Մազլցի՛ր ցանկապատի վրա, — հրեցի յես
Վասկային:

Հազիվ էինք անցել ցանկապատի այն կողմը,
յերբ նրբափողոցից դուրս թռավ մի ձիավոր և հենց
ուժեղ վազքի ժամանակ ձին կանգնեցրեց կայարանի
պարտեզի յերկաթյա ցանկապատի դռնակի մոտ: Կա-
զակը թեթև ցատկեց ձիուց, սանձերը նետեց ցանկա-
պատի վրա և մտրակը շրխկացնելով կռչկի ճիտքին՝
անհայտացավ յերրորդ կարգի դահլիճի դռների հետև:

— Սպիտակ է, — չչնջաց Վասկան, — ուսաղիքներ
ունի, նայի՛ր:

Մենք յերկուսով ել սեղմվեցինք ցանկապատին և
սկսեցինք նայել նրա լայն արանքներով:

Յերկու կազակ՝ բրեղենոտ կեղտոտ պատղարակի
վրա դրած, կայարանի մուտքից դուրս բերին մի ար-
նաշաղախ մարդու: Նրանց հետևից դուրս յեկավ մի
սպա: Պատղարակի վրա՝ վերավորի կողքին դրված էր
գորշագույն մի շինեկ և կաշվե մի տափակ պայու-
սակ: Վերավորին նետեցին սալահատակի քարերի
վրա: Նա տնքում էր և գլուխն այս ու այն կողմ շուտ
տալով լիզում էր սպիտակ լորձը, վորը ծածկել էր
նրա ուսած բերանը: Նրա գլխարկի վրա յես նկատեցի
մի փոքրիկ աստղ:

— Կարմիր բանակային է... Ընկեր... — հազիվ
լսելի ասացի յես Վասկային:

Կազակը վիրավորի վնասքից հանում եր նրա յեր-
կարծիտ կոշիկը: Կոշիկը դուրս չեր գալիս, և կազա-
կը քանի ուժ ուներ՝ ձգում եր կարմիր բանակայինի
վնասքը: Վերջապես նա հանեց կոշիկները, թեքով
սրբեց նրանց վրայի դորշ փոշին ու տեղավորեց թամ-
բի սլաշուսակում:

— Վո՞րտեղից դտար դու այդ սրիկային, — հարց-
րեց սպան:

— Յետ եր մնացել — գուռաց կազակը և շիփ-շի-
տակ ձգվելով՝ պատվի առավ, — Զրեոոցի մոտ ընկած
եր: Զերդ ազնվություն, թույլ կտա՞ք դատաստանը
տեսնելու, — գլխով արեց դեպի կարմիր բանակայինը:

— Վո՞չ, այդ չի կարելի, — սպասասխանեց սպան,
հետո, մի քիչ մտածելով, սառնասրտությամբ ավե-
լացրեց. — Բայց այնուամենայնիվ, հաշիվը փակեցե՞ք:
Միևնույն բանն է, ի՞նչ պետք է անենք այդ սատկա-
ծին:

Այս ասելով՝ սպան հեռացավ:

Կազակը սպառյանից հանեց ատրճանակը.

— Կսարանի, — ազեկտուր ձայնով ճչաց Վասիան:

— Լռի՛ր, անմիտ, — բարկացա յես նրա վրա:

Կրակոցի ձայնը բռնեց ամբողջ փողոցը: Նրան
հետևեց յերկրորդը: Վիրավոր կարմիր բանակայինը
մի քանի անգամ ցնցվեց ու դադարեց անքալուց:

Մենք ուզում էյինք դնալ վերնատուն, բայց չգնա-
ցինք, այլ տուն վազեցինք: Մեր ականջներում դեռ
դրնդում էյին ատրճանակի կրակոցները: Յես վերև
վազեցի դեպի յերկաթուղային տունը, ուր մենք ապ-
րում էյինք, թափով ձգեցի դուռը: Դուռը փակ եր:
Չորս կողմս նայեցի: Վասիան նույնպես իրենց դռների
առաջ շվարած կանգնած եր և փորձում եր մետաղա-
լարով բացել կողպեքը:

— Ո՞ւր են գնացել սրանք, ե՛: Կարմիրները հետ
չե՞ն հեռացել արդյոք, — հաղիվ լացը զսպելով ասաց
նա:

— Գրի՛չկա, Վա՛սկա, — հանկարծ լսեցի մի ձայն:
Յես յետ նայեցի ու նկուղի դռների մեջ տեսա մորս:
Ծանր դուռը բռնած՝ նա շշուկով կանչում եր մեզ:

Վասիայի հետ միասին նետովեցինք դեպի նկուղը:
Նրա կտուրի վրա դիզել էյին ահադին քանակությամբ
քարեր:

Ո՞ւր էյիր կորել, — հարձակվեց ինձ վրա մայրս,
հենց վոր նկուղի շեմքից ներս մտա: — Դու մեզ
գերեզման կտանես:

Յես լուռ էյի: Մայրս մեր հետևից աղմուկով ծած-
կեց դուռը և շրխացրեց սողնակը:

Մենք սկսեցինք զգուշությամբ իջնել քարե աստի-
ճաններով:

Նկուղը մութն եր, խոնավության հոտ եր փչում:
Ճեղքված պատի արանքում աղոտ վառվում եր յերկա-
թուղային կարճ մոմը:

Թթու կաղամբի, նեխած կարտոֆիլի ու հոտած
ձախնդեղի դարչահոտությունը ծակեց քիթս: Պարենի
այդ ամբողջ պաշարը թազցրել էյին չորս մառանում,
խիչ այդ մառանների առաջ կար մի լայն հրապարակ:
Այստեղ նստել էյին մեր բոլոր տնփորները: Ամեն մի
ընտանիք տեղավորվել եր իր մառանի առաջ:

Վասիայի հաղթանդամ, ամբակազմ ու բարձրա-
հասակ հայրը, արմունկներով կռթնած՝ պառկել եր
ինչ-վոր կոպիտ գործվածքի վրա: Նրա մոտ նստած
եր Վասիայի մայրը:

Նրանք Վասիային վոչ մի խոսք չասացին: Միայն
հայրը տվեց նրան սև հացի մի կտոր:

— Լափի՛ր:

Վասիան նստեց հոր կողքին և սկսեց ազահու-
թյամբ ծամել հացը:

Վասիայի հոր՝ Իլյա Ֆեոդորովիչի դեմուռեմ

նստած եր մի այլ տնվոր՝ գնացքներ կազմող Անդրեյ Իգնատյեվիչ Չեկունովը: Խեղդված չչուկով նա ասում եր.

— Նահանջեցին մերոնք:

— Այո՛, — կամաց ասաց Իլյա Ֆեոդորովիչը, — նահանջեցին:

— Ի՞նչ կլինի մեր հալը:

— Կկախեն:

— Վոչ բոլորին, — ասաց հանկարծ հեռու անկյունում նստած մեկը: Դա յերկաթգծի հեռագրիչն եր: Նա մենակ նստած եր իր նկուղի դռան մոտ՝ պարսկական փոքրիկ մաշված գորգի վրա: Նրա համազգեստ-տուժուրկայի ոճիքն արձակված եր, տեխնիկական դեղին յեղբակով գլխարկն իջել եր կարմրաշեկ հոնքերի վրա:

Հեռագրիչը ձեռքին բռնել եր սև կազմով ինչ-վոր հաստ գիրք: Նրա աջ ձեռքն անընդհատ դողդողում եր, իսկ մեծ մատով կազմի վրա ինչ-վոր ազդանշաններ եր անում:

— Ասում ես՝ վո՞չ բոլորին, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը, — դե, իհարկե, վոչ բոլորին: Ահա յես, որինակի համար, քո կողքին կախվել ել չեմ կամենում:

Հեռագրիչն ինչ-վոր անհասկանալի բան փրնթփրնթաց:

Այդ ժամանակ դուռը դրսից պինդ քաշեցին:

— Ո՞վ ե, — ազազակեց Իլյա Ֆեոդորովիչը, վոտքի կանգնելով:

— Շուտ բաց արա՛:

Յես ճանաչեցի հորս ձայնը:

Նա ներս ընկավ նկուղը հարբածի նման և անմիջապես նստեց դեռնին:

— Կայարանումն եյի: Ա՛յ թե ինչե՛ր են կատարվում այնտեղ, սարսափելի յե տեսնել: Իմ աչքի առաջ՝

յերեք կարմիր բանակայինի սրախողխող արին: Աչխատում են ինչպես մսագործներ... .

Վասիլայի մայրը ճչաց: Հեռագրիչ Սոմովը ապշորեն նայեց հորս վրա և կրկին ուշադրությունը հանեց գրքին: Չեկունովն անհանգիստ բարձրացավ ու կրկին նստեց:

Այս յերեկո վոչվոք այլևս վոչինչ չխոսեց:

Յերեք որ մենք նկուղից դուրս չեյինք գալիս:

Շիուրոն յերեք որ իր կազակներին հանգիստ եր տվել:

Խփի՛ր, ով կպատահի. կողոպտի՛ր, ինչ-վոր ձեռքը կընկնի: Ուրախացի՛ր, Կուրա՛ն»:

Այդպես եր շիուրոյականների որենքը, յերբ նրանք վորևե գյուղ կամ քաղաք եյին գրավում: Յերեք որ նրանք կողոպտում եյին, խմում ու քեֆ անում:

Նկուղում, ուր գտնվում եյինք, մեր ականջին եյին հասնում հարբածների յերգերը, կովի աղմուկ, անկանոն հրաձգություն: Մինչև անգամ լավում եր, թե ինչպես են կայարանում «Նաուրսկի» պարում, ծափ տալիս ու հա՛յ-հո՛ւյ անում:

Յես կամաց մոտեցա նկուղի դռներին շատ մոտ, ականջս դրի յերկաթյա մեծ սողնակին ու սկսեցի լսել հարմոնիկի խուլոտ ու կամացուկ նվագն ու խորդուբորդ հատակին քամավող կոչիկների քաքստոցը:

Իսկ գյուղի կողմից հորդում եր կազակային դանազանաձայն յերգը:

Մեր հայրենիք, ո՛վ դու Կուրան,

Ո՛վ դարավոր դու մեր հսկան,

Ջրերդ ասատ, ընդարձակ դու,

Փովել ես լայն, հեռու՛, հեռու՛...*)

*) Այս և հետագա բոլոր վոտանավորները թարգմանել ե Գար. Հակոբյանը:

Յերկրորդ որը յերեկոյան դեմ մեկն շտապ թըխ-
կացրեց դռան հետեւից:

— Կանգնի՛ր. — լսվեց ամբողջ փողոցով մեկ մի
աղաղակ: Վորոտաց կրակոցը: Յես ու Վասկան նկու-
ղի սանդուղքով վազեցինք, կպանք դռան ձեղքին:

— Այ, դուք, սատանի ճուտե՛ր: Ներքև իջե՛ք, —
ձայն տվեց հայրս: — Դրանք ել կարմիրները չեն, վոր
ազատ քայլեք ամեն տեղ: Ի՞նչ է, ուզում ես շկուրոյա-
կանի մտրակի համը՞ տեսնել: Լավ նայիր ինձ, հա՛:

Յես ու Վասկան իջանք ներքև և նորից նստեցինք
Պուժ անկյունում:

«Ինու յերկա՞ր են մնալու արդյոք այդ շկուրոյա-
կաններն այստեղ: Գիթդ դուրս հանել չես կարող:
Այժմ նստիր նկուղում ու թթու կաղամբ հստատիր,
նեխած կարտոֆիլ հստատի՛ր: Յեվ ինչո՞ւ եդ կարմիր
բանակայինները չեն հավաքում ուժերն ու եդ անիծ-
ված շկուրոյականներին վռնդում այստեղից», — մտա-
ծում եյի յես:

Վիրավորական եր և ձանձրալի:

Հիմա մարդ սուս ու փուս դուրս դա ու թաղուն
կայարան գնա, գյուղ գնա: Այ թե սիրտս ուզում է
այդպես անե՛լ:

Յերևում եր, վոր Վասկան ել շատ է ձանձրանում:
Բայց նա իրեն համար շուտով զբաղմունք դտավ: Նկուղի
մեջտեղում, շուտ տված դուլի վրա դրած եր մրաճրա-
գը: Վասկան մոտեցավ նրան և սկսեց փչել դեղին բո-
ցը: Կրակը թրթռաց ու թեքվեց կողքի վրա: Նա բոլո-
րովին կհանգչեր, յեթե Վասկայի հայրը ժամանակին
մատով հարված չհասցնէր նրա ճակատին: Վասկայի
ճակատի վրա մի լայն կարմիր բիծ մնաց հարվածից:
Նա հեկեկաց և սկսեց մատով փորսիբել կեղտոտ հողը:
Բայց հանկարծ բոցն սկսեց սրորվել ու նորից թեքվեց
կողքի վրա:

Այս անգամ վոչ-վոք այդ բանը չնկատեց:

Վասկայի հայրը ամբողջ հասակով ձգվել ու
նկուղի ներքևի աստիճանին կոթնած՝ հուսահատ հո-
րանջում եր: Նրա կողքին՝ ինչ-վոր կոպիտ գործված-
քի վրա նստած եր Վասկայի մայրը և թեփկահանում
եր չորացած ծմակածածանը:

— Ախր ես ի՞նչ է մեր հալը, — հոգոց հանեց նա, —
յերկա՞ր պետք է տանջվենք այստեղ, կամ ի՞նչպես
կլինի վերջը:

— Շկուրոյից հարցրո՛ւ. յերբ նրան ցավը կտա-
նի, — ասաց Վասկայի հայրը ու շուտ յեկավ դեպի
մրաճրագը: Հենց այդ ժամանակ Վասկան կամաց փչեց
ճրագը:

— Սատանան քեզ տանի: Յե՞րբ վերջ կտաս փչե-
լուն, — բղավեց Իլյա Ֆեոդորովիչը և բարկուժյունից
թքեց:

— Յես չեմ փչում, — կամաց ասաց Վասկան:

— Ի՞նչպես թե, հապա ինքն իրա՞ն է հանգչում:

— Մի՛ հայհոյիր, թող փչի, Իլյա Ֆեոդորովիչ:
Ինձ ել, քեզ ել ձանձրույթը տանջում է, իսկ յերեխա-
ների համար հո մահ է, — ասաց հայրս՝ ավելի մոտիկ
նստելով ճրագին:

Բայց Իլյա Ֆեոդորովիչը չեր հանդարտվում:

— Յեթե այդպես է, յեկեք բոլորս ել նստենք ճրա-
գի մոտ ու սկսենք փչել:

— Բայց յես դրա համար չեյի ասում, Իլյա Ֆեո-
դորովիչ, դու իզուր ես հայհոյում: Յերեխան կարո՞ղ
է յերեք որ մի տեղ նստել՝ առանց չարուժյուն անե-
լու:

— Դե չի կարող:

— Հապա ել ի՞նչ ես ուզում նրանից:

Վասկան խորամանկուժյամբ նայեց ինձ և շատ
հեշտուժյամբ, կարծես թե պատահամբ, քիթը մի
անգամ ել մոտեցրեց ճրագին:

— Իսկ ի՞նչ ես կարծում, Իլյա Ֆեոդորովիչ, —
շկուրոյականները Լեոնտի Լավրենայեվիչին կտանե՞ն,

Թե վոչ: Չե՞ վոր նա վարպետներից առաջինն էր, վոր
ինքնակամ գնաց բուլչեիկների համար ճանապարհ նո-
րողելու: Մի՞ վախենա, կայարահասպեան արդեն հայտ-
նել է, ում վոր պետք է:

Իլյա Ֆեոդորովիչը լուռ՝ գլուխը շարժեց դեպի
հեռու անկյունը: Այնտեղ, պարսկական դորդի վրա,
ծալապատիկ նստած էր հեռագրիչ Սոմովը: Յերեք
որվա ընթացքում նրան վոչ-վոք վոչ մի բան չէր
ասել: Նա միշտ լուռ էր, միայն յերբեմն, այն ել հազ-
վադեպ, հարեվանների խոսակցուլթյան մեջ խառնում
էր բուլորովին անհասկանալի վորևէ խոսք, ինչպես
որինակ, «մուտուալիտներ» կամ «սուվենիր»:

Գլխից չհանելով պաշտոնական՝ դեղնայերիզ գլու-
խարկը, նա նստել ու լսում էր:

— Տես, հա՛, խոսիր՛, — բայց բերնիցդ բան չթող-
նես, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը հորս, — իմացի՛ր,
վոր նկուղում բայդուչ է նստել:

Կես գիշերը վաղուց անցել էր, յերբ նկուղի ընա-
կիչները պատրաստվեցին քնելու: Առաջինը, ինչպես
միշտ, սկսեց պատրաստվել հեռագրիչ Սոմովը: Նա
գործված զամբյուղից հանեց կապույտ ծաղիկներով
վարդագուլյն բարձը, փչեց նրա վրայի փուշին, չորս
կողմից թափահարեց ու մի քանի անգամ ձեռքով
թմփթմփացրեց: Հետո ճշտուլթյամբ՝ իր մառանի
դռների մոտ փռեց լրագիրը և խնամքով գրեց նրա
վրա մեծ, փքված բարձը: Հետո հանեց ծամոված թա-
ղիքյա տուֆլիները: Շուտուհուտ ավեց, չմփացրեց
իրար ու հագավ: Պառկելուց առաջ նա դիտեց իր բո-
լոր իրերը. մռայլ նայեց իր բուլոր հարեաններին, հա-
մազգեստի բաճկոնով ծածկեց գլուխը, իսկ ուսերի
վրա քաշեց բամբակե վերմակը:

— Ե՛հ, զգվելին պառկեց, — հազիվ լսելի ձայնով
ասաց Իլյա Ֆեոդորովիչը: — Յեվ ի՞նչ հետաքրքիր է
նրա համար այդտեղ նստելը:

— Թող նստի, թող հոտ քաշի, յեթե ցանկուլթյուն

ունի, — ասաց գնացքների կազմիչ Անդրեյ Իլյանայե-
վիչ Չեկունովը և դեմքը շուտ ավեց դեպի սրտը:

Մեր մառանի հենց դռների մոտ՝ փոքրիկ, կանաչ
նստարանի վրա կուացած՝ նստել էր մայրս ու գոր-
ծում էր:

Բրդե թելի կծիկը, կարծես լարված՝ թռչկոտում
էր ու մնում նրա վտտների մոտ: Հետո կծիկն ավելի
ու ավելի քիչ էր թռչկոտում: Ճաղերն ընկան մորս
ձեռքից, և նա քնեց՝ գլուխը ծնկներին հեծած:

Յես ու վասկան պառկած եյինք կողք-կողքի:

— Ինչ-վոր քուես չի տանում, — կամաց ասաց
վասկան ինձ: Իսկ դու քնե՞լ ես:

— Քնած չեմ, — պատասխանեցի յես:

— Ա՛խ, յեթե կարմիրները հասնեյին, յերեք
դույմանոցից այնպես կղմբացնեյին, վոր աշխարհը
կդողար, — ասաց վասկան:

— Գիշերը չեն դա նրանք:

— Յեթե պետք լինի, գիշերն ել կգան: Մենք ահա
պառկել ենք այտեղ, իսկ նրանք, շատ կարելի յե,
սուտ ու փուտ մոտենում են և միանգամից կճուռացնեն:

— Կամա՛ց խոսիր, — ընդհատեցի վասկային:

— Իսկ ինչո՞ւ համար, դու կարծում ես չե՞ն կարող
նրանց հասիցը գալ: Կգան: Են ել ինչպե՛ս: Քեֆդ ու-
ղածի պես:

— Եղ ու՞մ հախից կգան, — կամաց հարցրեց Իլյա
Ֆեոդորովիչը՝ տեղից բարձրանալով և ճրագի վրա
պապիրոսը կպցնելով:

վասկան աչքերը փակեց ու բերանը բացեց:

— Հայանի յե՛ ում. ի հարկե սպիտակների, —
ասաց նա:

— Ճիշտ է: Միայն դուք, լակոտնե՛ր, ամեն տեղ
դուրս մի՛ ավեք, ապա թե վոչ, յես ձեղ... — նա մա-
տով սպռնաց և գնաց իր տեղը:

— Յես ու վասկան պառկած եյինք կողք-կողքի,
համարյա մերկ գեանի վրա: վասկան գլուխը գրեց իմ
բարձի վրա ու խոպոտ շնջյունով ասաց:

— Իսկ յեթե Անդրեյը դար, մենք այն ժամանակ
կ'իսխաչեցինք: Անդրեյի հետ սարսափելի չե ման գալը:

Անդրեյը կայարանի պահակի վորդին եր: Մի կըտ-
րի՞՞ տղա: Հիշում եմ, անցյալ ամառն Անդրեյի հետ
վաղեցինք զինվորական կայանը և պառլամ էյինք գա-
լիս կարմիր բանակայինների ձիերի շուրջը: Անդրեյը
խնդրում է կարմիր բանակայիններին՝ «թողեք ձիերին
մենք տանենք լողացնելու»: Կարմիր բանակայինները
ժպտում են. «Լավ, տարե՛ք, թե վոր շատ եք փափա-
գում»: Յերկուսով թռչում ենք ձիերի վրա և թեթև-
արշավ թռչում ենք սալահատակի քարերի վրայով
դեպի Կուբանը: Լողացնում ենք ձիերին Կուբանի տաք
ջրի մեջ, արածացնում նրանց դետափի մոտ, իսկ յե-
րեկոյան դեմ սլանում ենք դեպի կայան քառատրոփ
արշավով՝ մրցելով իրար հետ: Մյուս տղաներին ձիեր
չեյին տալիս, իսկ Անդրեյը կարողանում եր ստանալ:
Մինչև անգամ արաբականը, ամենակատաղի ձին,
վստահում էյին նրան:

— Վասկա, ա՛ վասկա, — ձայն տվի յես:

Վասկան ձեռներով տրորեց կպած աչքերը և տըհա-
ճուխյամբ հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում:

— Հիշո՞ւմ ես՝ ինչպես մենք ու Անդրեյը արաբա-
կան Սատանային լողացնում էյինք:

— Հիշում եմ: Քիչ եր մնում, վոր խեղդեր ձեզ ջրի
մեջ, — ասաց Վասկան ու կրկին աչքերը փակեց:

Չորս կողմից խոմփոց եր լավում: Սոմովը խռմ-
փում եր սուլոցով:

— Վա՛սկա, մի լսիր՝ վո՛նց ե բայդուչը շվշվաց-
նում, — ասացի յես՝ խթելով Վասկայի կողքին:

— Ե՛հ, նրա ել, քնել եմ ուզում:

Պատի փոստում՝ հեռագրիչի գլխավերևում թրր-
թրում եր յերկաթուղային մոմը: Նրա ճարպոտ կա-
թիլները սահում էյին ներքև և իսկույն սառչում:

Յես դեմքս շուռ տվի դեպի քարե պատը: Պատից

խոնավության, բորբոսի և զղվելի թթվահոտ եր փը-
չում: Չանձրալի յեր մենակ պառկել:

Յես նորից հրեցի Վասկային: Նա ձայն չհանեց. յես
հրեցի ելի մի անգամ և ավելի ուժեղ:

— Դե՛, ի՞նչ ես ուզում, — մոմուց նա և կտավը
քաշեց դեպի իրեն:

— Կարծում եմ՝ կարմիրներն այժմ արդեն հեռու
կլինեն, յերևի Կուբասավկայում:

— Ձեռք քաշի՛ր, խանդարում ես ինձ:

— Իսկ այժմ վո՞րտեղ կլինի քեռի Սուբբոտինը,
ի՞նչ ես կարծում:

— Իսկ յես ի՞նչ իմանամ:

— Գուցե և նրան վաղուց են սպանել, — ասացի
յես: Վասկան մինչև անգամ վեր թռավ: Նրա քունը
միանգամից փախավ:

— Ի՞նչ ես ասում: Այդպիսի մեկին հեշտ չի սպա-
նել: Նա ուժեղ ե: Հենց վոր հասնի բլրակին, այնպես
կսկսի վեց դույմանոցից բաց թողնել, վոր աշխարհն
իրար կխառնվի:

Վասկան բռունցքն այնպես թափով բարձրացրեց,
վոր քիչ եր մնում՝ ինձ մի լավ հասցներ:

Նա այլևս քնել չեր ցանկանում:

Մենք միասին կտավի մեջ վաթաթափած նստած է-
յինք և շուկով խոսում էյինք: Ամենից շատ խոսում
էյինք քեռի Սուբբոտինի մասին:

Սուբբոտինը մարտկոցի հրամաճատարն եր:

Այնպես բարձրահասակ եր, լայնաթիկունք ու չի-
կահեր: Նրա վերնաշապկի վրա ձախ կողմից ամբաց-
րած եր մեծ, բռունցքաչափ մի սրածայր աստղ: Ու-
սից կախված եր հրետանային սուրը: Մյուս կողքից՝
յուղոտված պատյանի մեջ՝ նազանը:

Կայարանի հետևը, պետական պարտիզում, տե-
ղավորված եր նրա մարտկոցը — չորս թնդանոթ: Մենք
ամեն ոք գնում էյինք քեռի Սուբբոտինի մոտ, և նա

ՀՐԱՊԱՏԻՃ ԱՌԱՆՑ ՌՈՒՄԻԻ

մանրամասնորեն պատմում եր մեզ թնդանոթի կազմութեան մասին, թե ինչպես է գնդացիին ավտոմատ կերպով կրակում, ուսմբի մեջ պատիճն ինչպես է դրվում: Շատ-շատ բաների մասին եր պատմում մեզ քեռի Սուբբոտինը: Վոչ վոք այնպես հասկանալի չեր խոսում, ինչպես նա: Վոչ վոք մեզ այնպես չեր սիրում: Մենք ել նրան էյինք սիրում:

— Վա՛սկա, քեռի Սուբբոտինը թո՞ւյլ եր տալիս քեզ թոկը բռնելու:

— Իսկ դու կարծում ես՝ վո՞չ, — վիրավորվեց Վասկան: — Առաջ Անդրեյին եր տալիս, հետո ինձ:

Յես ու Վասկան թոկ էյինք անվանում թնդանոթը պայթեցնելու փոկաքուղը: Թնդանոթին մոտ դնալ քեռի Սուբբոտինը մեզ չեր թո՞ղնում, իսկ «թոկից» բռնել թույլ եր տալիս: Յեվ ամեն անգամ, յերբ յես յերկու ձեռքով բռնում էյի փոկաքուղը, ձեռներս քոր էյին դալիս — սիրտս ուղում եր թնդանոթի շրայները կրակել:

— Նայեցե՛ք, տղանե՛ր, լավ մտիկ տվեք... յերբեվիցե պեաք կգա, — լրջորեն ասում եր մեզ Սուբբոտինը:

Նկուղում բոլորն ել վաղուց քնել էյին: Մոմը ճարում եր:

Յես ու Վասկան ամբողջ գիշերը նստեցինք՝ վերհիշելով բոլոր ընկերներին:

Իսկ փողոցում ինչ-վոր տեղից ծոր եր տալիս մե՛ տխուր հուսալքված յերգ:

Ոոնավ յերկրից բարեններ շատ-շատ
Քեզ ենք ուղարկում, Կուրան հարազատ:

Վաղ առավոտյան նկուղի հետևից հրացանի պայթյուններ վորոտացին:

Սմեն որ արշալույսին կայարանում սկսվում եր հրամաճգություն ու արթնացնում նկուղի բնակիչներին:

Վասկայի մայրն արկղի վրա նախաճաշի համար դարսում եր աղ դրած վարունգներ և ամեն մի համադարկից հետո խստութեամբ ասում եր ինձ ու Վասկային:

— Դուրս չգաք, լակոտներ: Հենց վոր տեսնեն, իսկույն կբռնեն:

Իսկ մեզ զրվելու չափ ճանճրացրել եր նկուղը:

Թեկուղ կիսատ աչքով տեսնեյինք՝ ի՛նչ է կատարվում փողոցում, դյուղի հետևում, դաշտում:

Մեր ընտանիքը նույնպես պատրաստվում եր նախաճաշելու: Մի գորշագույն տոպրակի վրա մայրս դրեց գզալներ և սպրամանը՝ կիսայեփ սուսով:

Մեկը դուռը ձեծեց: Բոլորն ել ականջները սրեցին: Չեկունովր տոպրակի վրայից բարձրացավ ու վերև վազեց: Սոզնակը չիկաց, դուռը ճոռաց:

Կողքըհան ներս մտավ մի խարտյաչ պատանի:

— Անդրե՛յ, վո՞րտեղից: Ու՞ր էյիր կորել, — նետվեցինք դեպի նա Վասկան ու յես:

— Տղե՛րք, — շնչաց Անդրեյը՝ սանդուղքից իջնելով, — հայ-դե՛, դնանք դաշտ: Վորքա՛ն սպանվածներ կան այնտեղ: Ո՛յ-ո՛յ...

— Ի՞նչ ես թրև գալիս այդտեղ, — խստութեամբ հարցրեց Իլյա Ֆեոդորովիչն Անդրեյին:

— Յես, քեռի՛, թրև չեմ գալիս: Յես յեկել եմ միայն տղաներին տեսնելու:

— Տեսութեան գալը լավ է, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը. — բայց դու անժամանակ ես գալիս, դա վատ է: Ինքը ել գիտե՛ս՝ ինչպիսի ժամանակ է այժմ, չնչին

բանից կկորչես: Տե՛ս, մեր տաղներին գլխահան չանես:

— Յես ի՞նչպես կարող եմ նրանց գլխահան անել: Յես տեսու՞թյան...

— Այցելել. դիտենք՝ այցելել: Ո՞վ է այժմ այցելու թյան գնում, յերբ մարդիկ նկուղներում են նստած: Ո՞վ է թափառում այդպիսի ժամանակ:

— Հորեղբար Իլյա, բայց յես ի՞նչ եմ արել, վոր բարկանում ես ինձ վրա: Յեթե վորևե բան կա, յես կհեռանամ, — ասաց Անդրեյը և գլխարկը քաշեց գըլխին:

— Ի՞նչ եք ուզում, հորեղբայր Իլյա: Նա վոչ վոքի չի խանդարում, — բարձրաձայն ասացի յես Վասիկայի հորը:

— Գդալդ վերցրո՛ւ և կե՛ր: Ի՞նչ ես բերանդ բաց արել, — ընդհատեց ինձ մայրս:

Յես նստեցի դուլի վրա, վերցրի մի մեծ գդալ և սկսեցի դռով սուպ խմել: Իսկ աչքերս ել չեյի հեռացնում Անդրեյից, վոր կանգնել եր քարե սանդուխքների վրա:

Անդրեյը կամաց ասում եր Վասիկային.

— Մեր կողմում վոչ վոք նկուղում չի նստած:

— Իսկ մեզ մոտ բոլորը նստած են, — ասաց Վասիկան, — իրանք նստած են ու մեզ ել դուրս չեն թողնում:

— Կե՛ր, Գրիշկա, կե՛ր, — փնթփնթում եր մայրս ինձ վրա, — դուլի վրա մի՛ պատվիր, ինչպես սուտանան թմբուկի վրա:

— Գե դու ել ի՞նչ ես ուզում, դեռ ժամանակ կլինի կշտանալու, — բարկացած պատասխանեցի յես մորս ու փայտե գդալը նետեցի տոպրակի վրա: «Ինչպե՛ս նա չի հասկանում եդ բանը, — հաղիվ ե Անդրեյը յեկել, իսկ նա իր սպով ե դահլա տանում»:

Վասիկան Անդրեյի հետ ինչ-վոր բանի մասին պայմանավորվեցին: Նա շուտ-շուտ աչքով եր անում ինձ և դուռը ցույց տալիս: Սկզբում յես չեյի հասկանում

Անդրեյի այդ նշանները, բայց հետո գլխի ընկա: Հենց վոր մայրս շուտ յեկավ, յես աննկատելիորեն՝ աստիճանառ աստիճան բարձրացա մինչև սանդուխքի ծայրը և Վասիկայի ու Անդրեյի հետ նետվեցի փողոց:

Չորս որ փակված մնալուց հետո սուաջին անգամն եր, վոր փողոց եյի դուրս գալիս: Իրսի թարմ, սուր ողը քթներս խուտուտ եր ածում:

Նեղ, հեղձուցիչ նկուղից հետո մեր ապրած բակը մինչև անգամ ընդարձակ թվաց մեզ:

Դե՛, տղաներ, այժմ աչքներդ չորս արե՛ք, — ասաց Անդրեյը. — նախ կանցնենք յերկաթուղային փողոցով, ապա զինվորականով, այնտեղից՝ դաշտ, իսկ նրանից հետո կտեսնենք: Յեթե կհարցնեն — լռեցե՛ք... Յես կպատասխանեմ:

Զինվորական կառամատուցի վրա թափված եյին ձիերի դիակներ, փայտե արկղներ, տակառներ, ցինկե բանկաներ: Յերկաթգծերի վրա ցաք ու ցրիվ ընկած եյին խոտի քառանկյունի հակեր և հիվանդանոցային կեղտոտ բինտեր: Վասիկան չորս կողմը նայելով բարձրացրեց գետնից փամփուշաներով մի պահուեսակ և դրեց զրպանը: Անդրեյը փայտով ցեխը փորփրեց ու սուամբի մի հրապատիճ դտավ:

— Եղ դեն գցի՛ր, — բարկացած ասացի յես Անդրեյին: — Չե՞ վոր կարող ե պայթել:

— Սարսա՛ղ, ինչո՞ւ գցենք: Ավելի շատ հավաքենք, պետք կգան:

Անդրեյը յեղունգով կեղտը քերեց, ձեռքով մի քանի անգամ խնամքով սրբեց հրապատիճը և դրեց թևի տակ:

— Մեղքն իր չինքին, վերցնում ե, թող վերցնի, — ասաց Վասիկան և հանկարծ Անդրեյի մոտից ցատկեց մի կողմ, — թող վերցնի. ահա Վասիկան նույնպես դտավ, միայն վոչ այդպիսին, այլ ավելի յերկարը՝ կարմիր պղնձից: Տուն յեկավ և դրեց խոհանոցի պլիտայի վրա: Հայրն այդ ժամանակ դուլը եր նորոգում: Իսկ այդ հրապատիճն այնպես զրմփաց, վոր կաթսա-

յի ջուրը շարտեց դուրս, տունը դղրդաց: Հոր մատներն ել իզուր տեղը ճանկուեց...

— Ա՛յ թե բան եք հասկանում, հա՛: Ի՞նչ է, յես հրապատիճի հետ վարվել չգիտե՞մ:

— Պայթում ե, ահա թե ինչ,— փնթփնթաց վասկան:

Զինվորական փողոցից մտանք տափաստանը: Մեր վոտքերի տակ ճարձատում էյին չորացած ճյուղերը, ճոճում աղբը:

Մի կեղտոտ, փոքր փոսում մենք տեսանք մի դիակ: Մերկ, ուռած մարդը պառկել էր գետնին՝ մեջքի վրա, նրա թշերի ու ճակատի վրայով սողում էյին ճանձերը: Աջ ձեռքը շուռ էր յեկել ու փռվել մի կողմ, իսկ ձախը կծկված էր կրծքի վրա: Գեղնած մեռելը ձախ ձեռքով բռնել էր կուրծքը՝ կարծես վորևե բան եր սեղմում իր սրտի վրա: Նրա մուգ մազերը ծածկվել էյին դորշ-կանաչավուն փոշով: Գանգը պատրված էր:

Վասկայի շրթունքները դողացին: Յե՛ս ել սարսափեցի: Վոտներս կարկամեցին, ինչպես սառը ջրում:

— Ի՞նչ վատ հոտ է փչում նրանից,— կամաց ասաց Անդրեյը կցկաուր ձայնով: Յերևում է, վոր շրապնել է գիպել:

— Յերևում է, վոր շրապնել է գիպել,— կրկնեցի յես:

— Իսկ ո՞վ է նրա շորերը հանել:
— Հայտնի յե՛ թե ով— շկուրոյականները,— ասաց Անդրեյը:— Սա կարմիր բանակային է: Ընկերներից:

Մենք մի քանի բոպե լուռ կանգնած էյինք: Հետո Անդրեյը զգուշությամբ առաջ գնաց, մենք ել նրա հետևից: Գնում էյինք ու չորս կողմը նայում:

— Իսկ հետաքրքիր է, եդ վո՞նց է դուրս գալիս,— ասաց Անդրեյը,— մեկը կարմիրների կողմից է, մեկը՝ սպիտակների: Կարմիրների հետևից գնալը հասկանալի յե, բայց սպիտակների հետևից... Գրիչկա, ի՞նչ էս կարծում, ինչո՞ւ կազակներն սպիտակների կողմն են անցել, հա՞:

— Ենպես, չեն ցանկացել կարմիրների կողմը լինել:

— Լա՛վ ես հնարում— չեն ցանկացել,— ասաց Անդրեյը.— կազակներն ի՞նչ ոգուտ ունեն կարմիրների հետ լինելուց: Նրանք ինչքա՛ն հողեր ունեն: Ահա այդ պատճառով ել նրանք դեպի բուրժույներն են ձգտում: Սառստովներն ունեն և կալսիչներ, և խոտհար մեքենաներ, ամեն մեկը վաթսուն փեթակից ավելի մեղուներ,— ի՞նչ էս կարծում, նրանք բոլշևիկների հետևից կգա՞ն:

— Իսկ ինչո՞ւ Ստեփան Զամուրայեվն սպիտակների կողմն է անցել,— ասաց Վասկան:— Չե՞ վոր նա դեպոյի բանվոր է: Նա վոչ հող ունի, վոչ ել մեղուներ:

— Նա այնպես... հենց այնպես, իր կամքով է գընացել, — անվստահ պատասխանեց Անդրեյը և, ինձ նայելով, ասաց.— Ո՞վ գիտե՛ ինչո՞ւ համար է նա սպիտակների հետևից գնացել... դուցե սպիտակներից խորմանկությամբ վորևե բան է ուզում իմանալ:

Մենք վազեցինք դեպի ուղիքի քանդած փոսը և նստեցինք փափուկ հողի վրա:

— Յես լսել եմ, վոր կարմիրներն այնպիսի կադմակերպություններ ունեն, — ասաց Անդրեյը՝ կոչկի քթով խառնելով հողի կույտը,— նրանք ինչ ասես՝ կանեն... վոչ վորից չեն վախենում:

— Իսկ դու վո՞րսեղից գիտես այդ,— հարցրեց Վասկան:

— Գիտեմ. քեռի Սուրբոտինն էր ասում: Նա ասաց, վոր բոլշևիկներն ունեն այդպիսի կոմունիստական կուսակցություն: Յե՛վ նա ամենից մարտական է:

— Յես նրան կարծես չեմ տեսել, — ասաց Վասկան:— Բոլշևիկներ տեսել եմ, կտրիճ կարմիր բանակայիններ ել եմ տեսել. իսկ կոմունիստական կուսակցություն վո՛չ— չի պատահել:

— Ի՞նչ էս ասում, Վասկա, Սուրբոտինին չե՞ս

տեսել: Չե՞ վոր քեռի Սուրբոտինը հէնց ինքը կոմու-
նիստ է:

— Ի՞նչ ես ասում, — դարմացավ Վասկան:

— Իհարկէ... իսկ ի՞նչ եք կարծում, տղանե՛ր,
մենք ել այդպիսի կոմունիստական կուսակցութ՛յուն
չկաղմակերպե՞նք, կամ ջոկատ ե, թե ինչ: Վոր-
պեսզի նա մարտական լինի:

— Ջոկատ — ասաց Վասկան. — ա՛յ, ի՞նչ եմ ա-
սել: Կայարանը կզբավենք, պահեստը:...

— Գրավելը քեզ մնա, — ընդհատեց Անդրեյը, —
դեռ հրահեն ել չունենք: Հրացաններ, փամփուշտներ
կգտնենք, տուն կտանենք...

— Չեմ ուզում, — բարձր աղաղակեց Վասկան ու
վեր թռավ տեղից:

— Ի՞նչ չես ուզում, — հարցրեց Անդրեյը:

— Հրացան չեմ ուզում: Տուն տանելը՝ կտանես,
լա՛վ, իսկ վո՞րտեղ ես թաղցնելու: Թե վոր հերդ
գտնի, ենպես կմղկտացնի, վոր յերեք ու խելքդ գլու-
խըդ չի գա:

— Ըհը՛, սկսեց լացը, — քրթմնջաց Անդրեյը, —
դեռ չեն ել ծեծել, իսկ նա վարտիկն եվոտները պցում:
Սրան մի տե՛ս, կղնքստեն: Չլինի՞ առաջինը քեզ: Կը-
ծեծեն մի անգամ, իսկ յերկրորդ անգամ ել չեն անի:
Դրա փոխարեն, յերբ քեռի Սուրբոտինը վերադառնա,
ի՞նչ ես կարծում, քեզանից չնորհակալ չի՞ լինի:

— Միևնույնն ե, յես համաձայն չեմ, — ասաց Վաս-
կան և սկսեց վերև մազլցել: Նա դուրս յեկավ փոսից
և դաշտի միջով դանդաղ գնում եր՝ վոտքով արորե-
լով հողի կույտերն ու չորացած մուխտտերը:

Յես ու Անդրեյն ել դուրս յեկանք փոսից:

Մենք լուռ գնում էյինք և ուշադրութ՛յամբ դի-
տում այն ամենը, ինչ տեսնում էյինք տափաստանում:
Պատահեցինք փոսում վեր պցած, հետևի աղը կոտրած
մի սայլակի և սկսեցինք քանդել նրա մասերը:

Անդրեյը հանեց աղի հենարանը, դուրս քաշեց ա-

սանցքացիցը և սայլակի մաշված քարշակը գլորեց
բլրակն ի վեր:

— Այ մի ձի լինե՛ր... — ասաց Վասկան և փորչ-
աց:

— Հապա եղ ի՞նչ ե... Սա մի՞թե ձի չե... — Անդ-
րեյը բռնեց մի սև ձիու պոչից, վոր մեկնվել եր փոսի
մեջ, սայլակի կողքին:

— Սատկած ե. ինչի՛ յե պետք, — ձայնը յերկա-
րացնելով ասաց Վասկան: — Մի վոտքն ել դեռ չկա:

Յես դտա կաղակի կիսակառքի մի ահագին անիվ
և սկսեցի առվի հունով գլորել: Հանկարծ անիվն ինչ-
վոր բանի դեմ առավ: Յես կոացա. դետնի վրա ըն-
կած եր մի հեռադիտակ՝ ամբողջովին ցեխի մեջ կո-
րած:

— Տղանե՛ր, այստեղ յեկե՛ք, — կանչեցի յես: Անդ-
րեյն ու Վասկան թողին սատկած զամբիկին և վագե-
ցին դեպի ինձ: Անդրեյը ուրուրի նման հարձակվեց
հեռադիտակի վրա:

— Վո՞րտեղից գտար: Սա դաշտային, գինվորա-
կան հեռադիտակ է: Հիանալի՛ յե: Ջոկատն առանց
հեռադիտակի յուրա գնալ չի կարող:

Մենք սկսեցինք պտտել նրա ատամնավոր փոքրիկ
սև աղը, վեր ու վար շարժել խողովակները: Նայում
էյինք լեռներին, սայլակին, սատկած զամբիկին: Յեր-
կու ծայրերիցն ել նայում էյինք: Յերբ փոքր ապակու
միջով ես նայում, զամբիկը փղից մեծ ե յերևում:
Մեծովն ես նայում, ձին ճանձից ել փոքր ե թվում:

Մինչ յես ու Անդրեյը զամբիկին էյինք նայում,
Վասկան հողն եր փորփրում: Հանկարծ նա գոռաց.

— Յես ել ինչ-վոր բան եմ գտել, ձերիցն ավելի
լավը: Յեվ նա մինչ գլխավերևը բարձրացրեց յերկու
ատրճանակ — աջ ձեռքում՝ նազան, իսկ ձախում՝
քրաունինդ:

— Ահա՛:

Անդրեյը նետվեց դեպի Վասկան:

— Բեր փոխենք: Ատրճանակներն ինձ ու Գրիչկա-

յին, իսկ քեզ՝ հեռագրատակը: Ջոկատի դիտողը կլինես:

Վասկան յետ-յետ գնաց ու ատրճանակները թաղցրեց հետևը:

— Մի սրա՛ն մտիկ: Յերկուսի տեղ մեկը:

— Ի՞նչպես թե մեկը, — ասաց Անդրեյը, — չե՞ք վոր հեռագրատակը յերկու խողովակ ունի: Ել ի՞նչ ես ուզում:

Վասկան մտածեց և ատրճանակները տվեց: Անդրեյն իր համար վերցրեց մեծ, ծանր նագանը, իսկ փոքր, տափակ բրաունինգը դրեց իմ գրպանը:

Շուտով հասանք տափակ բլրակին: Ավելի առաջ գնալ՝ մենք սիրտ չարինք:

Բլրակի հետևում կույտ-կույտ թափված՝ փորվել էր, մեջքի վրա, փռված՝ ձեռներով պառկած էին մարդիկ, վոմանք շինելներով, վոմանք վերնաշապիկներով, վոմանք ծովային զգեստով: Քամին այնտեղից ուժեղ դարչահոտով թյուն էր բերում իր հետ:

— Տուն գնանք, տղանե՛ր, — շտապով ասաց Անդրեյը: Մենք վազեցինք դեպի գյուղ:

IV Գ 1, ՈՒ Ե

Ա Գ Ի Տ Պ Ո Ի Ն Կ Տ

Միայնակ ու վորբացած կանգնած է յերկաթուղու կայարանը: Ուժեղ քամուց ճոճում են յերկաթե ձողերից կախված նավթավառ լապտերները: Հարբած շիտերոյականները նույնպես որորվելով, ինչպես լապտերները, թափառում են կառամատույցի վրա:

Յոթերորդ որն է, ինչ նոր ձևով է ապրում կայարանը, շունչն իրեն քաշած գյուղն ու անգուսպ ստանիցան:

Կայարանատան վերևի հարկում, ուր մի քանի ոք առաջ յերկաթուղայինների կոմիտեն էր, այժմ նրա ձախ անկյունում դրված են սև դրոշակներ, իսկ նր-

բանց մոտ ձգված՝ կանգնած է պահակը: Դրոշակները կողքին՝ պատից կախված է մի մեծ քարտեզ՝ յերեք փոքրիկ յեռագույն դրոշակներով: Ամենից վերևի դրոշակը ցցված է քարտեզի մեջտեղը, համարյա հենց Մոսկվայի մոտ, իսկ ներքևի դրոշակը խոնարհվել է Վորոնեժի վրա:

Գյուղի բնակիչներն այդ սենյակն այլևս չեն մտնում, այնտեղ նրանք վոչինչ չունեն անելու: Բացառությամբ միայն, յերբ մեկի խելքին փչում է տեսնել սնապարծ փոքրիկ յեռագույն դրոշակները, վորոնք շտաբի յեռանդուն սպաներից մեկը ցցել էր ամբողջ քարտեզի վրա՝ վորտեղ պատահել էր: Այդ ժամանակ սպիտակներն արդեն հեռացել էին Խարկովից, իսկ յեռագույն դրոշակները փայլում էին Տուլայից վերև:

Սպաները նույնպես չեյին մտնում այդ սենյակը: Անհասկանալի յեր մտնում, թե ինչո՛ւ յե պահակը միայնակ կանգնում սև, մոմլաթի մեջ փաթաթած դրոշակների մոտ և ինչո՛ւ համար է կախված սպիտակ բանակի հնարովի հաղթու՛թյուններով նախչված այդ քարտեզը:

Կողքի՝ հարևան սենյակում, պատերի վրա փակցված էին հասցեայ ու անփույթ կերպով գրուած պլակատներ, կոչեր և բազմագույն թերթիկներ: Թերթիկների վրա սև տառերով տպված էր.

«ՍՐԲԵՆՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻՆ»

Նույն տեղում լայն, բացվող սեղանի վրա դրված էին ամսագրեր, լրագրեր, նամակադրոշմներ: Նրանցից վոմանց վրա պատկերված էր «Արքա-զանգը» մյուսների վրա՝ վիրավոր սպան գլխով թյան քրոջ հետ: Քիչ հեռու, սեղանի վրա դրված էր յերկար մի արկղ՝ լեփ-լեցուն գույնզգույն բացիկներով: Բացիկներ վաճառողը սպիտակ գոգնոցով ու գլխաշորով, կարմիր խաչը թևին մի կին էր, վոր կարծես թե հենց նամակադրոշմի վրա տպված կինը լիներ:

Այդ սենյակը նույնպէս դատարկ էր, ձանձրալի: Միայն յերբեմն հարբած կազակներն էյին մտնում, խառնում սեղանի վրա յեղած բացիկներն ու նամակադրոշմները և կրկին հեռանում:

Դեռ վոչ այնքան վաղուց, յերբ յերկաթգծերով ուրախ վազում էր մանեվրային շոգեքարշը, թխթըխկում վազոններն ու զնգում բուֆերները, այդ սենյակը ծառայում էր վորպէս ագիտ-պունկա:

Այստեղ յերեկոները հավաքվում էյին արհեստավորները, կարմիր բանակայինները, գյուղի յերիտասարդները, աղջիկները, տղաները:

Ագիտ-պունկաը միշտ լեփ-լեցուն էր. տեղավորվում էր ով ինչպէս կարող էր: Նստում էյին հատակի վրա, բարձրանում պատուհանները, կանգնում պատերի տակ, դռների մոտ:

Հիշում եմ՝ ինչպէս կարմիրների նահանջից մի շաբաթ առաջ կոմիսարը յեկավ ագիտ-պունկա: Նա բարձրահասակ էր ու նիհար, գղզզված ու դուռնաթափ շինելով: Բարձրանալով տախտակամածի վրա, նահանեց գլխարկը, ձեռքով շփեց ցանցառ մազերը և բարձրաձայն ասաց.

— Ընկեր դեպոյականներ, մեզ համար ծանր է նրա համար, վոր մեր ամբողջ ժողովուրդը դեռ չի հասկացել, թե ո՛ւմ համար պետք է պայքարի և ո՛ւմ դեմ կովի: Անտանտն ոգնում է Դենիկինին գենքով, փողով, հանդերձանքով, պարենով: Իսկ մեզ ո՞վ ե ոգնում: Թող ամեն մեկն իրեն հարցնի: Դե, ո՞վ: Մենք մեզ... Իսկ մենք, հակառակի պէս, վոչ դեղորայք ունենք, վոչ հանդերձանք: Մենք բորիկ ենք ման գալիս, գղզզված, կեղտոտ: Մեզ վոջիլն է ուտում, բծավոր աիֆը: Բայց թող սպիտակ սրիկան լավ իմանա, վոր մենք մեր ամբողջ կյանքը կզոհենք խորհրդային իշխանության համար:

Կոմիսարը քայլեց ճոճուացող տախտակամածի վրայով և ասաց.

— Մենք դրանից ավելի վատթարն ենք տեսել:

— Ի՞նչպէս չէ, տեսել ենք, ընկեր կոմիսա՛ր,— կանչեց մեկն ամբոխի միջից:

— Հարկավ տեսել ենք,— ախարկեց մի վիթխարի նավաստի:

— Ե՛հ, լավ, մենք նրանց, այդ դյադաներին ջուրը կթափենք: Դեռ նրանց հախիցը կգանք: Յեվ նավաստին հետ տարավ իր յուղոտված բաճկոնի փեշերը, վորոնց տակից յերկու կողմից էլ փայլեցին մետաղյա բոմբերը: Ագիտ-պունկտում սկսեցին գոռգոռալ, վոռնալ: Իսկ կոմիսարը բարձրաձայն ծիծաղեց: Նրա դեմքն ինձ յերիտասարդ ու պայծառ թվաց, իսկ ինքը՝ համարձակ ու մարտական:

Նավաստու շուրջը հավաքվեց դեպոյականների մի սերտ շրջան:

— Հանձնի՛ր իշխանությունն սպիտակ գվարդիականներին, իսկ ինքդ առանց անդրավարտիկի մնա,— ասում էր նավաստին՝ աջ ձեռքով սրբելով ուսմբը:

Նրա դեղին գլխարկով հարեանը յետ ցատկեց մի կողմ:

— Դեռ գցի՛ր, կատակ մի՛ անի, տես ինչքա՛ն ժողովուրդ կա:

— Մի՛ վախենա, յեղբա՛յր, լցված չէ: Յես ասում եմ՝ իշխանությունը վոչ մի գնով չենք տա:

— Պարզ ե՛ չենք տա,— վրա բերեց փրչոտ դեպոյական մի բանվոր... Թող իմ սեփական արյունն էլ հոսի, չենք տա:

— Ով սուրբ աստվածածին, ինչո՞ւ համար է արյուն թափվում,— կերկերաց կանացի վախեցած մի ձայն: Չորս կողմից ծիծաղեցին:

— Ընկերներ, — կանչեց շիկահեր մի պատանի՝ բարձրանալով տախտակամածի վրա,— հիմա յերկաթուղայինների տեղական նվազախումբը կկատարի ծրագիրը:

Վարագուլրի հետեից դուրս յեկան չորս յերաժիշտ՝ բալալայկա, մանդոլ, գիտար և մանդոլին: Յերաժիշտները հանդիսավոր կերպով տեղավորվեցին ու

նվագեցին «Ալիքների վրա» վալսը: Հետո ճղճղալով,
ճիչերով նվագեց գրամոֆոնը: Հետո յեկվոր մի
արտիստ արտասանեց Դեմյան Բեդնու վոտանայի որհե-
րից: Նա բարձրացավ վոտքի թաթերի վրա և աչքերը
փակելով վրա տվեց, առանց կմկմալու:

«Հիմար դյուղին» թե ինչպես խաբել,
Ադան դիտի խորամանկ վարվել.
Շկուրա գեներալ-մայորին
Շկուրո կանչին— նոր փալան դերին:
Շկուրան շատ կարևոր մարդ է.
Գեղջուկի կաշին կքերթե:
Ախ եղ Շկուրան, Շկուրան, Շկուրան,
Շկուրան— գեներալը ցարական...

Մորթեպաշտներն են սկսել
Գյուղը կարգեր մտցնել.
Մեկին թողել են անձի,
Մեկին՝ ղրկել կարգումի:
Վիշան է պատել ամենքին:
Սատանին տամ քո հողին,
Ա՛յ գայլամորթ, շուն կեղտոտ,
Շկուրա—գեներալ ցարական:

— Ա՛յ զոչաղ տղա, լավ հախներից յեկավ,— գո-
ռում եր նավաստին ու ծափահարում,— կրկնի՛ր.

Դերասանը խոնարհեցրեց գլուխը, գնաց բեմի
հետևը և վերադարձավ այնտեղից՝ լարված բայանը
ձեռքին: Գնալու ժամանակ յերգում եր ու բասի լա-
րերին աալիս:

Ա՛յ խնձորիկ, խնձորիկ,
Ո՞ւր ես դու դուր գալիս,
Հենց վոր ընկար նեվինկա,
Ել ենտեղից յետ չես գա:

Կասուլյա շապկավոր պատանին, քանի ուժ ուներ,
խփում եր բալալակայի լարերին: Խփում եր ու հետն
էլ թխկացում ձեռքով: Բալալայկան տղտղաց նրա
մատների տակ ինչպես մեղու, իսկ հետո, կարծես ա-
զատվելով գերուլթյունից՝ ճընգճընդացու դայլայլեց:

Գիտարիստը մատներով համարձակ ձգում եր վո-
լորուն լարերը: Գիտարը դըռռում եր, իսկ լարերը
բարձր շրխկում էյին՝ զարնվելով նրա փայտե արկղի-
կին:

Յերաթիշտներից ամենաջահելն ու ուրախը դարչ-
նագույն վոսկրիկով խփում եր մանդոլինի լարե-
րին, յերբեմն բարձրացնելով խուճուճ գլուխը,
յերբեմն դանդաղ ցած կախելով այն: Նրա ձեռ-
քերն արագուլթյամբ շարժվում էյին, կարծես լարված
լինեյին: Ճակատի վրա ցնցվում եր նրա դզզզված
քյաքյուլը:

Իսկ նրա կողքին հաղթանդամ, մեծ բեխավոր մե-
կը՝ առանց շտապելու, ձայնակցում յեր նրան: Նրա
մանդոլը կարծես թե ինչ-վոր թավ բանով կոծկում
էր մանդոլինի շաղակրատ հնչյունները:

Արհեստավորներն ու կարմիր բանակայինները
սկզբում հանդարտ, իսկ հետո ավելի ու ավելի բարձր
էյին թրխկացնում կաֆելով պատած հատակն իրենց
վոտքերի ծայրերով ու կրոնկներով:

Հանկարծ սենյակի մեջտեղում հայտնվեցին յերկու
կարմիր բանակային:

Նրանք մի բուպե կանգնեցին իրենց տեղում, հետո
մեկը նրանցից ափով չմփացրեց կոշիկի ճիտքին ու
սկսեց պղպած պարել, վոտքերը քթից բարձր դցելով:
Իսկ մյուսը պտտվում եր նրա շուրջը, ճտճտացնում
մատներով, թխթխկացնում կոշիկի ծայրերով ու
պտույտ գալիս՝ լայն բաց անելով շինելի փեշերը:

— Շարունակի՛ր, շարունակի՛ր, մի՛ ուշացնի՛ր...—
բղավում եր բոմբերով նավաստին,— ցամաքայինների
հերն անիծի՛ր:

Կապուլյտ բլուզավոր պատանին հինգ մատով ել հարվածում եր բալայայկայի լարերին, մեծ բեխանին շարունակում եր մանդոլինի նվագը, թնդում եր կիթառը, ծանր կոշիկները խուլ թխթխկացնում էին հատակը:

— Հապա նորից, փուքը չնստեցնես:

Սենյակով անցնում եր փոքրիկ, շատ նիհար մի պառավ: Նա չորս կողմն եր նայում ու ժպտալով ասում.

— Դուք, սատանանե՛ր, ի՞նչ եք ամեն ուր շուրջպար սարքում: Ձեր պատճառով մարդ քնել էլ չի կարող:

— Դուրս մի՛ տա, տատի՛, — ասաց նավաստին պառավին, ավելի լավ կլիներ կրունկներով մի լավ թխկացնեցիր ու լազաթին պար գայիր. կաքավի պես սուրայիր:

— Իսկ դու կարծում ես՝ չե՞մ կարող, հլա մի կողմը քաշվի՛ր: — Պառավը գլխի սպիտակ շորն արագությամբ ծոծրակն իջեցրեց, թևերը կանթեց ու սկսեց «Որլովսկայա» պարել:

— Պարի՛, պառավ, բոլոր սրբերի հերն անիծի՛, — աղաղակում եր նավաստին:

Պառավը հանկարծ կանգնեց, գլխաշորը յետ քաշեց հոնքերի վրա և բարկացած ասաց.

— Մարդ մեղքի մեջ կթաղվի այստեղ:

Հետո բոլորն էլ պարեցին: Մոռացության տվին և՛ քաղցը, և՛ տիՖը, և՛ անտանտը: Պարում էին կարմիր բանակայինները, պարում էին դեպոյականները, ցատկոտում ու պտուլյտ էին գալիս ջահելները: Իսկ ամենից շատ ջանում եր բոմբերով նավաստին: Նա վերև եր թռչում, տեղում պտուլյաներ դործում ու թռչելիս քաշքշում՝ ում պատահում եր:

— Ընկեր կարմիր բանակայիններ՛, դուրս յեկե՛ք, — հանկարծ դռների մոտ հնչեց կոմիսարի տագնապալից ձայնը:

Բաց դռնից ներս խուժեցին ցուրտն ու գիշերային խոնավությունը: Յերաժշտությունն ընդհատվեց:

Կայարանի հետևում, կոնորեզովի բլրակի մոտ դղրդաց մի կրակոց:

Կանայք և յերեխաները նեավեցին դեպի յելքը: Նրանց հետևից՝ դեպոյականները:

Նավաստին ցատկեց դռների մոտ և ամբողջ հասակով ձգվեց:

— Մի՛ շտապեք, ընկերներ՛: Առանց խուճապի: Նախ կարմիր բանակայիններին բաց թողեք:

Ամբոխը մի կողմ քաշվեց, իսկ կարմիր բանակայինները, զնալիս շինելները հազնելով, մեկը մյուսի հետևից լուռ դուրս յեկան:

Յերեք բոպեցից հետո ագիտ-սուսկտում այլևս վոչ վոք չեր մնացել: Միայն յերաժիշտներն իրենց նոտաներն էին փաթաթում ու դործիքները թաշկինակներին մեջ կապում:

Այս յերեկոյից ուղիղ յերեք ուր կարմիր բանակայիններն առանց հացի ու ջրի դիմացան դեպոյի վրա դործած սպիտակների հարձակումներին, թնդանոթների ու զնդացիրներին փոթորկանման կրակին: Բայց այսուամենայնիվ պաշտպանեցին դյուղը և չղիջեցին սպիտակներին:

Իսկ հետո կարմիր բանակը հեռացավ: Նրա հետևից էլ՝ քառասուն հոգի մեր գյուղացիներից:

Մնացածները թաղնվեցին, ինչպես մկները՝ բնեբում: Լռեցին արհեստանոցի դազգյահները. դեպոյում կանգնած մնացին սառը շոգեքարչերը: Դատարկ է: Միայն կարմիր գլխարկով փոքրիկ ու անհանգիստ մարդն է շրջում կայարանում և արհեստավորներ փնտռում աշխատեցնելու համար:

Վ Գ Լ Ո Ի Խ

ՍԵՆԿԱՆ ԽԱՔՍ Ե ՏԱԼԻՍ

Մի անգամ յես ու Անդրեյը միասին գնացինք կայարան: Ձգեցինք դուռն մետաղյա բռնակը — չի բացվում: Անդրեյը հրեց ուսով, դուռը չի շարժվում:

— Սատանան իրենց հետ, ցանկապատի վրայով կանցնենք, — բարկացած ասաց Անդրեյը և աջ ձեռքով բռնեց ցանկապատի բարձր, ատամնավոր տախտակից:

— Բարձրացրո՛ւ, ի՞նչ ես կանգնել, — ձայն տվեց նա ինձ՝ թևերի վրա ձգվելով դեպի վեր: Նրա վառքերը սահում էին տախտակների վրայից: Յես ձախ ուսս մոտեցրի Անդրեյին: Նա պատառուտված կոչկով հենվեց ուսիս և արագ մազլցեց ցանկապատի ատամնավոր տախտակների վրայով:

— Ձեռքդ տո՛ւր, — ասաց նա ինձ:

Յես ձեռքս մեկնեցի, և նա հեշտությամբ ինձ վերև քաշեց:

— Ծլկվեցինք: Կարծում էյին, թե ուրիշ ճանապարհ չենք կարող գտնել, — փնթփնթաց Անդրեյն ու ցանկապատից ցած թռավ:

Տախտակների վրայից սողալով՝ յես ել նրա հետևից իջա:

Առաջներս կայարանի կեղտոտ շենքն է՝ լայն, ճաքճքած ապակիներով: Չախ կողմում, յերկաթգծերի հետևում, վորոնց վրա վոչ մի վազոն չէր յերեւում — լքված, տախտակի պահեստն է: Աջ կողմում՝ դնացքների յուղ քսող հերթապահի տնակը և մրակալած յեռաջրամանը:

Մենք մոտեցանք հերթապահի տնակին: Անդրեյն զգուշությամբ դուռը հրեց: Սեղանի, հատակի ու փոքրիկ դրասենյակի պատուհանների վրա թափթրված էյին թղթի կույտեր և մազութի, խծուծի, դործիքների վերաբերյալ ահագին տեղեկագրեր:

— Վոչ վոք աշխատանքի չի գալիս, — ասաց Անդրեյը:

— Իսկ ինքդ կերթայի՞ր:

— Իշտահիդ քացալիս:

Այդ միջոցին կայարանի ծածկի տակից՝ իրար փաթաթված դուրս յեկան յերկու փափախավոր կապակ: Յերկուան ել հարբած էյին: Նրանցից մեկը,

հաղթանդամ ու հաստ, արմունկով սեղմած ուսից ճոճվող հրացանը, ինչ-վոր մրթմրթում եր կախ ընկած շրթունքներով: Մյուսը, կարճահասակ, դեղին ուսադիրներով, իր հետևից քարշ եր տալիս կազակային թուրը և բարակ ձայնով ծոր տալիս:

Կազակները ծառայությունից տուն էյին գնում...

Մենք թաղնվեցինք յեռաջրամանի հետևը:

Կարճլիկ կազակը մի քանի անգամ սկսեց նույն յերգը — «Կազակները ծառայությունից տուն էյին գնում», «Կազակները ծառայությունից տուն էյին գնում», բայց վոչինչ չէր դուրս գալիս: Վերջապես նա թափահարեց ձեռքը և ճղճղալով ասաց:

— Ե՛հ, ձե՛ռք քաշի դրանից, արի ուրիշն սկսենք:

Բայց հաստը նրան չէր լսում: Նա հո բոլորովին բլբուլ եր դարձել: Փափախը ծոծրակի վրա ծռելով՝ նա կանգնեց և մտածկոտ ու կենտրոնացած սկսեց թքել միևնույն տեղը: Յածլիկը նույնպես կանգնեց անշարժ ու սկսեց նայել այնտեղ, ուր թքում եր հաստլիկը:

— Յերգը մարդու հոգին փառավորում է, — վերջապես ասաց կարճահասակը:

— Յերգը հենց յերգ է, — համաձայնեց հաստը:

Այդ միջոցին անկյունից յերևաց տղայի գզգզված մազերով մի գլուխ ու կրկին թաղնվեց:

— Գրիչկա՛, — ասաց Անդրեյը, — նայի՛ր, հեռադրասյունի մոտ կանգնածը կարծես Սենկան է:

— Իհարկե Սենկան է:

Յես ձեռքս թափահարեցի:

Սենկան անկյունից դուրս թռավ և, քափի ուժ ունեւր, վազեց դեպի մեզ:

— Կանգնի՛ր, — գոչեց հաստ կազակը, ուսից իջեցնելով հրացանը:

Փոքրը դուրս քաշեց պատյանից թուրը և նետվեց դեպի Սենկան:

— Կանգնի՛ր, — կանչեց հաստը յերկրորդ անգամ և շիկացրեց փակազակը:

Սենկան կանգնեց:

— Ո՞ւր եյիր վազում, — ճղճղաց կարճլիկը՝ բրու-
նելով Սենկայի բաճկոնակի ոճիքից:

— Տուն:

— Վո՞րտեղից:

— Գյուղից:

— Գյուղում ի՞նչ եյիր անում:

— Մի ծանոթի մոտ եյի գնում, կազակի... Յես...

— Ստում ես: Ինչո՞ւ համար եյիր գնում: Ասա՛,
բայց չխաբես:

— Մի գյուղացու մոտ եյի գնում, նա Շկուրայի
ճոտ է ծառայում: Մեզ ազգական է, — ասաց Սենկան՝
թարթելով աչքերը:

— Իսկ ինչո՞ւ եդ կողմով եյիր գնում: Գյուղն են
կողմն է, իսկ դու եդպես եյիր գնում: Ի՞նչ ես դուրս
տալիս: — Կազակը ճիտքից դուրս քաշեց մտրակը: —
Տեսե՞լ ես:

— Քեռի, մի՛ ծեծի, աստված վկա, ճիշտ է,
գյուղումն եյի: Աստված վկա, ճիշտ եմ ասում...

— Ստում ես, գյուղում չես յեղել: Վո՞րտեղ ես
ապրում:

— Գյուղում, — յերկչոտ պատասխանեց Սենկան՝
մի վոտքից մյուսի վրա հենվելով ու թախծոտ չորս
կողմը նայելով:

Այդ ժամանակ Անդրեյն անկյունից նրան ձեռքով
արեց: Սենկան ուղում եր դուրս պրծնել, բայց կազա-
կը պինդ բռնել եր նրա ոճիքից:

Սենկան կանգնած եր նրա առաջ և չեր համար-
ձակվում մեր կողմը նայել:

— Առաջնորդի՛ր ձեզ մոտ, սատանի ճո՛ւտ: Մենք
այնտեղ կտեսնենք՝ եդ ի՞նչ ազգականներ են, վոր ծա-
ռայում են Շկուրայի մոտ:

Կազակները Սենկային քացի տալով քշեցին դեպի
գյուղ:

— Ա՛յ քեզ զգվելի արարածներ: Ո՞ւր տարան
նրան, — ասաց Անդրեյը և ձգեց իմ ձեռքից: — Գնանք
հետևներից:

Յերկաթուղային փողոցում հասանք կազակներին
ու Սենկային: Փոքր կազակը դեռ ձեռքից բաց չեր
թողնում Սենկայի ոճիքը: Սենկան գլուխը ներքե
խոնարհած՝ դանդաղ փոխում եր վոտքերը:

— Ի՞նչ կանեն նրան, — շշուկով հարցրի յես Անդ-
րեյին:

— Չգիտեմ, Անդրյուշա: Բայց յեթե յես լինեյի
նրա տեղ, կծլիվեյի վորևէ ձեռով:

— Ինչպե՞ս չե՛, կծլիվեյիր, — ասաց Անդրեյը, —
նրանք տեղն ու տեղը քեզ կգնդակահարեյին:

Սենկան կազակներին առաջնորդում եր դեպի
գյուղ: Նրանք անցան Կոնդրատյեվների հյուրանոցի
մոտով, չուկայի հրապարակից, Բասեյնի փողոցով,
չուռ յեկան Աղտոտ նրբափողոցն ու կրկին դուրս յե-
կան Կոնդրատյեվների հյուրանոցի մոտ: Այժմ միայն
կազակները դլխի ընկան, վոր Սենկան նրանց խաբս
է տալիս:

— Ի՞նչ ես մեզ պտտեցնում, սատանի ճո՛ւտ: Ո՞ւր
ես բերել, — բղավեց հաստ կազակը և վոտքը դետնով
տվեց:

— Դու, աղա՛, պոչ մի՛ խաղացնի, այլ ճիշտ տե-
ղը տար, — ծվծվում եր փոքրը:

— Յես պոչ չեմ խաղացնում, — աղաղակեց Սեն-
կան: Ու հանկարծ պտտվեց և մի ակնթարթում թռավ
ցածր ցանկապատով:

Կազակները սայթաքելով նետվեցին զանազան
կողմեր. թնդաց կրակոցը: Հետո յերկրորդը, յերրոր-
դը, չորրորդը: Կրակոցների վրա չորս կողմից հա-
վաքվեցին կազակները՝ վազելիս լցնելով հրացաննե-
րը:

Յես ու Անդրեյը ծովեցինք նրբափողոցը և
թաղնվեցինք մի ստար բակում: Քիչ հետո, յերբ մենք
կրկին նայեցինք փողոց, չորս կողմը խաղաղվել եր:
Վո՛չ կազակներ, վո՛չ Սենկա:

Մյուս որը վաղ առավոտյան Անդրեյը վազեց
մեր բակը և ինձ նկուղից դուրս կանչեց:

— Գնանք Սեմյոնի մոտ, — ասաց նա, — պետք է իմանալ՝ կենդանի՞ յե արդյոք:

Մենք վազեցինք դեպի բարակները, վորտեղ ասըում էին կայարանի բանվորները, և կամաց ծեծեցինք թաղիքով պատած դռներից մեկը:

Վոչ վոր ձայն չհասնեց: Յես նայեցի կողպեքի անցքից, բայց բան հասկանալ չեի լինում: Մենք յերկար ժամանակ ահանջ կախած լսում էինք ու դռան մոտի պատուհանից դիտում: Պատուհանը վարագուրած երևեալ թաշկինակով:

Մենք չեյինք հավատում, վոր բնակարանում վոչ վոր չկա: Գուցե վախենում են, թաղնվում: Մենք նորից թակեցինք դուռը: Վերջապես լավեց կանացի մի վախկոտ ձայն:

— Ո՞վ է:

— Մենք ենք, մենք — Գրիշկան, Անդրեյը:

— Ի՞նչ եք ուզում:

— Գործով ենք յեկել, — ասաց Անդրեյը:

Բանալին զրնգաց, դուռը բացվեց: Մենք ներս մտանք շան արկղի նմանող մի սենյակ: Մեր առաջ դուրս յեկավ արտասված մի կին: Անկյունում՝ սընդուկի վրա, հին, քրքրված վերմակի տակ քնած էին յերկու փոքրիկ աղջիկ:

— Անդրեյուշկա, — ասաց կինը շշուկով, — ախար, Սեմյոնս... Նրա շրթունքները դողդողացին... Սեմյոնս ախար... կորել է:

— Ի՞նչպես թե կորել է, — հաղիվ իրեն զոպելով ասաց Անդրեյը և նայեց դեպի ինձ: Սենկայի մայրը վոչինչ չպատասխանեց: Նա ծանրությամբ նստեց արկղի յեզրին, յերկու ձեռքով բռնեց զլուխը և սկսեց լաց լինել:

— Այժմ մենակ մնացի: Թե հո՛ր տեղն է անհայտ և թե Սենկան կորավ:

— Լաց մի՛ լինի, — ասաց Անդրեյը, — ասա՛ ի՞նչ է պատահել:

Սենկայի մայրը թեքով սրբեց արցունքը և սկսեց պատմել:

— Յերեկ նա ինձ չլսեց, թափառելու գնաց. «Յես, ասում ե, գնում եմ հորս փնտռելու»: Ամբողջ որն սպասեցի, իսկ յերեկոյան դեմ լսում եմ՝ մեկը դուռը թակում է: Բաց եմ անում, տեսնեմ — կազակներ են, իսկ նրանց հետ՝ Սենկան — ամբողջովին ջարդված, գզգզված, գլխարկը ցեխոտ...

— Հետո ի՞նչ, նրանք իրենց հետ տարա՞ն նրան, — հարցրեց Անդրեյը:

— Վո՛չ, չտարան: Սկսեցին հարց ու փորձ անել: Նրանք ե՛ մտրակներով շրջապնում էին նրան, ե՛ կոշիկներով կողքերին տալիս: Յես ել, իհարկե, լավ բաժին ստացա: Ու ել չեմ հիշում՝ ի՞նչպես կամ յերբ են գնացել: Ամբողջ գիշերը Սեմյոնն ահա այս սնդուկի վրա յե անցկացրել: Յես նրան ասում եմ. «Պառկի՛ր, Սե՛նյա»: Իսկ նա լուռ է: Առավոտյան դեմ նա ուր-վոր գնաց: Յես կարծեցի բակից ջուր բերելու յե գնացել: Իսկ նա այնպես ել դեռ չի վերադարձել:

— Նա կվերադառնա, — ասաց Անդրեյը:

— Ինչպե՛ս չե, կդա: Շատ կարելի յե, վոր նա կենդանի ել չե:

VI Գ Լ Ո Ի Ե

ՄԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԱԿՈՒՄ

Տաս որ նստեցինք նկուղում:

Պատահեց, վոր մի անգամ Իլյա Ֆեոդորովիչը կայարանից յեկավ, հայհոյեց, թքեց անկյունում, հատակից հավաքեց գզգզված կտավը, նայեց իր կնոջն ու ասաց.

— Գնանք, ա՛յ կնիկ: Այտեղ ել գտնեն կսպանեն, տանն ել գտնեն ելի կսպանեն: Իսկ տանը մեռնելն ավելի ուրախ կլինի:

Նրանք հեռացան, իսկ նրանց հետևից ցրվեցին իրենց տները նաև նկուղի մյուս բնակիչները: Մենք նույնպես գնացինք մեր բնակարանը:

Մայրս իսկույն սկսեց մաքրել, կարգի բերել մեր նեղ, փոշուց զորչացած բնակարանը: Նա լվաց մեր ամանեղենները և դարսեց դարակները վրա, թաց շորով սրբեց սեղանը, վոր նմանում էր հնացած արկղի, զամբյուղից հանեց թաղցրած, ծակծկված ալուրե վարազույրները և կախեց սլատուհաններից:

Հետո նա նստեց սենյակի մեջտեղը՝ նստարանի վրա, հոգոց հանեց ու ասաց հորս.

— Ա՛յ, յեթե ընկերները հիմի դային, իսկապետ տոն կլինեն: Թե չե՛ փողոցներով շրջադայում են՝ միայն շկուրոյականները, — զգվելի յե նայելը:

Հայրս հոնքի տակով նայեց նրան և փնթփնթաց.

— Յեթե ձեռներդ ծալած նստես, այնպես շուտ չեն դա:

Մեկը յերեք անգամ դուռը ծեծեց:

— Հապա, Գրի՛շկա, վաղիր մի: Ո՞վ կարող է լինել, — ասաց հայրս:

Յես դուռը բաց արի: Ծեմքի վրա կանգնած էր Անդրեյը:

— Գրի՛շկա, հաղիվ արտասանեց նա, — կարմիր բանակը նահանջում է: Սպիտակներն արդեն գրավել են Ստավրոպոլը, Դվորցովին, Կիանը: Մոտենում են Կուրսավկային:

— Իսկ դու վո՞րտեղից գիտես:

— Գծի պահանջներն ասացին:

Անդրեյը թեքվեց դեպի ինձ և ախանջիս շնչաց.

— Գրի՛շկա, արի ուղղաճակատով փախչենք ընկերների մոտ: Կմանենք նրանց մոտ վարպետ կամավորներ, հետախույզներ կղառնանք, ձիեր կտան մեզ:

— Գնանք, — ասացի յես, բայց մի բոպեյից հետո փոշմանեցի. — Ձե՛, Անդրյուշա, յես չեմ կարող դալ:

— Ինչո՞ւ:

— Մեղքս դալիս է հորս, մորս: Նրանց ի՞նչպես կարող եմ թողնել:

— Թող եղ մեղք գալը, — հաստատորեն ասաց Անդրեյը. — Այսոր գիշերով տնից դուրս կգանք, իսկ վաղը կլինենք Կուրսավկա՝ մերոնց մոտ: Դու բրաունինգը կվերցնես, յես՝ նագանը: Քեռի Սուբբոտինին կգանենք:

— Իսկ յեթե սպիտակները մեզ բռնե՞ն:

— Ձեն բռնի: Նախ կերթանք մինչև Կրուտոյ, հետո Ձելյոնայա հեղեղատով, ապա կանցնենք մեծ գետնուղին և դուրս կգանք ուղիղ Կուրսավկա: Քեռի Սուբբոտինը մեզ կընդունի մարտիոց, իսկ յեթե վո՛չ, հեծելազոր կգրվենք... գնանք:

— Վո՛չ, չեմ դա, — կտրակահասպես հրաժարվեցի յես:

Անդրեյն ուղղեց իր սպիտակ, գզգզված փափախը, մի բոպե աչքերը հառեց ինձ վրա և լուռ հեռացավ: Յես մնացի աստիճանների վրա մենակ:

«Իսկ յեթե հանկարծ Անդրեյը գնա՞, — մտածեցի յես. — Ձե՞ վոր նա այդպիսին է: Մթնով գյուղից գուրս կգա, ապա հեղեղատներով: Իսկ հետո կցատկի օեմաֆորով — ահա և քեզ Կուրսավկան: Կգտնի ծանոթ կարմիր բանակայիններին, քեռի Սուբբոտինին: Իսկ յես փողոցները պիտի թափառեմ, մինչև կայարան, ապա յետ: Ահա և բոլորը: Հիմար եմ յես, վոր չգնացի Անդրեյի հետ»:

Ուզում եյի վազել նրա հետևից ու հասնել, բայց ամաչեցի:

Ամբողջ որը մենակ թափառեցի — մինչև անգամ Վասիլայի մոտ ել չգնացի:

Մթնշաղին հայրս, Իլյա Ֆեոդորովիչը և Չեկունովը դուրս յեկան բակը: Նստեցին սրահի աստիճանների վրա, սկսեցին ծխել:

Յես ու Վասիլան կողք-կողքի տված՝ տեղավորվեցինք շան արկղի վրա:

— Ա՛յ թե ժամանակներ են, հա՛, — ասում էր Իլյա Ֆեոդորովիչը հստակ ու կտրուկ ձայնով, — բոլշեվիկների ժամանակ անհամեմատ ավելի լավ էր: Իսկ

այժմ թեկուզ հենց ծակը մտիր: Առաջ, պատահում էր, դնում ես գյուղով և չես վախում վոչ վոքեց, ազատ: Իսկ այժմ դնա ու չորս կողմից մտիկ տուր, չլինի հանկարծ մեկը գլուխդ հրացանի կոթով արնա- շաղախ անի: Միայն են և մնացել, վոր նստես տանն ու յերեխաների հետ կովի բռնվես: Յեվ տա՛նը պետք է նստեմ: Յես չե՛մ դնա նրանց համար աշխատելու: Բաղցրից կստակե՛մ ու չեմ դնա:

— Կերթաս, Իլյա Ֆեոդորովիչ, — ասաց հայրս, — ինչքան ուզում ես՝ պոչ խաղացրու, միևնույնն է, աշխատանքի կքչեն, են ել՝ ինչպես վոչխարներին են քչում: Նրանք մեզ հետ կարճ կխոսեն: Թուրը կհանեն, ու կարծես ուսերիդ գլուխ ել չի յեղել:

— Ուրեմն ավելի լավ է գերեզման մտնել, քան այսպես ապրել, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը: — Չկարողացանք ընկերներին դնահատել ինչպես վոր պետք էր: Բայց չե՞ վոր նրանց ժամանակ բանվորներն իրենց ազատ ելին զգում: Ի՞նչ ես կարծում, Անդրեյ Իգնատյեվիչ, — հարցրեց նա Չեկունովին:

— Ի՞նչ մտածել: Մտածելն ավելորդ է: Պարզ է՝ լավ էր, վատացավ:

— Հենց եղ է, վոր վատացավ: Բուլչեիկները որով մի՛ բան ինձ դուր չեր գալիս — փողը շատ էր, և բուրը զմնազան... ինչի՞ յե նման դա: Անդրազետն ահագին փողը գրպանում կարող է մեռնել: Ի՞նչ ահագին փողը յե՞րբ եր նա սովորել միլիոններ ներ անգրագետը, յե՞րբ եր նա սովորել միլիոններ հաշվել: Իհարկե չեր սովորել: Իսկ փո՞ղ, ինչ թղթի կտոր վերցնելիք, միլիոն էր: Իրենք բուրժուայները դեմ պայքարում էլին, բայց միլիոնատերեր էլին ստեղծում:

— Այս դեռ փորձանք չե, — ասաց հայրս, — փողն այստեղ դեր չի խաղում:

— Ի՞նչպես չի խաղում: Իսկ առանց փողի յես ի՞նչ պիտի լափեմ: Համենայն դեպս ընտանիք ունեմ: Իսկ յես ել, իսկի չե, մեկ-մեկ ուտել կուզենայի:

— Դա ճիշտ է, Իլյա Ֆեոդորովիչ, փողի խնդիրը

մի կերպ կարելի յե կանոնավորել, իսկ յեթե չկուրո- յականները քեզ կախաղան են բարձրացնում կարմիր- ներին ոգնելու համար — եղ արդեն ուղղել չես կարող: Կայարանապետն անշուշտ ամեն բան, ումը վոր պետք է, հայտնած կլինի արդեն: Հավանորեն և Լեոն- տի Լավրենտյեվիչի մասին նույնպես զեկուցել է, վոր նա բուլչեիկներին համար ճանապարհ է նորոգել: Իսկ յեթե նա ել մատնած չլինի, ապա Սոմովը — այդ ա- նիծված բայդուչն արած կլինի:

— Ի՞նչ դալաթ արինք՝ մնացինք այստեղ, — ասաց նա նոթերը կիտած, — ախր չե՞ վոր մերոնք համարյա բոլորն ել դնացել են: Տե՛ս, Իվան Չախարովիչ Կապուստան դնացել է, Դյաչենկոն դնացել է, Ուլեյնիկովը նույնպես, իսկ մենք հիմարացանք, մնացինք թրչ- նամուն ծառայելու:

Իլյա Ֆեոդորովիչը դարձավ դեպի Անդրեյ Չեկունովը և անսպասելիորեն հարցրեց.

— Հապա՛, դու, հավի գլուխ, Անդրեյ Իգնատյե- վիչ, կարո՞ղ ես ասել՝ ինչո՞ւ յես մնացել:

Չեկունովը վճռները քսքսեց աստիճաններին և ասաց վրդովված.

— Հարցաքննո՞ւմ ես: Ի՞նչ, յես փո՞քր եմ, հա՞:

— Հապա, համենայն դեպս, ասա՛:

— Չհասցրի, ահա բոլորը, — ճղճղալով բացական- չեց Չեկունովը:

— Մի՛ ստիր, ասա, վոր մեղքացել ես ընտանիքի թողնել:

— Ի հարկե, և ընտանիքս մեղք էր, — ասաց Չեկունովը: Մեկ ել, ով դիտե, ի՞նչ դուրս կգա այդ հեղափոխություններից: Չպետք է իզուր տեղը գլուխը փորձանքի մեջ գցել:

— Եխ դու, ճղճղա՛ն, — ասաց Իլյա Ֆեոդորովի- չը: — Ի՞նչ արժե քո գլուխը: Հեղափոխության մեջ այնպիսի մարդիկ են գլուխները վեր դնում, վոր քո թայը չեն: Ա՛յ, կոմիսարը քեզ որինակ: Մեծ խելքի տեր մարդ է, միջազգային դործերից հասկանում է:

Իսկ դո՞ւ ինչ ես — չվիացնում ես շոգեքարչի համար, թափահարում դրոշակները — ահա քո ամբողջ աշխատանքը: Հետո ել կաշվիցդ ես վախենում:

Յես ու Վասիկան չկարողացանք մեզ զսպել և բարձրը փոթկացինք: Չեկունովը բարկացած նայեց մեզ, իսկ Վասիկայի հայրն ասաց.

— Դո՛ւք ինչ եք ականջներդ կախ դցել, ա՛յ մըղլակներ. փորեւե տեղ կերթայիք, թե չե նստել եք ու ատամներդ եք ցույց տալիս:

— Թող նստեն, — միջամտեց հայրս: — Եղ ավելի լավ է, քան այսպիսի խառը ժամանակ փողոցները չափչփեն:

Իլյա Փեոզորովիչը թափահարեց ձեռքը:

— Դե՛հ, նստեցե՛ք ու լուս կացե՛ք:

Հայրս գրպանից հանեց բրդած կանաչ թուփուներ, հյուրասիրեց նրանով Իլյա Փեոզորովիչին, իսկ հետո նաև ճղղանին:

Յեվ նրանք սկսեցին ազահությամբ ծխել: Չեկունովը պապիրոսի ծուխը յերկար-յերկար ներս եր քաշում, հինգ մատներով ծածկում պապիրոսը, կարծես վախենում եր, փոր մեկը կարող է խլել նրանից: Ծուխը բերանից բաց եր թողնում նա յերկար, բարակ, ոճանման շերտով, կամ թե չե բերանը լայն բաց անելով՝ բաց եր թողնում ծխի կապտավուն ողակներ: Իսկ ինքը աչքը չեք հեռացնում Վասիկայի հորից: Յերևում է, միշտ մտածում եր՝ ինչպես ավելի լավ պատասխանել Իլյա Փեոզորովիչին՝ նրա վիրավորական խոսքերի համար:

Վերջապես նա պապիրոսը դեն դցեց, հազաց և սկսեց խոսել.

— Քեզ համար, Իլյա Փեոզորովիչ, վոչինչ չարժե մարդու վիրավորելը: Յես ինքս հեղափոխական եմ, բայց մի ծաղկով դարուն չի դա: Քամին բռնել չի չինի, կազակներին ել՝ տեղից շարժել: Նրանք սնգարնգում են սպիտակների իշխանության համար: Իսկ մենք, չգիտես ինչու, պարտավոր ենք դժոխք մտնել:

Ավելի լավ է նստենք, սպասենք: Թե չե՛ կախաղանի կարժանանաս:

— Դեհ, հեղափոխական, այժմ դու նստի՛ր ու նայի՛ր, իսկ մենք հրացան կվերցնենք: Յերբ վոտքի կկանգնեն բոլորը՝ տիխարեցկեցիները, Ստավրոպոլի բանվորները, Արմավիրում՝ զավոդի բանվորները, իսկ մյուս կողմից ել կարմիրները հուպ կտան—և ահա կսկսվի իրարանցումը:

— Մենք նրանց ենպես կհասցնենք, — բղավեց անսպասելիորեն Վասիկան և սպառնալից թափահարեց ձեռները: — Հրացաններից, գնդացիներից... Ենպես շրմփացնենք ումբը:

— Ի՛նչ ես լուպաղանում, — ճղճղաց նրա վրահայրը, — կոփողիս մտի՛կ:

Վասիկան միանգամից խաղաղվեց ու չփոթվեց:

— Ա՛խ դու, — բուռնցքով խթեցի յես նրա կողքը: — Ամենահետաքրքիր տեղում խոսակցությունը ընդհատեցիր:

Յեվ իրավ, խոսակցությունն այլևս չեք կապվում: Միայն Չեկունովն իրեն-իրեն մըթմըթում էր քթի տակ:

— Չե՛, ավելի լավ է չքրքրել: Մենք վոչինչ չենք հասկանում, չգիտենք՝ ի՞նչ է, ինչո՞ւ համար, ի՞նչ է լինելու: Կարմիրները հեռու յեն, իսկ կադետներն անթիվ, անհամար — ի՞նչ կարող ես անել նրանց: Միայն ատամներդ կարնոտես. այնպես չե՞:

— Ատամներդ կջարդես — և այն ել ինչպե՛ս, — ասաց Իլյա Փեոզորովիչը, վեր կացավ աստիճանների վրայից և սկսեց դանդաղ քայլել դեպի տուն:

Նրա հետևից մյուսներն ել ցրվեցին իրենց ոթկվանները:

Իսկ դո՞ւ ինչ ես — չվճացնում ես շոգեքարչի համար, թափահարում գրոշակները — ահա քո ամբողջ աշխատանքը: Հետո ել կաշվիցդ ես վախենում:

Յես ու Վասիան չկարողացանք մեզ դուրսից և բարձրը փոթկացինք: Չեկունովը բարկացած նայեց մեզ, իսկ Վասիայի հայրն ասաց.

— Դո՛ւք ինչ եք ականջներդ կախ գցել, ա՛յ մըղձակներ. մորեւե տեղ կերթայիք, թե չե նստել եք ու աստամներդ եք ցույց տալիս:

— Թող նստեն, — միջամտեց հայրս: — Եղ ավելի լավ ե, քան այսպիսի խառը ժամանակ փողոցները չափչփեն:

Իլյա Ֆեոդորովիչը թափահարեց ձեռքը:

— Դե՛հ, նստեցե՛ք ու լուռ կացե՛ք:

Հայրս գրպանից հանեց բրդած կանաչ թուփուներ, հյուրասիրեց նրանով Իլյա Ֆեոդորովիչին, իսկ հետո նաև ճղղանին:

Յեզ նրանք սկսեցին ազահուլթյամբ ծխել: Չեկունովը պապիրոսի ծուխը յերկար-յերկար ներս եր քաշում, հինգ մատներով ծածկում պապիրոսը, կարծես վախենում եր, մոր մեկը կարող ե խլել նրանից: Ծուխը բերանից բաց եր թողնում նա յերկար, բարակ, ոճանման շերտով, կամ թե չե բերանը լայն բաց անելով՝ բաց եր թողնում ծխի կապտավուն ողակներ: Իսկ ինքը աչքը չե՛ր հեռացնում Վասիայի հորից: Յերևում ե, միշտ մտածում եր՝ ինչպես ավելի լավ պատասխանել Իլյա Ֆեոդորովիչին՝ նրա վիրավորական խոսքերի համար:

Վերջապես նա պապիրոսը դեն գցեց, հազաց և սկսեց խոսել.

— Քեզ համար, Իլյա Ֆեոդորովիչ, մոչինչ չարժե մարդու վիրավորելը: Յես ինքս հեղափոխական եմ, բայց մի ծաղկով դարուն չի դա: Քամին բռնել չի լինի, կազակներին ել՝ տեղից շարժել: Նրանք սնդսրնգում են սպիտակների իշխանության համար: Իսկ մենք, չգիտես ինչու, պարտավոր ենք դժոխք մտնել:

Ավելի լավ ե նստենք, սպասենք: Թե չե՛ կախաղանի կարծանանաս:

— Դե՛հ, հեղափոխական, այժմ դու նստի՛ր ու նայի՛ր, իսկ մենք հրացան կվերցնենք: Յերբ վոտքի կկանգնեն բոլորը՝ տիխարեցկեցիները, Ստավրոպոլի բանվորները, Արմավիրում՝ զավոդի բանվորները, իսկ մյուս կողմից ել կարմիրները հուլ կտան — և ահա կսկսվի իրարանցումը:

— Մենք նրանց ենպես կհասցնենք, — բղավեց անսպասելիորեն Վասիան և սպառնալից թափահարեց ձեռները: — Հրացաններից, գնդացիներից... Ենպես շրմփացնենք ումբը:

— Ի՛նչ ես լուպաղանում, — ճղճղաց նրա վրահայրը, — կուվողիս մտի՛կ:

Վասիան միանգամից խաղաղվեց ու շփոթվեց:

— Ա՛խ դու, — բուռնցքով խթեցի յես նրա կողքը: — Ամենահետաքրքիր տեղում խոսակցությունն ընդհատեցիր:

Յեզ իրավ, խոսակցությունն այլևս չե՛ր կասկածում: Միայն Չեկունովն իրեն-իրեն մըթմըթում էր քթի տակ:

— Չե՛, ավելի լավ ե չքրքրել: Մենք վոչինչ չենք հասկանում, չգիտենք՝ ի՞նչ ե, ինչո՞ւ համար, ի՞նչ ե լինելու: Կարմիրները հեռու յեն, իսկ կադետներն անթիվ, անհամար — ի՞նչ կարող ես անել նրանց: Միայն աստամներդ կարնոտես. այնպես չե՞:

— Ատամներդ կջարդես — և այն ել ինչպե՛ս, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը, վեր կացավ աստիճանների վրայից և սկսեց դանդաղ քայլել դեպի տուն:

Նրա հետևից մյուսներն ել ցրվեցին իրենց ո՞թե-վանները:

Յես ու Վասկան բախում վեզ եյինք խաղում։
Հենց պատրաստվում եյի վեզը գցելու, յերբ Վասկան
կանչեց։

— Սպաները։

Յես յետ նայեցի։ Յերկու հոգի մտնում եյին մեր
բախը — կայարանապետը և անդլիական կանաչ շինե-
լով ու սպիտակ ձեռնոցներով մի սպա։ Վասկան մի
ակնթարթում թռավ դեպի տուն։

— Սպաներ են դալիս, — ձայն տվեց Վասկան իր
հորը, վոր կանգնած եր. շեմքի վրա։

— Թող դան, — կամաց պատասխանեց Իլյա Ֆեո-
դորովիչը և թագնվեց դռան յետևում։

Իսկ յես մնացի բախում։

Սպան մոտեցավ ինձ և քաղաքավարի ասաց։

— Յերիտասարդ, բարի յեղեք այստեղ հրավիրե-
լու Իլյա Ֆեոդորովիչ Կոնստանտինովին։

— Մեզ մոտ այդպիսի մարդ չկա, — ասացի յես
գլուխս կախ գցելով։

— Ինչո՞ւ յես խաբում, — գոռաց կայարանապե-
տը։ Յես յերկաթուղու մոտ ապրող ամեն մի շանն ան-
դամ ճանաչում եմ։ Ահա՛ նրա տունը։

— Դուռը ծեծիր, տղա՛, — ասաց սպան ինձ՝ զըն-
դացնելով խթանները։

— Վոչ մի Իլյա Ֆեոդորովիչ չեմ ճանաչում, ինք-
ներդ ծեծեցե՛ք, — ասացի յես։

Կայարանապետը սպառնալիորեն նայեց ինձ և
դնաց դեպի դուռը։ Բայց այդ բոպեյին Իլյա Ֆեոդո-
րովիչը յերևաց շեմքի վրա։

— Ի՞նձ եք հարցնում, — հարցրեց նա հանդիստ։

— Այո՛, քեզ, — ասաց կայարանապետը։

Սպան վոտքից գլուխ չափեց Վասկայի հորն ու
ասաց։

— Ծանոթացե՛ք այս թղթին։ — Յեվ նա մեկնեց

Իլյա Ֆեոդորովիչին կանոնավոր ծալած մի թերթիկ։
Վասկայի հայրն սկսեց դանդաղությամբ և բարձր
կարդալ։

«Հրամայում եմ Նեվինկա կայարանի բոլոր բանվոր-ծա-
ռայողներին մի որվա ընթացքում ներկայանալ կայարանի
պարետին՝ ցուցակադրվելու և այդ բոպեյից անցնելու ի-
րենց պարտականությունների կատարմանը։ Հակառակ դեպ-
քում նրանք կհամարվեն թափառաշրջիկներ և բոլշևիկնե-
րին աջակցողներ։ Նշանակված ժամկետին չներկայացողնե-
րը կհանձնվեն դատարանին, իսկ հայտարարվածները յեն-
թակա յեն գնդակահարության։

Ն-ի Դրոդզովյան զորագնդի պորուչիկ Գլուխով։»

Յենթակա յեն գնդակահարմա՛ն, — ծոր տալով
կրկնեց Իլյա Ֆեոդորովիչը և վերադարձրեց թերթիկը
սպային։

— Վո՛չ, վո՛չ, — ասաց սպան, — ստորագրեցե՛ք
սրա հետևը։

Իլյա Ֆեոդորովիչը կրկին վերցրեց թերթիկը,
չուռ տվեց և դանդաղ կարդաց։

«Հրամանը կարդացի վագոնների կցիչ Աֆա-
նասիյ Լուցենկո։ Ռեպկոյի անգրագիտության
պատճառով ստորագրեցի կրիվորուչկո»։

— Յես նույնպես անգրագետ եմ, — ասաց Իլյա
Ֆեոդորովիչը. — Գրել չեմ սովորել։

— Անգրագե՞տ ես, — կասկածանքով հարցրեց
սպան, — այդ դեպքում թող քո փոխարեն այս պատա-
նին ստորագրի։

Յեվ նա թերթիկը մեկնեց ինձ։

— Յես նույնպես գրել չգիտեմ, — ասացի յես։

Սպան բարկությամբ ուտերը շարժեց։

— Ի՞նչ հաստագլուխն ե, գրել ել չգիտե։ Կանչի՛ր
վորևե գրագետի։ Մի՞թե ձեր ամբողջ բախում վոչ մի
գրագետ չկա։

Այդ ժամանակ իր բնակարանի դռներից դուրս

նայեց Չեկուճովը: Նա տեսավ սպային և խսկուշն թագնվեց դռան հետևում:

— Յեկե՛ք մի, յեկե՛ք այստեղ, — մատով արեց նրան սպան, — գրագե՞տ եք:

— Ճիշտ այդպես, — կակազելով արտասանեց Չեկուճովը:

— Ստորագրեցե՛ք:
Չեկուճովն ստորագրեց՝ առանց կարդալու:

— Իսկ այժմ սրա փոխարեն ստորագրեցե՛ք: Չեկուճովը կրկին ստորագրեց:

— Արհեստավորներից ել ո՞վ կա այս բախում, — հարցրեց սպան:

— Փականագործ Միրոշնիչենկոն, — պատրաստակամությամբ պատասխանեց կայարանապետը: — Ահա այս ձախ կողմի դուռն է, ձերդ մեծապատվություն:

Յեվ նրանք ուղեվորվեցին դեպի մեր դուռը: Վաչ հայրս եր տանը, վոչ մայրս — նրանք զնացել էյին հարևանների մոտ:

Սպանն դուրս յեկավ մեր բնակարանից և խստությամբ ասաց.

— Ուղարկել նրան պարետային մասը վոչ ուշ քան վաղը: Յեվ կայարանապետի հետ գնաց դեպի հարևանի տուն:

Չեկուճովը դեռ յերկար կանգնած եր բակի մեջտեղում և ցրված թարթում եր աչքերը:

— Եդ ի՞նչ եր, վոր նա խցկեց ինձ:
— Իսկ դու կո՞ւյր էյիր: Կառավարական թուղթ եր, հրաման:

— Հրաման: Ի՞նչ հրաման: Ինչի՞ մասին:
Իլյա Ֆեոդորովիչը թեքվեց դեպի Չեկուճովի ախանջն ու ասաց.

— Դու քո զնդակահարությունն ստորագրեցիր:
Չեկուճովն ամբողջ մարմնով ցնցվեց և դեղնեց:

— Ի՞նչ ես ասում, — ցնդվե՞լ ես:
— Վա՛չ, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը, — այդ դու

ես ցնդվել, — առանց կարդալու ստորագրում ես: Ի՞նչ շատ գրագետ ես:

— Բայց դու ել ես գրագետ, — ասաց Չեկուճովը:
— Գրագետ եմ, բայց չստորագրեցի: Ռեպկոն ել ահա չի ստորագրել: Իսկ քեզ յերկու անգամ կզնդակահարեն, յեթե աշխատանքի չգնաս, քեզ համար և իմ փոխարեն:

Այդ որը մեր ամբողջ բակը յերկար խորհրդակցում եր և մտածում — ի՞նչ անել, վաղն աշխատանքի դնա՞լ արդյոք, թե այսոր դիչերով ճամբա ընկնել հեղեղատով դեպի ընկերները:

Կանայք արտասվում էյին և համոզում իրենց տղամարդկանց՝ վաղն աշխատանքի դուրս գալ:

— Յեթե հեռանաք, ձեր փոխարեն մեզ ու յերեսաներին կզնդակահարեն, — ասում էյին նրանք:

— Դե լավ, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը՝ ձեռքը թափահարելով, — վաղն աշխատանքի դուրս կգանք, սակայն ըստ մեր գիտցածի կաշխատենք:

Յերեկոյան, յերբ հասակավորները ցրվեցին իրենց տները, Վասկան իրենց դռների մոտ կանգնեցրեց ինձ ու ասաց կամաց.

— Յես այս սպայի քթին այնպես կհասցնեյի քարով, յեթե միայն մեծ քար ընկներ ձեռքս:

VIII Գ Լ Ո Ի Խ

«ՄԻԱՍՆԱԿԱՆ, ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ»

Կայարանի մոտ, ուղեփոխների վրա ծանրությամբ զրնգաց պողպատը: Գնացքը մոտեցավ կայարանին:

Գնացքը հանդարտ կանգնեց կառավարության առաջ՝ դիլավոր դժի վրա: Դրողովյան զրահապատն եր այդ: Նրա վրա սպիտակ տառերով գրված եր՝ «ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆ»:

Չրահապատի խցիկներից դուրս յեկան պճնված

սպաները՝ լայն գրպաններով ու դեղին կոճակներով անգլիական նոր շինելներ հագած:

— Մտիկ տա՛ւր, ինչպես գարդարվա՛ծ են, — խօսեց կողքս վասկան, — կոճակներն ել վոսկուց են, գլխարկները հովարը՝ լաքած:

Սպաներից մեկը կանգնեց կառամատույցի մեջտեղը, ուշադրությամբ չորս կողմը նայեց և սկսեց քայլել դեպի ջրհորը: Այնտեղ, ջրմուղի աշտարակի մոտ կար մի ճղնոտ, բարձր ծառ: Սպան կանգնեց նրա մոտ, գլուխը ցցեց դեպի վեր և, խնամքով ծալելով մտ, Գեռ մեջից նոր շինելի փեշերը, բարձրացավ ծառը: Գեռ մեջտեղը չհասած, նրա լայն գրպանը փաթաթվեց ճյուղին. մի ձեռքով ճյուղը բռնած՝ մյուսով աշխատում էր գրպանն աղատել ճյուղից: Բայց գրպանը չէր յենթարկվում, կարծես մեկը ձեռքը տարել էր գրպանն ու ներսից պինդ պահել: Այլևս ճար չկար. սպան ամբողջ ուժով ձեռք գրպանը և նրան կախված թողնելով ճյուղի վրա՝ ինքը բարձրացավ ավելի վերև:

— Սպա յե, բայց ծառ բարձրանալ ել չգիտի, — ասաց վասկան: — Մյդ ձեռով նա իր շինելը կտոր-կտոր կանի և ծառի վրա կթողնի:

Սպան հասավ ծառի գագաթը, այնտեղ տեղավորվեց ճյուղերի վրա, գրպանից հանեց մեծ, սև հեռագիտակը և ուղղեց դեպի Կուրսավիկա:

— Անշուշտ կարմիրները նեղում են, — ասացի յես, — յերևի արդեն շատ մոտիկ են:

— Կարմիրները նրանց դեռ ցույց կտան, — Հանդիսավոր ձևով ասաց վասկան: — Առայժմ նրանք թող ճյուղերի վրա ցատկոտեն:

Ծածկված պլատֆորմի անիվների մոտ, յերկաթյա ծածկիչները շուռ տալով ու պտուտակավոր խողովակի մեջ թանձր մազութ յցնելով՝ յուղ քսողը դեռ-դեռ էր ընկնում: Վագոնների արանքում շղթայակցման մոտ մի փականագործ մուրճով շխկացնում էր ժանգոտած ֆարկուպը: Կառամատույցի կողքով անց ու դարձ էր անում պահակը ու հեռանում նրանց: Բարձ-

րահասակ, մեծ քթով, յերեք աստղանի լայն ուսադիրներով մի սպա անցուդարձ էր անում գրահասպատ պլատֆորմների մոտ: Դա «Հաղթություն» գրահասպատ գնացքի հրամանատարն էր: Ձեռքի անընդհատ շարժումներով ինչ-վոր բանի մասին խոսում էր յերիտասարդ մի սպայի հետ: Դա նույն սպիտակ ձեռնոցներով սպան էր, վոր կայարանապետի հետ յեկել էր մեզ մոտ:

— Սատանան գիտի, թե ինչ բան է դա, — ասում էր գրահասպատ գնացքի հրամանատարը: — Ձեզ մոտ խժուռու լու լու չինչ չկա: Դա այլանդակություն է, պարոն պարեա: Ինչի՞ մասին եք մտածում: Վոչ մի տեղ յես այնպիսի խառնաշփոթության չեմ պատահել, ինչպես ձեր կայարանում: Վո՞րտեղ ե բուֆետը:

— Ձեմ կարող ասել, — պատասխանեց սպան: — Յես այս կայարանն եմ յեկել միայն յերեք որ առաջ:

— Կանչե՛լ այտեղ կայարանապետին, — կարգադրեց հրամանատարը:

Պարետը գնդացրեց խթաններով ու շուտով վերադարձավ կարմիր գլխարկով փոքրիկ մարդու հետ:

Հրամանատարն ուղղվեց ամբողջ հասակով, աչքերը շեղեց փոքրիկ մարդու վրա և ատամների արանքով ասաց.

— Ի՞նչ է սա — կայարա՞ն, թե գլխետու՞ն: Ինչո՞ւ բուֆետ չկա:

— Կազակները մի քիչ չարածճիություն են արել, ձերդ բարձր բարեձննդություն:

— Կազակնե՞րը: Ձի կարող պատահել: Մեր կամավորական բանակը գողված է կարգապահության և պարտքի զգացումով:

— Այդ բոլորովին արդարացի յե բանակի վերաբերմամբ, — յերկչոտ պատասխանեց կայարանապետը, — բայց այսուամենայնիվ բուֆետը թալանեցին:

— Հիմարություն, — ասաց հրամանատարը՝ վեր քաշելով ուսերը:

— Տարաբխտաբար ճի՛շտ այդպես է: Բայց յես

կարող եմ դռնել բուժեալի տիրոջը: Վորքան ինձ
հայտնի չէ՝ նրա մոտ դեռ մթերքի պաշար կա, — ասաց
կայարանապետը:

Սպան աչքերը չոնց:

— Պաշար կա՞: Այդ դեպքում իսկույն դռն ք
նրան: Դրողդուլյան գնդի զինվորները չեն կարող
սպասել:

— Կկատարվի, պարոն հրամանատար, — գոռաց
կայարանապետը և անհետացավ յերրորդ կարգի դռ-
ների հետևը:

Կես ժամից հետո նա կրկին յերևաց: Թեև մտած՝
նա բերում էր բուժեալի տիրոջը:

Բուժեատապանի կողքին կանգնած կայարանապետը
նմանում էր մի փոքրիկ, քրքրված նավակի, վոր իր
հետևից քաշում է մի ահադին ծանրաշարժ բեռնա-
նավ:

Բուժեալի տերը, մի վրացի, քայլում էր զգուշու-
թյամբ ու վախվխելով ժպտում:

— Լավ, հրամանատար՛ր, — ասաց նա մինչև վերջ
լսելով սպային, — բուժեալ կլինի, դու միայն կարգ-
կանոն հաստատիր:

— Ասածդ կարգ-կանոնը ինձ մոտ կլինի: Իմ ժո-
ղովուրդը զուսպ է և ազնիվ, — ասաց հրամանատարը:

Բուժեատապանը ծիծաղեց բեխերի տակից:

— Ազնիվ ժողովուրդն ինձ անպատիվ արավ:

— Մի՛ վշտանա, — ասաց հրամանատարը, — կորց-
րածդ ոգուտը շուտով յետ կրեբես: Միայն ահա թե
ինչ, սիրելի՛ս, ինձ համար կպատրաստես մի լավ
Կարսի խորոված և սվյատոկրեստովսկի մի ջուխա
չարեքանոց ողի:

Վրացին գլխով արեց ու գնաց:

Շուտով կայարանի բուժեալի կողնյա վաճառասե-
ղանի հետևում յերևացին սպիտակ պիջակներով մա-
տուցողներ, իսկ փոքրիկ սեղանի շուրջն սկսեցին նըս-
տոտել «Հաղթութուն» զրահապատ գնացքի ստորին
պաշտոնյաները:

Կառամատուցը բոլորովին դատարկվեց: Միայն
յես ու Վասկան թափառում էյինք ու դիտում զրա-
հապատը:

Շոգեքարչից, կարծես ծխացող ումբից՝ մեա-
ղյա ճղատված ձողի նման բարակ շերտով բարձրանում
էր կապտավուն ծուխը:

Ամերիկական յերկու հուժկու պլատֆորմի վրա,
պտտվող պողպատյա դադգյահների վրա, դրված
էյին յերկար, կանաչ թնդանոթներ: Նրանց բաց իռ-
դովակից գլուխ ներս կմաներ, իսկ ստնակի մոտ
թնդանոթի բունը յերկու ձեռքով գրկել չէր լինի:

Պլատֆորմները ծովային թնդանոթներով գտնը-
վում էյին զրահապատ գնացքի մեջտեղը, իսկ առաջից
ու հետևից կցված էյին ասրանքատար պլատֆորմներ
յերեք դույմանոցներով՝ կանաչ բրեդենտով ծածկը-
ված:

— Կարմիրներն այդ վիթխարի բաների հախից
չեն կարող գալ: Անչափ մեծ են նրանք, — ասաց Վաս-
կան՝ դիտելով թնդանոթների փականները: — Մերոնք
այդ բաներից վոչ մեկը չունեն:

— Հլա սրան մտի՛կ, յերևելի բախտավոր ություն
է կարծես, — պատասխանեցի Վասկային, — հենց վոր
մերոնք սկսեն սավառնակներից ուղմբերը նստացնել,
նրանց թնդանոթների հոտն էլ չի մնա:

— Հա՛, ինչպես չէ՛ — տնազ եր անում ինձ Վաս-
կան. — տե՛ս, նրանք ինչքա՛ն հաստ են:

Մենք անցանք կառամատուցով: Նայեցինք կա-
յարանի լայն պատուհաններից:

Այնտեղ — բուժեատում հարբած դրողդուլցիները
հանել էյին իրենց անգլիական շինելները և պարում
էյին ուսական սլար: Պարելիս նրանք մոտենում էյին
վաճառասեղանին, կոնծում բմպանակով, հենց կրակա-
րանից խլում հավի կամ խորոված սուղակի կտորներ:

— Լսի՛ր, այդպես չի կարելի: Ինչո՞ւ յես վերց-
նում: Վճարի՛ր, խնդրեմ, — ասում էր բուժեալի տերը:

Վոչ վոք չէր ցանկանում վճարել:

— Հրամանատարը կվճարի: Հաշիվները փոստով ուղարկի՛ր, — բղավում էր մի անբեխ յունկեր: Նա բոունցքով խփում էր վաճառասեղանին: Հարվածից բաժակները, շշերը և ըմպանակները սեղանի վրա պարեյին գալիս:

— Յերիտասա՛րդ սպա, մենք խնդրում ենք քեզ, մի՛ աղմկիր, խնդրում ենք, — համբերությամբ համոզում էր նրան բուժետապանը:

Յունկերը շարունակում էր թմբկահարել վաճառասեղանին ու գոռալ ամբողջ կոկորդով:

Մեր կազակը, են հսկա,
Դևին դժոխք ցույց կտա,
Կըռ-կըռ-կըռ-կոունկիկ,
Կոունկիկը սիրունիկ:

Ջրահապատն է վորոտում,
Կոմունիստներ ճխլտում,
Կըռ-կըռ-կըռ-կոունկիկ,
Կըռունկիկը սիրունիկ:

Բուժետապանը նայում էր նրա վրա տխուր, կլոր աչքերով, հետո հանկարծ բռնեց գլուխն ու դուրս վազեց պերրոն:

— Ո՞ւր ե գնում նա: Յերևի հրամանատարին գանդատվելու գնաց, — շնչաց Վասիան. — շտապենք նրա հետևից:

Բուժետապանն անցավ ամբողջ կառամատույցը, կրնկեց ճակատամուտքն ու դուրս յեկավ հրապարակ: Մենք ել նրա հետևից:

— Վազեց կայարանապետի բնակարանը:

Սեղանատան ծայրի պատուհանը լայն բացված էր:

Յես ու Վասիան գիտեյինք կայարանապետի սեղանատան ու ննջարանի տեղը: Պատահել է, վոր մենք ժամերով կանգնել ենք նրա պատուհանների տակ ու գրամոֆոն լսել:

Վասիան կառչեց լուսամուտի ներքնատախտա-

կից ու քիթը ներս պարզեց կայարանապետի բնակարանը:

Յես քաշեցի նրա վարտիկից:

— Ո՞ւր ես բարձրանում: Կնկատեն:

— Մի տես՝ ինչքա՛ն յերշիկ կա, — կամաց ասաց Վասիան: Յես նույնպես պատուհանից ներս նայեցի: Սենյակի մեջտեղում դրված էր մի մեծ սեղան՝ դեղին սփռոցով ծածկած: Նրա վրա շարված էյին բազմաթիվ մանր ու խոշոր ափսեներ, փոքրիկ ափսեներով սև, փայլուն ձկնկիթ, դեղին ու մեծ-մեծ ծակոտիներով պանիր, կանոնավոր կտրտված, ողակաձև, ապխտած յերշիկ: Սեղանի վրա դրված էյին պահածոների բազմաթիվ բացված տուփեր, իսկ նրանց մեջ ուղիղ շարքով կանգնած էյին բարձր ըմպանակներ՝ սև գինով լեցուն: Սեղանի վերև պղնձյա շղթաներից կախված էր նավթավառ մեծ լամպը:

Կայարանապետը, վորպես անվանակոչիկ, նստած՝ վռվել էր բազկաթոռում, լայն բաց անելով իր ամառային բաճկոնակը:

Նրա կողքին, վոտը վոտին գցած, նստած էր գրահապատ գնացքի հրամանատարը: Այստեղ կային ելի յերեք սպաներ: Մեկը ճաղատ, ակնոցներով, մյուսը՝ դեղին բակենբարդներով, յերրորդը՝ մեր հին ծանոթ, կայարանի պարետը:

Հեռու անկյունում, բոլորից անջատ նստած էր ափսեյի վրա կռացած ինչ-վոր մեկը՝ յերկաթուղայինի շորերով:

Բուժետապանն ուղղակի մոտեցավ հրամանատարին, կռացավ դեպի նա և խեղճ-խեղճ ասաց:

— Լսի՛ր, հրամանատար: Այնտեղ քո սպաները կրկին անկարգություն են սարքել, կարծես խոզեր լինեն: Յես պետք է նորից իմ խանութը կողպեմ:

Հրամանատարը հետ տվեց նրան ձեռքով:

Սպասիր, Կարապետ, մի՛ բղավիր: Բոլորը կարգի կընկնի: Յես չեմ թողնի խանութդ վնաս քաշի: Քո խանութը մեր խանութն է:

— Լավ իշխանավոր ե՛, լավ հրամանատար՛ը, — ասաց բուժեատապանը և թույլացրեց հրամանատարի վրակե ուսադիրներին:

Հրամանատարը յետ քաշեց ուսը և խոժոռվեց:

— Դե՛, դե՛, զգուշը, առանց գոեհկուլթյան: Յես այդ չեմ սիրում:

— Ինչո՞ւ յե գոեհկուլթյուն: Յես քեզ վորպես հարազատ յեղբոր եմ ասում:

Սեղանի շուրջը նստած սպաները ծիծաղեցին:

Հրամանատարը կարմրատակեց:

— Դու, սրիկա՛, մեկ ել համարձակվիր խոսե՛լ: Յես քեզ ուզում-դաշտային դատարան կուղարկեմ: Ի՞նչ ես խառնում գինու հետ: Մի՞թե սա գինի յե: Յես այսպիսի գինու համը ել չեմ ուզում տեսնել:

Բուժեատապանը նայեց հրամանատարի առաջ շարված դատարկ շշերին և ուտերը թոթվեց:

— Կովկասի ամենալավ գինին ե, սրբուն սալա՛: Ի՞՞՞՞ այս գինին գեներալ Մայ-Մայեվսկին նույնպես խմել ե: Դու ել մի քիչ կփորձեյիր: Ուզո՞ւմ ես, յես քեզ մի տակառ ել կուղարկեմ: Միայն թե դու բուլշե-վիկներին ավելի հեռու քշիր: Դու այնպես քաջ հրամանատար ես, խիզախ հրամանատար: Ավելի լավ, քան դեներալ Մայ-Մայեվսկին: Նա միշտ կուլի յեք ման դալիս, իսկ դու այնպես սիրալիր խոսում ես:

— Լավ, — ասաց հրամանատարը և մինչև անգամ թեթև ժպտաց: — Գործիդ գնա ու բուժեաոր մի լավ տնտղիր, գուցե այս աղբաջրից ավելի լավը գտնես:

Բուժեատապանը, գլուխ տալով, հեռ-հեռ գնաց գեպի յեղը:

— Գրի՛չկա, — հարցրեց վասիկան շշուկով, — դու ի՞նչ կուզեյիր ուտել:

— Պանիր, ես վոր անկյունում գրված ե: Յես այդպիսի պանրի համն ել չեմ տեսել:

— Իսկ յես ապխտած յերչիկ կուզեյի, — ասաց վասիկան, — մի տե՛ս, ինչքա՛ն ճարպ կա նրա մեջ, ամբողջը ծալ-ծալ:

— Ու՛ր, սրիկանե՛ր: Ահա ես գեղին սպան սպասարասովում ե վեցերորդը կուլ տալու:

Թուքն սկսեց հոսել դեպի կոկորդս: Տանն արդեն յերրորդ որն ե, վոր դատարկ սուպ ենք խմում:

Հանկարծ հրամանատարը դղրդոցով յետ տվեց աթոռն ու որորվելով վեր կացավ:

— Պարոննե՛ր, — ասաց նա անհաստատ ձայնով, — ինչքա՛ն հաճելի յե մոտիկ բարեկամների շրջանում լինել... Չնայած մեր խառնաշփոթ դրուլթյանը, մենք չենք հուսահատվում և սպասում ենք ավելի լավ որերի: Իսկ այս որերը պատմական են և բոլորի համար անմոռանալի կմնան: Մեր սերունդը հարգանքով կմեծարի այն հերոսների անունները, վորոնք իրենց արյան գնով փրկեցին մեր դժբախտ, հոշոտված հայրենիքը գերմանական լրտեսներից՝ բուլշեիկներից:

— Ուռա՛, աղաղակեց իր հեռավոր անկյունից յերկաթուղայինի զգեստով մարդը:

— Նայի՛ր, եդ չե՞ վոր են բայդուշն ե, — շնչաց վասիկան: Յեվ, ճիշտ վոր, դա հեռագրիչ Սոմովն եր: Հրամանատարը խեթ նայեց նրա վրա և դողդողացող ձեռքով բարձրացնելով մինչև շուրթերը լցված ըմպանակը, ասաց.

— Միասնական, անբաժանելի Ռուսաստանի կենացը:

— Ուռա՛, — բղավեցին բոլոր սեղանակիցները:

Այդ ժամանակ դուռը բացվեց և մի քանի մարդ մտան սենյակը: Յերկու շատ ջահել կամավորական շինեչներով և մեջքները պինդ գոտկած, ու ելի ինչ-վոր պիջակավոր մարդիկ:

— Բերել ենք, ձերդ բարձր բարեճննդուլթյուն, — աղայական ձայնով աղաղակեց կամավորներից մեկը:

— Ա՛, հարգանքներս, արհեստավորներ, տքնորդներ, — շուռ գալով ասաց հրամանատարը: — Համեցե՛ք այստեղ՝ ավելի մոտիկ:

Արհեստավորները մոտեցան սեղանին, և լույսն ընկավ նրանց դեմքի վրա:

Վասիան մինչև անգամ ճչաց: Սեղանին մոտեցած
բանվորներից մեկը նրա հայրը՝ Իլյա Ֆեոդորովիչն
եր, մյուսը՝ Չեկունովը:

— Նստեցե՛ք, խնդրեմ, տեղավորվեցե՛ք ինչպես ձեր
տանը, — ասաց հրամանատարը, և վերցնելով սեղանի
վրայից գինով լի մի մեծ ըմպանակ, մոտեցրեց Վաս-
իայի հորը:

— Յես չեմ խմում, — պատասխանեց Իլյա Ֆեո-
դորովիչը:

— Ե՛՛հ. ի՛նչ եք ասում, մի բաժակ կու՛լ տալը բո-
լորովին մեղք չէ:

— Յես չեմ խմում, — կտրականապես հրատարվեց
Իլյա Ֆեոդորովիչը:

— Վաղո՞ւց ե, ինչ թողել ես, — հարցրեց նրան
սեղանի են կողմից Սոմովը:

Վասիայի հայրը աչքերը գցեց նրա վրա և հանգիստ
պատասխանեց.

— Վերջին անգամ քեզ հետ եմ խմել, նկուզում
միասին թագնախուց առաջ:

Հեռագրիչն անհանգիստ դես-դեն շուտ յեկավ և
խրվեց ավսեյի մեջ:

— Մի գուցե դո՞ւք կխմեք, դարձավ հրամանա-
տարը դեպի Չեկունովը:

Չեկունովը մի քիչ կոտրուկեց, բայց հետո վերցը-
րեց ըմպանակը և մի շարժումով դատարկեց բերանը:

— Դե՛հ, կերե՛ք, — ասաց հրամանատարը՝ ցույց
տալով սեղանը:

Չեկունովը նստեց աթոռի յեզրին, վարանելով դե-
պի իրեն քաշեց աղ դրած վարունգները: Հետո ավելի
համարձակ դարձավ և ձեռքը մեկնեց դեպի պանիրն ու

ապխտած յերչիկը:

Իլյա Ֆեոդորովիչն առաջվա նման անշարժ կանգ-
նած եր սեղանի մոտ:

— Իսկ դուք գոնե կերեք, յեթե չեք խմում, — աս-
աց նրան հրամանատարը: — Ահա ձկնկիթ, լավորակ
ծովատառեխ: Դե, մի՛ քաշվեք: Յես պարզ մարդ եմ և

սիրում եմ արհեստավորներին: Չե՞ վոր մենք ձե՛զ հա-
մար ենք արյուն թափում — ազատության համար,
բախտավորության համար, մեր փոխադարձ բարո-
րության համար:

— Նրանք այդ բանը չեն ըմբռնում, — ասաց Սո-
մովը: Նրանց բնավորությունն է այդպես... բուլշևի-
կյան:

— Ի՞նչ, — կտրուկ հարցրեց հրամանատարը:

— Նրանք չեն հասկանում՝ մարդավայել վերաբեր-
մունքն ինչ է, — ասաց Սոմովը:

— Ինչպե՞ս, — ավելի խստությամբ հարցրեց հր-
ամանատարը:

— Վոչինչ, — ասաց Սոմովը:

— Յեթե վոչինչ, ուրեմն կոտրած գլխի պես մեջ
մի՛ բնկնի, յեթե քեզ չեն հարցնում: Իսկ ինչպե՞ս է
ձեր անունն ու հայրանունը, — նորից դարձավ հրամա-
նատարը դեպի Վասիայի հայրը:

— Իլյա Ֆեոդորովիչ:

— Այդպես ահա, Իլյա Ֆեոդորովիչ, պատմեցե՛ք
մեզ՝ ի՞նչպես են զգում իրենց արհեստավորները, ի՞նչ
պանդառներ ունեն, ի՞նչ են նրանք խնդրում:

— Արհեստավորները վոչինչ չեն խնդրում, — աս-
աց Իլյա Ֆեոդորովիչը:

— Համենայն դեպս:

Իլյա Ֆեոդորովիչը լուռ եր:

Կայարանապետը, վոր մինչ այդ բոլորն լուռ նրա-
տած եր, ըմպանակի վրա կռացած ու քթով կոցում
եր, հանկարծ սկսեց խոսել:

— Իսկ դուք չդիտե՞ք արդյոք, — ասաց նա, — թե
ինչու յե աշխատանքը դեպոյում այդքան վատ գնում:
Կեսերը դարբնոցում չեն յեռացվում, առանցքակալնե-
րը վատ են քերվում:

— Ո՞վ գիտե, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը:

— Ո՞վ գիտե՞, — դուռաց կայարանապետը: Իսկ
բուլշևիկները ժամանակ ի՞նչպես էյիք աշխատում: Այդ

գիտե՞ս: Նրանց նահանջից առաջ ի՞նչպես նորոգեցի՞ք
ճանապարհը — հիշու՞մ ես:

— Ի՞նչպես չե, եդ ել չի հիշի՞, — նորից մեջ ըն-
կալ Սոմոսիլը, — նա ամենից շատ եր ջանք թափում:

Իլյա Ֆեոդորովիչը նայեց Սոմոսիլի կողմը և հան-
դարտ ասաց.

— Ավելի լավ կլինե՞ր՝ դու քիչ խառնվե՞յիր, անիծ-
ված բայդո՛ւշ:

— Դեռ-դեռ չընկնենք, — ասաց զրահապատ գլխ-
նացքի հրամանատարը. — իմ անուշից հաղորդեցե՛ք
բանվորներին, վոր նրանք աշխատեն, ինչպես փոք
պետք է: Այլապես յես ստիպված կլինեմ գիմել ան-
ցանկալի ստիպողական միջոցներին: Այն ժամանակ ձե-
զանից գանդատավոր յեղեք: Չրահապատը կկանգնեց-
նեմ սեմաֆորի մոտ, այնպիսի կրակ կթափեմ գյու-
ղի վրա, վոր ձեզանից վոչ վոք չի մնա: Հասկացա՞ք:

Չեկուճովը զցեց պատառաքաղն ու, բերանը բաց՝
սառած մնաց:

Իլյա Ֆեոդորովիչը նայում եր իր վոտների տակ:

— Այժմ ի՞նչ են անելու նրանց, — փափաց Վաս-
կան: Յես ցատկեցի կառնիդի վրայից, վորի վրա մենք
կանգնած եյինք, ու գետնից յերկու կտոր աղյուս հա-
նեցի: Մեկն ինձ մոտ թողի, մյուսը տվի Վասկային:

— Հենց վոր նրանք սկսեն վորևե բան անել նրանց,
ինձ նայի՛ր, — ասացի Վասկային, — յես վրա կբերեմ,
դու ել իմ հետևից շարաբի՛ր:

— Լավ, ասաց Վասկան, — թող մի համարձակի՞ն
դիպչել նրանց:

Մենք նորից նայեցինք պատուհանից: Բոլորը, բա-
ցի հրամանատարից, սեզանից վեր թոան և թափահա-
րում եյին ձեռները: Իլյա Ֆեոդորովիչը և Չեկուճովը
կանգնած եյին դժգույն, գիտելով չորս կողմը:

— Ասա՛, կարմիրների հետ ո՞վ ե գնացել, — խրո-
խրոսցնում եր բակենբարդներով սպան:

— Ասա՛, գյաղա՛, — ճղճղում եր կայարանապե-

տը:

Չրահապատ գնացքի հրամանատարը հանգիստ նըս-
տել եր բազկաթոռին և հանգիստ ծծում եր հաստ
սիգարի ծուխը:

— Չե՞ս ասի, — նորից խոռացրեց դեղին սպան:
Նա ձեռքը թարս տարավ, կարծես պատրաստվում եր
հարվածելու Իլյա Ֆեոդորովիչին:

— Դե՛, դե՛, հանգիստ, — ասաց Իլյա Ֆեոդորո-
վիչը:

Շեկը բարձրացրեց ձեռքը և ամբողջ ուժով խփեց
բռունցքով նրա քունքին:

Այդ բույեյին յես ու Վասկան համարյա միառեղ
ձեռքներս թափահարեցինք և աղյուսի կտորները
չպրտեցինք դեպի պատուհանը: Մեկ, յերկու: Ինչ-վոր
զրնգաց, դժուտաց ու լուսը հանգավ սենյակում:

Մեր մոտով սրացան ինչ-վոր մարդիկ: Նրանք
աղմկում ու ասրճանակներով սպառնում եյին: Գետնին
կռացած՝ յերկաթուղային փողոցով ծլկվեցինք առա-
ջին նրբանցքը:

Յերբ մոտեցանք տանը՝ Վասկան շունչ քաշեց և
ընկած ձայնով ասաց.

— Ի՞նչ կլինի հորս հետ այժմ: Կգնդակահարեն
նրան:

Շատ ուշ, յերբ մենք արդեն պարաստվում եյինք
քնելու, Վասկայի հայրը վերադարձավ ու պատմեց, թե
ինչո՞վ եր վերջացել նրա և սպաների խոռակցու-
թյունը:

— Մեկը, — պատմում եր նա, — աղյուսով խփեց
պատուհանին: Այնպես իրարանցում բարձրացավ, վոր
յերևակայել չես կարող: Սոմոսիլն աղաղակում ե-
«ոս՛ւմք»: Սպաներից մեկը սաստիկ յերկյուղից հա-
նեց ասրճանակն ու սկսեց կրակել դեպի առաստաղը:
Վերջապես գլխի ընկան — մյուս սենյակից մոմ բե-
րին: Տեսնում են՝ հատակի վրա յերկու աղյուսա-
կտոր: Մի փոքր հանգարտվեցին: «Ինչ սրիկայու-

թյուն է, — ասաց հրամանատարը: Սա ձեր գործն է, անշուշտ: Դե՛հ, ինչ արած, դնացե՛ք: Մենք ձեզ կհետեւենք, կվորսանք՝ ու՛մը վոր պետք է: Իսկ յեթե չբռնենք ել, այլ կերպ կխոսենք ձեզ հետ:

Յերբ Իլյա Ֆեոդորովիչը հեռացավ, մենք պառկեցինք քնելու: Հայրս յերկար ժամանակ անկողնի մեջ շուռ ու մուռ եր գալիս: Յեռ տեսա, թե ինչպէս նա մթության մեջ վեր կացավ, մոտեցավ վառարանին ու ծխեց: Մայրս ծանրորեն հոգոց եր հանում: Յես գիտեցի, վոր նա ել քնած չէ:

Իսկ ինձ միշտ պատկերանում եր դրահապատ գնացքի հրամանատարը, նրա փքված, դեղին գեմքը, դողդողացող ձեռքը, վորով նա բռնել եր գլխով լի գավաթը: Յես վերհիշեցի՝ ինչպէս Սոմովը զթով խրվել եր ափսեցի մեջ, նենգությամբ ասում եր Իլյա Ֆեոդորովիչին.

— «Վաղո՞ւց ե արդյո՞ք թողել ես խմելը»:

Չայրույթից վերմակը քաշեցի մինչև ականջներս ու գլուխս ծածկեցի բարձով:

Հայրս դեռ շարունակում եր քայլել սենյակի մեջ ու ծխել: Կապտավուն ծուխը պտավում եր նրա գլխի վրա ու յերկար շերտերով ձգվում դեպի վառարանը:

IX Գ Լ Ո Ի Ե

ՄԵՆՔ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՈՒՆԵՆՔ

Առավոտյան, ծեղր-ծեղին Վասկան մեր՝ պատուհանը թխթխկացրեց:

Յես շտապ ըլացվեցի, վերցրի հացի մի կտոր ու դուրս նեավեցի:

— Գրի՛չկա, յես այժմ վոչնչից չեմ վախենում, — ասաց Վասկան հպարտությամբ: — Յերեկ յես ու դու ի՞նչ ճարպիությամբ նետեցինք աղյուսի կտորները նրանց պատուհանին: Մենք նրանց դեռ ավելին ցույց կտանք: Յես այժմ ամեն ոք նրանց բնակարանների

պատուհանները կջարդեմ: Արի միասին ջարդենք, հա՞:

— Սպասի՛ր, — կանգնեցրի յես նրան, — չլինի՞ թե մինչ այդ մեր վզակոթներին մի լավ հասցենն: Իսկ տանը չե՞ս ասել, վոր յերեկվա իրարանցում պցողները մենք ենք յեղել:

— Չեմ ասել: Հետո ի՞նչ, — հարցրեց Վասկան:

— Լսիր, վոչինչ չասես, թե չե ինձ ու քեզ եղբանն եժան չի նստի:

— Լա՛վ, չեմ ասի: Սակայն մենք կայարանատեղ պատուհանի ապակիները դեռ այլ կերպ կթրխկացնենք: Իսկ բայդուշի աչքը յես քարով կհանեմ: Այժմ մենք ուղղմաճակատ ել կարող ենք գնալ: Այժմ ջոկատում առաջինը յե՛ս կգրվեմ: Ինքս ել գենք հավաքելու կերթամ:

— Բայց յես ու դու ի՞նչպէս ենք գենք հավաքելու: Յերկուսով ինչքա՞ն կարող ենք հավաքել: Մենկան չկա: Անդրեյը յերեկ վաղուց կուրսավկա հասած կլինի: Մեր ջոկատն ի՞նչ ջոկատ ե վոր — դու ե յես, միայն յերկուսս, և ուրիշ վոչ վոր:

Վասկան մտածմունքի մեջ ընկավ:

— Այո՛, դու ճիշտ ես ասում: Գնանք մի, ախպե՛ր, Իվան Վասիլյեվիչի մոտ ու կանչենք նրան:

— Ի՞նչ կա Իվան Վասիլյեվիչի մոտ: Նա ի՞նչ ե հասկանում: Վախկոտ նապաստակ ե նա: Մենք վաղուց ենք նկուղից դուրս յեկել, իսկ նա մինչև այժմ քիթն ել փողոց չի հանում:

— Դրա համար ել գնանք, — ասաց Վասկան, — տեսնենք՝ ի՞նչ ե անում տանը: Նրա հայրը, գիտե՞ս, բերդան հրացան ունի, նախասենյակում կախված է, — իսկույն կարելի յե թոցնել:

— Հա՛, բերդանն ուրիշ բան է, — ասացի յես: — Գնանք:

Վանկան, կամ, ինչպէս կատակով նրան անվանում էլինք, Իվան Վասիլյեվիչը, պետական բնակա-

բանում չեր ապրում, ինչպես մենք, այլ գյուղում
հարուստ Մալաչենկոյի մոտ:

Վանկայենց ընտանիքում կային 10 հոգի: Նրանք
բոլորն էլ ապրում էին յերկու շատ փոքր սե-
նյակում: Նրանց առաստաղը ցածր էր, ձեռք էլ կհաս-
ներ: Իսկ պատուհանները՝ շատ փոքրիկ ու միշտ էլ
քրտնած: Վանկայենց ընտանիքում համարյա բոլորն
էլ աղջիկներ էին, իսկ տղաներ՝ յերկու—Վանկան և
նրա փոքր յեղբայրը՝ Պետկան: Վանկայի հայրը դե-
պոյում աշխատում էր վորպես փականագործ: Վան-
կան նույնպես պատրաստվում էր նույն բանը սովո-
րելու:

Մենք մոտեցանք Մալաչենկոյի տանը և նայեցինք
պատուհանից:

Վանկան կուացած նստել էր փայտե կարմիր օրկղի
վրա և հրացանի փամփուռ էր լիցահանում: Նա սև
վառուղը լցնում էր թղթի վրա ու նրա կողքը դնում
փամփուռից հանած սրածայր գնդակը: Այդ միջոցին
նայեց պատուհանից ու մեզ նկատեց:

— Ներս յեկե՛ք, — ձայն տվեց Իվան Վասիլյեվի-
չը և ձեռքով արեց:

Մենք ներս մտանք ցածրիկ նախասենյակը: Յես
գննեցի խոնավ սպտերը, վորոնց վրա կախված էին
հին գլխարկներ, վարտիկներ և սո՛խի շարաններ: Հրա-
ցանը վոչ մի տեղ չեր յերևում:

— Վո՞րտեղ կլինի, — հարցրի յես Վասիլային:

— Ի՞նչը:

— Բերդանը, ի՞նչը:

Վասկան շիտթվեց:

— Անշուշտ թաղել են հողի սակ: Նրանք բոլորն
էլ վախկոտներ են:

— Յես քեզ չեյի՞ ասում, թե վախկոտներ են,
իսկ դու վիճում եյիր: Դե լա՛վ, գնանք Վանկայի
մոտ: Ել յես չենք դառնալու հո, քանի վոր յեկել ենք:

Մենք հրեցինք դուռը դեպի ներս:

— Բարե, Իվան Վասիլյեվիչ, — ասաց Վասկան և
գլխարկը հանեց: — Եդ ի՞նչ ես անում:

— Նոնակ, — ասաց Իվան Վասիլյեվիչը և քս՛ծի-
ծաղ տվեց: — Վառուղ եմ հավաքում ու մեծ նոնակ եմ
չինելու:

— Պա՛, — յերկարացրեց Վասկան ու հոտոտեց
թղթի վրայի վառուղը: — Բայց ի՞նչ վատ հոտ ունի:
Այս վառուղից նոնակ չի դուրս դա:

— Արի գրազ գանք: Հիմի յես տաս հատ փամ-
փուռ լիցքահան կանեմ և ամբողջ վառուղը կլցնեմ
այս փայտի մեջ... — Իվան Վասիլյեվիչը ցույց տվեց
մի քառանկյունի կոճղակտոր, վորի մեջտեղում մի
խոր անցք էր բացված: — Տեսո՞ք, — հարցրեց նա, —
ահա, յեթե կամենում եք, ինձ հետ լիցքահան արե՛ք:

Յեվ նա ինձ ու Վասիլային տվեց յերկուական
փամփուռ:

Մենք սկսեցինք աշխատել — նոր փամփուռներ էր
վառուղն ամում եյինք թղթի վրա ու այդտեղից էլ
փայտե կոճղակտորի մեջ: Յերբ անցքը լցվեց, մենք
թղթով ամուր խցկեցինք:

Հետո Իվան Վասիլյեվիչը վերցրեց գայլիկոնը և
կոճղի կողքից մի փոքր անցք բաց արեց:

— Դե՛, գնանք, — ասաց Վանկան: Նա վերցրեց
եր ինքնահնար նոնակը, մի տուփ լուցկի, և մենք
դուրս յեկանք բակը:

Իվան Վասիլյեվիչն իր նոնակը դրեց փոսի մեջ,
մի սպիտակ ժապավեն անցկացրեց անցքի մեջ և լուց-
կով վառեց նրա յերկու ծայրը:

— Քիչ հեռու գնացե՛ք, — հրամայեց նա:

Մենք մի կողմ ցատկեցինք: Սպիտակ ժապավենը
առկայծեց, ծխաց, — վառված ցնցոտահոտ զգացվեց:

— Ինչպես կդմբա հիմի, — շուռկով ասաց Իվան
Վասիլյեվիչը և վախվխելով նայեց փոսի մեջ, վոր-
տեղ դրված էր նրա նոնակը: Այնտեղից դուրս պրծավ
սպիտակ ծխի մի ամպիկ կտոր:

— Պատկեր, — աղաղակեց Վանկան:

Մենք ցանկապատից հեռացանք ու պառկեցինք:
Վասկան քիթը խրել էր ուղղակի հողի մեջ:

— Յե՞րբ ե դմբալու, — հարցրեց նա, յերկու բո-
պե պառկելուց հետո:

— Շուտով, — մրթմրթաց դեպի ցած իվան Վա-
սիլյեվիչը:

Բայց ումբը չէր վորոտում: Մենք յերկար պառ-
կած էլինք դեռնի վրա և միշտ սպասում էլինք պայ-
թյունին:

— Վե՛ր կացեք, յերևի ժապավենը հանգել է, —
ասաց վերջապես իվան Վասիլյեվիչը:

Նա վեր կացավ և մոտեցավ ցանկապատին, յես
ել — նրա յետևից:

Իսկ Վասկան դեռևս պառկած էր, տեղից չէր
շարժվում, չգիտես՝ ումբի՞ց էր վախենում, թե
քնած էր:

Յես ու Վանկան զգուշությամբ մոտեցանք նոնա-
կին: Նա խաղաղ ընկած էր փոսի մեջ, ինչպես մի
քարի կտոր:

— Տեսա՞ր, յես քեզ ասում էլի, վոր ժապավենը
հանգել է, — ասաց Վանկան, — թե չե անպատճառ
կպայթեր... ամբողջ ցանկապատը ցիր ու ցան կաներ:
Դե լավ: Նստի՛ր այստեղ, նռնակը պահպանի՛ր, իսկ
յես գնամ՝ նավթ բերեմ:

Վանկան գնաց նավթի, իսկ յես այդ միջոցին ժա-
պավենը կպցրի:

Ժապավենը միանգամից բոցավառվեց: Կրակն
արագորեն վազում էր դեպի փայտի կտորը:

Յես վազեցի մի կողմ:

— Կոացի՛ր: Հենց հիմա կպայթի, — ասացի Վաս-
կային և ինքս ել պառկեցի նրա կողքին՝ յերեսս հողի
մեջ խրելով:

— Վասկանդ ալելի ևս կիպ կպավ դեռնին:

Ինչ-վոր արաքեց, կարծես ավտոմոբիլի շին լի-
ներ. հողն անձրևի նման տեղաց իմ ու Վասկայի վրա:

Յես բարձրացրի գլուխս և ցանկապատի վրա տե-
սա կրակի մի սյուն:

Այդ ժամանակ հետևից դուռը թրխկաց: Տանից
դուրս վազեց իվան Վասիլյեվիչը: Նա ձեռքին բռնել
էր նավթով լի մի մեծ շիշ: Կրակը հանգել էր, միայն
ծուխն էր փոփում ցանկապատի վրա:

— Ինչո՞ւ վառեցիք նոնակը, — աղաղակեց Վան-
կան՝ վազելով դեպի ինձ:

— Նա ինքը կրակվեց, քո ումբը խենթ է, — ա-
սացի յես, — Քիչ էր մնում ինձ սպաներ: Իմ ու Վաս-
կայի աչքերը հողով լցվեցին: Բայց ի՞նչ ուժ կա նրա
մեջ:

Իվան Վասիլյեվիչն ուրախացավ:

— Լցրե՞ց:

— Ի հարկե, լցրեց: Նկատում ես, վոչինչ չեմ
տեսնում, — ասաց Վասկան՝ աչքերը բռունցքներով
տրորելով:

— Իսկ կրակը շա՞տ էր մեծ, — հարցրեց իվան Վա-
սիլյեվիչը:

— Մինչև յերկինք, — պատասխանեց Վասկան. —
հենց վոր Փշչացնի, — այդպես էլի մտածում — ցանկա-
պատը կվառվի:

Իվան Վասիլյեվիչը մինչև անգամ սկսեց ծիծաղել
ուրախությունից:

— Տեսնո՞ւմ ես, իսկ դու չեյիր հավատում, վոր
յես կարող եմ իսկական նռնակ պատրաստել: Յես,
ախպե՛ր, փակամազործ եմ:

— Ա՛յ, այսպիսի մի բան մարդ կայարաճապետի
պատուհանից ներս գցի, — ասաց Վասկան, — ի՞նչ կլի-
ներ: Ամբողջ սեղանը շուռ կտար, եղ չեկ սպայի բե-
խերը վո՞նց կսևացներ: Կամ, ահա՛ ինչ — մարդ զրա-
հապատ գնացքի հենց շոգեքարչի տակ դնի... Ե՛խ:

— Յես կարող եմ նաև այնպիսի նռնակ պատրաս-
տել, վոր զրահապատ գնացքը կտոր-կտոր անի, —
ասաց իվան Վասիլյեվիչը. — Միայն ալելի մեծ կոճ

պետք է գտնել և յերկու կամ յերեք հարյուր հաս ել
փամփուշտ:

Ի վան Վասիլյեվիչն աշխատես տաքացավ, վոր նրան
կանգնեցնել ել չեր կարելի:

— Սպասի՛ր, ասացի յես, — քո նունակներով ձկնե-
րին խլացնել կարելի յե, ի հարկե: Բայց նրանով
դրահապատ գնացք չես պայթեցնի: Ինչ ել լինի, նա
խակական նունակ չե, այլ փայտե...

— Յես կարող եմ և յերկաթից շինել: Անցյալ տա-
րի ինչքա՞ն լավ թնդանոթ եյի շինել ծխահան խողո-
վակներից, — հիշո՞ւմ ես:

— Ի՞նչպես չե, հիշում եմ, — ասացի յես, — լավ
թնդանոթ եր, բայց չեր կրակում:

— Ե՛հ, նունակն ավելի հեշտ ե շինել: Մի կտոր
խողովակ կկտրեմ, յերկու ծայրն ել կզողեմ: Կողքից
անցք կբանամ, վառող կլցնեմ, ահա և քեզ նունակ:

— Միևնույնն ե, իսկական չի լինի, — ասացի
յես: Ճիշտ նույնպես կփստացնի, ինչպես և փայտից
յես: Իսկ հրատարածում — պիտտոն, շառաչող
անդիկ, ուժանակ: Ծխատար խողովակից այդպիսի
ռումբ չես շինի:

— Ե՛հ, հետո ի՞նչ, — ասաց ի վան Վասիլյեվիչը: —
Յես իսկականն ել կարող եմ շինել: Միայն մի անգամ
տեսնեյի իսկականը, թե ի՞նչպես ե պատրաստված:
Բայց վո՞րտեղից գտնես:

— Նրբափողոց դնանք, — ասաջարկեցի յես, —
այնտեղ շատ բաներ են թափված: Գուցե և նուակ գրո-
նենք:

Վազոնային հին փակուղում վերջանում են յեր-
կաթուղու չորս դեեր: Հյուսիսային կողմից փակուղին
բաց ե մուտքի համար, հարավային, արևելյան և
արևմտյան կողմից շրջապատված ե ցեմենտե պարըս-
պով:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ փակու-
ղին անպետքացած վազոնների մի ամբողջ դերեզ-
մանոց եր: Նրանք այնտեղ թափթփված եյին կողքի
վրա շուռ յեկած, և նրանց պատուհանները նայում
եյին դեպի յերկինք:

Փակուղու հարավային պատի մոտ գտնվում
եյին յերեք փայտե պահեստներ: Գնդակները ծակծակել
եյին նրանց պատերը: Բոլոր դռներից կախված եյին
ձիու պայտերի չափ կողպեքներ:

Հազիվ թե մեկը, բացի մեզանից, այդ որերին
հին փակուղին մտներ. պահեստապեան ել արդեն
վաղուց այտեղ չեր գալիս: Այդ յերևում եր կողպեք-
ներից: Նրանք ծածկված եյին կեղտի բրդոտ ու թան-
ձրը շերտով:

Սուլ եր փակուղին: Լուռ կանգնած եյին պա-
հեստները, միայն քամին եր թափանցում այնտեղ
ծակծկված պատերի միջով և դես ու դեն ձոճում
կտրի ժանգոտ թիթեղները:

Ի վան Վասիլյեվիչն անցնում եր վազոնների միջով
և գլուխը շարժելով ասում.

— Անիմաստ ընկած են այս բոլորը: Իսկ չե՞ վոր
այտեղ ինչքա՞ն պտուտակներ կան, պնդողակներ,
փայտապտուտակներ:

— Ե՛, տղերք, տեսե՛ք — մի կոշիկ գոտի, — ա-
ղաղակեց Վասիլյան և ուղում եր մտնել վազոնի տակ:

— Ե՛հ, դու ել, մենք գոտիներ չունե՞նք, ինչ ե:
Դու գե՞նք վորոնիք, վոչ թե գոտիներ:

Մենք յերկար թափառում եյինք փակուղում և
վոչինչ չեյինք գտնում:

Հանկարծ մեզնից շատ մոտիկ մեկը ձեռնափայ-
տով թխկացրեց անիվներին:

— Չննդն ե, յերևի, — ասաց Վասիլյան, — անիվ-
ներն ե դիտում:

Մենք զգուշությամբ նայեցինք վազոնի տակը:

— Անդրե՛յն ե, — բղավեց Վասիլյան:

պետք է գտնել և յերկու կամ յերեք հարյուր հատ ել
փամփուշտ:

Ի վան Վասիլյեվիչն այնպես տաքացավ, վոր նրան
կանգնեցնել ել չեր կարելի:

— Սպասի՛ր, ասացի յես, — քո նոնակներով ձկնե-
րին խլացնել կարելի յե, ի հարկէ: Բայց նրանով
զբա՛հապատ գնացք չես պայթեցնի: Ինչ ել լինի, նա
խսկական նոնակ չե, այլ փայտե...

— Յես կարող եմ և յերկաթից շինել: Անցյալ տա-
րի ինչքա՛ն լավ թնդանոթ եյի շինել ծխահան խողո-
վակներից, — հիշո՞ւմ ես:

— Ի՞նչպես չե, հիշում եմ, — ասացի յես, — լավ
թնդանոթ եր, բայց չեր կրակում:

— Ե՛հ, նոնակն ավելի հեշտ է շինել: Մի կտոր
խողովակ կկտրեմ, յերկու ծայրն ել կզողեմ: Կողքից
անցք կբանամ, վառող կլցնեմ, ահա և քեզ նոնակ:

— Միևնույնն է, իսկական չի լինի, — ասացի
յես: Ճիշտ նույնպես կփատացնի, ինչպես և փայտից
չինածղ: Իսկական ոււմբը և՛ զարկան ունի, և՛ հրա-
պատիճ: Իսկ հրապատիճում — պիտտոն, շառաչող
անդիկ, ուժանակ: Ծխատար խողովակից այդպիսի
ոււմբ չես շինի:

— Ե՛հ, հետո ի՞նչ, — ասաց ի վան Վասիլյեվիչը: —
Յես իսկականն ել կարող եմ շինել: Միայն մի անգամ
տեսնեյի իսկականը, թե ի՞նչպես է պատրաստված:
Բայց վո՞րտեղից գտնես:

— Նրբափողոց գնանք, — առաջարկեցի յես, —
այնտեղ շատ բաներ են թափված: Գուցե և նուակ գլու-
նենք:

Վագոնային հին փակուղում վերջանում են յեր-
կաթուղու չորս գծեր: Հյուսիսային կողմից փակուղին
բաց է մուտքի համար, հարավային, արևելյան և
արևմտյան կողմից չըջապատված է ցեմենտե պարըս-
պով:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ փակու-
ղին անպետքացած վագոնների մի ամբողջ դերեզ-
մանոց եր: Նրանք այնտեղ թափթփված եյին կողքի
վրա շուռ յեկած, և նրանց պատուհանները նայում
եյին դեպի յերկինք:

Փակուղու հարավային պատի մուտ գտնվում
եյին յերեք փայտե պահեստներ: Գնդակները ծակծկել
եյին նրանց պատերը: Բոլոր դռներից կախված եյին
ձիու պայտերի չափ կողպեքներ:

Հազիվ թե մեկը, բացի մեզանից, այդ որերին
հին փակուղին մտներ. պահեստապետն ել արդեն
վաղուց այտեղ չեր գալիս: Այդ յերևում եր կողպեք-
ներից: Նրանք ծածկված եյին կեղտի բրդոտ ու թան-
ձըր շերտով:

Սուլ եր փակուղին: Լուռ կանգնած եյին պա-
հեստները, միայն քամին եր թափանցում այնտեղ
ծակծկված պատերի միջով և դես ու դեն ճոճում
կտրի ժանգոտ թիթեղները:

Ի վան Վասիլյեվիչն անցնում եր վագոնների միջով
և գլուխը շարժելով ասում.

— Անիմաստ ընկած են այս բոլորը: Իսկ չե՞ վոր
այտեղ ինչքա՛ն պտուտակներ կան, պնդողակներ,
փայտապտուտակներ:

— Ե՛, տղերք, տեսե՛ք—մի կաշվե գոտի, — ա-
ղաղակեց Վասիկան և ուզում եր մտնել վագոնի տակ:

— Ե՛հ, դու ել, մենք գոտիներ չունե՞նք, ինչ է:
Դու զե՛նք վորոնիր, վոչ թե գոտիներ:

Մենք յերկար թափառում եյինք փակուղում և
վոչինչ չեյինք գտնում:

Հանկարծ մեզնից շատ մոտիկ մեկը ձեռնափայ-
տով թխկացրեց անիվներին:

— Չննդն է, յերևի, — ասաց Վասիկան, — անիվ-
ներն է դիտում:

Մենք զգուշությամբ նայեցինք վագոնի տակը:

— Անդրե՛յն է, — բղավեց Վասիկան:

Վազոնի մոտ թագնված կանգնել եր Անդրեյը:
Նա, հավանորեն, լսել եր մեր ձայները և նույնպես
ականջները սրել:

Մենք նետվեցինք դեպի նա:

— Ո՞ւր եյիր կորել, Անդրեյ: Մի՞թե կուրսավի-
յում չես:

Յես մինչև անգամ չարացա նրա վրա:

— Իսկ ինչո՞ւ դու ռազմաճակատ չգնացիր. դո-
ւոզանո՞ւմ եյիր միայն, հա՞:

— Ի՞նչ տարորինակ ես դու, Գրի՛շկա: Մենակ
ո՞ւր կարող եմ գնալ:

— Իսկ ինչո՞ւ մեզ մոտ չեյիր գալիս:

— Բարկացել եյի քեզ վրա, դրա համար էլ չեյի
գալիս: Յերկուսով վաղուց արդեն ռազմաճակատում
կլինեյինք:

Անդրեյը քրքրեց գրպանները և չորս հատ նազանի
փամփուշտ հանեց:

— Ահա այստեղ գտա, — ասաց նա:

Վանկան նայեց նրանց և ասաց բանիմաց ձևով.

— Յեթե փամփուշտներ էս գտել, ուրեմն կարող
ե այստեղ և նոնակ լինել:

— Պարզ է, կարող է, — ասաց Անդրեյը: — Միայն
պետք է փնտռել ինչպես վոր հարկն է: Անողուտ
չըջելու կարիք չկա, գլխավորն է՝ վազոնների տակ
նայել:

— Հենց յես ել ցանկանում եյի մտնել, — ասաց
Վասիան և առանց յերկաբ մտածելու սուղվեց վա-
զոնի տակ:

Մենք նույնպես փորձող տարով մտանք:

— Ա՛յ, ա՛յ, — հանկարծ բղավեց Վասիան, կար-
ծես նրան մորթում եր մեկը:

Մենք բոլորս ել սողացինք դեպի նա ոգնության
հասնելու: Իսկ Վասիան անընդհատ գոռում եր ու մա-
տով ցուլց տալիս հարևան վազոնի տակ:

— Ա՛յ, ա՛յ, մարդը:

Մենք բռնեցինք Վասիայի ձեռքից:

— Ի՞նչ մարդ:

— Կենդանի:

Բազաժի վազոնի տակից, հաստ ձեռնափայտի
փրա հենվելով, դուրս յեկավ մի ուռած մարդ՝ կեղ-
տոտ շինելով:

— Հանդա՛րտ, — խոստով ասաց նա: —

Հանդա՛րտ: Մտե՛ք այստեղ:

Մենք դուրս յեկանք անիվների տակից և յերկչո-
տությամբ մոտեցանք մարդուն:

— Միայն մի՛ աղմկեք, սիրելի տղաներ, — շտա-
պելով ասաց նա, կակաղելով: — Դուք ուժոնցի՞ց եք:

— Մե՞նք, գյուղացիներ:

— Ո՞վքեր են ձեր հայրերը:

— Իսկ քո ինչի՞ն է պետք, — աղաղակեց Իվան
Վասիլյեվիչը:

Յես խղճացի այս արորված, կեղտոտ մարդուն:

«Յեվ ինչո՞ւ համար է նա այստեղ մտել: Հավանորեն
թագնվում է վորևե մեկից», — մտածեցի յես:

— Ուժոնցի՞ց եք դուք, ե՛, — մի անգամ ել հարց-
րեց մարդը:

— Դեպոյականներ, — ասացի յես, — իսկ դո՞ւ
ույլ ես:

— Յես կարմիր բանակային եմ:

Բոլորս ել աչքներս չորս արած՝ նայեցինք նրան:

Նրա դեմքը կեղտից գորշացել եր, կաշին պիրկ
պակել այտոսկրներին:

— Ընկե՛ր կարմիր բանակային, ծխի՛ր, — ասաց
Անդրեյը և մեկնեց դեպի նա մի կապ մախորկա:

Յես կոնատակիցս հանեցի տանից վերցրած հացի
կտորը: Իվան Վասիլյեվիչը գրպանից՝ լուցկին:

Կարմիր բանակայինն ամենից առաջ ձեռքը պար-
զեց Անդրեյի ծխախոտին: Նրա ձեռները դողդողում
եյին:

Նրա հետ ել սկսեցինք ծխել նաև մենք: Դեղնա-
վուն ծուխը թեթև ամպի նման պտտվում եր մեզ
վրա:

— Իսկ դու ի՞նչ ես անում այստեղ, — հարցրեց Անդրեյը կարմիր բանակայինից:

— Յես յետ եմ մնացել: Վիրավորված եմ: — Յե՛վ կարմիր բանակայինը յետ քաշեց վարտիկի աջ թայր: Վարտիկի տակից մենք տեսանք շապիկից շտապ սլառատված սևացած բինար, վորի վրա թանձր, դարչնագույն բծի նման չորացել էր արյունը: — Չկարողացա մեր զորամասի հետ հեռանալ: Այդ պատճառով ել թափառում եմ այստեղ:

— Իսկ վո՞րտեղ ես գիշերում, — հարցրեց Վասկան:

— Ձեզնահարկում: Են, վոր ծակված կտուր ունի: — Յե՛վ կարմիր բանակայինը ցույց տվեց մեջտեղի պահեստը, վորի-կտուրն արկը քանդել էր:

— Տղանե՛ր, տեսե՛ք, բերաններիցդ խոսք չփախցնեք: Յեթե իմանան, վոր յես այստեղ եմ, կկախեն ինձ այդ դարչնելիները:

— Ընկե՛ր, մի՛ անհանգստացիր: Մենք ավելորդ վոչինչ չենք խոսի, այդպիսիներից չենք, — ասաց Անդրեյը:

— Դե՛հ, գնացե՛ք այստեղից, — ասաց կարմիր բանակայինը: — Կարող են մեզ նկատել:

Յե՛վ, հենվելով իր փայտի վրա՝ նա դանդաղ շարժվեց դեպի իր պահեստը:


Մենք յերկար դիտում եյինք, թե ինչպես քաշ տալով գնդակով վիրավորված վռաքը՝ նա անշնորհ կերպով մագլցում էր յերերուն աստիճանով դեպի վերնատուն:

Յերբ նա անհետացավ, մենք գյուղ վազեցինք:

— Անդրե՛յ, այժմ մենք ի՞նչ ենք անելու, — հարցնում եմ վազելիս:

— Ի՞նչ: Լուել: Այդ մասին վոչ վորի: Կմեռնենք, չենք ասի:

— Իսկ նա պե՞տք է ուտի, — ասում եմ յես: — Չե՞ վոր իմ տված հացը նրան յերկար չի հերիք անի:



— Կրեքենք, — պատասխանում է Անդրեյը: Իսկ
հետո յես նրան ինձ մոտ կտանեմ: Իմ յեղբայրները
վոչինչ, չեն հայհոյի:

— Քեզ մո՛տ, — յերկարացրեց Վասիան. — Դու
ամեն ինչ քեզ... իսկ գուցե և իմ հայրը նույնպես
նրան կընդունի: Մեր սենյակն ավելի մեծ է...

— Հետո կտեսնենք, մի՛ վիճիր, — ասաց Անդրեյը:
Վասիան լռեց:

Ջրմուղի տնակի մոտ Անդրեյը մեզ կանգնեցրեց
և, դլուխը կախ գցած, ասաց կամաց.

— Տղաներ, նայեցե՛ք: Վո՛չ հորը, վո՛չ մորը —
վո՛չ մի խոսք: Լսո՞ւմ եք:

— Լսում ենք: Վո՛չ մի բառ:

Մենք հրաժեշտ ավինք և ցրվեցինք մեր տները:

Յես վազում եյի փողոցով ու մտածում. «Այսօր
ինչ հաջող որ է: Մենք կարմիր բանակային ունենք»:

X Գ Լ Ո Ւ Խ

ԱՌՄՆՅ ԿՐԱԿՈՅԻ

Կայարանում տոնական իրարանցում է: «Հաղ-
թուլթյունը» կանգնած է գլխավոր դժի վրա, կառա-
մատույցի մոտ:


Կայարանի մուտքն ազատ է: Դրողդովցիներն
իրենց զրահապատն ամբողջ դյուղին ի ցույց եյին
դրել:

«Տեսե՛ք, իբր թե, ո՛վ ուղղափառներ, ինչպես ենք
սղմելու բուլշեվիկներին: Հրճվեցե՛ք»:

Ջրահապատ գնացքը դիտելու համար դյուղից յե-
կել եյին աչքի ընկնող ծերունիները չերկեսկաներով,
կապույտ ու նարնջագույն բեշմետներով:

Յերկարամիտք մի ծերունի՝ դատուց կախած
արծաթյա դաշույնով, կոշտացած ձեռներով շոշա-
փում էր դեղին զրահը և շրթունքները չմիացնելով
ասում.

— Սրանից վոր մարդ խոփ չինի, հավիտյան չի
մաշվի:



Չրահապատի հրամանատարն որորվելով դուրս
յեկավ կառամատուլց: Նա քիթն աջ ու ձախ շարժեց
և ատամների արանքով հրամայեց.

— Պատրաստվե՛լ:

Սպաներն ու շարքայինները խոնվեցին գրահա-
պատի շուրջը. գրնգացնելով խթանները նրանք վա-
զում եյին պլատֆորմով՝ ժպտադեմ իրար նայելով:

Ձինվորները թնդանոթների մոտ փորձում եյին
պտուտակավոր ամբարձիկները, փողերի փոշին թափ
տալիս, բարձրացնում և իջեցնում հրահնատներում
գնդացիներն փողերը, ստուգելով նրանց սարքին լի-
նելը:

«Հաղթությունը» պատրաստվում էր հարձակման
դուրս դալու:

Մեքենավարը հաճախակի դուրս էր նայում շոգե-
քարչի պատուհանից ու տխուր չվչվացնում: Հետո նա
դադարեցրեց չվչվացնելն ու ասաց իր ոգնականին.

— Առեղներին մտիկ տուր:

Ոգնականը աստիճաններով ներքև վազեց, բաց
տրեց պողպատյա ծածկիչները և մուրճով թխկացնե-
լով՝ սկսեց ստուգել հրահնատների բեկոնները:

Չրահապատի հրամանատարը, աջ վոտքը ճշտա-
պահ կերպով դեպի կողմ դնելով, քայլում էր կառա-
մատուլցի վրա: Շոգեքարչի մոտ նա կանգ առավ և,
արմունկով սղմած նազանի պատյանը՝ յերկար դի-
տում էր շոգեքարչը: Հետո նա կանչեց իր մոտ յերի-
տասարդ, գնայուկի (բզեղ) նման մի սպայի և սկսեց
շտապ հարց ու փորձ անել ինչ-վոր մասերի ու կոճա-
փայտերի մասին: Սպան, ձեռքը անդլիակա՞ն գլխարկի
հովարին դրած՝ զեկուցում էր:

— Յերկաթուղայինները պնդում են, վոր առկա
վոչ մի տեսակ պահեստի մասեր չկան:

— Ստում են այդ գործադուլավոր նզովյալները:

Նրանց և վոչ մի խոսքին մի՛ հավատացե՛ք:

— Յես ինքս ստուգեցի պահեստները, պարոն
փոխգնդապետ:

— Ե՛, հետո ի՞նչ:

— Պահեստի մասեր չեն հայտարելված:

— Այդ դեպքում ձեզ ձեռ են առել, — կամաց,
քայց պարզորոշ արտասանեց Չրահապատի հրամանա-
տարը:

Չրահապատ գնացքի մոտ խոնվեցին կաղակները:
Նրանք դիտում եյին ծովային թնդանոթները, նայում
եյին շոգեքարչի անիվների տակ: Վոչվոք նրանց չեր
քչում: Պահապանները հանդիստ անց ու դարձ եյին
անում Չրահապատ գնացքի մոտ և իբր թե չեյին նկա-
տում կողմնակիներին:

Հրամանատարը մի կողմ տարավ յերիտասարդ
սպային և այս անգամ շատ կամաց ասաց նրան.

— Ձեզ ձեռ են առել, սիրելի՛ս, ինչպես ամենա-
վերջին հիմարի: Ձինվորներ վերցրե՛ք և անմիջապես
պահեստի մասեր գտե՛ք, անկարելի յե առանց այդ
մասերի ճանապարհ ընկնել: Մեզ կարող են կտրել-մե-
կուսացնել:

— Լսում եմ, — պատասխանեց սպան, շխկացրեց
կրունկներով և հեռացավ:

Քսան բոպեյից հետո նա վերադարձավ: Նրա հե-
տեվից դալիս եյին զինվորներ: Նրանք բերում եյին հե-
ղույսներ, գործիք, պնդողակներ և մի քանի կոճա-
փայտ:

— Տեսնո՞ւմ եք, ահա, — ասաց «Հաղթության»
հրամանատարը՝ ժպտալով յերիտասարդ սպային: —
Յես բոլորովին իրավացի եյի, յերբ ասում եյի, վոր
դուք սխալվել եք:

— Ճիշտ այդպես է, պարոն փոխ-գնդապետ:
Սխալ էր տեղի ունեցել:

— Դե՛հ, այժմ արդեն լիովին պատրաստ ենք:

Յես հույս ունեմ, վոր կցրեմ ուղմաճակատն ա-
ռանց մի կրակոցի:

Հրամանատարը վերջին խոսքերն արտասանեց այն-
պես, վոր բոլորը լսեն: Հետո նա ուղղեց տափակ, դաչ-

տային հեռագրիտակի փոկը, հպարտութեամբ նայեց մասսային և ծոր տալով հրամայեց —

— Նը՛ս—տե՛լ:

Հերթապահ սպան բարձրացավ շոգեքարշի վրա: Թնդանոթները և զնդացիները մոտ բոլոր կանոնների համաձայն տեղավորվեցին սպասավորները: Վերջինը բարձրացավ «Հաղթութեան» հրամանատարը:

Զրահապատը շարժվեց առանց սուլոցի:

Ծանր պլատֆորմների անիվները սահուն գլորվում էին: Շոգեքարշն արագութեամբ վերցրեց առանց հե- վոցի:

Յերկու բուլեյից հետո «Հաղթութեան» զրահազր- նացքն անհայտացավ վոլորանի հետևը: Նա գնում էր Կուրսավկա:

Վասկան դուրս թռավ կառամատույցի վրա:

— Գնա՞ց արդեն:

— Հրամայեց ղեզ բարևել:

Մեր մոտով անցավ արծաթյա դաշույնով, մի բ- քավոր կազակը: Ձեռքը դաստակին դրած՝ նա ատում էր, դառնալով պերրոնի վրայի ամբողջ մասսային:

— Ահա եղ կզմփացնի, ենպես կտա՛: Հողին կը- հավասարեցնի: Մի խոսքով՝ տոնական խալաթ կբերի սրկաներին:

Լավ կպատվի կարմիր փետրավորներին:

— Պարզ ե՛ կզմփացնի:

— Ես արդեն հանաք չի անի:

— Պարզ ե՛ չի անի, — ասաց մի ղեքավորը: — Եդ առաջ եր, վոր դաշտ եյին գնում ու իրար բռունցքով տալիս: Կամ թե կոտորականոցով եյին կռվում: Մինչև դու եղ հրացանդ ամեն տեսակ խառախուռայով կը- լցնեյիր, թշնամիդ մի ճաշ քուն կաներ: Ի՛նչ պատե- րազմ է դա, շնորհ արեք դատելու: Յես ահա ամբողջ կյանքումս կռվել եմ, յեղել եմ և՛ ճապոնական կը-

վում, և՛ գերմանական կռվում, ամեն տեսակ բաներ տեսել եմ, բայց այդպիսի զրահապատներ չեն պատա- հել, չեմ տեսել:

— Ճիշտ ե ասածդ... տեխնիկան այժմ են չե, ինչ վոր առաջ եր: Այժմ տեխնիկան, ուղղակի ասած, ամենաբարձր աստիճանի յե, — համաձայնվեց մի ղեք- վորի հետ ինչ-վոր մի ծերուկ ամբոխի միջև:

Յերեկոյան դեմ ժողովուրդը հավաքվեց կայարան: Յեկել եյին վոչ միայն մոտիկ գյուղերից, այլ նաև հարևան գյուղակներից, գերմանական գաղութից, Չուգունկայից: Յեկել եյին և՛ ծերերը, և՛ յերիտա- սարդները: Դեռատի կազակները հասակավորներից հետ չեյին մնում: Նրանք բոլորն էլ կապել եյին կով- կասյան գոտիներ, վորոնցից կախված եյին նրանց ահազին դաշույնները: Բոլորն էլ զարդարված եյին տոնական չերկեսկաներով, բեշմետներով: Գոռուգա- նում եյին գյուղացիների առաջ:

Գյուղակների տղաները բոլորն էլ այլաքաղաքա- ցիների յերեսաներ են: Մեր մեջ յերկու դեռատի կա- զակ էլ կա՝ Միշկա Սգոննիկը և Գավրիկը: Միայն դը- րանք են, ինչպես մենք, վոր կարմիրներին են կողմ- նակից: Միշկայի հայրը գեպոյի բանվոր ե: Գավրիկի հայրը կարմիրների հետ ե գնացել: Միշկային և Գավ- րիկին ստանիչնիկները մինչև անգամ կազակներ չեն հաչվում: Յեվ ճիշտ ե, ի՞նչ կազակներ են նրանք: Ծնված ուրից մինչև հիմա բեշմետ էլ չեն հագել:

Պերրոնի վրա ինչ-վոր տեղ սկսեց նվազել յերկ- շար գարմոնը: Դեռատի կազակները մի յերդ ծոր աը- վին:

Յե՛կ, սիրելիս, տուն գնանք,
Ծեղն ե պատուում մթան քող:
Շամանդաղով անցկենանք,
Մեղ չի լինի կասկածող:

տային հեռագրիտակի փոկը, հպարտութեամբ նայեց մասսային և ծոր տալով հրամայեց —

— Նը՛ս—տե՛լ:

Հերթապահ սպան բարձրացավ շոգեքարչի վրա: Թնդանոթների և գնդացիների մոտ բոլոր կանոնների համաձայն տեղավորվեցին սպասավորները: Վերջինը բարձրացավ «Հաղթութեան» հրամանատարը:

Ձրահապատը շարժվեց առանց սոււրջի:

Ծանր պլատֆորմների անիվները սահուն գլորվում էին: Շոգեքարչն արագութեամբ վերցրեց առանց հե-
վոցի:

Յերկու բուլեյից հետո «Հաղթութեան» զրահազր-
նացքն անհայտացավ վոլորանի հետևը: Նա գնում էր
Կուրսավիա:

Վասիան դուրս թռավ կառամատույցի վրա:

— Գնա՞ց արդեն:

— Հրամայեց քեզ բարևել:

Մեր մոտով անցավ արծաթյա դաշույնով, միը-
քավոր կազակը: Ձեռքը դատտակին դրած՝ նա ասում
էր, դառնալով պերրոնի վրայի ամբողջ մասսային:

— Ահա եղ կզմփացնի, ենպես կտա՛: Հողին կը-
հավասարեցնի: Մի խոսքով՝ տոնական խալաթ կրերի
սրիկաներին:

Լավ կպատվի կարմիր փետրավորներին:

— Պարզ է՝ կզմփացնի:

— Ես արդեն հանաք չի անի:

— Պարզ է՝ չի անի, — սոսայ միըքավորը: — Եդ
առաջ եր, վոր դաշտ եյին գնում ու իրար բռունցքով
տալիս: Կամ թե կոտորականոցով եյին կովում: Մինչև
դու եդ հրացանդ ամեն տեսակ խառախուռայով կը-
լցնեյիր, թշնամիդ մի ճաշ քուն կաներ: Ի՛նչ պատե-
րազմ է դա, չնորհ արեք դատելու: Յես ահա ամբողջ
կյանքումս կովել եմ, յեղել եմ և՛ ճապոնական կը-

վում, և՛ գերմանական կովում, ամեն տեսակ բաներ
տեսել եմ, բայց այդպիսի զրահապատներ չեն պատա-
հել, չեմ տեսել:

— Ճիշտ է սպա՞դ... տեխնիկան այժմ են չե, ինչ
վոր առաջ եր: Այժմ տեխնիկան, ուղղակի ասած, ա-
մենաբարձր աստիճանի յե, — համաձայնվեց միըքա-
վորի հետ ինչ-վոր մի ծերուկ ամբոխի միջից:

Յերեկոյան դեմ ժողովուրդը հավաքվեց կայարան:
Յեկել եյին վոչ միայն մոտիկ գյուղերից, այլ նաև
հարևան գյուղակներից, գերմանական գաղութից,
Չուգունկայից: Յեկել եյին և՛ ծերերը, և՛ յերիտա-
սարդները: Դեռատի կազակները հասակավորներից
հետ չեյին մնում: Նրանք բոլորն էլ կապել եյին կով-
կասյան գոտիներ, վորոնցից կախված եյին նրանց
ահագին դաշույնները: Բոլորն էլ զարդարված եյին
տոնական չերկեսկաներով, բեշմետներով: Գոռոզա-
նում եյին գյուղացիների առաջ:

Գյուղակների տղաները բոլորն էլ այլաքաղաքա-
ցիներ էր յերեխաներ են: Մեր մեջ յերկու դեռատի կա-
զակ էլ կա՝ Միշկա Սոսնիկը և Գավրիկը: Միայն դը-
րանք են, ինչպես մենք, վոր կարմիրներին են կողմ-
նակից: Միշկայի հայրը գեպոյի բանվոր է: Գավրիկի
հայրը կարմիրների հետ է գնացել: Միշկային և Գավ-
րիկին ստանիչնիկները մինչև անգամ կազակներ չեն
հաշվում: Յեվ ճիշտ է, ի՞նչ կազակներ են նրանք:
Ծնված որից մինչև հիմա բեշմետ էլ չեն հագել:

Պերրոնի վրա ինչ-վոր տեղ սկսեց նվազել յերկ-
շար գարմոնը: Դեռատի կազակները մի յերդ ծոր տը-
վին:

Յե՛կ, սիրելիս, տուն գնանք,
Մեզն է պատուում մթան քող:
Շամադաղով անցկենանք,
Մեզ չի վնի կասկածող:

Բարձրահասակ ու շեկ մի կազակ, յերկու մատը
Ֆարած բերանը դնելով, ամբողջ ուժով շվշվացնում եր
հարմոնիկի տակտով: Անչափ յեռանդից նա քրտնել,
կարմրատակել եր:

— Տես՝ ի՛նչպես ե քրտնքակոխ յեղել,— ասաց
Գավրիկը:

Այդ ժամանակ մի խժուժավոր կազակ, դարձնա-
գույն չերկեսկայով, մոտեցավ մեզ և ծխախոտ խընդ-
րեց: Գավրիկն ատամների արանքով ասաց.

— Չկա, խանութում հարցրու:

— Ծխախոտ տո՛ւր, — աղաղակեց կազակը՝ ձեռ-
ները թափահարելով:

— Խանութից, — կրկնեց Գավրիկը:

— Իսկ յես քեզ ասում եմ ծխախոտ տուր:

— Իսկ յես քեզ ասում եմ՝ չկա, — տնազ եր անում
Գավրիկը:

Կազակը բռնեց Գավրիկի ոճիքից:

— Բաց թող, հիմա՛ր, — աղաղակեց Գավրիկը և
ուղեց դուրս պրծնել:

Կազակը մտրակը թափահարեց: Բայց իսկույն
գետի նա ցատկեցին Անդրեյը, Միշկա Սզոննիկը և
Վանկան:

Անդրեյը կազակի ձեռքից մտրակը խլեց, իսկ
Միշկան վոտքով խփեց նրա փորին:

Կազակն որորվեց: Մինչև նրա ուշքի գալը Վան-
կան դուրս քաշեց գոտուց նրա դաշույնը:

Կազակը ձայն տվեց:

— Սանդրո՛, Պետկա՛, Յեզո՛ր, այլաքաղաքացի-
ները ծեծում են...

Գարմոնը ճղճղաց ու լռեց: Յերգն ընդհատվեց:
Խժուժավոր կազակին ոգնության հասան հաղթանդամ
պատանիներ: Կազակները դուրսում եյին վոտքերով:
Յերիտասարդները վազում եյին դաշույնները մեր-
կացրած:

Իսկույն ողակեցին մեզ: Անդրեյը պաշտպանվում
եր մտրակով: Յեռ ու Վանկան բռունցքներս գործել
դրինք:

Հանկարծ գետինը ցնցվեց... Լսվեց ծանր, թնդա-
նութային կրակոց: Նրա հետևից, անդունդ գլորվող
վիթխարի հողակտորի նման՝ դղրդացին ծանր թրն-
դանութները:

Կրակում եյին այնտեղ, Կուրսավկայի կողմից:
Յերկար որերից հետո առաջին անգամն եյինք լսում
թնդանութային կրակոցներ: Մենք ականջներս սրրե-
ցինք: Կազակները նույնպես:

— Խիեցե՛ք դրանց, — հանկարծ գոռաց յերկա-
րամիրուք կազակն ու մտրակով շրխկացրեց Վանկայի
գլխին:

Վանկան գլուխը բռնեց: Կազակները հարայհարոց
բարձրացրին ու տաս ձեռքեր միանգամից սկսեցին
հասցնել Վանկային՝ վորտեղ պատահում եր:

— Չգուշչ, ումբ եմ նետելու, — գոռաց Անդրեյն
անբնական ձայնով և ձեռքը տարավ գրպանը:

Կազակները յետ-յետ գնացին: Վանկան դուրս
պրծավ ամբոխի միջից և սկսեց փախչել: Նրա հետե-
վից՝ և մենք:

— Ո՛ւ, դղվելիներ: Աչքիս չերևաս, — աղաղա-
կեց Անդրեյը, վազելիս թափահարեց բռունցքն ու ծե-
փեց միրքավորի քթին: Մենք վազում եյինք առանց
յետ նայելու: Մեզ հետապնդում եյին դեռատի կա-
զակները:

— Սրիկանե՛ր, յուրայինների դեմ են գնում:
Մենք ձեռ վիզը կոլորենք, — գոռում եյին նրանք Միշ-
կայի և Գավրիկի հետևից:

Մենք կանգնեցինք յերկաթուղային քարե կամրջի
մոտ:

— Ուրեմն նահանջեցի՞րն, — ասաց Անդրեյը՝ ծանր
չուճ քաշելով:

— Նահանջեցին, — տխուր պատասխանեց Վա-
կան:

Գավրիկը, կամրջի կամարին ուտը դեմ տված,
թքեց գետնին: Նրա թուքը կարմիր եր: Նա թքեց
յերկրորդ անգամ, և արյունոտ ատամն ընկավ գետին:

Այ քեզ խծծած դմակ, ի՞նչպես հարվածեց, — ա-
սաց նա:

— Միանգամից յերևում ե, վոր մեզնից ե, հարա-
դատ, — ասաց Միշկան՝ սրբելով ուռած ականջը:

— Բայց վարպետորեն դուրս պրծանք, — ասաց ի-
վան Վասիլյեվիչը: — Ախր այդ գլխիկները բոլորն ել
դաշույն ունեյին, — կարող եյին հորթի պես մոր-
թոտել մեզ:

— Այո՛, — ասաց Վասիկան, — բայց լավ եր, վոր
Անդրեյը ուռմբ ուներ իր մոտ:

Անդրեյը ծիծաղեց:

— Ինչո՞ւ յես ծիծաղում, — հարցրեց Վասիկան:

— Ահա իմ ուռմբը, — ասաց Անդրեյը և բռունցքը
պտտացրեց Վասիկայի քթի առաջ:

Ուրեմն դու նրանց խարեցի՞ր, — հարցրեց Վաս-
իկան:

Անդրեյը վռչինչ չպատասխանեց: Նա գլուխը
բարձրացրեց և սկսեց ինչ-վոր բանի ուշադրությամբ
ականջ դնել:

Մենք նույնպես ականջներս սրեցինք:

Բոլորովին մոտիկից լավեց մետաղի գնդոց: Կա-
մուրջը կամաց դողդողում եր: Զրահապատ գնացքն եր
վերադառնում:

Մենք դուրս յեկանք կամրջի տակից և շարքով
պառկեցինք դռնիվայրի մոտ:

Գնացքը գնում եր առանց ճրագների: Պարզորոշ
լավում եր ծանր անիվների թխթխկոցը: Մեզմ գնում
եր ուրիշ ուղղությամբ:

Սուր քամին շոյում եր մեր դեմքը:

— Տղե՛րք, ինչո՞ւ մենք հենց դժի մոտ ենք պառ-
կել, — խոստովանում ասաց իվան Վասիլյեվիչը: —
կգնդակոծեն մեզ:

— Դեռ բան չկա՝ վախեցա՞ր, — հարցրեց Անդ-
րեյը:

— Զվախեցա, բայց իդուր տեղը կորչելու ցանկու-

թյուն չունեմ: Իսկ յեթե գեթ փայտե ուռմբ ունենա-
յինք, յես կսողայի դեպի գիծը և իսկույն ուրիշ շուռ
կտայի: Թե չե՛ ի՞նչ կարող ես անել:

— Իսկ դու միայն մոտեցի՛ր և ուրիշ հաց քսի՛ր, —
ասաց Գավրիկը՝ մեկնելով Վանկային հացաչորուկը:

— Ինչո՞ւ համար, — չփոթված հարցրեց Վանկան:

— Հենց փորձի համար: Այն ժամանակ կերեվա —
վախեն՞ում ես, թե վոչ:

Վանկան նայեց տղաներին և դժկամորեն փորսող
տալով սկսեց բարձրանալ թումբը:

Մոտ, շատ մոտ թխկացնում եյին անիվներն ու
փնչացնում շողեքարչը: Վանկան սողում եր ու նայում
այն կողմը, վորտեղից դալիս եր զրահապատը: Վեր-
ջապես նա հասավ գծին, յետ նայեց դեպի մեզ և հացը
արագ քսեց ուրիշ:

Հետո գլխիկոնձի տալով գլորվեց դեպի մեզ —
դառնվայրի տակ:

— Ահա և բոլորը: Այժմ պառկի՛ր: Յերբեիցե ահա
այդ ձևով կարող ես և զրահապատ պայթեցնել, —
ասաց Գավրիկը խրատական ձևով:

Մենք ծիծաղեցինք:

Զրահապատ գնացքը դանդաղորեն անցավ մեր
մոտով: Թվում եր, թե նրա վրա վոչ վոք չկար: Ան-
ցավ, անիվներով գնացրեց ուղեփոխների վրա և
կանգնեց կայարանի մոտ:

— Կանգնե՛լ, — հրամայեց Անդրեյը:

Մենք արագ վռտքի բարձրացանք և կրկին վաղե-
ցինք դեպի կայարան: Թռանք ցանկապատի վրայով,
դաղտաղողի անցանք մեծ նկուղների մոտով, սլիվեցինք
այդու միջով: Վերջապես հասանք կայարան և խցկվե-
ցինք մի մութ անկյուն՝ հենց զրահապատի դեմ ու դեմ:

Պահակները ժողովրդին կայարանից քշեցին:
Սպաները բարկացած ման եյին դալիս: Զրահապատ
գնացքի մոտ տեղի յեր ունենում անհասկանալի չփո-
թուլթյուն: Բոլորը գոռում եյին: Բոլորից ավելի տա-

քանում եր կապկալված գլխով յերիտասարդը՝ բզեզի նման սպան:

— Իսկ ո՞ւր ե հրամանատարը, — փսփսալով հարցրի յես Անդրեյին:

— Լսի՛ր: Յես ի՞նչ գիտեմ:

Պլատֆորմներից և աշտարակներից զինվորները քաշքշում էյին սպանվածներին և զնում պատգարակների վրա: Հրամանատարական կամրջակից քաշեցին ինչ-վոր մեկի մարմինը և գլորեցին պատգարակի վրա այնպես, ինչպես գլորում են ճանապարհի իրերը, վերևից փռեցին շինելը և նրա վրա դրին տափակ, զինվորական հեռադիտակը:

— Յերևի հենց դա յե հրամանատարը, — ասաց Անդրեյը:

XI Գ Լ Ո Ի Ե

ՄԱՐՏԱԿԱՆ ԶՈՎԱՏԸ

Հետևյալ ուրը յես և Անդրեյը գնացինք դեպի փափուղին: Մեզ հետ էյին Վասկան, Միշկան, Գավրիկը և Վանկան: Յես ու Վասկան կարմիր բանակայինն ուտելիք էյինք տանում: Ճանապարհին Վասկան հացի չորուկից պոկեց կիսայրված կեղևը և սկսեց դանդաղորեն ծամել:

— Մենք, ազնվությամբ ասած, կարմիր պարտիզաններ ենք, — ասաց Միշա Սգոննիկը: — Ամեն ինչ ունենք, միայն հրացաններ չկան:

— Մտրակը կա, ձին ել կլինի, — հորանջելով պատասխանեց նրան Անդրեյը:

Ուրախ ցատկոտելով վազոնների կտորտանքի վրայով ու իրար առաջ տալով՝ հասանք պահեստը և բարձրացանք ձեզնահարկը:

Կարմիր բանակայինն սպասում եր մեզ: Նա կանգնել եր դռների մոտ դավազանին հենված: Նրա միջուկն այդ ուրերի ընթացքում ավելի յեր աճել: Դեմքը համարյա չեր յերևում:

— Մտե՛ք, — ասաց նա՝ ներս թողնելով մեզ:

Մենք կուսացած՝ դռով անցանք և տեղավորվեցինք խոտի վրա:

— Իսկ սրա՞նք ովքեր են, — հարցրեց կարմիր բանակայինը՝ գլխով ցույց տալով Գավրիկին ու Միշկային:

— Մերոնք են, դեպոյականներ, — ասացի յես:

— Հա՛, մերո՞նք, դե լավ:

Կարմիր բանակայինն ինձանից ու Վասկայից վերցնելով հացն ու ճարպը, սկսեց արագ և ազահու-թյամբ ուտել:

— Դե՛հ, պատմեցե՛ք, տղերք, ի՞նչ ե կատարվում այնտեղ կայարանում:

— Յերեկ ջարդել են կադետների զրահապատը, — ասաց իման Վասիլյեվիչը:

— Ստում ե նա, — ընդհատեց նրան Միշկան, — զրահապատը վողջ ե, բայց նրանց հրամանատարին են սպանել:

— Յես ել եմ ասում, վոր հրամանատարին, իսկ դու մեջ մի՛ ընկնիր:

— Այդպես ել ասա՛, և վոչ թե խարիր:

Կարմիր բանակայինը լսում եր մեզ՝ կկոցելով աչքերը և ճարպը տրորում հացի հետ:

— Լսի՛ր, ընկեր կարմիր բանակային, — վրա բերեց հանկարծ Վասկան և գլխից հանեց կազակային գզզոված գլխարկը: Գուցե կգաս մեզ մոտ ապրելու: Մեզ մոտ լավ ե, վոչ վոք չի գալիս մեզ մոտ:

— Վո՛չ, ջահել տղա, ավելի լավ ե՛ յես այնտեղ ապրեմ: Թե չե գյուղում ինձ իսկույն կձանկեն: Յերբ վոտս լավանա, այն ժամանակ ուրիշ բան ե: Կդանեմ՝ ում վոր պետքն ե...

— Իսկ քեզ ո՞վ ե պետք, — հարցրեց Վասկան: — Մենք քեզ համար իսկույն կձարենք: Միայն ասա՛:

Կարմիր բանակայինը ժպտաց:

— Վո՛չ, վո՛չ, չնորհակալ եմ: Ավելի լավ ե՛ յես ինքս:

«Նա թաղցնում է ինչ-վոր բան», — մտածեցի
յես:

— Ընկե՛ր կարմիր բանակային, — ասաց Անդրեյը,
իսկ ի՞նչպես ես կարծում — թե վոր մենք մեր ջոկատը
կազմակերպենք: Վոչ ենքան մեծ, բայց մարտական:
Հա՞:

— Այդ, իսկապես, ջոկատ կազմելը լավ կլիներ, —
ասաց Գավրիկը, — թե չէ՝ ի՞նչ: Յերեկ արդեն մեզ ծե-
ծել են: Գուցե այսոր էլի ծեծեն: Իսկ յեթե ջոկատ
լինի, մենք ինքներս նրանց կջարդենք:

— Դու վոչինչ չես հասկանում, — ասաց Անդրե-
յը, — մեզ ջոկատը հարկավոր է վոչ թե կռվի համար,
այլ սպիտակների դեմ, սպաներին խփելու:

Կարմիր բանակայինը ժպտաց:

— Դուք, յերևում է, համարձակ պատանիներ
եք, — ասաց նա: — Միայն, յեթե այդ գործի մեջ մենակ
դուք մտնեք, ձեզ գրողի բաժին կանեն: Հենց առաջին
ուսմբից ձեր կտորտանքները կմնան միայն: Իսկ յեթե
այստեղ իսկական պարտիզանական ջոկատ լինեք,
դեպոյի բանվորներից, ա՛յ, եդ ուրիշ բան կլինեք,
դուք այնտեղ հետախույզներ կլինե՛յիք, կամ թե չէ գըն-
դաքորդներ: Յես Բալախոնովյան ջոկատում մի պա-
տանի էյի ճանաչում, ահա քո տարիքին, — գլխով
ցույց տվեց Անդրեյին: — Ահա այդ պատանին, յերբ
մենք Բոգոսլավկայից նահանջում էյինք և թնդանոթ-
ներն արդեն թողել էյինք, նա թնդանոթներից հանում
եր փականները և վազում՝ մեզ հասնելու: Լսում
ենք — մեկը մեր հետևից սլանում է: Հետ նայեցինք,
այդ պատանին եր: «Ե՛յ դուք, ա՛նմիրուք սատանա-
ներ, — աղաղակում է, — ինչո՞ւ յեք թնդանոթները
սպիտակներին թողել»: Յեվ իրերի տուպրակից հանում
է փականները: Յեվ ինչպես ել ծա՛նր էյին:

— Դե՛հ, տեսնում ես ահա, — ասաց Անդրեյը: —
մենք նույնպես կարող էյինք նրանից վոչ պակաս
ոգնել կարմիր բանակայիններին: Համենայն դեպս դու
մեզ կազմակերպիր: Գրի առ մեզ, վորոնք կարմիրնե-

րի հետևից են գնում: Մի՛ վախենա, մենք աղմուկ
չենք բարձրացնի: Առանց քեզ վոչ մի գործ չենք անի:

— Դե լա՛վ, — ասաց կարմիր բանակայինը, —
միայն հիշեցեք: Առաջին՝ ղրնվորական կարգապահ-
հույժուն: Յերկրորդ՝ վոչ վոքի վոչ մի ավելորդ
խոսք: Հասկացա՞ք:

Կարմիր բանակայինը մատը բարձրացրեց:

— Հասկացանք, — ասաց Անդրեյը բոլորի փոխա-
բեն: — Յեթե մեկն ու մեկը բերնից խոսք բաց թողնի,
ինքս նրա գլուխը կկտրեմ:

— Ինչո՞ւ յես ինձ նայում, — փնփնթաց Վաս-
կան:

— Յես քեզ վրա իսկի ել չեմ նայում... Ինչո՞ւ
յես տաքանում: Ուրեմն ի՞նչպես, ընկե՛ր կարմիր բա-
նակային, կդրե՞ս մեզ:

— Ինչո՞ւ գրել: Յես առանց այն ել բոլորիդ հի-
շում եմ: Իսկ թուղթը, մեկ ել տեսար, ընկավ մեկի
ձեռքը, վորն այդ մասին բան չպետք է իմանար:

— Չե, գրիր, — ասաց Անդրեյը: — Մենք թուղթն
այնպես կպահենք, վոր սատանան ել չգտնի:

Անդրեյը բաճկոնակի կողքի գրպանից հանեց իր
մեծ, մոմլաթե քրքրված շապկով հուշատետրը, կտրեց
վերևից կարմիր գիծ քաշած մի թերթիկ և պարզեց
Կարմիր բանակայինին:

— Ինձ գրիր, — ասաց Վասկան, — Վասիլի Իլյիչ
Կոնստանտինով, տասներկու տարեկան, կամավոր:

— Ազդանունները չպետք է գրել, — ասաց կարմիր
բանակայինը, — պայմանական ձևով կդրենք առաջին
տուր:

Յեվ նա մատիտի փոքրիկ կտորով գրեց.

1. Վասիլի Կ. 12 տարեկան:

2. Անդրեյ Բ. 15 տարեկան (Անդրեյի ազգանունը
Բերենեց եր):

3. Գրիգորի Մ. 14 տարեկան (սա յես եմ, Մի-
րոչնիչենկո):

4. Իվան Դ. 14 տարեկան (Իվան Վասիլյեվիչ Դուշկո):

5. Միխայիլ Ս. 14 տարեկան (Սգոննիկ):

6. Գավրիլա Դ. 14 տարեկան (Գավրիլա Դյաչենկո):

— Սրա՞նք են, — հարցրեց կարմիր բանակայինը:

— Սրանք են, — պատասխանեցինք մենք կարծ:

— Իսկ Սենկա Վորոնկո՞վը, — հարցրեց Վասիլան:

— Բայց նա այստեղ չէ, ինչո՞ւ համար գրեւ նրան, — ասաց Իվան Վասիլյեվիչը:

— Գրիր, — աղաղակեց Վասիլան, — նրան առաջինը պետք է գրած լինեյինք: Նա կարիճ տղա յե:

Ս.յնպես չէ, ինչպես դո՛ւ յես:

Կարմիր բանակայինը գրեց.

7. Սեմյոն Վ. 15 տարեկան:

Հետո նա յերեսը բաժանեց յերկու մասի, և մենք բոլորս ել համարների կարգով ստորագրեցինք՝ ամեն մեկը դնելով իր անվան սկզբնատառը: Միայն մի տող մնաց առանց ստորագրութեան:

Ջոկապետ ընտրեցինք, ի հարկէ, Անդրեյին:

— Բայց դուք իսկապես վոր ջոկատ կազմակերպեցիք, — ասում եր կարմիր բանակայինը՝ ուրախ ժրպրտալով:

Հենց նույն թերթի վրա ել արձանագրությունն գրեցինք — Կ.Բ.Տ.Չ.Ա.Ջ.Ժ.ՈԻ.Պ.Ա.Խ.Ա.Ք.Կ.Տ.Ձ.Հ.Կ.

Այդ նշանակում եր.

«Կարմիր բանակայինի՝ տեղը չհասանել: Ամբողջ ջոկատի ժողովն ուրիշ պունկտում անել: Խորհրդակցությունն անցկացնել քանդված կառուրի տակ: Ջոկատի հավաքագրում կատարել»:

Իսկ արձանագրության տակ նորից 12 տառ գրեցինք — գրանք կրկին կամավորների անուն-ազգանունների տառերն եյին:

— Դուք նույնպես ստորագրեցե՞ք, — ասաց Վասիլան կարմիր բանակայինին:

Կարմիր բանակայինը ստորագրեց՝ Պ. Գ.:

— Ուրեմն ձեր անունը Պետյա յե, — հարցրեց Վասիլան՝ ուշադրությամբ նայելով տառերին:

— Վո՛չ, գլխի չընկաք: Մայրս Պորֆիրի յեր կանչում: Պորֆիրի Գարուչենկո:

Ձեր անունը հիանալի յե, — ասաց Վասիլան:

Մենք պատրաստվում եյինք հեռանալու, յերբ հանկարծ Պորֆիրին կանգնեցրեց մեզ ու հարցրեց:

— Ձեզանից ո՞վ է կայարանին ավելի մոտիկ ապրում:

— Յես, — բղավեց Վասիլան: — Յես բոլորից մոտիկ եմ:

— Կամաց, ի՞նչ ես գոռում, — ասաց Գավրիկը: Ձե՞ վոր ասացինք՝ ավելորդ խոսքեր չլինեն:

— Դե ավելորդ ել չեմ ասում:

Պորֆիրին մոտեցավ Վասիլային:

— Ի՞նչ է անում քո հայրը:

— Դեպույում փականագործ է: Նրա մասին բոլորն ել ասում են, վոր դյուղում առաջին բուլչեիկն է: Նա մինչև անգամ զրահապատ գնացքի հրամանատարից չվախեցավ:

— Իսկ նա տանը յե՞րբ է լինում:

— Յերեկոյան:

Կարմիր բանակայինը մի փոքր լուեց, հետո ասաց.

— Ահա թե ի՛նչ, Վասիլի: Մի անգամ յերեկոյան մի կերպ ինձ մոտ արի՛, միասին հորդ մոտ գնանք:

— Են ժամանակ մեզ մոտ ել յեկե՛ք: Մենք Վասիլայի հետ մի բակում ենք ապրում, — ասացի յես:

— Յես ել հեռու չեմ ապրում — չորրորդ նրբափողոցը, հետեից, — ասաց Գավրիկը:

Պորֆիրին սկսեց ծիծաղել:

— Յես հազիվ կարողանամ մի կերպ մեկի մոտ հասնել, — ասաց նա. — Իմ վոտըն այժմ փայտի նման է: Իմ շատ ման գալը վտանգավոր ել է — կթոցնեն:

Ահա թե ինչ, Վասյա, ասա քո հորը, յեթե վոր չի վախենում, թող բանվորներին, վորոնք ավելի հուսա-

լի յեն, չորս-հինգ հոգի հավաքի, ինձ ել այդ մասին նախազգուշացնի:

Անպատճառ կասեմ:

Մենք բաժանվեցինք Պորֆիրիից և ցրվեցինք մեր տները:

Դա մեր մարտական ջոկատի պատմութեան առաջին ուրն էր:

XII Գ Լ Ո Ի Ե

ԿԱՐՄԻՐՆԵՐՆ ՈՒ ՍՊԻՏԱԿՆԵՐԸ

Յես ու Գավրիկը բախակա խանութի մոտ տեսանք կայարանի տղաներին:

Կոխկրտաված ճանապարհի վրա նրանք վեզ եյին խաղում: Խաղը դեկավարում էյին Պաշկա Բոչկարյովը և Միշկա Շեվչենկոն:

Պաշկա Բոչկարյովը — հաստլիկ ու կարմիր թշերով — միշտ տարվում էր: Անշնորհք կերպով նա կուսում էր, սահմանադժի վրա դարձում նախած վեզերը և մատները մեջ դանդաղորեն շուռ ու մուռ տալիս կապարե ծեծանը: Միշկա Շեվչենկոն ավելի ճարպիկ էր՝ բարակ, լղարիկ: Նա ճարպկութեամբ սահմանադժից հանում էր Պաշկայի վեզերն ու հոհուում՝ բերանը լայն բաց անելով:

— Եհե՛, — ասում էր նա, — ձերն էյին, մերն են այժմ:

Պաշկան մեկը մյուսի հետևից վեզերը տարվում էր: Նա կարմրում էր, Ֆնչում, հայհոյում: Վերջապես նա ել չդիմացավ, գլխարկի հովարը յետ շուռ ավեց, ավելի մոտեցավ Միշկային և հանկարծ, ա՛ռ հա, հասցրեց նրա քթին: Արյունը Միշկայի քթից շատրվանի պես խփեց:

— Ինչո՞ւ յես խփում, — գոռաց Շուրկա Կուզնեցովը՝ դուրս գալով յերեխաների խմբից:

Պաշկան վախեցած քրթմնջաց:

— Նրա համար, վոր ըստ կանոնների չի խաղում:

— Ստու՛մ ե նա, — լալկան յեղանակով աղաղակեց Միշկան:

Նա դիտեր, վոր յեթե Շուրկա Կուզնեցովը նրան պաշտպան կանգնի, այլևս վոչ վոք չեր համարձակվի նրան ձեռք տալ: Շուրկան տաքարյուն տղա յեր — կխփեր, ինչ-վոր ձեռքն ընկներ:

Այդ ժամանակ մոտեցան Աֆոնկա Կապուչչեվը և Վանկա Միխնեվիչը: Աֆոնկան, առանց յերկար մտածելու, թե բանն ինչումն է, հետևից հարձակվեց Պաշկայի վրա և բռնեց նրա ոճիքից:

— Կացե՛ք, ծուլորեն կանչեց Վանկա Միխնեվիչը. — ինչո՞ւ բոլորդ ել Միշկայի կողմն եք: Յես նրան ճանաչում եմ, նա խաղի մեջ միշտ ել խարդախություն է անում:

Աֆոնկան Պաշկայի ոճիքը բաց թողեց: Պաշկան արագ շուռ յեկավ ու տեղն ու տեղը հաշիվ մաքրեց: Յերկու անգամ իրար հետևից խփեց նրա ախանջին ու քթին:

— Այ քեզ սատանայի առաքյալ: Ի՛իթդ մի՛ կոխիր, վորտեղ չեն խնդրում քեզ:

Կռիվը շատ կտաքանար, յեթ յես ու Գավրիկը չե՛իջամտեյինք:

— Ինչո՞ւ յեք կռվում, — հարցրեց Գավրիկը թավ ձայնով:

— Չե՛, վոչ վոք չի կռվում, — հանդարտ պատասխանեց Վանկա Միխնեվիչը:

Գավրիկը նայեց Միշկային, վորի յերեսն ամբողջապես նախշված էր արյունով, և Աֆոնկա Կապուչչեվին, վորը բռնել էր ձախ ախանջը:

— Յերևում է, վոր դուք խաղաղ զրույց եյիք անում, — ասաց Գավրիկը, — իսկ այժմ ի՞նչ եք ուզում անել:

— Մեր տները կերթանք, — ասաց Շուրկա Կուզնեցովը: Աղավնիներին կերակրելու ժաժմանակն է:

Միշկա Շեվչենկոն կուացավ և սկսեց վեզերը հավաքել: Յերկու գրպանն ել լցրեց վեզերով:

— Յետ տուր իմ սպիտակը, ինչո՞ւ յես հափշտա-
կում, — բղավեց Աֆոնիկան:

— Վերցրո՛ւ, տրաքի՛ր, — ճչաց Միշկան:

Նա վեզը գցեց դետին, ձեռները դրեց անդրամվար-
տիկի ուսած գրպանները և սկսեց ճանապարհով քայ-
լել:

Գավրիկը ցատկեց դեպի ինձ և շնջաց ախանջիս:

— Յես գնում եմ նրան համոզելու, իսկ դու սրանց
կազմակերպի՛ր: Միայն Աֆոնիկային չընդունես, նա
բերնից թույլ է:

— Լավ, ինքս ել գիտեմ, — ասացի յես:

Գավրիկը վազեց Միշկային հասնելու, իսկ յես
մնացի աղաների հետ:

Աֆոնիկան դետնից բարձրացրեց վեզը և նույնպես
հեռացավ:

— Տղե՛րք, — կամաց ասացի յես ու ձեռքով արի
Շուրիկային, Պաշկային և Վանկա Միխնեվիչին:

Աֆոնիկան շուռ յեկավ:

— Եդ ի՞նչ եք անում, — հարցրեց նա կասկածան-
քով:

— Հենց ենպես, ի՞նչ ես ծամոնի պես կպչում, —
պատասխանեցի յես: — Գնա, ուր գնում եյիր:

Բայց Աֆոնիկան չեր ցանկանում հեռանալ:

— Յես գիտեմ, դուք ինչ-վոր բան եք մտածել,
բայց ինձ չեք ասում: Յերբ վոր քեզ պիտոտններ եյին
հարկավոր լինում, Գրիշկա, են ժամանակ ինձ հետ
խոսում եյիր: Իսկ այժմ՝ առանց ի՞նձ:

— Դե լավ, մնա՛, — ասացի յես:

Հինգս ել նստեցինք բակայեյի խանութի աստի-
ճանների վրա: Բալկոնի առջևի հրապարակը և խանու-
թի կողքի փողոցը դատարկ եյին ու խաղաղ:
Միայն հրապարակի մյուս ծայրում, ցանկապատի
մաս կանգնած եր մի կազակային կիսակառք. յերկու
աչխեա, վախտ կարաչայկա իրենց գունչերը կոխել
եյին նրա մեջ:

Յերկար ժամանակ յես տատանվում եյի, չիմա-
նալով՝ վարտեղից սկսեմ:

Վերջապես ասացի.

— Տղանե՛ր, ի՞նչ եք կարծում, Կուբանում ջուրը
սառած կլինի՞:

— Ի հարկե սառած է, — պատասխանեց Վասիտն
և զարմանքով ինձ վրա նայեց:

— Իսկ մինչև Կուբասովկա քանի՞ վերստ կլինի:

— Ասում են՝ քառասուն: Հետո ի՞նչ, — ուշա-
գրությունը լարեց Շուրիկա Կուզնեցովը և մոտիկացավ
ինձ: — Բա՞ն ես իմացել:

— Ձե՛, մոչ մի բան չկա: Յես հենց ենպես: Իսկ
դուք գիտե՞ք՝ ինչ է կատարվում գյուղում:

— Հը՛, ի՞նչ է կատարվում, — հարցրեց Շուրիկան:

— Մի՞թե իրոք վաչինչ չգիտեք:

— Ել ի՞նչ ես յերկարացնում, — բարկացավ Շուր-
կան: — Պարզ խոսի՛ր:

— Ինքդ գնա՛ և իմացի՛ր՝ ի՞նչ է կատարվում, յե-
թե այդքան ուզում ես:

— Հետո ի՞նչ, կգնա՛մ, — ասաց Շուրիկան:

— Գնա՛, գնա՛, — ասացի յես: Քեզ կամ մտրակով
մի լավ կշուլալեն, կամ պարանը վիզդ կզցեն:

Քիչ կամաց, — փսփսաց Աֆոնիկան, — այնտեղ
կազակը ձիերն է լծում:

Հրապարակի մյուս ծայրում կազակը հետ շուռ
ավեց կիսակառքի քեղին, ձիերը քաշեց տեղերը,
հագցրեց ձգափոկերը, կախեց սանձերը, թուով կիսա-
կառքի մեջ և կանգնած քչեց:

— Խառատովն է, — ասաց Պաշկան: — Յերևի ելի
մասնության համար եր յեկել պարետի մոտ:

Ո՛ր, գյաղա, — շնջաց Շուրիկա Կուզնեցովը՝ աչքե-
րով հետևելով կարմիր ծայրով շեկ փափախը ծած-
կած կազակին, — ինչպես շուռ կտայի յես նրան կառ-
քից, յեթե հրացան լիներ:

— Լսի՛ր, Շուրիկա, — ասացի յես, — դուք ել,

տղանէ՛ր, լսեցե՛ք: Յեկե՛ք ջոկատ համարքենք՝ Խառնատվների գլխարկները թոցնելու:

Աֆոնկան ներքին աստիճաններից վեր կացավ և յերկու-յերեք քայլ հեռացավ արտասանդուխքից:

— Ի՞նչ ես ասում, — ասաց նա: — Ուզում ես, վոր բոլորս ել փորձանքի մե՞ջ ընկնենք: — Թո՛ղ, ախպեր, քեզանից բաներ մի՛ հնարի: Յես քո ջոկատը չեմ դա: Բոլորին ել կպատմեմ, թե ո՛ւր ես ուզում տանել դու մեզ:

— Դե ի՛նչ յես կչկչում, — կանգնեցրի յես Աֆոնկային: — Իսկույն յերևում ե, վոր դու տխմար ես, — չգիտես հանաքն ի՛նչ բան ե: Հը՞: Մենք ի՞նչպես կարող ենք ջոկատ ունենալ: Ո՞ւր են մեր հրացանները:

Շուրկա Կուզնեցովը իսկույն հասկացավ, վոր յես դիտմամբ եմ եղպես փափուկ խոսում, վախում եմ՝ չլինի՛ թե Աֆոնկան ամբողջ գործը փչացնի:

Նա ինձ աչքով տրեց ու ասաց.

— Յեկե՛ք յերկու ջոկատ կաղմակերպենք, մեկը՝ դու, մյուսը՝ յես: Կարմիրներ ու սպիտակներ խառնա՛ք, միայն պայմանով՝ ականջի չխփել, թե չե, մի տե՛ս, Աֆոնկայի ականջը մինչև հիմի կասես հասած պամիդոր լինի:

Յես թմփացրի Շուրկայի ուսին:

— Ա՛յ, եդ իսկականն ե: Յերկու ջոկատ ավելի լավ կլինի:

Աֆոնկան իրեն կորցրեց: Նա հիմարաբար ժրպտում եր ու մերթ ինձ, մերթ Շուրկային նայում:

— Գնանք, տղե՛րք, գնանք մեր տները, — ասացի յես՝ աստիճանների վրայից բարձրացնելով Պաշկային և Վանկա Միխնեվիչին:

Մենք սկսեցինք քայլել հրապարակի միջով և դուրս յեկանք Կայարանային փողոցը: Աֆոնկայենց տան դռնակի մոտ կանգնեցինք:

— Ահա ինչ, — ասացի յես նրան բաժանվելիս, — կարծեմ դու սուր դանակ ունես: Մեզ համար դու շատ

հոնի փայտեր կտրիր: Նրանք մեզ հրացանների տե՛չ կծառայեն:

— Լավ, — ասաց Աֆոնկան, — կկտրեմ: Իսկ յես ո՞ւմ ջոկատում կլինեմ:

— Ի՛մ, — ասաց Շուրկան, — շտաբի գլխավոր:

— Վո՛չ, յես նրան ինձ մոտ կվերցնեմ. — ասացի յես, — ատամանի ոգնական:

Աֆոնկան փնջում եր բավականութունից:

— Դե՛հ, մնաս բարով, Աֆոնկա, միայն հստատ փայտեր կտրի՛ր, — գոռացինք մենք և վազեցինք փողոցով:

Անկյունի հետևում կանգնեցինք և բոլորս միասին հռահռացինք:

— Շտաբի գլխավոր՞:

— Ատամանի ոգնակա՞ն:

— Սատանայի առաքյա՞լ:

— Քառասուն փթանո՞ց:

— Ամա հանդիպեցինք հա՛: Քիչ մնաց վատ դրության մեջ ընկնելինք:

Աֆոնկայից ազատվելով՝ մենք նորից սկսեցինք ջոկատի մասին խոսել: Յես պատմեցի տղաներին, վոր ջոկատը պետք ե դենք, փամփուշտ ձեռք բերի: Հետո յես ամեն մեկին յերդում տվի, վոր մեզնից վոչ մեկը մեր դադանիքը չպետք ե ասի վո՛չ հորը, վո՛չ մորը, վո՛չ արթուն, վո՛չ ել քնած ժամանակ, վո՛չ սպառնալիքի տակ, վո՛չ ել տանջանքներից վախենալով:

Շուրկա Կուզնեցովը և Պաշկա Բոչկարյովը յերդումն արտասանեցին բարձր ու հանդիսավոր կերպով: Իսկ Վանկա Միխնեվիչը՝ հազիվ շարժում եր լեզուն: Միայն հասկացանք՝

— Վո՛չ հորը, վո՛չ մորը...

Հանկարծ Շուրկա Կուզնեցովը հոնքերը կիտեց և հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ Գավրիկը Միշկա Շեվչենկոյի հետ գնաց:

— Նրան ջոկատ կանչելու համար:

— Միշկային ջոկատ:

— Ի՞նչ կա վոր:

— Բայց չե՞ վոր նրա յեղբայրն սպա յե: Շկուրո-
յական: Յես ինքս եմ տեսել, յերբ նա ձիով նրանց
տանն եր մտնեում: Վուսկե ուսաղիքներով և գայլի
պոչը գլխանոցից կախած:

Այժմ մենք կորած ենք:

— Սպասի՛ր, Շուրկա, — ասացի յես, — գուցե
Գավրիկը գեռ նրա հետ չի խոսել: Շտապենք նրանց
գտնելու:

Չորսով ել վաղեցինք գյուղ:

Արդեն մթնում եր:

— Գավրի՛կ, — բղավում եյինք ամբողջ փողոցով
մեկ, — Գավրի՛կ:

Մենք հանդիպեցինք Գավրիկին Կոնդրատյանների
հյուրանոցի մոտ: Նա մենակ եր գնում:

— Իսկ ո՞ւր ե Միշկան, — հարցրի յես հուզված:

— Գնաց տուն:

— Իսկ դու նրան ասացի՞ր:

— Ասացի:

— Եհե՛, ախպե՛ր, խաթի մեջ ընկանք: Չորսով
զոռով շկուրոյականի ճաննին ընկանք:

— Շկուրոյականի՞, — վերահարցրեց Գավրիկը, —
Վորտե՞ղ պատահեցիք:

— Բայց մենք չե, այլ դու յես Միշկային հանդի-
պել: Չե՞ վոր նրա յեղբայրն սպա յե:

Գավրիկի թուքը չորացավ:

— Հա՛, իսկապես, և ճիշտ ե... Սատանան տանի:
Ինչպես եմ սխալվել, — ասաց նա և ափով չմփայրեց
ճակատին: — Ուրեմն դրա համար եր պոչը գեռ-դեն
խաղացնում... Մենք, ասում ե, կազակներս կողմնա-
կից ենք բաժանելիության, վոչ միասնության... Յես
սկզբում մինչև անգամ չեյի ել հասկանում՝ ինչեր ե
դուրս տալիս:

— Դե՛հ, այժմ դատողության ժամանակ չե, —

ասացի յես: — Վաղի՛ր, Միշկային գտի՛ր և ասա՛ նրան.
«Յես, իբրև թե, քեզ փորձում եյի՛ բուշկի՞կ ես, թե
կաղեա: Լավ եր, վոր չհամաձայնվեցիր ջոկատ մըտ-
նել: Թե չե, յես քեզ իսկույն ատամանին կներկայաց-
նեյի: Իսկ այժմ յես տեսնում եմ, վոր դու մերն ես —
ամենախկական կազակ»:

Այդպես ել ասա՛ նրան:

— Նա կհավատա, — համաձայնվեց Շուրկան:
Գավրիկը պոկվեց և իսկույն անհետացավ մթու-
թյան մեջ:

Լավում եր միայն՝ ինչպես նա չի շփացնելով շտա-
պում եր սառած ջրափոսերի միջով:

Փողոցի ծայրում խոպոտ ձայնով վնգստում եր
մի փոքրիկ շնիկ:

Մենք յերկար ժամանակ կանգնած եյինք Կոնդրա-
տյանների հյուրանոցի մոտ՝ ծածկի տակ, և լարված
լսում եյինք հեռվից յեկած ամեն մի շշուկ:

Վերջապես մենք լսեցինք, վոր մեկը վազում ե:
Դա նա յե, Գավրիկը:

Մենք վաղեցինք նրան ընդառաջ:

— Դե ի՞նչ:

— Բոլորն ասացի՛ ինչ պետք եր:

— Իսկ նա՞:

— Հալատաց հիմարը:

Մենք թեթևացած՝ շունչ առանք ու լուռ տուն
դնացինք:

XIII Գ Լ Ո Ի Ե

ԳԵՊՈՅԱԿԱՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԵՆ

— Յերեկ ո՞ւր եյիր կորել, — հարցրեց ինձ Վաս-
կան, յերբ հեռեյալ ոբը յերեկոյան բազում պատահե-
ցինք իրար:

— Գործ կար, — ասացի յես:

— Առանց ինձ ի՞նչ գործեր եք բռնում, — վիրա-
վորվեց Վասկան: Չե՞ վոր սկզբից յես եմ գրվել ջո-
կատում, իսկ դուք ինձ մի կողմ եք դնում:

— Թո՛ղ Վասկա, մի՛ ազգա: Ի՞նչ ե, ամեն անգամ

խմբով ենք ման գալու: Այսպիսով մեր ջոկատը շուտով կխորտակենք:

— Իսկ դու ո՞ւմ հետ գնացիր: Անդրեյի՞, անշուշտ:

— Վա՛նչ, Գալլրիկի հետ:

— Իսկ ի՞նչ էլիք անում նրա հետ:

Յես թեքվեցի դեպի Վասիան և ասացի կամաց.

— Կրկին յերեք հոգի գրեցինք ջոկատի մեջ՝ Շուրկա Կուզնեցովին...

— Նա պիտանի յե:

— Պաշկա Բոչկարյովին:

— Դա ել կանցնի: Իսկ ելի ո՞ւմը:

— Վանկա Միխնեվիչին:

— Արիշտա յե, — ասաց Վասիան, — ախր ի՞նչ ջոկատ գրելու բան է նա: Հրացանը ձեռին վորևե տեղ կքնի:

— Վոչինչ, մենք նրան արագ կարթնացնենք:

— Դուք յերևի ել ուրիշ գործ չունեք, քան Վանկա Միխնեվիչին արթնացնելը: Դե՛հ, գնացի: Յես ել գործ ունեմ, ավելի կարևոր, քան թե ձերը:

Յեմ Վասիան, ձեռները հետևը դրած, ուղղվեց դեպի դարպասը:

— Ե՛յ, Վասիա, — կանչեցի յես:

— Ի՞նչ ես ուզում:

— Ո՞ւր ես գնում:

— Ամբողջ բախով մեկ հո չե՞մ բղավելու: Դու մոտեցիր այստեղ, այն ժամանակ կասեմ:

Յերևում եր, վոր նա ինքը շատ եր ցանկանում շուտ պատմել ինձ իր գործերի մասին:

Յես մոտեցա:

Վասիան նայեց շուրջը և ասաց փսփսալով.

— Գնում եմ փակուղի, Պորֆիրի մոտ...

— Ինչո՞ւ համար, — հարցրի յես նույնպես շուրկով:

— Հայրս հրամայեց նրան մեզ մոտ բերել: Խոսել է ցանկանում...

— Իսկ դու նրան ամեն բան պատմե՞լ ես:

— Բոլորը, միայն մեր ջոկատի մասին չեմ ասել:

— Լավ, իսկ նա ի՞նչ ասաց:

— Գնա՛նք, ճանապարհին կպատմեմ:

Մինչև ուղեփոխի պոստը յես ու Վասիան գնում էլինք լուռ: Հենց վոր յես սկսեցի խոսել, Վասիան բռունցքը թափահարեց.

— Լռի՛ր:

Միայն տնակն անցնելուց հետո Վասիան պատմել սկսեց: Իլյա Ֆեոդորովիչը միանգամից չեր հավատացել կարմիր բանակայինի մասին: Նա կարծել եր, վոր այդ բանը Վասիան կամ յերազում եր տեսել, կամ ուղղակի փչում եր: Բայց Վասիան ձեռք չեր քաշում:

— Ասա՛, ի՞նչ ասեմ կարմիր բանակայինին: Դեպոյականներին հավաքելու յես, թե վոչ:

Իլյա Ֆեոդորովիչն ել, նրանից ազատվելու համար, ասում է.

— Լավ, կհավաքեմ: Միայն մի քիչ ջուր տո՛ւր ձեռներս լվանամ, տեսնում ես՝ ամբողջովին մազութ են:

Վասիան սպասեց, մինչև հայրը լվացվեց, ու նորից իրենն սկսեց.

— Կարմիր բանակայինին յե՞րը կանչեմ:

Դե Իլյա Ֆեոդորովիչն ել տեսնում է, վոր Վասիան զուր չե շաղակրատում, ասում է.

— Թեկուզ հենց հիմի կանչի՛ր... Միայն կայարանից քիչ հեռու մնա և դատ-դատ գնացեք, թե չե դու ել կիրվես, նրան ել կմատնես: Բայց նախքան այդ, ասում է, վաղի՛ր Լեոնտի Լավրենտյեվիչի հետևից, Ռեպկոյին ել կանչի՛ր. իսկ Իլյա Իվանովիչին յես ինքս կհանդիպեմ:

— Իսկ դու արդեն գնացե՞լ ես, — հարցրի Վասիային:

— Յերեք անգամ՝ ամեն մեկի մոտ, բայց ամեն անգամ ել տանը չեմ գտել: Հազիվ եմ հաջողեցրել:

Մենք մոտեցանք փակուղուն: Աղջամուղջի մեջ

ապրանքատար վագոնները նմանում էյին սև տներին՝ առանց պատուհանների ու դռների:

Գնում էյինք դժերի վրայով, սայթաքում՝ դիպչելով կոճափայտերին:

Շոշափելով գտանք յերարանը, վոր տանում էր դեպի ձեղնահարկը: Վասկան գլխարկը վերցրեց, ձեղնահարկի դռան մուկ անցքով նայեց ու ասաց.

— Դու բարձրացի՛ր, յես կհսկեմ:

— Յես բարձրացա՛ սանդուղքի ճաղափայտերից բռնած, վորոնք անվնաս էյին մնացել միայն մի կողմից: Հարթակի դռնակից ներս նայեցի — ձեղնահարկում վոչ-վոք չէր յերևում: Յես ձայն տվի շուռիով:

— Պորֆիրի՛ր...

Վոչ վոք չարձագանգեց մթուկյան միջից:

— Պորֆիրի՛ր, — ասացի ավելի բարձր:

— Ինչո՞ւ յես գոռում, — հարցրեց Վասկան ներքևից:

— Նա այտեղ չէ, — ասացի յես՝ կռանալով ճաղաչարի վրայից:

— Մտի՛ր, ձեղնահարկը, մտի՛ր: Նա թագնվում է յերևի, — շնչաց Վասկան:

— Յես ձեռներս առաջ պարզած, մտա ձեղնահարկ: Տախտակները ճրուռում էյին վոտներին տակ: Յես կանգ առա: Սպասեցի մի փոքր, կրկին քայլեցի: Վոտներս խճճվեցին ինչ-վոր ծակծկող խշիշան բանի մեջ, յերևի ծղոտ էր, յես սայթաքեցի ու յերեսն ի վայր ընկա: Ինքս ել չիմացա իմ անբնական ձայնով կանչելը.

— Վա՛սկա: Ներքևից վոչ վոք չպատասխանեց: Միայն մեկն ինչ-վոր արագ-արագ չփչփացնում էր կոճափայտերի վրա:

Մի կերպ հասա մինչև դուռը և սանդուխքով սահեցի ներքև:

Վասկան այնտեղ չէր: Վախեցե՛լ, ծլկվե՛լ էր:

Յերկար ժամանակ յես փնտրում էյի նրան փակուղում՝ մի պլատֆորմից մյուսն անցնելով: Հանկարծ տեսա շատ հեռվում փայլատակող մի կրակ: Յեր-

բեմն առկայծում, յերբեմն կորչում էր, յերբեմն փոքրիկ կետի չափ, յերբեմն ավելի մեծ, լապտերի աչքի չափ:

Յես ահանջ դրի՛ մեկը խոսում է: Չայները կարծես թե ծանոթ են: Մի ձայնը խոսում է, մյուսը՝ բարակ: Ո՞վ կարող է լինել: Վասկան: Նրա ձայնն է: Բայց ո՞ւմ հետ է նա խոսում:

Ավելի մոտեցա՛ պլատֆորմի վրա նստած է Պորֆիրին, նա կախել է վոտները և ծխում է: Իսկ նրա առաջ, կոճափայտի վրա կանգնած է Վասկան:

— Ձեղնահարկում այդ ի՞նչ աղմուկ էյիր բարձրացրել: Վախե՞նո՞ւմ էյիր, ի՞նչ է, — հարցրեց Վասկան ինձ տեսնելուն պես:

— Իսկ դու ինչո՞ւ ծլկվեցիր, չլինի՞ թե քաջությունից:

— Ամեն մեկի հետ ել պատահում է, — ասաց կարմիր բանակայինը, — դրանից ե՛լ ավելի կվախենաս, թե վոր չորս կողմդ այսպես մուկ լինի:

— Հետո ի՞նչ: — Կզա՞ս, Պորֆիրի՛ր, — հարցրեց Վասկան կարմիր բանակայինին:

— Պետք է գնալ:

Պորֆիրին ծանրորեն ցատկեց պլատֆորմից և սկսեց անքալ:

— Հասա, տղանե՛ր, տվե՛ք իմ գավաղանը, — ասաց նա, — յերեք վոտքով ավելի շուտ կհասնեմ:

Յեվ նա կաղալով՝ կոճափայտերի ու ուեյտերի վրայով գալիս էր մեր հետևից:

Հրապարակում, կայարանի դիմաց՝ լապտերի մոտ քարչ էր գալիս մի ձիավոր: Նա սև, զզզված յափունջով էր. ուսի հետևից դուրս էր ցցվել հրացանի փողը:

Պորֆիրին մեզ անկյունում կանգնեցրեց:

— Մենք պետք է գատ-գատ գնանք, թե չէ չների ուեյտը կընկնենք:

— Ախր դու ճանապարհը չգիտես, — ասաց Վասիկան:

— Յես քեզ աչքիցս չեմ կորցնի: Միայն յեթե դի-
չերապահն ինձ կանգնեցնի, դուք հեռացեք:

— Վո՛չ, ասաց Վասիկան, — մենք քեզ չենք թողնի:

— Իսկ յեթե կազակները ձեզ ել ինձ հետ միասին
բռնեն, գիտե՞ք ի՛նչ դուրս կգա զբանից:

— Փոքր չենք, գիտենք, — ասաց Վասիկան:

— Դե լավ, ցրվեցե՛ք: Իսկ յես ձեր հեռքերով կը-
գամ: Միայն հետև մտիկ չանե՛ք:

Յես ու Վասիկան հրապարակի միջով գնացինք:
Քայլում ենք ու ականջ դնում՝ գալի՞ս ե Պորֆիրին:

Մեր հետևից լավում եր ձիու սմբակների զնգոց:

— Ռ՛ւհ սատկած, — աղաղակեց կազակն ու շար-
պացրեց մտրակով:

— Միթե՞ նկատեց Պորֆիրին:

Ձին խճաքարի վրա պարեց ու հանգստացավ:

Վո՛չ, չնկատեց: Ամեն ինչ կարգին ե: Կարմիր
բանակայինը կաղալով գալիս ե մեր հետևից:

Մեր տան դարպասի մոտ կանգնեցինք: Պորֆիրին
մթուժյան մեջ մեզ չնկատեց և կողքով անցավ: Յես
հասա նրան և թևից քաշեցի:

— Այտեղ:


Վասիկան դուռը կամաց բաց արեց և նայեց բակը:
Այնտեղ վուչ վուք չկար:

— Խենթուկներ եք դուք, տղե՛րք, — ասաց կարմիր
բանակայինը, յերբ դռնակը մեր հետևից թրեկալով
փակվեց: Մթուժյունից վախեցաք, իսկ կախազանը
ձեզ համար կասես վոչինչ լինի, կարմիր բանակայինի
հետ զբոսնում եք փողոցում:

Դուռը ձուռաց: Շեմքի վրա յերևաց Իլյա Ֆեոդո-
րովիչը:

— Իերեցի, — ասաց Վասիկան:

Իլյա Ֆեոդորովիչը գլուխը մոտեցրեց հենց Պոր-
ֆիրիի դեմքին:



— Կարմիր բանակային էս, — հարցրեց նա, — վո՞ր ջոկատից:

— Բալախոնովի:

— Իսկ ի՞նչպես յետ մնացիր:

— Վոտքս վերավորեցին:

— Ջոկատում ի՞վան Կապուտային ճանաչո՞ւմ էս:

— Ի՞վան Չախարովիչին, — հարցրեց Պորֆիրին, — դե իհարկե գիտեմ:

Իլյա Ֆեդորովիչը մտածեց մի քիչ և ասաց.

— Սպասի՛ր: Մեր յերկաթուղայիններին ել ո՞վ կար Բալախոնովի մոտ... Շուրկա Ուլենիկովին ճանաչո՞ւմ, էս:

— Ի՞նչպես չգիտեմ: Նրան Կրուտոյում սպանեցին:

— Դե մտի՛ր — ասաց Իլյա Ֆեդորովիչը և դնաց գեպի դուռը:

Յես ու Վասիկան ուզում էյինք կարմիր բանակայինից հետո ներս մտնել, բայց Իլյա Ֆեդորովիչը կանգնեցրեց մեզ:

— Սպասեցե՛ք, տղերք: Մենք անյտեղ մի քիչ կըզրուցենք, իսկ դուք այնտեղ հսկեցե՛ք: Յեթե՛ վորևէ ոտար մարդ կերևա, դուռը թակեցեք:

Յես ու Վասիկան փորձեցինք վիճել, բայց Իլյա Ֆեդորովիչը մեզ դուռն չեմքը ցույց տվեց միայն:

— Նստեցե՛ք այստեղ:

Հետո Իլյա Ֆեդորովիչը բացեց դուռը և կարմիր բանակայինին ներս թողեց:

Մենք կարողացանք ներս նայել սենյակը:

Այնտեղ՝ սեղանի մոտ, տարուրեաի վրա նստած էր հայրս և խաղակարտերն էր ջոկջկում: Նրա դեմ ու դեմը նստել էր Ռեպկոն՝ յերկաթուղի դեպոյի մի յերիտասարդ փակահագործ: Պատուհանի մոտ կանգնած էր Անդրեյ Իզնատյեվիչ Չեկունովն ու նայում էր բակը:

— Ի՞նչ են անում նրանք, կարտ խաղալո՞ւ յեն հա՞վաքվել, ի՞նչ է, — հարցրի յես Վասիկային, յերբ մե՛նակ մնացինք:

— Ո՞վ գիտե, գուցե և կարտ խաղալու յեն յեկել: Ի՞նչ խելոք են: Ուղարկելը, լավ, գոնե ներս ել չեն թողնում:

Այդ ժամանակ մեկը բաց արեց դրսի դռնակը: Վասիկան գնդակի պես նետվեց դեպի բակը:

— Սպասի՛ր, Վասիկա, — ասացի յես: — Մի՛ թափիր: Լեոնտի Լավրենտյեվիչն է:

— Վասիկան ազատ շունչ քաշեց:

— Թո՛ւ, դրողը տանի, իսկ յես կարծեցի, թե վորևէ կազակ է: Բակով ծանրաքայլ գնում էր ճանապարհի վարպետը:

— Բարև ձեզ, Լեոնտի Լավրենտյեվիչ, — շտապ ընդառաջեց նրան Վասիկան, — մենք արդեն կարմիր բանակայինին բերել ենք: Մեզ մոտ նստած է:

— Իսկ դուք ի՞նչ եք թափառում այս մթության մեջ, — հարցրեց Լեոնտի Լավրենտյեվիչը:

— Հսկում ենք, — ասաց Վասիկան, — չլինի վորևէ սպա ներս մտնի:

— Ո՞, աչքներդ չորս արեք:

Լեոնտի Լավրենտյեվիչը թպպացրեց Վասիկայի մեջքին և ներս մտավ: Սենյակում սկսեցին բարձրաձայն խոսել. — յերևում է հյուրի յերևալն ուրախացրեց նրանց: Հետո ամեն ինչ կրկին հանդարտվեց:

Յես ու Վասիկան դուռն չեմքին նստած դիտում էյինք յերկինքը, վորի մի մասը պատած էր մուլթ ամպերով, իսկ մյուսը՝ փայլուն աստղերով: Շատ տաղալակի յեր: Վասիկան Փսփսում ու վառներով քսքստացնում էր աստիճանի վրա:

— Լսի՛ր, Վասիկա, — ասացի յես, — դու մի փոքր հսկի՛ր, իսկ յես կլսեմ: Կարիք չկա յերկուսով նըտելու:

— Վո՛չ, ավելի լավ է դու նստի՛ր, իսկ յես կըլսեմ, — ասաց Վասիկան:

— Վո՛չ, այդ ճիշտ չէ, — ասացի յես: — Բնակարանը ձերն է, դու ել պարտավոր ես հսկել...

Վասիկան ել բան չուներ պատասխանելու: Եւ մնաց շեմքի վրա, իսկ յես պարզեցի դռան առաջ և կարս փահանի անցքին:

Խոսում եր Լեոնտի Լավրենտյեվիչը:

— Քեզ կախելու վոչ վոք ել մտադրություն չունի, Անդրեյ Իդնատյեվիչ: Դու բոլշևիկների համար ճանապարհ չես նորոգել: Իսկ ինձ ամեն ոք պարեախ մոտ են քաշ տալիս — եզ ինչը վո՞նց յեղով, ի՞նչպես պատահեց, ո՞վ է բոլշևիկների հետ հեռացել: Դեպոյումն ել հանդիստ չեն տալիս: Ամեն մի բանվորի գլխին մտրակով մի կազակ է կանգնած: Մի՞թե սա կյանք է: Իսկ յեթե դործն ենտեղը հասնի, վոր նրանք նահանջեն, յես նրանց ամբողջ ճանապարհը տակն ու վրա կանեմ:

— Տակն ու վրա կանե՛ս, — տխուր կերպով ասում եր Չեկունովը, — նրանք քեզ կենդանի բաց չեն թողնի ձեռներից: Չես համարձակվի ծպտուն ել հանել: Լսեցիր հո, վոր ասում են, թե դյուղում ինչպիսի ճլորթիներ են պատրաստել:

— Մի՛ վախեցնի, — ընդհատեց նրան Իլյա Ֆեոդորովիչը: — Բոլորն ել քեզ նման վախկոտներ չեն: Ահա տե՛ս, առաջդ մի մարդ է նստել: Բոլշևիկ է, կարմիր բանակային մասերից յետ է մնացել: Ամեն տեղ նրան մահն է սպասում: Իսկ նա, վոչինչ, հյուր է դնում, թեյ խմում:

Բոլորն ել սկսեցին ծիծաղել:

— Ահա թե ինչ, ընկերներ, — ասաց Պորֆիրին: — Վատ չեր լինի թեյ խմել, միայն թե ժամանակ չպետք է կորցնել: Պետք է աշխատանքի ձեռնարկել: Բոլոր բանվորներին պետք է վոտքի կանգնեցնել — և՛ դեպոյակահաններին, և՛ գծայիններին: Պետք է դյուղը սթափեցնել: Կարմիրները մոտենալուն պես դուք ել սպիտակների ճանապարհը կկտրեք: Իսկ այժմ կազմակերպվել պետք է: Ճի՞շտ է, ընկեր ճանապարհի վորպես:

Այդ ժամանակ մոտեցավ Վասիկան և թևիցս քաշեց:

— Ի՞նչ ես ուզում:

— Հերիք է լես, արի հսկի՛ր:

— Մի՛ խանգարիր:

Վասիկան կատաղեց և սկսեց ուժով յետ քաշել ինձ գունից: Յես նրան այնպես հասցրի, վոր նա յետ թռավ նախասենյակի անկյունը և ընկավ դուռների վրա: Դատարկ դուռը շխշխկաց և աստիճաններով ցած գլբրվեց:

— Ո՞վ է այդտեղ, — աղաղակեց Իլյա Ֆեոդորովիչը՝ բացելով դուռը:

— Մենք ենք, — ասացի յես:

— Ի՞նչ եք տունն իրար գլխով տալիս: Փոքր յերեխաներ հո չե՞ք: Յեվ դեռ հանձն են առել հսկել ել: Ո՞վ է նախասենյակում պահակություն անում: Բակը դնացե՛ք: Յեթե մեկ ել տեղներիցդ շարժվել եք, բոլորիդ վիզն ել կտրեմ:

Յես ու Վասիկան դուրս թռանք շեմքից:

— Տեննում ես ահա, ինքդ չլսեցիր, ինձ ել չթողիր, — ասացի յես՝ նորից աստիճանների վրա նստելով: — Իսկ այժմ մեր ջակատում չպիտի խմանան՝ ինչ են անում դեպոյակահանները:

Վասիկան միայն ծանր հոգոց հանեց:

Շուտով հյուրերն սկսեցին ցրվել:

Առաջինը հեռացավ Չեկունովը, վերջինը՝ Պորֆիրին:

Իլյա Ֆեոդորովիչը ցանկանում եր նրան ուղեկցել, բայց Պորֆիրին նրան կանգնեցրեց անկյունի մոտ:

Յես ինքս կհասնեմ, ճանապարհն արդեն ծանոթ է:

Հ Ր Ա Յ Ա Ն Ն Ե Ր Ը

Յես շտապով վնասներս կոխեցի կոչիկներնս մեջ, մեխից հանեցի գզգզված վերարկուս և թռա փողոց: Որն ամպոտ եր, բարակ անձրև եր մաղում:

Վասկան հասավ ինձ անկյունի հետևում: Առանց իրար հետ խոսելու, մենք վազեցինք ուղիղ Անդրեյի մոտ: Դեռ վաղ եր: Տաս րոպե սպասեցինք կանաչ փեղկի մոտ և զգուշութամբ թակեցինք: Վոչ վոք չպատասխանեց: Այն ժամանակ վասկան ձեռնափայտը պարզեց փեղկերի մեջ: Ժանգոտած դռնափակը չրբկաց, և փեղկը կիսաբացվեց: Պատուհանից դուրս ցցվեց Անդրեյը: Նրա սպիտակ մազերը ցցված էին ամեն ուղղութամբ: Նա մեզ ձեռքով արեց և անհետացավ: Մի րոպեյից հետո դուռը ճռռաց ու բացվեց: Ներս չմտած՝ վասկան խորհրդավոր կերպով ասաց Անդրեյին.

- Գնանք դեպի սրահը, մենք քեզ բան կպատմենք:
- Ձոկատի մասին:
- Վոչ, ուրիշ բանի, իմ հոր մասին, — ասաց վասկան:
- Յե՛վ կարծիր բանակայինի մասին, — ասացի յես:

Մենք նստեցինք սրահի հետևը, խոզաբնի մոտ: — Յերեկ մեզ մոտ ժողով տեղի ունեցավ, — չչնջաց վասկան: — Պորֆիրին մեզ մոտ եր յեկել, հավաքվել էին և դեպոյտականները: Միայն, տե՛ս, վոչ, վոքի, թե չե... Յես քեզ ասում եմ վորպես մեր հրամանատարի:

- Ինչի՞ մասին էին խոսում, — հարցրեց Անդրեյը:
- Վասկան ինձ նայեց:

— Դու պատմիր: Յես Անդրեյին պատմեցի բոլորը, ինչ-Վոր թափուն լսել էյի դռան հետևից:

- Իսկ հետո ի՞նչ, — հարցրեց Անդրեյը:
- Իսկ հետո մեզ դուրս վոնդեցին, — ասաց վասկան: — Համարյա ամբողջ գիշերը հսկել ենք:
- Այդպես, — ասաց Անդրեյը. — ուրեմն նրանք նույնպես կազմակերպվել են:

Վասկան քրթմնջաց վհատված: — Այո՛, կարծիր բանակայինը մեզ միայն գրդեց, իսկ ինքը դեպոյտականներին կազմակերպեց:

— Լավ, թող կազմակերպի, — ասաց Անդրեյը. — Ժողովուրդն ավելի շատ կլինի: Մենակ մենք, թերևս, Դենիկինի հետ գլուխ հանել չենք կարող: Հա՛, յերեկ նրանք զենքի մասին խոսակցություն ունեցե՞լ են, — հարցրեց Անդրեյը, քիչ լռելուց հետո: — Չենք ձեռք բերելո՞ւ յեն, թե՞ վոչ:

- Չեմ լսել, — ասացի յես:
- Ե՛հ, մենք նրանցից ավելի շուտ կճարենք, — ասաց Անդրեյը: — Նրանք նոր են կազմակերպություն սարքում, իսկ մենք արդեն ջոկատ ունենք: Յերեկ յես առանց ձեզ էլի տղաներ եմ գտել:
- Հուսալի՞ յեն, — հարցրեց վասկան:
- Քեզնից վատ չեն:

Անդրեյը գրպանից հանեց փոստային գրոշմանիչի չափ մի կտոր թուղթ և մեկնեց դեպի ինձ: Յես սկսեցի կարդալ.

Վ. Գ.	—	13 ¹ / ₂	տարեկան
Լ. Գ.	—	14	»
Ս. Լ.	—	14	»
Վ. Ա.	—	13	»

- Իսկ ովքե՞ր են դրանք, — հարցրի յես:
- Ե՛խ, դու գլխի ել չես կարողանում ընկնել: Հը՛, Վոլոդկա Գարբուզենկո, Լենկա Գարբուզենկա, Սերգեյ Լոբ, Վանկա Ակսյուկով:

— Բայց մի՞թե Ակսյուղովը 13 տարեկան է,—
հարցրեց Վասիան:— Յես ու նա հասակակիցներ ենք:
— Ճիշտ է, վոր հասակակիցներ եք: Մի տարվա
տարբերութուն կա: Այսպես ահա, ուրեմն ամբողջ
ջոկատում կա 13 մարդ: Իսկ յեթե քեզ ել, Վասիա,
հաշվելու լինենք՝ տասնչորս:

Վասիան վեր թռավ ու քիչ եր մնում, վոր կռիվ
սարքի:

— Չես հաշվում՝ մի՛ հաշվիր, մի՛ հաշվիր,—գո-
ուաց նա:— Միևնույնն է, քո ցուցակը վոչ մի քանի
պետք չի: Վոլոդյա Գարբուզենկոն ելի վոչինչ, բայց
ահա Լենկան ու Վանկան միայն ճնճողով կարող են
թոցնել: Նրանց պատճառով մենք ել կրակի մեջ կընկ-
նենք:

— Վասիան ճիշտ է ասում,— ասացի յես:— Կա-
րիք չկա նրանց ջոկատում գրել: Իսկ Սերգեյին առա-
վել ևս — առաջին վախկոտն է:

Անդրեյն ուզում եր փորձել վեճի բռնվել, բայց
յես ու Վասիան այնպես վրա պրծանք, վոր նա միայն
ձեռները թափ տվեց:

— Մի՛ գոռուացեք, կջնջեմ: Յես նրանց դեռ
կարգին չեմ պատմել: Յես հենց ենպես — փորձելու
համար:

Նա մատիտը հանեց, թքոտեց և բոլորին, բացի
Վոլոդկա Գարբուզենկոյից, ջնջեց ցուցակից:

— Ուրեմն դու Ա—րդը կլինես,— ասաց նա Վաս-
իային:

— Վո՛չ, Ա—րդը չե,— գոռաց Վասիան,— յես
առաջինն եմ գրվել ջոկատում:

— Լավ, բոունցքներդ թափ մի՛ տա,— ասաց
Անդրեյը,— հենց այսոր գործի յենք կաշում:

— Ի՞նչ գործ,— հարցրի յես:

— Գնում ենք հրացանների:

— Առանց Պորֆիրիի, հա՞,— նորից գոռաց Վաս-
իան:

— Հանդիստ կա՛ց, առաջին,— գոռաց նրա վրա
Անդրեյը,— սկզբում մենք հրացաններ ձեռք կբերենք,
իսկ հետո ել Պորֆիրիին կհայտնենք: Ի՞նչ ես կար-
ծում՝ Պորֆիրին չի՞ ուրախանա: Չե՞ վոր նրան ել դե-
պոյալիանների համար հրացաններ են հարկավոր:

— Իսկ վո՞րտեղ են քո այդ հրացանները,—
հարցրեց Վասիան:

— Պարետային սենյակում: Լավ դենքեր են, բո-
լորովին նոր, ինչպես պահեստներինը, յուզումված:

— Բայց ի՞նչպես այնտեղից վերցնենք:

— Շատ հասարակ կերպով,— ասաց Անդրեյը:—
Պարետային սենյակի պատուհանը բացվում է վոզոցի
վրա, կողքից այդին է: Յետ կաններ դուռը, պատու-
հանը կբանանք, իսկ այդու միջով վոչ միայն հրա-
ցաններ, այլև ամբողջ գոմեջ կարելի յե տանել: Հաս-
կացա՞ր: Հենց վոր միջնեց, գնալու յենք:

— Իսկ ի՞նչպես կմտնես պարետային սենյակը,—
մըթմըթաց Վասիան:— Իսկ պարե՞տը:

— Պարետը սղանների հետ ամեն ոք կայարանապե-
տի մոտ կարտ է խաղում ու հարբում: Մի քանի ոք
է, վոր յես հետևում եմ: Յերեկոները պարետանոցում
վոչ վոք չի լինում:

Հենց նույն ուրը յերեկոյան դեմ մենք Անդրեյի
հետ գործի կպանք: Ուղարկեցինք մեր բոլոր սնդուկ-
ներն ու տուփերը, տակն ու վրա արինք չարդախներն
ու սրահները: Մենք հավաքում էյինք դռան բանալի-
ներ՝ փոքր, մեծ, կլոր, տափակ, կապում բարակ
չղաղատի թելով, իսկ մի քանիսն ել խարտոցում
էյինք:

Չոկելով բանալիների մի ամբողջ կապ, մենք վազ
տվինք տղաներին մնառելու: Գտանք Միշկա Սզոննի-
կին, Իվան Վասիլյեվիչին, Գավրիկին, Վոլոդյա Գար-
բուզենկոյին և Վասիային: Հավաքվեցինք ընդամենը
յոթ հոգի: Մենք բաժանվեցինք յերկու մասի: Մե-

կում՝ Անդրեյը, յես ու Վասիան, իսկ մյուսում՝ մնացածները: Ամբողջ ճանապարհին Անդրեյը մեզ բացատրում էր իր գործողութիւնների պլանը:

Մենք գնում էինք նեղ, կեղտոտ փողոցով, վորը տանում էր դեպի կայարան: Ուղեփոխների վրա նոր էյին կայքերէ բեկիւրյան լապտերների մեջ դրած նավթի լամպերը:

Կայարանի մուտքի դռան մոտ կանգնեցինք: Դռունից դեպի աջ ցանկապատն էր ու այգին՝ մերկ ծառերով, ձախից՝ կայարանապետի տունը, իսկ ուղիղ մուտքի դռան դիմաց, սուր խճաքարով պատած հրապարակի մեջտեղը նավթով շիկացող լապտերն էր: Լապտերը յերբեք չէին վառում, իսկ այսոր հակառակի պես վառվում էր, և այնպես, վոր դեմնից ասեղ կվերցնէիր:

Մեր մոտով յերկու մարդ անցան և անհայտացան ծանրոցային պահեստի անկյունի հետևը:

Անդրեյը մթության մեջ տարալ մեզ մուտքի դռան յերևտի հետևը և ասաց.

— Առաջին, լապտերը պետք է հանգցնել, ինչ էլ վոր լինի: Յերկրորդ, կայարանապետի տան անկյունների մոտ պահակներ կանգնեցնել: Իսկ, բացի դրանից, այգում մի տեղ նախապատրաստել, վորպեսզի հրացանները թաղցնենք: Յեթե վորևէ ոտարի կնկատեք, չվացրե՛ք: Գլխավորն է՝ չվախենալ, չորս աչք ունենալ: Դրա փոխարեն մեզնից ամեն մեկը նոր հրացան կունենա:

Յեվ Անդրեյը չմփացրեց շրթունքներով:

— Լապտերը դեռ չենք հանգցնելու, թե չէ սպաներին ու պարետին աչքից կիտնեցնենք ու չենք նկատի նրանց կայարանապետի մոտ գնալը, — ասաց Իվան Վասիլյեվիչը:

— Վո՛չ, պետք է հանգցնել, — ասաց Վասիան: —

Թող մութ տեղով գնան հարբելու: Թերևս և քթները չարդեն: Իսկ դռների մոտ էլ դեռ պետք է մի փայտե

բան սարքեմ: Կընկնեն փայտի վրա ու թրը՛խկ ճակատներին...

— Հիմար ես դու, — ասաց Անդրեյը: — Այդպիսով նրանք իսկույն գլխի կընկնեն, վոր այստեղ վորևէ բան կա: Իսկ լապտերի մասին՝ Իվան Վասիլյեվիչը ճիշտ է: Սկզբում մենք նրանց բաց կթողնենք, յերբ նրանք մի քիչ կոնծած կլինեն, այն ժամանակ էլ լապտերը քարով կջարդենք:

— Քարով պետք չէ, զնդոց կլինի: Յես առանց գրան կաթող եմ հանգցնել, — ասաց Իվան Վասիլյեվիչը:

Քանի դեռ լապտերը չէինք հանգցրել, յես ու Գավրիկը մտանք այգին մի տեղ գտնելու, ուր կարելի կլիներ հրացանները դարսել:

— Բայց յեթե հանկարծ կայարանապետի մոտ կեր ու խում չլինի՞: Կամ պարետն այնտեղ չգնա՞: Այն ժամանակ ի՞նչ պետք է անենք, — կամաց հարցրեց Գավրիկը:

— Չգիտեմ, այդ դեպքում ինչ պետք է անել: Անդրեյը յերևի վորևէ բան կմտածի, — պատասխանեցի յես:

Այդու մի հեռավոր, մութ անկյունում գտանք մի փոքր, յերկար առու:

— Այստեղ էլ կդարսենք, — վորոչեցինք մենք: — Գնանք, Անդրեյին հայտնենք:

Յեվ մենք յետ վազեցինք:

Տղաները կանգնել էյին իրենց նախկին տեղերում, յելուտի հետևը:

— Գտա՞ք, — հարցրեց մեզ Անդրեյը:

— Գտանք, այնտեղ ցանկապատի մոտ մի առու կա, ամենից հարմարն է:

— Դե լավ, հանգիստ կանգնեցե՛ք:

Կայարանապետի տանը առաջվա նման ելի խավար էր ու հանդարտ:

«Իսկ յեթե իրոք քե՛ֆ չլինի՞: Յեթե Անդրեյը «խաղված լինի՞» — մտածեցի յես:

Այդ բոլորէն կայարանապետի պատուհանը լուսավորվեց:

— Հիմա նրանք իսկույն կսկսեն հավաքվել, — ասաց Անդրեյը:

Բայց վոչ վոք չեր գնում: Կանգնած մնալը ճանճարալի յեր ու ցուրտ: Մենք կամաց—կամաց սկսեցինք մեր թագստոցից դուրս գալ:

Յես ու Իվան Վասիլյեվիչը դադտագողի մոտեցանք կայարանապետի սանը և սրատուհանից ներս նայեցինք:

Սենյակի խորքում դրված եր պատրաստի սեղանը: Նրա վրա դարաված էին ափսեներ, շէր, ուտելիք: Բարակ վոտներով բարձր ըմպանակները ժամապահներին նման շարված էին:

Հանկարծ ինչ—վոր տեղից հնչեց մի սաստիկ սուլոց: Յես և Իվան Վասիլյեվիչը մի շնչով անցանք հրապարակը ու նետվեցինք դեպի յերուտար:

— Ո՞վ չվացրեց, — հարցրեց Իվան Վասիլյեվիչը աղաներին, վորոնք կպել էին սլափին:

— Յես, — ասաց Վոլոդկա Գարբուզենկոն. — Թրվաց թե մեկը գալիս է:

— Թվա՛ց. դու առաջ լսի՛ր, իսկ հետո խուճապ առաջացրու, — ասաց Անդրեյը:

— Լա՛վ, խուճա՛պ, — փնթփնթաց Վոլոդկան և դանդաղ քայլեց դեպի այդին:

Բայց մի բոլորից հետո նա կրկին նետվեց դեպի յերուտար և ասաց խեղդված ձայնով.

— Տղանե՛ր, իսկապես մեկը քայլում է:

Մենք յերկար ժամանակ ուշադրությամբ լսում էինք ու նայում մթության մեջ: Վոչ մի քայլի ձայն: Կայարանում, այդում և հրապարակում — առաջվա նման վոչ մի հոգի: Միայն լապտերը, ճոռալով քամուց՝ ճոճվում եր չափով:

Անդրեյը դայրույթից թքեց:
— Վախկոտ նապաստակ, — ասաց նա Վոլոդկա—

յին. . . դու պետք է տանը վառարանի մոտ նստած լինելիք, վոչ թե զենք տանելու դայիր: Յեթե իմանայի. վոչ մի կերպ քեզ չեյի ընդունի: Դու մեր ամբողջ գործը կքանդես:

Մենք յերկար ժամանակ քաշ էյինք գալիս հրապարակում, ներս էյինք նայում կայարանապետի պատուհաններից, կայարանի շենքի մեջ: Վոչ մի տեղ՝ վոչ վոք:

Հանկարծ գլխավոր մուտքում խթաններ գրնդացին և մի հնչուն ծիծաղ լավեց:

— Գնում են, — կամաց ասաց Անդրեյը և բռնեց Վասիլյայի ձեռքից: — Սը՛ս. . .

Ատտիճաններից իջնում էյին պարետը, կայարանապետը և փքված ու ցածլիկ մի մարդ, լայն ուսագիրներով համազգեստ հագած: Ձեռքից բռնած ու հովհարի նման ծածկելով նրան իր գլխարկի յեզրերով, գնում եր մի բարձրահասակ տիկին: Նրա հետ միասին գնում եր և մի ուրիշը, վորը հեռվից շատ յերիտասարդ եր թվում, համարյա աղջիկ: Բոլորն ել գնում էյին դանդաղ, որորվելով ու բարձր ծիծաղում էյին: Ամենից շատ ծիծաղում եր բարձրահասակ կինը: Փքված սպան արմուճկով սեղմում եր փայտե պատյանով մատուղերը և սագի նման կոնչում:

— Դա զրահապատ գնացքի նոր հրամանատարն է, — շնչաց Գավրիկը:

Անդրեյը նրա բերանը բռնեց:

Բոլորի հետևից գնում եր կայարանապետը: Նա չուում եր ձեռները և ասում փքված սպայի հետևից.

— Ճի՞շտ է, արդյո՞ք, ձերդ բարձր բարեձննդություն, վոր կարմիրները Բելայա Գլինայից հեռացել են և ամբողջ մի բրիգադ են կորցրել:

— Իսկ դուք ի՞նչ էյիք կարծում, մեր տեղեկագրերը ստո՞ւմ են: — Բայց, այնուամենայնիվ, այսոր չարժե ուղիմաճակատի գործերի մասին խոսել: Դրանցից դիչեր ու ցերեկ գլուխս տրաքում է:

Կլավդիոս Նիկոլայեւնա, ավելի լավ ե պատմեցե՛ք՝ ինչպէս անցկացրիք Նովոզերկասկում: Հա՛վանորեն բոլորովին ուրախ եք անցկացրել:

Բարձրահասակ տիկինն որորեց գլխարկի յեզերը:

— Ա՛խ, ի՞նչ եք ասում, Իվան Իվանովիչ, ի՞նչ ուրախութիւն մեր ժամանակներում: Ազնվականների սկումբը հիվանդանոցի յե վերածվել, իմ բոլոր բարեկամները ուղղամտակատումն են:

— Նորից ուղղամտակատ— հառաչեց փքված սպան և բարձրացրեց ձեռները:— Գոնե դուք խնայեցե՛ք, Կլավդիոս Նիկոլայեւնա: Այսօր յես կամենում եմ մուսացութիւն և գինի:

Վերջապես ամբողջ կոմպանիան լցվեց կայարանապետի տունը:

— Դե՛հ, շարժվեցե՛ք, տղե՛րք,— ասաց Անդրեյը:— Յես Վոլոդկային ինձ հետ պարետանոց կտանեմ, վորպեսզի նա այստեղ իզուր չչվչվացնի: Միշկանն ու Վասիլան կայարանապետի տան մոտ թող հրսիեն: Իսկ մնացածները զենքերը կընդունեն: Դե՛հ, Իվան Վասիլիւիչիչ, լապտերը հանդրու:

Իվան Վասիլիւիչիչը վերարկուն հանեց և փայտե սյունը ծնկներով ընդդրկած սկսեց մագլցել: Վերևը հասնելով, նա մի ձեռքով բռնեց լապտերի շրջանակից, իսկ մյուսով քաշեց յերկաթալարե փոքրիկ լծակը: Կրակը հանգավ, միայն լապտերի ցանցը դեռ յերկար ժամանակ շիկացած ածխի նման լույս եր տալիս մթության մեջ: Հետո բոլորովին մթնեց: Միայն յերկնքում ամպերի միջով կայծկլտում ելին ցանցառ աստղերը:

Անդրեյն ու Վոլոդկան մտան կայարան: Մենք գլբավեցինք մեր տեղերը:

Անցան հինգ յերկա՞ր ըոպեներ: Լսելի յեր՝ ինչպէս Անդրեյը Վոլոդկայի հետ պարետային սենյակի առաջ ջուղկում ելին բանալիները:

Յուրտ, խոնավ քամին մեր թևքերից և ոճիքներից ներս եր թափանցում:

— Ինչո՞ւ յեն եղ սատանաներն այդքան յերկաքքաչ գալիս, ե՛,— խոստո ձայնով փսփսաց Իվան Վասիլիւիչիչը:

Այդ ժամանակ կայարանապետի պատուհանը շրբրիկալով բացվեց:

Ծնվել ենք գինով,

Կմեռնենք գինով...

— Լըցրու—ո՛ւ—ո՛ւ—ո՛ւ, լըց—րո՛ւ—ո՛ւ,—հնչեց մեկի ձայնը: Մեկը դուրս շփեց գետին — ջո՛ւր եր, թե գինի, — ու պատուհանը նորից փակվեց թրխկոցով:

Անցավ նորից տաս րոպե, մեր վտոքերն ուռեցին, փայտացան:

Անդրեյը և Վոլոդկան դռան մոտ դեռ քաշ ելին գալիս:

Վերջապես կողպեքը շրխկաց, դուռը ճոռաց ու բացվեց:

Մենք լսեցինք՝ ինչպէս Անդրեյն ու Վոլոդկան մտան պարետի սենյակը և դուռը ներսից կողպեցին: Հետո Անդրեյը մոտեցավ լայն, յերկիճեղկանի պատուհանին, զգուշութամբ բաց արեց ու դուրս կախվեց փողոց:

— Բոլորն ել իրենց տեղո՞ւմն են, — կամաց հարցրեց նա՝ կռանալով դեպի մեզ:

— Տեղերումն են: Տո՛ւր,— հազիվ լսելի ձայնով ասացի յես՝ սենյակի խորքը նայելով:

Անդրեյը շիկացրեց լուցկին: Անկյունում՝ մեծ բրդաձև փայտի վրա, փորված բների մեջ կարդով շարված ելին նոր հրացաններ: Հենց նույն տեղում պատից կախված ելին նազաններ:

Անդրեյը պատուհանից դուրս պարզեց հրացանների առաջին գուլգը: Յես հանձնեցի Իվան Վասիլիւիչիին, Իվան Վասիլիւիչիչը՝ Գավրիկին, իսկ Գավրիկը հրացանները տարավ այն առուն, վոր նրա հետ գտել ելինք այդում:

Այսպիսով յերեք զույգ հրացան ճամբեցինք առուն:

Հանկարծ պարետանոցում ինչ-Վոր բան ընկավ զղրղոցով: Թնդալի արձագանգն անցավ դատարկ կայարանով: Մենք նվաղեցինք տեղներումս:

Մի բուպե... կրկին մի բուպե...

Շուրջը հանդարտ ե: Վասկան և Միշկան չեն շրվացնում: Ուրեմն կայարանապետի բնակարանում վոչինչ չեն լսել:

Մենք վերսկսեցինք աշխատանքը: Անդրեյը տվեց ինձ դարձյալ յերկու զույգ հրացան և փսիսոցով ասաց Վոլոդկային:

— Հրացանները հերիք են, նազանները տո՛ւր:

Պատուհանին մոտեցավ Իփան Վասիլյեվիչը:

— Անդրե՛յ, շսի՛ր, Անդրե՛յ, — կանչեց նա հանդարտ:

— Դե՛, ի՞նչ:

— Մի հրացան պակասում ե: Սեմյոնի համար չես վերցրել, փնտո՛ր, — զուլցե գտնես...

— Ճիշտ ե, Սեմյոնի մասին մոռացել ենք... առայժմ նազանները վերցրո՛ւ: Իսկ հրացան՝ մեկն ել իսկույն կգտնեմ, — շնջաց Անդրեյը և մեկը մյուսի հետեվից տվեց մեզ 7 նազան կաշվե պատյանների մեջ, կուպիտ փոկերով: Հետո դուրս պարզեց նորից մի հրացան և ասաց:


— Այժմ հերիք ե, — դուրս գանք:

Առաջինը պատուհանի գոգից դուրս թռավ Անդրեյը, նրա հետևից՝ Վոլոդկան:

Անդրեյը դրսի կողմից ծածկեց պատուհանը և կամաց շփացրեց: Կայարանապետի տնից յերկու կերպարանք անջատվեցին և վազեցին դեպի մեզ:

Նորից հավաքված ենք բոլորս:

Գաղտագողի անցանք այգին և արագ վերցրինք բոլոր հրացաններն ու նազանները: Զգուշությամբ, ծառից-ծառ անցանք այգու միջով ու դուրս յեկանք փոց:



Անցորդներ չկային: Մենք տափետափ մտնում էինք ցանկապատերի տակ, մինչև գետին կոացած վազում փողոցի մի կողմից մյուսը:

Վերջապես հասանք մինչև մեր տունը: Յես բաց արի ցանկապատի դռնակը և նայեցի բակը: Մերոնք քրնած էյին արդեն — պատուհանները մուխ էյին:

Հանդարտ բաց արինք Վասիլայենց սրահի դուռը: Մտանք ու փակվեցինք: Անդրեյը մեկը մյուսի հետեվից վառում էր լուցկիներ, մեզ լույս անում, իսկ մենք հրացանները պահում էյինք հետևի պատի մոտ՝ ծղոտների տակ: Նազանները խրում էյինք կտուրի կղմինդրների տակ:

— Ե՛հ, ահա և վերջացրինք, — ծանրությամբ հառաչեց Միշկան: — Քրտնքի մեջ կորա:

— Հապա մի ինձ ձեռք տուր, — ասաց Իվան Վասիլեվիչը, — նայի՛ր, ի՞նչպես եմ թրջվել քրտնքից:

— Վոչինչ, կչորանա, — ասաց Անդրեյը:

— Են ի՞նչ եր՛ պարետանոցում ենպես դղրդաց, —

հարցրեց Վասիլան Անդրեյին:

— Վոլոդկան էր, միանգամից յերկու դույզ հրացան վերցրեց ու ինքն էլ նրանց հետ գետին գլորվեց, — ասաց Անդրեյը:

— Նշանառության հատիկով քիչ եր մնում գլուխս ծակեյի, — ասաց Վոլոդկան:

Հետևյալ օրն առավոտյան շատ վաղ մենք բոլորս էլ հավաքվեցինք մեր գինապահեստը: Միշկա Սգոննիկը կարմրած ու քրտնած, զոռից պատուվում էր սրահի փայտե հատակը շուտ տարուց:

— Լավ աշխատանք կատարեցինք, — ասաց նա՝ տախտակի տակից հարմարեցնելով լոմը:

— Այո՛, լավ: Մեր ամբողջ սրահը տակն ու վրա արի՛ք, — սկսեց կծծիություն անել Վասիլան: — Ի՞նչ կասեն ինձ, յեթե իմանան:

— Դե, յեթե իմանան, այն ժամանակ քեզ հետ

միասին բոլորս լաց կլինենք, — ասաց Անդրեյը և չընկոցով շուտ տվեց վերջին տախտակը:

Հատակը քանդելուց հետո յես, Գավրիկը և Վոլոդկան բահերը վերցրինք ու սկսեցինք փոս փորել: Շատ դժվար էր քանդվում: Սրահի հատակի հողը ծանր էր, խոնավ, քարախառն:

Մի ամբողջ օր էլ վոր քաշ գալու լինես, այստեղ փոչ մի վերչոկ էլ փորել չես կարող, — ասաց Վոլոդկան՝ սրբելով բահի վրայից կանաչավուն, կաջուն հողը, — այս խոնավ հողում մի՞թե կարելի յե հրացան պահել: Չե՞ վոր կժանգոտեն:

— Իսկ մենք հողում չենք դնի, արկղով կղնենք, — ասաց Իվան Վասիլեվիչը՝ լոմով գետնից աղյուսի կրտորտանք հանելով: Հրացանները դադաղի մեջ կդադանենք: Գնանք, Անդրեյ, հյուսնություն անելու:

Նա լոմը տվեց Միշկա Սգոննիկին, իսկ ինքն Անդրեյի ու Վասիլայի հետ դնացին հարևան սրահը հրացանների համար արկղ շինելու:

Իսկ մենք շարունակում էյինք փոսը փորել: Հանգրստանում էյինք հերթով, ավելի ճիշտ՝ չեյինք հանգստանում, այլ պահակ էյինք կանդնում սրահի դռան առաջ:

Փոսը համարյա արդեն պատրաստ էր:

Միշկան անքալով լոմով պոկում էր ահագին հողակտորները: Յես ու Գավրիկը հազիվ էյինք կարողանում հողը դուրս թափել:

Շուտով սրահը մտան Անդրեյը, Իվան Վասիլեվիչը և Վասիլան: Նրանք քաշ էյին տալիս կեղտոտ ու չուանդած տախտակներից շինած մի մեծ արկղ: Գավրիկը կրկին մի քանի բահ ցելս հանեց ու շուտ դուրս յեկավ փոսից: Մենք զգուշությամբ շուտ տվինք սրահի հետևի պատի տակ կիտած ծղոտի կույտը, հանեցինք հրացանները և սկսեցինք դարսել արկղի մեջ:

— Ո՛հ, Պորֆիրին ինչքա՛ն կուրախանա: Ի՞նչպես կգովի: «Ի՞նչ տղաներ են», — կասի, — կրկնում էր

Վասկան՝ ձեռքով թխկացնելով դադաղի կափարիչը:

Անդրեյը լուռ՝ զբազանից հանեց մի գուլյգ մեխ ու մուրճը և դշուրությամբ դամեց կափարիչը:

— Ուղղակի կարծես մարդ թաղելիս լինենք, — ասաց Վոլոդյա Գարբուզենկոն:

Բոլորս միասին բարձրացրինք հրացաներով լցված արկղը և իջեցրինք փոսը: Հետո հողով ծածկեցինք ու վերևից կրկին սարքեցինք տախտակյա հատակը: Վասկայենց սրահը կրկին կարգի բնկավ:

— Դե՛հ, այժմ յես ու Գրիշան Պորֆիրիի մոտ կերթանք, — ասաց Անդրեյը:

— Հայդե՛, — գոչեց Վասկան ու չրխկացրեց սըրահի դուռը:

Մենք բարձրացանք խոտանոցը: Այնտեղ ողբ ծանր եր՝ փտած ու խոնավ խոտից: Անդրեյը միանգամից չանցավ շեմքը: Քիչ սպասեց հարթակի վրա, նայեց ներսը և հետո միայն քայլեց:

Անկյունում կծկված՝ նստել եր Պորֆիրին: Բայց նա բոլորովին նման չէր Պորֆիրին: Հագել եր տրորված ու մազուլի մեջ կորած մի վերարկու՝ հետևից ցցված կնդուղով: Իսկ գլխին՝ գզգզված դեղին կարտուզ՝ ճաքճքված, լաքած հովարով:

Այժմ Պորֆիրին վոչ անտառապահի յեր նմանվում, վոչ ել դյուրական ատամանի կառապանի:

— Ինչո՞ւ յեք այդպես հագնվել, — հարցրեց Վասկան վախեցած:

— Հասկա ի՞նչ, լավ չե՞:

— Կարմիր բանակայինի շորերով ավելի լավ եր, — ասաց Վասկան:

— Գուցե և ավելի լավ եր, բայց սրանով ավելի հանգիստ ե: Գեղջկական այս վերնագրեստը Լավրեն-

տի Լավրենայեվիչն և ինձ վարձով տվել, — հագի՛ր, ասում ե, մինչև կարմիրների դալը, բայց միայն հետո չմոռանաս վերադարձնել: Հը՛, ձեք գործերն ի՞նչպես են, տղանե՛ր:

— Հրացաննե՛ր... — սրութկաց Վասկան ու շնչառապառ յեղավ:

— Ի՞նչ, — ասաց ու տեղից վեր կացավ Պորֆիրին:

— Հրացաններ ենք ձեռք բերել: Պարետի հենց զթի տակից ենք թռցրել:

— Ի՞նչ և դուրս տալիս, — դարձավ Պորֆիրին դեպի Անդրեյը:

Անդրեյը Վասկային հրեց ուսով:

— Դու միշտ ել մեջ ես ընկնում: Առանց քեզ չնորհքով կպատմեյինք:

— Բայց ի՞նչ և պատահել ձեզ հետ, ե՛:

Անդրեյը կուսացավ դեպի Պորֆիրին և սկսեց պատմել, ինչ վոր յերեկ յեղել եր: Նա խոսում եր շշուկով, բայց յերբեմն տարվում եր և սկսում խոսել ամբողջ ձայնով, խուստ և հուզված:

Պորֆիրին մոայլվում եր ու ծնոտը ջորում: Միայն յերբ Անդրեյը պատմեց, թե ինչպես հանգցրին հրապարակի լապտերը, նրա դեմքը պարզեց: Նա կամաց ծիծաղեց և հայհոյեց, բայց հետո ավելի ևս մոայլվեց:

Յերբ Անդրեյը վերջացրեց, Պորֆիրին յերկար ժամանակ նստած եր գլուխը կախած, կարծես այդ բոպեյից մեզ վրա այլևս նայել չէր ուզում:

Մենք հասկացանք, վոր անհաջող բան ենք արել: Վասկան աչքերը թարթում եր, կարծես արտասովել եր ուզում, իսկ յես և Անդրեյը շփոթված կանգնել եյինք ձեղնահարկի մեջտեղում և չգիտեյինք՝ վո՛րտեպ թաղնվենք:

Մեր կարմիր բանակայինը, վորին մենք ինքներս եյինք դտել և վորի համար պատրաստ եյինք կրակն ու ջուրն ընկնել, նստած եր այժմ ինչպես ոտար, մինչև

իսկ չնայելով մեզ վրա: Նույնիսկ արտաքինով էլ
կեղտոտ բրեզենաում ու հոնքերի վրա քաշած կար-
տուղով— նա բուլտրովին խորթ եր թվում մեզ:

Վերջապես նա սկսեց խոսել:

— Վատներդ վերմակներիդ չափով չեք պարզել,
տղաներ: Այդ գործ չե, այլ ստահակութուն: Դուք
կարծում եք, վոր այդ աղբյուրն էլ կանցնի: Վո՛չ,
յեղբայրներ, այդ ձեզ վրա եթան չի նստի: Թեկուզ
դուք եթան էլ պրծնեք, ուրիշներին դրա համար կհաս-
նի: Դուք կարծում եք, վոր ձեզ չե՞ն հետևել: Այո՛,
թերևս ձեզ հետևելով՝ ձեր աներն էլ էն հասել:

— Ձեն գնացել, — ասաց Անդրեյը: — Դու, Պոր-
ֆիրի, յերևում ե, վոր մեզ հիմարների տեղ ես դրել,
հա՞: Վո՛չ, մենք մաքուր գործ ենք կատարել: Ամեն
մի անկյունում պահակ ենք դրել: Իսկ հրացաններն
աճյալս ենք թաղել, վոր սատահան էլ չի գտնի: Թող
ամբողջ գյուղը քանդեն, բայց էլի հրացանները չեն
գտնի:

Անդրեյը կրկին նայեց մեզ հերոսի նման:

Բայց Պորֆիրին նրա վրա ստոր ջուր ածեց:

— Իզուր, յերիտասարդ, քեզ շատ ես յերևակա-
յում: Ճիշտ ասացիր, վոր գյուղը կքանդեն: Այժմ բան-
վորների ոճիքից կբռնեն: Հենց ձերոնց, դեպոյակասի-
ներին: Թերևս մեկ-յերկսին էլ պատին դեմ անեն...
ե՛հ, դու, հայդամա՛կ... Դե՛, այժմ գնացե՛ք ձեր
աներն ու պապանձվեցե՛ք:

Անդրեյը կամենում եր ինչ-վոր պատասխանել,
բայց ձեռքը թախահարեց ու շարժվեց դեպի դուռը:
Մենք էլ նրա հետևից:

Յերբ մենք աստիճաններով իջանք, Վասկան ասաց:

— Յերեի արդեն հրացանները գտել են: Այժմ
կկախեն հորս: Նա լաց յեղավ և վազեց առաջ:

— Վա՛սկա, Վա՛սկա, ո՞ւր ես գնում, — իրեն
կորցրած կանչեց Անդրեյն ու նետվեց նրա հետևից:

Ուղեփոխի տնակի մոտ նա հասավ Վասկային և

ամուր բռնեց նրա ուսերից: Վասկան ամբողջովին գո-
ղում եր և չկարողացավ մի խոսք անգամ ասել:

— Թո՛ղ, Վասյա, — ասաց Անդրեյը վճռաբար: —
Յեթե քո հորը տանեն, յես այն ժամանակ կներկայա-
նամ սպրեաին և կասեմ՝ յես եմ արել:

ՃՄ Գ Լ Ո Ի Խ

ՊԱՇԱՐՎԱԾ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Յերկու որից հետո ամբողջ գյուղն արդեն գիտեր,
վոր պարեաային սենյակից հրացաններ են անհետա-
ցել: Բոլոր անկյունների մոտ պահակներ էյին կանդ-
նեցրել: Ստանիցայից սրարշավ յեկավ կազակների մի
հարյուրյակ: Նրանք շղթայեցին կայարանն ու գյուղը:
Յանկապատերի վրա յերևացին հրամաններ:

Կայարանն ու յերկաթուղային գյուղը հայտարարվում են
սքաչարված դրության մեջ: Յերեկոյան ժամի Թ-ից հետո
փողոցում յերևացողներին անմիջապես ձերբակալել և ուղար-
կել պարետի և ստանիցայի ատամանի մոտ:

Կայարանի պարետ՝ Գլուխով
Գյուղի ատաման՝ Կոնորեզով

Մի ցուրտ ու պայծառ որ եր:

Յես շրջում էյի բակում և Վասկային սպասում:
Յես ու նա ամեն որ մեր հայրերին նախաճաչ էյինք
տանում արհեստանոցները: Իմ ձեռքում կար մի կար-
միր կապոց՝ հացով, ճարպով և մի քանի կտոր շաքա-
րով:

Վասկան դեռ չկար: Դեպոյում արդեն չչափը շա-
չեց, իսկ մենք դեռ դուրս չէյինք յեկել: Յես մոտեցա
Վասկայենց բնակարանին և թակեցի դուռը:

— Իսկո՛ւյն, — աղաղակեց Վասկան և դուրս
թռավ՝ մի փոքրիկ, կանաչ սնդուկ ձեռքին: Վասկան
միշտ գրանով եր նախաճաչ տանում իր հորը:

— Ի՛նչ է՝ դժբոյի նման միշտ քաշ ես գալիս ու անվերջ սպասեցնել տալիս, — ասացի Վասիլային: — Արագ շարժվի՛ր: Կուշանանք:

Վասիան լռեց: Մենք վազեցինք կայարանի միջով ու յերկաթուղային հիվանդանոցի մտնով: Մեզ դեմուդեմ՝ խճուղով քառատրոփ արշավով անցան տասնըհինգ ձիավոր: Ուղղվեցին նրանք դեպի կայարան:

Ո՞ւր են շտապում այդպես, սատանաները, — կամաց ասաց Վասիան:

Մենք նայեցինք նրանց հետևից և անցանք յերկաթուղու մյուս կողմը՝ դեպի դեպոն:

Մեր հետևից ծանրությամբ թրխկաց վազոնների արհեստանոցի կիպ ու ծանր դուռը:

Բոլոր բանվորները նստած էյին իրենց դազգյաշներին ու դործիքներով արկղների մոտ և ուտում էյին:

Մենք նեղ ճանապարհով անցանք մինչև արհեստանոցի վերջում գտնվող ճաղերով մեծ պատուհանը: Այնտեղ փականադործի մամլակի մոտ կանգնած էր Իլյա Ֆեոդորովիչը: Նրա դեմ ու դեմ՝ արկղների վրա նստած էյին Լեոնտի Լավրենտյեվիչը և իմ հայրը: Իսկ չորս կողմից հին-հին զսպանակների, ժանգոտած խողովակների և կոճափայտերի վրա կողքկողքի կպած՝ շարվել էյին մի քանի արհեստավորներ: Մի հաստ յերիտասարդ, կեղտոտ բաճկոնակով, շիշը չուռ տված՝ դրել էր բերնին, ծծում էր կաթը: Նրա հարևանը, ներս ընկած այտերով մի ծերուկ, յերկու ծնկների արանքում դրած չուգունե կճուճից մի ինչ-վոր պղտոր հեղուկ էր խաշտում:

Լեոնտի Լավրենտյեվիչն ինչ-վոր բան էր պատմում, իսկ մյուսները լսում էյին:

Հանկարծ հայրս նկատեց ինձ ու Վասիլային:

— Դե, ի՞նչ էք բերաններդ բացել, — ասաց նա մեզ: — Իուրս հանե՛ք, ինչ-վոր բերել եք:

Մենք ավելի մոտեցանք: Վասիան պարզեց կանաչ սնդուկը, իսկ յես՝ կարմիր թաշկինակը: Իմ հայրն ու

Իլյա Ֆեոդորովիչը, առանց մեզ վրա նայելու, սկսեցին ուտել: Իսկ յես ու Վասիան նստեցինք բուֆերի ափսեների վրա: Նրանց սոնակները խրվել էյին դետին և արհեստանոցում ծառայում էյին աթոռների տեղ:

Մոտիկ գրված էր պտուտակներով մի արկղ:

Պարապուկյունից մենք ջոկում էյինք պտուտակները և փոքրը փոքրի մոտ, մեծը մեծի մոտ դարսում ու լսում արհեստավորների խոսակցությունը:

Լեոնտի Լավրենտյեվիչն ասում էր.

— Ամենուրեք խուզարկություն է: Յերեկ գիշերով Ռեպկոյի տունը տակն ու վրա արին: Շարունակ հրացաններ են փնտռում:

Յես ու Վասիան իրար նայեցինք:

Այդ ժամանակ մեկը ծանր թխկացրեց դուռը: Հետո դուռը ճռուց և ներս մտան սպաներ — են փքվածը՝ զրահապատ գնացքի հրամանատարը և կայարանի պարետը:

Հրամանատարը մի քանի քայլ առաջացավ, գլուխը ներս քաշեց ուտերի մեջ և ծղրտաց.

— Հանդա՛րտ:

Բանվորները լռեցին, բայց վոչվոք տեղից չշարժվեց:

Հրամանատարը գնդացրեց խթանները և սկսեց ճառել.

— Յես մտադիր չեմ բացատրություն տալու իմ այտեղ գալու պատճառների մասին: Բայց ի միջի այլոց կասեմ վորևէ բանի մասին: Մենք թույլ տվինք ձեզ դործի անցնելու, վորպեսզի դուք ազնվությամբ աշխատեք: Մեր ազատ և առանց այն էլ բոլշևիկների կողմից հոշոտված յերկրում ապստամբվել չի թույլատրվում: Իուք դժգո՞հ եք: Կամենում եք թիկունքի՞ց հարվածել մեզ: Բայց այդ ձեզ չի հաջողվի: Մենք կգնդակահարենք բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն ձեռք բարձրացնել մեզ վրա: Յես ձեզ ցույց կտամ, սրիկանե՛ր: Յես ձեզ խոնարհ գառներ կդարձ-

նեմ: Յեթե այժմ ևեթ չեք ասի, թե ով է գողացել հրացանները, հենց այստեղ բոլորիդ ել շների նման կսատկացնեմ: Ամբողջ գյուղը հողին կհավասարեցնեմ:

Սպայի ճակատի ջիղը փքվեց: Նա հանեց փոքրիկ, սպիտակ թաշկինակը և սրբեց ճակատը:

— Յես հարցնում եմ ձեզ. ո՞վ է գողացել հրացանները: Ինչո՞ւ յեք լուռ անբան անասունների պես: Ասացե՛ք, թե չե՛, յես կհաշվեմ յուրաքանչյուր տասերորդին և...

Հրամանատարը գլանակը դցեց հատակին ու տրորեց:

— Դու ձերբակալված ես, — մատով խթեց առաջին պատահած արհեստավորի կուրծքը:

— Յե՛տ քաշիր ձեռքդ, մի՛ դիպչիր, — սառնասրբատրեն յես մղեցի բանվորը հրամանատարին:

— Գոեհի՛կ, — սուր ձայնով դուռաց հրամանատարը, — ասա՛, վո՞րտեղ են հրացանները:

Յեմ նա թափով խփեց սպիտակ ձեռնոցով բանվորի աչքերին:

— Ինչո՞ւ յես խփում, Գարշելի՛ գազան: Յես վոչինչ չգիտեմ, — խուստ ձայնով աղաղակեց բանվորը:

— Գիտես, սրիկա՛: Պարե՛տ, վերցնե՛լ նրան:

Պարետը թռավ դեպի բանվորը, բռնեց նրա շապկի ոձիքից և հրեց դեպի դուռը:

— Խփի՛ր ձրիակերներին, — բղավեց մեկը: — Յես ճանաչեցի Իլյա Ֆեոդորովիչի ձայնը:

Պարետի գլխի վրայով թռավ յերկաթի մի մեծ կտոր և ծանրությամբ կպավ պատին: Պարետը բաց թողեց արհեստավորին:

— Տեղից չշարժվե՛լ, կկրակեմ, — կերկերաց զրահապատի հրամանատարը և պատյանից քաշեց մաուզերը:

Ամբոխը պատի նման շարժվեց դեպի նա: Ողու՛մ սվփում էին պտուտակներ, բանալիներ, յերկաթի

կտորներ: Հրամանատարը բարձրացրեց մաուզերը և կրակեց ամբոխի ուղիղ մեջտեղը: Մի բանվոր ճոճվեց, կարծես բարևելով, և գլորվեց առաջ: Յես սկզբում մինչև անգամ չհասկացա՝ ի՛նչ պատահեց նրան: Միայն տեսա՝ ինչպես նրա ալեխառն գլուխը խրվեց թեփով ծածկված դետնի մեջ:

Բանվորները յես քաշվեցին: Զրահապատ դնացքի հրամանատարը և պարետը միանգամից շուռ յեկան և արագ քալերով դուրս յեկան դեպոյից:

Իլյա Ֆեոդորովիչը նետվեց դեպի բանվորը, կոսցավ նրա վրա և բարձրացրեց նրա գլուխը:

— Նայի՛ր, սա Լեոնտի Լավրենտյեվիչն է, — աղաղակեց Վասիան:

— Վերջացավ, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը և ինքն ել գունատվեց ինչպես մեռելը:

Նա կուացրեց մեջքը և նայեց սպաների հետևից:

— Դե, ամո՛ւր կաց այժմ, կհիշենք:

Բոլորը կանգնել էին Իլյա Ֆեոդորովիչի շուրջը և նայում էին նրա այլայլված դեմքին:

— Ե՛հ, ի՛նչ արած, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը, — ապրեն՝ ովքեր տարել են հրացանները: Այդպես ել պետք է:

XVI Գ Լ Ո Ի Ե

ԾՄԱԾԿԱԾ ԳԵՐԵԶՄԱՆ

Շչակը պատուվում էր, ձայնում: Սպիտակ գուրբշու հոսանքը ծփում էր ողի մեջ՝ յերկաթուղու յերկար դեպոյի վրա: Բայց արհեստավորներն այսոք աչխատանքի դուրս չեկան:

Նրանք անցան դեպոյի մոտով և ծովեցին գյուղի յերկրորդ փողոցը, դեպի այն տունը, վորտեղ սպբում էր Լեոնտի Լավրենտյեվիչը:

Յածլիկ, հին ծղոտով ծածկված տնակի մոտ փողոցն ամբողջովին լցված էր արհեստավորներով, գյուղի բնակիչներով և այլ գյուղացիներով:

Յես, Անդրեյը և Վասիան Իլյա Ֆեոդորովիչի հետևից բազմությունը ճեղքելով մտանք բակը:

Իլյա Ֆեոդորովիչը յերկու ձեռքով բռնել էր մի մեծ, մետաղե պսակ, վրա դեպույակաձևները շինել էյին արհեստանոցներում: Պսակի թիթեղյա տերևները դողդողում ու զնգզնգում էյին:

Ամբոխը յետ գնաց, և մենք մտանք սենյակը: Լեոնտի Լավրենտյեվիչը պառկած էր չներկված դադաղում, վրա շտապ իրար էյին կպցրել արհեստավորները: Նրա սուր ծնոտը և փոս ընկած ալյուրը ծածկված էյին սպիտակ մազերով, կուրծքը տախտակի նման տափակ էր:

Մենք մի քանի րոպե լուռ կանգնած էյինք: Հետո Իլյա Ֆեոդորովիչը պսակը դրեց հանդուցյալի վրաների տակ, ուղղեց սավանի ծալքերը և հանդարտ ասաց.

— Դե՛հ, վերցնենք:

Չորս ամբակազմ յերիտասարդ տղաներ ուսերի վրայով գցեցին յերեսարբիչները, տաբուրետիաների վրայից վերցրին դադաղը և տարան: Նրանց հետևից շարժվեց ամբոխը: Յերկու կին բռնած տանում էյին Լեոնտի Լավրենտյեվիչի կնոջը: Նա հեծկտում էր և արտասուքը սրբում զնդանման ծալած թաշկինակով:

Բոլորից առաջ գնում էր Իլիա Ֆեոդորովիչը, գլխի վրա տանելով դադաղի կափարիչը:

Արհեստավորների հետ մեր ամբողջ ջոկատը գնում էր դադաղի հետևից: Հանկարծ Վասիան խթեց ինձ արմունկով և կամաց ասաց.

— Հրեն Պորֆիրին:

Յես վիզս յերկարացրի: Իմ հոր կողքին գնում էր Պորֆիրին իր կնգուղավոր բրեզենտե թիկնոցը հագած և ինչ-վոր շնչում էր հորս ականջին:



Պերեղմանոցի դռները լայն բացված էյին:

Դադարն անցկացրին հին, աջ ու ձախ ծոված խաչերի մեջ ձգված նեղ ճանապարհով և դրին վոչ խորը փոսի առաջ: Իլյա Ֆեոդորովիչը բարձրացավ հենց փոսի յեզրին կիտած հողաթմբի վրա և փռաների տակ նայելով՝ սկսեց դանդաղորեն խոսել:

— Ընկերներ, սպաներն սպանեցին մեր արհեստավորին:

Այլևս վոչ մի խոսք ասել չկարողացավ և լաց յեղավ: Այդ ժամանակ ամբոխի միջից դուրս յեկավ Պորֆիրին: Նա բարձրացավ կողքի գերեզմանի վրա և հանգիստ ձևով սկսեց:

— Յեղբա՛յր կազակներ և արհեստավորներ: Խփում են մեզ սպաները: Կախում են չկուրոյականները, գրեզակահարում են դրողդովցիները: Ինչո՞ւ համար կորավ այս մարդը: Մի՞թե նա վորևե հանցանք էր գործել: Ընկերներ, յեթե մենք լռենք...

Հանկարծ ցանկապատի հետևից լավեց մանրաքայլ դոփյուն, և գերեզմանատան պարսալից ներս խուժեցին ձիավոր կազակներ: Նրանք սրարշավ թռչում էյին գերեզմանաթմբերի և ցանկապատերի վրայով ուղիղ դեպի բաց գերեզմանը: Նրանք մտան ամբոխի մեջ և սկսեցին աջ ու ձախ անխնա հարվածել մտրակներով՝ վորտեղ պատահում էր — ուսերին, մեջքերին, դեմքերին:

Ի ուրն ել սկսեցին փախչել:

Անդրեյը, Վասիան և յես կարճ ճանապարհով՝ արտավայրի միջով նույնպես վազեցինք դեպի գյուղ: Վազելիս Վասիան վերցնում էր դեղին, կավային հողակոշտեր և առանց յես դառնալու՝ ուսերի վրայով չարտում էր յես:

Պերեղմանոցից լավեց տախտակների շրխոց: Յես յես նայեցի: Ձիերը կոխկրտում էյին դազաղը:

Յերբ յես ու Վասիան տուն հասանք, յեկան նաև Իլյա Ֆեոդորովիչն ու իմ հայրը: Իլյա Ֆեոդորովիչը

սրբեց ճեղքված շրթունքից ծորող արյունը, և հազիվ լսելի ձայնով ասաց:

— Լեոնտին այժմ վոչ վոք չի մոռանա: Կազակներն այսօր նրա վրա հուշարձան կանգնեցրին:

XVII Դ ԼՈՒՆ

ՍՏԱՅԱԿԱՆՈՎ ԿՈՇԻԿՆԵՐԸ

Լեոնտի Լավրենտյովիչի թաղումից յերեք-չորս օր անց, Անդրեյը շատ յերկար նստեց մեղ մոտ և մնաց դիչերելու:

Յերեկոյան յես, Վասիան և Անդրեյը շեմքի վրա կողք-կողքի նստած՝ դիտում էյինք յերկնքի աստղերը: Դիտեցինք Մեծ-Արջի համաստեղությունը: Անդրեյը, ձեռքը պարզելով, ցույց էր տալիս յերկնքի վրա մի շերեփ, բայց յես, վորքան ել աչխատում էյի, չկարողացա տեսնել: Այն ժամանակ Անդրեյը բռնեց ձեռքս և սկսեց ողի մեջ դես-դեն դարձնել:

— Հրեն մի ծառ, տեսնո՞ւմ ես: Կողքին խողովակ, նկատո՞ւմ ես: Այժմ նայի՛ր ծառի ու խողովակի արանքով: Լավ: Դե ձեռքդ վերև տա՛ր: Տեսնո՞ւմ ես:

Յես լուռ էյի:

— Շերեփը տեսնո՞ւմ ես, — նորից հարցրեց Անդրեյը:

— Վոչինչ, Անդրեյուչա, վոչինչ չեմ տեսնում:

Անդրեյը բարկացավ և կրկին մատս ցցեց վերև: Այդ ժամանակ ցանկապատի դուռը ձոռաց և զգուշ քայլերով բակը մտավ մի սրատանի: Նա կանգնեց բակի մեջտեղը և հանդարտ կանչեց:

— Գրի՛չկա... Անդրե՛յ...

— Սե՛նկա... շնչակտուր վոտքի թուով Անդրեյը: — Վո՞րտեղից:

— Մերոնց մոտից, ոտամաճակատով եմ անցել, — ասաց Սենկան:

Բերաններս բաց մնաց:

— Իսկ մենք կարծում եյինք, վոր քեզ վաղուց ապանած կլինեն:

— Վոչ, առայժմ կենդանի յեմ:

— Իսկ հորդ գտա՞ր — հարցրեց Անդրեյը:

— Գտա: Կուրսավկայում:

— Իսկ մեզ մոտ ինչե՞ր են կատարվում, — բարձր շնչաց Վասկան: — Գործեր, սարերի չափ: Գնանք նկուղի հետևը, այնտեղ կգրուցենք:

Գնացինք նկուղի հետևը: Վասկան միշտ առաջ էր վազում, շոշափելով Սենկայի գրպանները, շուռ-մուռ տալիս նրա պիջակի փեշերը:

— Բայց ինչո՞ւ համար ես ինձ այդպես չինե-տիկնիկի նման տնտղում:

— Ըհը՛, վո՞նց ե հպարտանում: Նայել չի՞ կարե-լի, հա՞ — ասաց Վասկան:

— Բայց ի՞նչ ես փնտռում, Ե՛:

— Ուզում եմ տեսնել՝ մաուզեր կամ թե ու՞մ-բեր...

— Դե տե՛ս, տե՛ս, — թավ ձայնով ասաց Սեմյո-նը: — Միևնուշնն ե, վոչինչ չի տեսնվում, այնպես մութ ե, թեկուզ աչքդ մատ խոթեն:

Մենք տեղավորվեցինք փոքրիկ նստարանի վրա՝ Անդրեյը չիկացրեց լուցկին: Քանի վառվում եր՝ մենք տնտղեցինք Սեմյոնին:

Սեմյոնը կարծես մեծացել էր և ուտերը լայնացել էյին: Նրա դեմքը կոշտացել ու քամածեծ էր յեղել: Նա հագել էր զինվորական շինելից կարած պիջակ, բամբակով անդրավարտիկ և կարմիր բանակայինի մեծ-մեծ կոշիկներ:

— Վո՞րտեղից ես ճարել այդ կոշիկները:

— Տվել են: Կարմիր բանակում:

— Ի՞նչպես թե տվել են, — զարմացավ Անդրեյը:

— Ինչպե՞ս: Ստացականով: Մինչև կմաշվեն:

Սեմյոնը գրպանից հանեց կարմիր բանակայինի մա-խոտիկան: Մենք սկսեցինք ծխել:

— Մախոտիկան նո՞ւյնպես կարմիր բանակումն են տվել, — հարցրի յես:

— Մախոտիկան էլ: Այնտեղ բոլոր կարմիր բանա-կայիններին էլ տալիս են յերկուական փաթեթ:

— Իսկ դու կարմիր բանակայի՞ն ես:

— Յես ու հայրս միասին եյինք ծառայում: Յես, յեղբա՛յր, մինչև անգամ զրահապատի վրա էլ եմ յե-ղել:

— Զրահապատի վրա՞:

— Այո՛:

— Դե պարզ ասա՛, կարդով և բոլորը, — ասացի՝ համբերությունս հատած: Սենկան ավելի հարմար տեղավորվեց քարի վրա, պիջակի փեշերը յետ գցեց և սկսեց պատմել.

— Հիշո՞ւմ եք, դուք ինձ կայարանում պատահե-ցիք: Կազակներն այն ժամանակ ինձ բռնեցին և մեր տուն քաշ տվին: Այդպես, նրանց հետ միասին ամ-բողջ գյուղը վոտի տակ տվի: Իսկ հետո, այլևս ճար չկար: Տուն բերի նրանց: Մայրս լաց ե լինում: Նաղ-կան, Կատկան ծվում են: Իսկ կազակներն ինձ դնքսում են: Ահա, շոշափի՛ր:

Բոլորս էլ հերթով շոշափեցինք Սենկայի ախանջի վրա յեղած յերկար սպին:

— Լավ, իսկ հետո ի՞նչ յեղավ, — հարցրեց Վաս-կան:

— Հետո դադարեցին ծեծելուց: Ամբողջ տունը քակն ու վրա արին ու հեռացան: Դե յես էլ վորոշե-ցի: Արի, — մտածում եմ, յես ձեզ ցույց կտամ, — հորս մոտ գնամ: Յեվ գնացի: Սկզբում գնացի դեպի Բոնդարենկոյի տնակը, հետո ձախ ծռեցի: Գնում եյի հեղեղատով: Գիշերեցի յերկաթուղու պահակի մոտ: Գործն եսպես ե ու ենպես — իբր թե, ապի, թույլ տուր գիշերեմ: Նա թույլատրեց: Իսկ ինքն ամբողջ

գիշեր հետեւել է — քնած էմ, թե վոչ: Ինձ ի՞նչ: Մի
լավ քնեցի: Առավոտյան նա ինձ հարցնում է — ո՞ւմ
տղան ես, ել ի՞նչպես, ել ո՞ւր ես գնում: Հորս մտ-
եմ գնում, — ասում եմ: Իմ հայրը նույնպես գծի սլա-
հակ է, ինչպես և դու, միայն նա ծառայում է կուր-
սավկայից դենը՝ 434-րդ վերստի վրա: Իսկ յես, ա-
սում եմ, սովորում եյի Նեվիլիայում, այժմ ել տուն
գնալ եմ ուզում, վորովհետև սովածուխթյունից սատ-
կում եմ: Նա ինձ հետ վեց վերստ յեկավ՝ ճանապարհ
դնելու: Միասին անցանք պահակային պոստերը, իսկ
հետո մենակ շարունակեցի:

— Ել վոչ վոք քեզ չբռնե՞ց, — հարցրի յես:

— Վո՛չ: Յես, յեղբա՛յր, այժմ ճանապարհը դի-
տեմ: Այդպիսով յեկա կուրսավկա և առաջին հերթին
կայարանում հանդիպեցի հորս: Իսկ նա, յերբ տեսավ
ինձ, մինչև անգամ ձեռները թափահարեց:

— «Սենկա, — ասում է, — այդ ի՞նչ բան է: Դու,
կարծեմ, տանը մնացիր, իսկ այժմ կանգնել ես իմ
աչքի առաջ:

— «Մնալը՝ մնացի, — ասում եմ, — բայց այժմ
տանը մնալ չի կարելի: Ավերում են մերոնց բոլորին,
սպանում են դատարկ բանի համար»:

«Հայրս ինձ տարավ իր մոտ, իսկ ճանապարհին
միշտ հարցնում էր Նեվիլիայի մասին, ընտանիքի մա-
սին, արհեստավորները մասին: Իսկ յես, տղաներ,
նայում եմ նրա վրա ու մտածում. «Ա՛խ, յեթե նա
ինձ կարմիր բանակային գրել տար»: Հայրս, յերևում
է, գլխի ընկավ: «Ուրեմն ի՞նչ, — ասում է, — յեկել
ես կարմիր բանակայի՞ն գրվելու»: — «Ի հարկե», ա-
սում եմ: Նա ծիծաղից թուլանում էր: Իսկ յես նա-
յում եմ նրա գոտու վրա փայլող յերկու մետաղյա
ոտմբերին ու յերևակայում — «Յեթե այդպիսի բա-
ներ ունենայի ձեռքումս, յերբ հարբած կազակները
գլխիս թրխկացնում եյին, յես նրանց փոր ու փսփո-
րկթափեյի»: Հայրս, տղաներ, նոր կարարին ու պա-
տյանով նազան ունի:

«Ահա այդպես: Հորս հետ հասանք Չրհորին,
տեսնեմ՝ քեռի Սուբբոտինն է գալիս:

— «Ե՛յ դու, — ասում է Սուբբոտինը, — վո՞րտե-
ղից այդպես յուղոտված:

— «Տնից, — ասում եմ:

— «Իսկ տունը, — ասում է, — ինչպե՞ս է ապրում:

— «Վոչինչ, դիմանում է մի կերպ:

— «Լավ, իսկ ի՞նչպես է Անդրեյը, — հարցնում ե՞ս»:

Անդրեյը մինչև անգամ վեք թռավ:

— Իմ մասի՞ն հարցրեց, — աղաղակեց նա:

— Քո մասին, — ասաց Սեմյոնը:

— Իսկ իմ մասին հարցրե՞ց, — հարցրի յես:

— Քո մասին ել հարցրեց:

— Ելի ո՞ւմ մասին, — հարցրեց Վասկան:

— Այլևս, կարծեմ, վոչ վոքի: Չե՛, խաբում եմ.
մեր ինժեների մասին ել հարցրեց:

— Իվան Վասիլյեվիչի մասի՞ն. — ասաց Անդրեյը:

— Այո՛, Վանկայի մասին:

— Նա ել ի՞նչ քեռի Սուբբոտին է, իմ մասին մո-
ռացել է, — տխրությամբ ասաց Վասկան: — Իսկ ախր
յես նրա հետ քանի՞ անգամ եմ խոսել: Քանի՞ անգամ
եմ նրա մոտ յեղել:

Բայց Սենկան նրան չէր լսում և շարունակում էր
պատմել:

— Սուբբոտինը գովեց ինձ. «Կեցցե՛ս, — ասում
է, — ուղմաճակատ ես անցել: Յես քեզ կարմիր բանա-
կային կզրեմ: Միայն, — ասում է, — յեթե սպիտակ-
ները քեզ բռնեն, կկախեն»:

— Իսկ նա ասո՞ւմ էր՝ յե՛րբ կզան այստեղ կար-
միրները, — կամաց հարցրեց Անդրեյը:

— Հենց վոր ոգնություն ստանան, կզան: Մեր
բոլոր գեպոյականներն ել «կոմունիստ» զրահապատի
վրա յեն: Տեսե՛լ եք՝ ինչ որի յեն գցել «Հաղթու-
թյուն» զրահապատը: Հորեղբայր Սուբբոտինն է
խվել, — ասաց Սենկան:

— Իսկ դու վո՞րտեղից գիտես, — կասկածելով
հարցրեց Անդրեյը:

— Ոչերեդկոն եր ասում:

— Մեր դեպոյական Ոչերեդկոն:

— Այո՛, ախր նա նույնպես սպիտակներից է փա-
խել: Իսկ Սորոկինը, այդ սրիկան, ամբողջ բանակը
վաճառեց:

— Ի՞նչ Սորոկին, — հարցրեց Անդրեյը:

— Բա մի՞թե չեք լսել, — ասաց Սենկան, — Հենց
բանակի հրամանատարը: Այնպես եր, այնպես է՛ր:
Բոլորը կովի եյին նետվում, իսկ նա միշտ՝ նահանջե՛լ,
նահանջե՛լ: Այնպիսի մի դավաճանություն բացվե՛ց:
Բայց այժմ ամեն ինչ կարգի յե ընկել:

— Իսկ դու ինչո՞ւ այդպես շուտ վերադարձար, —
հարցրի յես:

— Հայրս ուղարկեց: Ասում է՝ մորդ ու աղջիկնե-
րին մենակ թողնել չի կարելի:

— Իսկ մեզ մոտ Լեոնտի Լավրենտյեվիչին կա-
զակները դեպոյում սպանեցին, — ասացի յես:

— Ի՞նչ, — աղաղակեց Սենկան, — ճանապարհի
վարպետի՞ն:

— Ճանապարհի վարպետին: Կազակների ձիերը
դադաղը վոտի տակ տվին: Յե՛վ դադաղը ջարդեցին,
և՛ կափարիչը: Գերեզմանոցում միտինդը ցրեցին: Այ-
ժմ ամեն տեղ խուզարկություններ են կատարում:

— Իսկ մենք հրացաններ ենք ձեռք բերել, —
ընդհատեց ինձ Վասկան, — պարետից ենք դողացել:
Պատուհանից թոցրինք... Մի հատ ել քեզ համար ենք
պահել:

— Յերևի ամենից անպետքն եք թողել: Իսկ բոլոր
լավերն ինքներդ վերցրել:

— Ամենից լավը քեզ համար ենք պահել, — ասաց
Անդրեյը: — Միայն եղ բանի համար Պորֆիրին մեզ
յավ դաս տվեց, բայց դրա փոխարեն բոլորս ել այժմ
մեկ-մեկ նոր հրացան ունենք: Հենց թեկուզ հիմի կռիվ
կարող ենք գնալ:

— Իսկ ո՞վ է այդ Պորֆիրին, — հարցրեց Սենկան:

— Կարմիր բանակային է: Նա այստեղ բանվոր-
ների մեջ ազիտացիա յե անում, — ասաց Վասկան:

— Ի՞նչ լավ կլինեք նրան տեսնել:

— Վաղը կտեսնես: Մենք քեզ նրա մոտ կտանենք:
Նա ձեզնահարկումն է ապրում:

— Սպասի՛ր, Վա՛սկա, — ասաց Անդրեյը, — Ամե-
նազլիսավորը դեռ Սենկային չենք պատմել: Մենք,
յեղբայր, ջոկատ ենք կազմակերպել, և դու ել նրա
մեջն ես:

— Ի՞նչ ջոկատ, — հարցրեց Սենկան:

— Մարտական, — ասաց Անդրեյը: — Ինձ մոտ է
և՛ ցուցակը, և՛ ժողովի արձանագրությունը: Այնտեղ
բոլոր տղաներն ստորագրել են, միայն քո ստորա-
գրությունը չկա: Գնանք ինձ մոտ, ցույց տամ:

— Գիշերը մանզալ չի կարելի, — ձայն տվեց
Վասկան, — միայն մինչև յերեկոյան ժամի Ե-ն է
թուլլատրվում:

— Լավ, դու մինչև ժամի վեցը, իսկ մենք իս-
կույն կգնանք:

Անդրեյը, Սենկան և յես շարժվեցինք դեպի դար-
պասը: Դռների մոտ Վասկան հասավ մեզ:

— Յես ել կգամ ձեզ հետ:

Մենք սկսեցինք զգուշությամբ անցնել նեղ փո-
ղոցների սառած հողակույտերի վրայով: Աստղերն
աղոտ կերպով լուսավորում էյին: Բոլորովին հան-
դարտ եր: Անգամ շները չեյին հաջում: Միայն Սեմյո-
նի կարմիր բանակայինի կոշիկներն էյին ճոռում:

Մենք մոտեցանք Անդրեյինց տանը: Անդրեյը ձեռ-
քը պարզեց դռան մոտի ճեղքի մեջ և ներսից յետ շար-
ժեց փականը: Մենք անցանք մութ նախասենյակով և
մտանք սենյակը: Անդրեյը վառեց մրաճրագը:

Սենյակը փոքր եր՝ ցածր առաստաղով: Պատու-
հանի մոտ դրված եր սեղանը, պատի մոտ՝ յերկաթե
մահճակալը, իսկ անկյունում — դռների մոտ — սըն-
դուկը:

Անդրեյը շարժեց սնդուկը և վերցրեց մի փոքր յերկաթի տուփ: Տուփից հանեց յերկու կտոր թուղթ:

— Ա՛ռ, կարդա՛, — պարզեց նա թղթերը Սեմյոնին:

Սեմյոնը վերցրեց թղթի կտորը, նայեց, շուտ ու մուտ տվեց և վերադարձրեց Անդրեյին:

— Սյո ի՞նչ բան է:

— Մեր ջոկատն է: Յուզակը: Իսկ վորպեսզի բան չհասկացվի, թե ինչ է գրած այստեղ, մենք միայն տառեր ենք գրել: Վ. Կ. նշանակում է Վասիկա, Գ. Մ.՝ Գրիչկա, Գ. Դ.՝ Գավրիկ, ահա և դու՛ Ս. Վ.: Սըտորազրի՛ր կողքին:

Անդրեյը տվեց Սեմյոնին մատիտի կտորը: Սենկան մի կերպ դուրս բերեց «Ս. Վ.» և «Վ» տառին ել ինչ-՛վոր մի կեռ բան:

Դե՛հ, — ասաց Անդրեյը, — այժմ բոլորն ել սըտորազրել են: Կարելի յե թաղել:

Գիշերը սրահի հետևում մի խոր փոս փորեցինք և այնտեղ դրինք մետաղյա տուփը՝ մեր ջոկատի ցուցակով և առաջին ժողովի արձանագրությունը:

— Թող մնա մինչև կարմիրների գալը, — ասաց Անդրեյը՝ կոխկրտելով գետինը:

XVIII ԳՆՈՒՆ

ԲԱՃԿՈՆԻ ԹԵՎՔԸ

Յերկար ժամանակ ու լայնորեն բացված էյին պարետային սենյակի դռները: Բանվորներին, մեկը մյուսի հետևից, քշում էյին հարցաքննության: Վորին իսկույն բաց էյին թողնում, վորին ել ուղարկում ստանիցա՝ ատամանի մոտ:

Աշխատանքն արհեստանոցներում աշխուժ չեյր ընթանում:

Ամեն առավոտ պակասում էյին հարեաններից: Վոմանք դիչերով ուղմաճակատ էյին փախչում, իսկ վոմանց ել չկուրոյականներն էյին տանում:

Դեպոյում բանվորները միմյանց հետ խոսում էյին կարճ, միայն գործի մասին — մեկը պտուտակի բանալի յե խնդրում, մյուսը՝ մկրատը: Իսկ այլ խոսակցությունների համար հավաքվում էյին մազութի դարպասի մոտ. խոսակցությունները դադարում էյին, հենց վոր յերկաթգծի կամրջակի վրա հայտնվում եր հերթապահ սպան: Այն ժամանակ բոլորը ցրվում էյին իրենց տեղերը և քինոտ զայրույթով սկսում մուրճերով հարվածել հատիչին:

Հերթապահ սպայի հետ հաճախակի այցելում եր արհեստանոցները և հեռազրիչ Սոմովը: Նա աշխուժորեն անցուղարձ եր անում դազգյահների միջով և ասում՝ աչքով անելով սպային.

— Աշխատում ենք... սեղմում...

Սպան մինչև անգամ չեր ել թեքվում նրա կողմը: Այդ բանը Սոմովին չեր վրդովում: Նա մի դազգյահից վազում եր մյուսը, տիրական աչքով նայում աշխատանքներին, խոսակցում բանվորների հետ:

Բանվորները նրան այնպես էյին մտիկ տալիս, կարծես թե պատրաստվում էյին մուրճը ճոճելու և թխկացնելու նրա չինոմինիկական, դեղին յեղրով գլըխարկին:

— Հեռացե՛ք, ձերք մեծապատվություն, — ասում էյին նրանք ատամները սեղմած, — թե չե պտուտակը կարող ե պատահամբ ուղիղ ճակատիդ դիպչել:

Սոմովն շտապով հեռանում եր և կծկվում — կպչում սպային: Համենայն դեպս նազանի մոտ ավելի ապահով եր:

Մի անգամ Սոմովը հայտնվեց արհեստանոցներում բոլորովին հարբած: Հենց այդ ժամանակ յես դեպոյում էյի — հորս մախորկա էյի բերել:

— Այդ է, հը՛... խաղաղվել են բոլորովին... —

մըթմըթում եր Սոմովը:— Լա՛վ... առանց ընկեր
Ֆիլիմոնովի գործը կարծես ավելի աշխուժացել է:

Իլյա Ֆեոդորովիչն այդ ժամանակ սեղմում եր
մամլակի մեջ վեց դյուլմանոց մի գնդերիթ:

Նա յետ նայեց Սոմովին և ասաց այնպես, վոր ամ-
բողջ արհեստանոցը լսեր:

— Ֆիլիմոնովին մի՛ գիպչիր, զգվե՛լի՛. Ֆիլիմո-
նովը գերեզմանումն է: Դու՛ պետքե նրա տեղը պառ-
կած լինեյիր, անզգա՛մ, իսկ դու դեռ սողում ես գետ-
նի յերեսին:

Բանվորները դադդյաճաների մոտ աղմկեցին, իսկ
Սոմովը, թեկուզ և հարբած եր, լեզուն կծեց, վեց
դյուլմանոց գնդերիթից վախեցավ: Նա սկսեց աչքերը
թարթել, գլխարկը քաշեց քթի վրա և հեռացավ՝
ձոձանակի նման որորվելով դադդյաճաների մեջ:

— Մարդ վոտքի վրայի կոչտուկն ել տանել չի
կարողանում,— ասաց փականագործ Ռեպկոն,— իսկ
այս պալարի՞ն... Խոսել ել պետք չէ:

Բոլորը լռեցին: Իսկ Ռեպկոն ձմռեց ծխախոտի
մնացորդը և մատի դարկով գցեց դադդյաճի տակ:
Հետո պտտեցրեց մամլակի թևը և ասաց կամաց:

— Յես նրան վաղուց է աչքի տակ եմ առել: Ծու-
տով նրա հոգին...

Դադդյաճաների մոտով այդ ժամանակ անց եր կե-
նում նոր վարպետը՝ հաստ, լըջմիտ: Նա ակնոցների
վրայով նայեց Ռեպկոյին, Իլյա Ֆեոդորովիչին և քթի
մեջ խոսեց՝ ծոր տալով.

— Ես ի՞նչ զիլ ծխում եք: Խոսակցելը՝ խոսակցում
եք, իսկ գործը կանգնած է:

— Անցի՛ր քո ճանապարհով, հնդկահա՛վ, մի՛ ընդ-
միջիր,— ընդհատեց նրան Իլյա Ֆեոդորովիչը:— Դուք
բոլորդ ել մի սանրի կտավ եք, պորտաբույժներ՛ր:

Վարպետը բոլորովին կուչ յեկավ:

— Ե՛հ, ի՛նչ եք ասում, յեղբայրներ,— ասաց նա
վիրավորված: Հետո հանեց չթե մեծ թաշկինակը և

սկսեց ակնոցների տակից արցունքները սրբել:— Յես
դրանցից չեմ, յեղբայրներ, յես ի՞նչը հասակից մազու-
թի մեջ տրորվում եմ:

— Տրորվում ես՝ տրորվի՛ր, միայն թե աչքից ուղ-
յեղիր: Առաջ դնա՛:

Վարպետը հեռացավ: Բանվորները դադդյաճաները
թողին և հավաքվեցին Իլյա Ֆեոդորովիչի մամլակի
մոտ:

Փականագործ Ռեպկոն, շտապելով և կակաղելով,
խոսում եր, դառնալով մերթ մեկին, մերթ մյուսին:

— Այս ի՞նչ եկատարվում մեզ մոտ: Լեոնտի Լավ-
բենտյեվիչին սպանեցի՞ն: Սպանեցին: Տանո՞ւմ են մեր
յեղբայրներին: Տանում են: Ամեն մի զգվելի ծաղրո՞ւմ
ե մեզ: Ծաղրում է: Բայց մի՞թե մենք մոռացանք խոր-
հըրդային իշխանության մասին, ընկերների մասին:
Նրանք այնտեղ պայքարում են, իսկ մենք այստեղ ըս-
պիտակների համար տրանսպորտ ենք պատրաստում:

Վորտե՞ղ ենք մենք, վո՞ր մոլորակի վրա յենք ապ-
րում և ի՞նչ իրավունքներով: Ա՛խ, սիրտս պատռվում է:

— Ե՛հ, յեղբայր, մի՛ տխրիր,— ասաց նրան Իլյա
Ֆեոդորովիչը:— Դու յերիտասարդ ես ու դրա համար
տաք—տաք ես խոսում: Իսկ հարկավոր է դանդաղ,
բայց միանգամից ծռել:

Մի քանի որից հետո, առավոտյան, արհեստանոց-
ների դռների առաջ մազութի լայն բաքի ատամնավոր
յեզրի վրա նկատեցին մի սև թևք՝ դեղին յերիզներով:
Թևքը վերցրին բաքի վրայից ու դիտում եյին: Կանչե-
ցին պարետին, գիշերապահին: Բաքի չորս կողմը
կանգնեցին զինված Դրոզդովցիները: Հրացանի կոթով
յետ եյին տալիս դյուլդի բնակիչներին, արհեստավո-
րությանը:

Յերկու ջահել պատանիներ կանգնել եյին յեյարա-
նի վրա և յերկաթե յերկար ձողերով խառնում եյին բա-

քի սև, բաքի նման մազութը: Զողերը քսվում էյին
բաքի պատերին, չանդուում էյին նրա հատակը, բայց
նրանք վոչնչի չէյին պատահում:

Մեկը կարգադրեց թափել մազութը: Դուռը բե-
րին ու սկսեցին նրանով մազութը փոխադրել հարևան
բաքը: Յերբ մազութի կեսը դատարկել էյին, դեմքը
կարմիր բծերով մի կզաքիթ յերիտասարդ ցած կու-
ցավ և հաստ ձողով սկսեց ամբողջ հատակը խառնել:
Հանկարծ ինչ-վոր բան բռնեց և սկսեց դուրս քաշել:

— Հանձնե՛մ են, — բղավեցին ամբոխի միջից:

— Համբերի՛ր, կարող ե և չհանեմ, — չարացավ պա-
տանին և ել ավելի կախվեց բաքի մեջ: Շուտով բաքից
զոզանջեց նրա ձայնը:

— Շատ ե ծանր:

— Պինդ բռնի՛ր: Կզցես, — սկսեց դուռալ նրա կողքին
կանգնած մյուս պատանին:

— Արդեն վայր գցեցի, — ասաց առաջինը: — Շատ
լարծուն է: Յերկուսով կրկին սկսեցին խառնել բաքը:

Հանկարծ առաջին պատանին թափով վեր քաշեց
ձողը և սկսեց պտտել ողի մեջ: Զողի ծայրից մազութը
չորս կողմը թափթփելով՝ գեանի վրա ընկավ ազոա-
վի բնի նմանող մի սև գունդ:

— Նայի՛ր, տոպրակ ե, — աղաղակեց մեկը:

— Տոպրակ չէ, այլ պաշտոնական գլխարկ, —
մրթմրթաց մի կազակ՝ սվինով քչփորելով սև կույտը:

Մի րոպեյից հետո շրմփաց գետին յերկրորդ սև
գունդը, ավելի մեծ, քան առաջինը: Կազակն այս ան-
գամ ել քչփորեց սվինով:

— Հլա տես՛, պղնձյա կոճակ ե յերևում, — ասաց
նա մտածկոտ: Ահա կրկին մի կոճակ... Ոճիք ե...
Նչանակում ե՛ դա համազգեստի բաճկոնակ կլինի:
Այժմ անդրավարտիկը փնտռեցե՛ք, ջահեյնե՛ր:

Բայց պատանիները չէյին լսում: Նրանք նորից
կախվեցին բաքի մեջ և բարձր ֆսֆսացնելով յերկուսով
մի ծանր բեռ էյին քաշում:

Ամբոխը հանդարտվեց: Բաքի յերկթայա յեզրից
չուռ յեկավ մի ահագին մարմին և ձողերի վրայից
գլորվեց դետին:

Ողում աղոտ գծազրվեցին չորս հատ թաթեր:

Ամբոխն ուժգին մի կողմ շարժվեց:

Անգամ կազակը հրացանով հետ-հետ գնաց:

— Մարդ ե — ասաց նա: Խեղդված ե...

Ժողովուրդը կրկին տեղից շարժվեց:

Գետին ընկածը մարդու դիակ էր՝ ձեռներն ու
վոտները փռված: Նրա վզից հաստ մետաղալարով
կախված էր չուզունե արգելակի մի հաստ կաղապար:
Դեմքն անճանաչելի յեր, — նա ամբողջովին ծածկված
էր սև դիմակով:

Դիակի չորս կողմը հողի վրա լայն փռվել էր
թանձր, ճարպոտ մազութի լճակը:

Պարեաը խծուծով և նավթով տրորեց խեղդվածի
յերեսը:

— Սոմոլն ե, — սկսեցին խոսել ամբոխի մեջ, —
բայդուչը:

— Հեռագրիչ Սոմոլն ե, — ասաց պարետը: — Վը-
րեժխնդրությունից են խեղդել նրան: Գիտե՛մ՝ ո՛ւմ
ձեռքի գործն է այդ:

XIX ԳԼՈՒԽ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՍԵՆԿԱՆ

Խոշոր ու տճև փաթիլներով իջնում էր ձյունը
գետնի վրա: Կուրանից փչող քամին փախցնում էր դեռ
գետին չհասած փաթիլները և նորից պտտում ողի մեջ:

Գյուղի հետևում, տափաստաններով, խոր հեղե-
ղատներով, ատամնավոր Բուզարկա սարով քամին
քշում էր ձնափոշու ամբողջ ամպեր:

Դեռ քիչ առաջ ամառ էր այստեղ: Մենք վաղ-
վըզում էյինք փափուկ փոշու միջով, մրցելով իրար

հետ, լողում Կուրանի մի ափից մյուսը: Իսկ այժմ Կուրանը ամուր ու գորշ սառցի տակ է:

Վաղուց չեյինք այցելել Պորֆիրիին: Անդրեյը հրամայեց մեզ վոչ մի տեղ չերևալ, այլ սպասել, մինչև վոր ինքը կգա մեր հետևից: Բայց Անդրեյը չեք գալիս:

Յես ու Վասիկան անգործ թափառում էյինք բազում:

Ծածրակը քորելով և զզզված գլխարկը ճակատի վրա քաշելով՝ Վասիկան ասաց ինձ.

— Բայց դիտես, ի զուր հրացանները մեր սրահում թաղցրինք:

— Իսկ առաջ ի՞նչ էյիր մտածում, — ասացի յես:

— Վոչինչ չեյի՝ մտածում: Դուք ինքներդ պետք է մտածեյիք: Ավագներ՛ր: Գլխավորներ՛ր: Պետք եր դյուզի հետևում վորեւ սեղ թաղեյինք, դաշտում... Անդրեյը միշտ այդպես է — տո՛ւր հա տո՛ւր... Անխելքի մեկն է քո Անդրեյը և վոչ թե ջոկատի հրամանատար, — ահա թե ինչ:

— Չհամարձակվե՛ս Անդրեյին հայհոյել, — աղաղակեցի յես, — Անդրեյն ի՞նչ անի այստեղ: Մենք ինքներս վորոչեցինք ջոկատ կազմակերպել. հրացաններն էլ ինքներս ենք գողացել: Անշուշտ, քեզ վո՛չ վոք չեք ստիպում: Ինքդ էյիր առաջինը խցկվում:

— Ինքդ, ինքդ, — փնթփնթաց Վասիկան և գլուխը կախեց:

— Իսկ ի՞նչ ես ուզում:

— Ի՞նչ: Չեմ ցանկանում, վոր հրացանները մեր սրահում մնան: Տարե՛ք, ուր ուզում եք, — և վերջ:

Յես չարացա և ասացի Վասիկային շշուկով.

— Ի՞նչ ես ասում: Հիմարացե՞լ ես: Փորձի՛ր մի հրացանները փոխադրել մի այլ տեղ, իսկուհ կբռնեն: Վախկոտ ես դու, Վասիկա՛, վախկոտ, ուրիշ վոչինչ: Մենք քեզ ջոկատից կքշենք: Հողից կհանենք տուփը և քեզ արձանագրությունից կջնջենք:

Վասիկան բռնեց իմ թևից:

— Սպասի՛ր, Գրիշկա: Յես վախկոտ չեմ: Միայն ինչ—վոր սարսափելի յե... Յեթե հանկարծ կազակները մեր բակը ներխուժեն:

— Ի հարկե կներխուժեն, — տնազ էյի անում Վասիկային, իսկ ինքս ահանջ դնում: Փողոցում, դարպասի հետև, սառած գետինը մի ձի թակում եր ամբակներով:

— Անցավ, — ասաց Վասիկան ու շունչ քաշեց:

Մենք նստեցինք դռների մոտ՝ քարերի վրա: Պարապությունից վորոչեցինք ծխել: Գրպաններինցս թափ տվինք հացի փշրանքների հետ խառնված կանաչ մախորկան, հաստ, գորշ թղթով փաթաթեցինք սիգարներ և սկսեցինք բաց թողնել գորշ-մոխրագույն գարշահոտ ծուխը: Գամին մեր սիգարներինց պոկում եր մեծ կայծեր ու պտտում բակում:

Մենք լուռ ծխում էյինք: Վասիկան մերթ թքով կպցնում եր քանդված սիգարը, մերթ գետնին թքում մախորկայի կտորները:

— Իսկ դու ի՞նչ ես կարծում, Գրիշկա, — հանկարծ հարցրեց նա, յերբ նրա սիգարը հանգավ: — Անդրեյը կգա՞, թե վոչ... Չգնա՞նք նրա մոտ, հը՞:

Սյդ բուպեյին շրխկոցով յետ բացվեց ցանկապատի դուռը, և մեր մոտով վազելով, հայտնվեց նա բազում: Գլխին դրել եր գորշագույն փափախ, հաղել դարազած կիսամուշտակ — ըստ ձմեռային յեղանակի:

— Անդրեյկա, ուր ես գնում, — կանչեցինք մենք: Անդրեյը վազելիս թափահարեց թևերը և հանկարծ շուռ էյկավ:

— Ա՛, բարով, գնդացրորդներ՛ր, — ասաց նա: — Ի՞նչ եք անում այստեղ:

— Գեղ ենք սպասում, — ասացի յես:

Վասիկան լուռ եր:

— Իսկ դուք, աղանե՛ր, ինչո՞ւ յեք հոնքերդ կի-

տել: Ե՛, Վասկա, անվնա՞ս են հրացաններդ, խո՞մ
ձեռքից չե՞ս տվել:

— Անվնաս են, — պատասխանեց Վասկան և նայեց
զեպի ինձ:

Անդրեյը թմբացրեց Վասկայի ուսին:

— Կեցցես, պահա՛կ: Ջոկատից շնորհակալու-
թյուն կատանաս: Իսկ այժմ, տղանե՛ր, գնանք Սեմյո-
նի հետևից: Նրան պետք է Պորֆիրիի մոտ տանել:

— Վաղուց պետք է լիներ այդ, — ասաց Վասկան:

Մենք շարժվեցինք զեպի Սենկայենց բարակը:

Փողոցի ծայրում, կայարանի մոտ հանդիպեցինք
ձիավորներին: Նրանք գնում էին տողանով, փողոցի
յեզրով, իսկ նրանց միջև քայլում էին կեղտոտ, բո-
բիկ, ցրտից կուչ յեկած արհեստավորները:

— Նայի՛ր, Գրիշկա, — ասաց Անդրեյը, — ծերունի
Դյուրինին ել են տանում: Յեվ բոլորի պատճառն այդ
անիծված բայդուչն է:

Յես խթեցի Վասկայի կողքին:

— Ահա տե՛ս, յեթե մենք հրացանները տեղից-տեղ
փոխենք, մեզ ել քեզ հետ այսպես կտանեն:

— Յես նրանցից վախենում եյի:

Կաղակներն ու արհեստավորները ծովեցին զեպի
աջ, իսկ մենք առաջ գնացինք:

Սեմյոնը նստել էր պատուհանի ներքնատախտակի
վրա և փողոց էր նայում: Մեզ տեսնելով, ինչպես վոր
հազնված էր, առանց գլխարկի, առանց կիսամուշտա-
կի, դուրս վազեց դռնից:

— Երովիլակներ, ավելի շուտ չեյի՞ք կարող գալ:
Նստած սպասում եմ, սպասում. մտածում եյի, վոր
ձեզ կաղակներն արդեն գնդակահարել են: Տեսա՞ք՝
ինչքա՞ն արհեստավորների տարան:

— Տեսանք, — ասաց Անդրեյը: — Առաջին ան-
գա՞մն է, ի՞նչ է, ամեն որ տանում են: Իսկ դու պատ-
րաստվի՛ր, Սենկա, բայց արագ: Գնանք Պորֆիրիի՛
մեր կարմիր բանակայինի մոտ:

Սենկան տուն վազեց և իսկույն դուրս յեկավ՝
կարմիր բանակայինի շինելից կարած կիսամուշտակն
ուսերին գցած:

Մենք վազեցինք յերկաթուղային փակուղին:

Փակուղու հենց դռների մոտ կանգնած էր կազա-
կային հեծելապարեկը:

— Յե՛տ դարձ, թե չե Պորֆիրիին մատնած կլի-
նենք, — հազիվ լսելի ձայնով ասաց Անդրեյը:

Մենք սկսեցինք վազել բարձր, գորշադույն շրջա-
պարսպի յերկանքով:

Կանգնեցինք անկյունի հետևը՝ հին ցեմենտե խո-
ղովակների մոտ:

Այդ խողովակները չորրորդ տարին էր, վոր իզուր
տեղը թափված էին այնտեղ:

— Վասկա՛, — ասաց Անդրեյը:

— Ի՞նչ:

— Դու ամենից փոքրն ես, քեզ չեն նկատի: Կանդ-
նի՛ր այստեղ և նայի՛ր անկյունի հետևը: Իսկ յերբ
կազակները կհեռանան, իմաց տո՛ւր: Մենք խողովակ-
ների մեջ թաղ կկենանք:

Վասկայի շրթունքները դողացին, բայց նա վոչ
մի խոսք չասաց և մնաց անկյունում՝ հավելով ցան-
կապատին:

Իսկ մենք մտանք ցեմենտե խողովակների մեջ,
մնացինք այնտեղ կես ժամ, առանց խոսելու և հա-
մարյա առանց շարժվելու: Յերբեմն միայն նավակի
ձև տված ձեռներս մոտեցնում էինք բերաններիս և
կամաց փչում կարմրած ու սառած մեր մատներին:

Վերջապես մենք տեսանք Վասկայի վրտները: Նա
կանգնեց այն խողովակի առաջ, վորի մեջ նստել էյինք
մենք և շուկով գեկուցեց:

Հեծելապարեկը նահանջեց զեպի Գոլոպուզով-
կա... վիրավորներ և սպանվածներ չկան...

— Ա՛յ քեզ Վասկա: Ա՛յ քեզ ուզմիկ հետա-

խուլոյ, — ծիծաղեցինք մենք, դուրս գալով խողովակից:

— Դե՛, արագ գնանք, — ասաց Սեմյոնը:

Մենք շրջապարսպի յերկայնքով վաղեցինք դեպի դռները: Կաղակների հետքը չեր մնացել: Միայն այնտեղ, վորտեղ կանգնել եր հեծելապարեկը, մնացել եր աղբի մի թարմ կույտ:

Մենք թռանք փակուղին:

— Ահա հենց այդ վազոնի տակ գտանք Պորֆիրին, — ասաց Վասկան Սեմյոնին, չնչափաւ լինելով վազքից, — իսկ այժմ Պորֆիրին ապրում ե ահա այնտեղ, այն ձեղնահարկում:

Մենք յեւարանով բարձրացանք ձեղնահարկը և կանգնեցինք փոսած հարթակի վրա:

Հազիվ ճանաչեցինք ձեղնահարկը: Բոլոր անցքերից դուրս ելին ցցվել ծղոտի փնջեր: Կարծես ծղոտը բուսել եր դռների ու պատերի վրա:

Անդրեյն արմունկով կամաց հրեց տախտակե դուռը: Դուռը ճռռաց:

— Ընկե՛ր Պորֆիրի... շշուկով կանչեց Անդրեյը:

— Դո՞ւք եք, տղանե՛ր, — հեռու անկյունից լավեց

մի խոստ ձայն:

— Կարմիր բանակայի՞նն ե, — հարցրեց ինձ Սենկան:

— Նա ինքն ե:

Սենկան ուզում եր առաջ քայլել, բայց Վասկան նրա զգեստից քաշեց:

— Սպասի՛ր, Սենկա, յես առաջ գնամ, թե չե նա կլախենա, յեթե ոտար մարդ տեսնի:

Յեվ Վասկան առաջինը մտավ ձեղնահարկը:

Նրա հետեից շարժվեց Անդրեյը, հետո յես, իսկ բոլորից հետո՝ Սենկան:

Պորֆիրին նստած եր ձեղնահարկի անկյունում, կծկված, կնգուղը գլխին քաշած:

— Այս յերիտասարդն ո՞վ ե, — կամաց հարցրեց նա՝ գլուխը դեպի Սենկան դարձնելով:

— Սա նույնպես կարմիր բանակային ե, — ասաց Վասկան: — Դա այն Սենկան ե, վորի մասին մենք քեզ ասել ենք: Դու նրան ել ջոկատում գրեցիր: «Ս. Վ.»: — Հիշո՞ւմ ես:

— Սենկա՞ն. ո՛ր, բարով, յեթե դու Սենկան ես: Բայց դու, արդարև, իսկական կարմիր բանակային ես — կոչիկնե՛րը տես: Ոհո՛, յեղբայր, ա՛յ թե ինչ ես դու:

— Նա ֆուֆայիկա ել ե ստացել, — ասաց Վասկան, — իսկ որական ել յերկու փաթեթ մախորկա ելին տալիս նրան:

— Պա՛, մի՞ թե յերկուական, — նախանձով հարցրեց Պորֆիրին:

— Ասոված վկա, — յերդվեց Վասկան, — նրան անդրաւարտիկ ել են տվել: Բամբակից: Նայի՛ր: — Յեվ Վասկան քաշեց Սենկայի վարտիկից:

— Դե ձեռք քաշի՛ր, — հրեց նրան Սենկան:

— Այսպես, — ժպտալով ասաց Պորֆիրին, — դե՛հ, զեկուցի՛ր, վո՞րտեղ ես յեղել:

— Ռազմաճակատում:

— Ահա՛ թե ինչ. ռազմաճակատո՞ւմ: Դե՛հ, նրա տի՛ր, պատմի՛ր մեզ՝ ի՞նչպես են այնտեղ ընկերները գլուխ թափում:

— Ո՛հ, ինչ դժվար ե մերոնց համար, ընկե՛ր կարմիր բանակային: Ի՞նչ դժվար: Ռուսներ բոլորովին չկան: Վերջին չորսն ել «Հաղթության»-ը հասցրին: Սուբբոտինը՝ մարտկոցի հրամանատարն առում եր — յերկուսից ավելի նրա վրա կորցնել վոչ մի դեպքում չի կարելի, թե չե, իբր թե, պաշար չունենք այլևս: Դե դասակի հրամանատարն ել իրեն չկարողացավ պահել: Խիզախ տղա յե: Բայց ուսմբերը — այս դեռ բոլորը չե... Իսկ տի՛ֆն այնտեղ... բծավորը: Հիվանդները պառկած են դիրքերում, կայարան-

ներում իրար վրա յեն թափթփված, վազոններում, ամեն տեղ...

— Իսկ ինչո՞ւ մեզ տիֆի մասին չես պատմել, — հարցրեց Վասկան:

— Մի՛ խանդարիր, Վասկա, մի՛ խցկվիր, — բռթեց նրան Անդրեյը: Ժողովրդից մեռնում են անթիվ անհամար... — ասաց Սենկան: — Անցյալ յերեքշաբթի 40 հոգի թաղեցինք: Յես ել եյի դնացել յեղբայրական դերեզման փորելու: Սարսափելի յե: Այժմ վորոչել են նահանջել: Ասում են՝ կու՛մա դետի հետեն են նահանջելու: Դիմանալու համար վոչինչ չկա: Ռուսներ ձեռք բերել վոչ մի տեղից չի կարելի: Իսկ վոր գլխավորն է՝ մարդիկ չկան:

Յես լսում եյի Սենկային ու մտածում — ի՞նչպե՛ս թե: Ինչքա՛ն կարմիր բանակայիններ կային: Չե՞ վոր յես ինքս տեսել եմ, յերբ եչելոններն ուղարկում եյին... Յեվ ջերմավազոնները լիքն եյին. դնում եյին ե՛կ՝ ձիերով, ե՛կ՝ ավտոներով... և հետևակները դնում եյին... Իսկ նա ասում է՝ մարդիկ չկան:

Յեվ հանկարծ ինձ այնպես թվաց, վոր այնտեղ, սեմաֆորի հետևում, հուրսավկայի կողմը, միայն մեռածներ են պառկած: Յեվ մեռածների մեջ քայլում ե քեռի Սուբբոտինը՝ բարձրահասակ, կիսամուշտակ հագած, կողքից կախած ծանր հրետանային թուրը:

Յես նայեցի տղաներին: Նրանք նստած եյին խոժոռված դեմքերով:

Չեղնահարկում հանդարտ եր, անհրապույր, խոնավ:

— Իսկ ինչո՞ւ դու Սորոկինի մասին չես պատմում, — ասաց վերջապես Վասկան:

— Իսկ Սորոկինը ի՞նչ, — ակնաջները սրեց Պորֆիրին:

— Դավաճանեց մերոնց: Ծախեց կարմիր բանակը: Սրիկան սպիտակ-գլարդիական սպա յեր, ահա թե ո՞վ դուրս յեկավ նա:

— Դավաճանե՞ց, — կրկին հարցրեց Պորֆիրին: Այդպես ել պետք եր սպասել: Կարմիր բանակայինները վաղուց եյին նրա մասին խոսում, իբր թե նա ռազմաթեւերից սպիտակներին ռուսներ ե ուղարկում:

— Իսկ այժմ ո՞վ պետք ե լինի հրամանատարը, — ասաց Վասկան և հոգոց հանեց:

— Յերևում է՝ դու պետք ե լինես, ել ուրիշ ո՞վ կա, — ասաց Անդրեյը:

— Դե կատակը մի կողմ դի՛ր, այժմ կատակների ժամանակ չե, — մոռաց Վասկան, — դուք, ընկեր կարմիր բանակային, ավելի լավ ե՛ մեզ ասեք, — դարձավ նա դեպի Պորֆիրին, — այժմ մենք ի՛նչ պետք ե անենք:

— Կկուլենք, — ասաց Պորֆիրին:

— Իսկ ինչո՞վ կուլել, քանի վոր մերոնք փամփուշտներ չունեն:

— Դուրս ե դալիս, վոր մենք ջոկատն իզուր ենք կազմել, — կամաց ասաց Անդրեյը: — Միևնույնն ե, կորած ենք:

Մենք գլուխներս բոլորովին կախեցինք: Յեթե Անդրեյն ե ասում՝ «կորած ենք» — այդ նշանակում ե, վոր իրոք կորած ենք: Կարմիրները չեն դա մեզ մոտ: Միչտ ել չկուրոյականները կլինեն: Բոլոր դեպոյականներին ել մեկ-մեկ կտանեն ու կզնդակահարեն:

— Տղանե՛ր, — հանկարծ բարձրաձայն ասաց Պորֆիրին:

Բոլորս դարձանք դեպի նա:

— Յես ձեզ կպատմեմ հետևյալ դեպքի մասին:

Մի ընկեր ունեյի յես: Ամենամոտիկ բարեկամ: Ստեփան եր նրա անունը: Մի անգամ Բելոմեչետկայի մոտ՝ դիրքերում պառկած ենք: Սպիտակներն ամեն կողմից չրջապատել են մեզ: Շղթան ճեղքելու հնարափորություն չկա: Այդ ամառ ժամանակ եր: Խոտն ել այնպես ծփում եր քամուց: Առաջներումս կաղնուտն է: Թշնամին թփերի արանքից մեզ լավ ե տեսնում,

իսկ մենք վոչինչ չենք տեսնում: Մենք յերեք հոգու
ուղարկեցինք հետախուզության: Նրանք խոտի միջով
սողում են առաջ: Հենց վոր պուրակին հասան, գնդա-
ցիրները ձուռացին: Այդպես ել նրանք այլևս չվերա-
դարձան: Նորից յերեք հոգու ուղարկեցինք՝ աջ կող-
մից ճանապարհ փնտրելու: Սաղաղ եր, ինչպես ահա
այժմ: Սպասեցինք մենք նրանց, սպասեցինք, նրանք
նույնպես չվերադարձան, չնայած կրակոցներ ել չե-
ղան: Յերևի նրանց կենդանի բռնեցին: Յերեքին ել ու-
ղարկեցինք դեպի ձախ: Նրանք հազիվ քառասուն քայլ
եյին առաջ սողացել, յերբ նրանց տեղն ու տեղը գըն-
դակահարեցին: Այն ժամանակ մենք վորոչեցինք մի-
անգամից վեց մարդ ուղարկել: Այդպես նաև նրանք
չվերադարձան:

«Սպիտակները մեզ նեղում եյին յերեքտակ շղթա-
յով: Այդպիսի կրակ յես յերեք չեյի տեսել: Մեր
չորս կողմում ամբողջ հողակտորներ եյին վեր բարձ-
րանում և անձրևի պես մաղում մեր գլխին:

«Ե՛հ, ի՞նչ անենք, ճեղքե՞նք, թե անձնատուր լի-
նենք,— հարցնում ե ինձ Ստեփանը:

«Իսկ դու կարծում ես, վոր քեզ կենդանի կթող-
նե՞ն, յեթե անձնատուր լինես,— ասում եմ նրան:—
Միևնույնն ե, վե՛րջ:

— «Ե՛հ, նշանակում ե այդ դեպքում պետք ե
ճեղքել: Վե՛ր կաց:

«Վեր կացալ Ստեփանը—մի ձեռքում նոնակը,
մյուսում՝ հրացանը: Գնում ե ամբողջ հասակով, ա-
ռանց կռանալու»:

— Քեռի Պորֆիրի, նա մենակ գնա՞ց,— հարցրեց
Վասիկան:

— Հենց բանն այն ե, վոր միայնակ: Բոլորը պառ-
կած եյին զիբքերում: Ինչ—վոր բանի եյին սպասում:
Մինչև անգամ Ստյոպկայի վրա բարկացան, վոր նա
հաստատապես մեռնելու յե գնում:

«Ահա, ասում են,— և ինքը կկորչի, ու մեր ել
վերջն ե,—կիմանան մեր տեղը և բոլորիս կկոտորեն»:

«Մեկ ել, տեսնում ենք,—մեր Ստյոպկան ընկավ
ձախ վտարի վրա: Հետո բարձրացավ, յետ դարձավ
դեպի մեզ և ուսմբը թափահարեց:

«Դո՛ւրս գալ»—ճչաց նա: Յեվ նա ուսմբը շարտեց
առաջ: Իսկ ինքն իբր թե սայթաքեց, նստեց: Այստեղ
մեր աջ թևից գոռացին՝ «Ո՛փեք շկուրոյականներին:
Առա՛ջ ձախ թևից»:

«Յեվ բոլորս վազեցինք: Յես հասա Ստեփանին,
դեռ ցնցվում եր. գլուխը տարուբերում:

«Ել նրանց չտեսա յես: Կաղնուտի յեզրի մոտ քան-
դեցինք մենք հակառակորդի հրակետերը, իսկ հետո,
չթողինք նրանց նստելու, քչեցինք շկուրոյականներին
հենց մինչև գետը: Յետ դառնալ այլևս միտք չունեի:
Այնպես ել չգիտեմ, ո՛վ ե վերցրել իմ ընկերոջ դիակը
և վորտեղ թաղել նրան: Միայն պարզ ե, վոր կենդանի
չե, այլապես նա վորևե տեղից լույս աշխարհ կընկներ»:

— Քեռի՛ Պորֆիրի,— հարցրեց Վասիկան,— իսկ
նա, քո ընկերը, վորն առաջին անգամ դիրքերից դուրս
յեկավ, յերևի առողջ, ենպես բարձրահասակ եր, հա՞:

— Վո՛չ, բարձրահասակ չե՛ր—ասաց Պորֆիրին,—
այլ բոլորովին կարճիկ, ահա այդպես, ինչպես դու,
Վասյա, միայն ավելի լայն ուսերով... ահա տեսնո՞ւմ
եք, տղանե՛ր, այն ժամանակ մեզ հաստատ թվում եր,
վոր մեր վերջը հասել ե, բայց տեսե՛ք՝ դուրս պրծանք:
Նշանակում ե՛ այժմ ել դուրս կգանք: Միայն պիտի
չհուսահատվել և հիշել, վոր դու մենակ չես:

— Քեռի՛ Պորֆիրի,— ասաց կրկին Վասիկան,—
իսկ ինչո՞ւ նա մենակ գնաց:

— Նա, ո՞վ:

— Ձեր ընկերը, Ստյոպկան:

— Հենց նրա համար, վոր մենք սկզբում, ի՞նչպես
քեզ ասեմ... մի քիչ վախեցանք: Յեթե բոլորս միան-
գամից գնայինք, գուցե և նա կենդանի մնար ու հակա-

ուակորդին ել շուտով հաղթեցինք: Կովի մեջ չե՞ վոր
ամեն մի րոպեն թանդ ե: Ահա և այժմ չպետք ե քնել:
Վոչինչ, յեթե բանակը նահանջում ե: Նա դեռ կվերա-
դառնա և սպիտակներին այնպես կքշի, ինչպես մենք
քշեցինք նրանց Բելոմեչեակայի մոտ: Իսկ մենք այս-
տեղ ել պետք ե պատրաստվենք լավ դիմաժուրելու, թե
գյուղականներին և թե դեպոյականներին պետք ե հա-
վաքել ու մի տողան կազմել:

Յես միանգամից պատկերացրի, թե ինչպես քայ-
լում ենք յերկա՛ր, յերկար տողանով, շարքեր ենք կազ-
մում 2-ական, 4-ական: Մենք արդեն ջահելներ չենք,
այլ մարտական կարմիր բանակայիններ: Բոլշեվիկներ:
Ծանր հրացանը կտրում ե ուսս, յես ուղղում եմ և
ձգում փոկը:

Մենք Կուբան ենք գնում, ճանապարհով:

Հողը ճոնչում եամուր կոչիկների համաչափ քայ-
լերի տակ: Զրնգում են կաթսաները, մեր գոտիկներից
կապած:

Մոտենում ենք գետին: Ամառային քամին բերում
ե յեղեգնուտի խոնավ հոտը: Ամառայի՛ն: Գրողը տա-
նի— ի՞նչ ամառային... ձյունն առաջվա նման չոր փա-
թիլներով ծեծում եր ձեղնահարկի կտուրն ու մանր փո-
թիկներով ներս թափանցում բոլոր ճեղքերով: Մեր
կարմիր բանակայինը նստած ե՛ կռացած, սառած ձեռ-
ները թեքերի մեջ խրած, իսկ նրա առաջ կանգնած ենք՝
Սենկան, Անդրեյը, Վասկան ու յես:

XX Գ Լ Ո Ի Ե

ԽՃԱՔԱՐՈՎ ԶԵՊԸՆԹԱՅԸ

Յեկավ իսկական ձմեռը՝ քամիներով, բուք ու բո-
րանով: Յերբ արոտավայրով ստանիցայի դպրոցն ես
գնում, քամին պոկում ե վրայիցդ կիսամուշտակը,
գուրս կորզում ձեռքիցդ պայուսակը: Գնում ես,
գնում ու շուռ գալիս, վորպեսզի շունչ առնես:

Ճիշտ ե, մենք հաճախ չեցինք գնում դպրոց՝ յեր-
կու շաբաթը մի անգամ, յերբեմն ել ավելի ուշ-ուշ:
Յեվ ի՛նչ ուսում կարող եր լինել, յերբ դպրոցին դեմ
ու դեմ, գյուղական յեկեղեցու և ատամանական վար-
չուլթյան կողքին սե սյունների արանքում կախված ճո-
ճում եյին մեռածները՝ յերբեմն մեկ, յերբեմն ել հըն-
գով: Իսկ այդ սյունները սե եյին նրա համար, վոր
ինչ-վոր բանի համար կուպր եյին քսել:

Իմ դասարանի պատուհաններից կախաղանը լավ
եք յերևում: Յերբ քամին ուժեղ եր փչում, մեռելները
ճոճվում եյին, կարծես իսկական ճլորթիների վրա լի-
նեյին: Սարսափելի յեր նրանց վրա նայելը: Մի անգամ
ել, թվաբանության դասին, մեր աչքով տեսանք՝ ի՛նչ-
պես են կախում: Միրքավոր կազակներն ատամնական
րակից քշում եյին տաս այլաքաղաքացիների և մեկը
մյուսի հետևից բոլորովին մերկացնում նրանց: Բոլորս
ել ուշադրություն չգարձնելով Ալեքսանդր Իվանովի-
չի՛ մեր ուսուցչի բղավոցները վրա՛ բարձրացանք պա-
տուհանի լայն գոգի վրա և այնտեղից դիտում եյինք,
թե ինչպես ճարպիկորեն ու աշխույժ կախում եյին
մարդկանց, իջեցնում ու դնում սայլակառքի վրա:

Տանը մենք այդ բոլորը պատմում եյինք մեր ծը-
նողներին: Մայրս մինչև անգամ մինչև վերջը չեք
լսում և այդ որվանից դադարեց մեզ դպրոց ուղարկել:

Ինձ համար, իհարկե, այդ շատ ձեռնտու յեր: Յես
ու Վասկան ամբողջ որերով թրև եյինք գալիս բակում,
ճեղապարսատիկով ազոպլներ խփում, կամ սահնակ-
ներով նկուղի կտրից սլում եյինք մինչև բաղնիքը:

Մի անգամ ձնե մարդ եյինք շինում: Սկզբում
ձյունը գլորելով կազմեցինք մի հահադին, կոշտուկնե-
րով գունդ՝ մարմինը: Մարմնին սարքեցինք մի տա-
փակ գլուխ: Գլխին հագցրինք մի պատառոտված սե
փափախ, վոր աղբի արկղումն եյինք գտել: Փափախի
տակից, ճակատի վրա կախված եր մի սպիտակ ժայա-

վեն: Աչքերի փոխարեն յերկու ածխակտոր էյին դուրս
ցցվել: Ուտերի վրա՝ տախտակից ուսադիրներ: Բերա-
նում՝ սիգարետ:

Մի խոսքով՝ իսկական մի սպիտակ-գլարդիա-
կան դուրս յեկավ, են հաստ յեսաուլի նման, վոր հա-
ճախ ձիով անց եր կենում մեր փողոցով:

Յերբ մեր յեսաուլը պատրաստ եր արդեն, վաս-
կան հանկարծ վորոչեց նրան գնդակահարել, բայց յես
չթողեցի:

— Նա դեռ փափուկ է, — ասացի յես, — ձեռք մի՛
տուր: Դեռ ժամանակ կունենանք գնդակահարելու,
թող սառչի, ինչպես վոր պետքն է:

Հետեյալ որը, յերբ մեր յեսաուլը ցրտից պնդացել
ու հնչուն եր դարձել, մենք քարեր հավաքեցինք ու
գործի կպանք:

— Յես իսկույն նրա քթի՛ն եմ տալու, — աղաղա-
կեց վասկան: — Նա յես գնաց, աչքը կխախուսի նայեց,
բարձրացրեց ձեռքը և աղյուսի կտորը շարեց գեպի
յեսաուլի գլուխը:

— Վերև անցավ, — ասաց նա: — Ախր լավ թափ չա-
ռա: Դե՛հ, արի, հերթով: Յես նորից յերեք քար նե-
տեմ, հետո դու ել յերեք հատ, հետո յես յերեքը...
հետո յերեքը դու...

Առաջին յերեք քարերով վասկան ճանկուեց ուտը և
պապիրոսը գցեց: Յես ուսադիրն ու ձեռքը գցեցի:
Միայն գլուխը վոչ մի կերպ չեք ընկնում: Սառել ու
ամուր կպել եր մարմնին:

Սկզբում յես ու վասկան հերթ էյինք պահում, հե-
տո այնպես վողեորվեցինք, վոր յեսաուլի վրա
չտապ կրակ բաց արինք — յերկուսով ել խփում էյինք՝
վորտեղ պատահում եր: Յեսաուլը թջի նման զըըն-
դում եր:

Հրետանային կովի ամենայնուս ժամանակ բա՛լը
մտան Սենկան ու Անդրեյը:

— Ե՛յ դուք, ձերոնց չդիպցնե՛ք, — ձայն տվեց Անդ-

րեյը, խուլս տալով վասկայի խճաքարից, — հերիք է
իզուր քարեր շարեք: Յես ավելի՛ կարևոր գործ ու-
նեմ: Գնանք նկուղի հետևը:

Մենք թողինք յեսաուլին և գնացինք Անդրեյի
հետևից: Ճանապարհին վասկան ել չհամբերեց, թափուվ
տվեց ու յեսաուլի գլուխը թռցրեց:

— Ե՛հ, բանն ի՛նչ է, ասա՛, — ասացի յես Անդրե-
յին, յերբ արդեն նստել էյինք ներքնատան թեք կտրի
վրա:

— Ահա թե բանն ինչ է, — ասաց Անդրեյը: — Յես
կայարանում էյի և լսեցի, վոր «Հաղթություն»-ի վե-
րսնորդումն ավարտվել է: Ուղեվորովում են կարմիր-
ներին հալածելու:

— Հետո ի՞նչ. — հարցրեց վասկան:

— Այն, վոր մերոնք առանց այն ել նահանջում են,
իսկ այժմ ել գրահապատ են ուղարկում հետապնդելու:

— Շտապենք Պորֆիրիի մոտ, — ասաց վասկան, —
նա կարող է վորևէ բան մտածել:

— Ի՞նչ կարող է անել, — ընդհատեց նրան Սեն-
կան, — ումբեր կամ գրահապա՞տ ունի... Չե՞ վոր
«Հաղթությունը» դատարկ ձեռներով չես կարող
վերցնել:

Այդ ժամանակ ցանկապատի դուռը թրխկաց և բակը
մտավ փականադործ կորնելյուկը: Նա չորս կողմը
նայեց, ցանկանում եր սրահը մտնել, բայց հետո թեք-
վեց գեպի ձախ — գեպի վասկայենց բնակարանը:

— Ոհո՛, ի՞նչ է պատահել նրան, — փսիսաց Սեն-
կան, — ամբողջովին մազուլթ է: Առանց գլխարկի...
վորևէ բան չի՞ պատահել արդյոք:

— Յերևի դեպոյում վորևէ մեկին նորից թխկաց-
րել են... ասաց Անդրեյը:

Կորնելյուկի հետևից ներս մտան բակը Ռեպկոն և
Իլյա Ֆեոդորովիչը: Գալիս նրանք զրուցում էյին: Իլ-
յա Ֆեոդորովիչը խոսում եր հանդարտ, չրթունքներով
միայն, իսկ Ռեպկոն՝ ամեն մի խոսք բացականչելով:
Նրա ասածը հասկանալ չեք լինում:

— Գնանք իմանանք, թե ինչ է պատահել, — ասաց Անդրեյը: Վասկայենց նախասենյակում մուժն եր: Դուռը կիսաբաց արինք և զգուշությամբ միմյանց հետեվից ներս մտանք սենյակը:

Կորնելյուսը կանգնած էր սեղանի մոտ և մի հաստ յերկաթալար էր բաց անում: Ռեպկոն, կռացած լուսամուտի ներքնատախտակի մոտ, շուռ ու մուռ էր տալիս ինչ-վոր ուրվագիծ:

— Նայի՛ր այստեղ, — ասաց նա Իլյա Ֆեոդորովիչին, — ահա Բոնդարենկոյի տնակը, իսկ ահա այստեղ զառիվայր ե... .

— Տեսնում եմ, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը, — մի քիչ սպասի՛ր: Այս յերեխաներն ինչո՞ւ յեն լցվել այստեղ:

Մենք բոլորս էլ յետ-յետ գնացինք դեպի դռները: Միայն Անդրեյն առաջ անցավ և ասաց.

— Քեռի՛ Իլյա, իսկ դու գիտե՞ս, վոր «Հաղթությունը» դուրս է գալիս դեպի Կուրսավիկա:

— Այ քեզ սատանաներ, — սկսեց ծիծաղել Իլյա Ֆեոդորովիչը, — մեզնից շուտ են ամեն բան իմանում. դե լավ, մնացե՛ք: Միեկունն է, ձեզնից վոչ մի տեղ թողնվել չի կարելի, իսկ դու, Գրիշա, թո՛ւր հորդ հետևից: Ի՞նչ է քչիորում նա այնտեղ՝ առվում:

— Վ՞որ առվում:

— Դեպոյում:

Գնդակի նման սլացա արհեստանոց: Հայրս վազոնի տակ կռացած՝ մուրճով հարվածում էր զսպանակին:

Յես սողացի անվի տակ՝ հորս մոտ:

— Իլյա Իվանովիչ, — փսփոսացի յես, — քեզ Իլյա-Ֆեոդորովիչը կանչում է, շուտ արի՛:

Հայրս նորից մի քանի անգամ թխկացրեց մուրճով և զգուշությամբ վազոնի տակից դուրս սողաց:

— Իսկ ինչո՞ւ յեն իրարանցում բարձրացնում:

Միշտ արտակարգ բաներ... .

Նա առանց շտապելու հավաքեց գործիքները և յե-

կավ իմ հետևից: Յերբ մենք մտանք բակը, Իլյա Ֆեոդորովիչը սրահից դուրս էր բերում մի բուռը գնդերիթներ:

— Յերկար ես սպասեցնել տալիս, — ասաց նա հորս:

— Ավելի շուտ չկարողացա, — պատասխանեց հայրըս մոայրորեն, — պետք էր զսպանակն անպայման փոխել: Մի թարս վիճեց էր պատահել, վոչ մի կերպ յետ չէր պտտվում: Յե՛վ այսպես փորձեցի, և՛ այնպես, և՛ մուրճով, և՛ հատիչով: Չի դուրս գալիս անիծվածը:

— Իսկ դու կթողնեյիր: Ինչո՞ւ համար են քո այդ ջանքերը:

— Յեվ թողեցի, — ասաց հայրս:

Իլյա Ֆեոդորովիչի սենյակում կիտված էյին մեծ քանակությամբ ամեն տեսակ գործիքներ՝ բաժանաբար բանալիներ, լոմեր, գնդերիթներ, պտուտակներ: Վասկան վոտքի թաթերի վրա նստած գնդերիթներից հանում էր պտուտակները:

— Իսկ ո՞ւր են Անդրեյն ու Սենկան, — հարցրի յես:

— Պորֆիրին կանչելու յեն գնացել, — շշնջաց Վասկան. — իսկույն կբերեն նրան: Իսկ ի՞նչ բաներ են կատարվում այստեղ: Գիծը պայթեցնել են ուզում... .

— Իսկ ինչո՞վ են ուզում պայթեցնել:

— Վորեն բանով կպայթեցնեն, ելի՛:

— Իսկ գործիքներն ինչո՞ւ համար են:

— Ական պատրաստելու:

— Ական, — հարցրի յես, — այդ դեպքում գնդերիթներն էլ ինչի՞ յեն պետք:

Վասկան վոչինչ չպատասխանեց:

— Այդ ժամանակ դուռը բացվեց և Անդրեյի ու Սենկայի հետ ներս մտավ Պորֆիրին:

— Բարև ձեզ, քեռի՛ Պորֆիրի, — ուրախացավ Վասկան:

— Դու ե՞լ ես այստեղ, — հարցրեց նրան հարևան-
ցիորեն Պորֆիրին:

Պորֆիրին խսկույն շրջապատեցին Իլյա Ֆեոդորո-
վիչը, Ռեպկոն, Կորնելյուկը, հայրս: Սկսեցին կիսա-
ձայն խոսել: Ռեպկոն բռնել եր իր առաջ բացված հա-
տակագիծը և մատով նրա վրա ցույց եր տալիս:

— Ահա այստեղ վերելք ե, — ասում եր նա. —
նշանակում ե պետք ե վորոշել՝ վո՛րտեղ բաժանել:

— Պարզ ե, Բոնդարենկոյի տնակի մոտ, — ասաց
Կորնելյուկը: — Այսոր ևեթ գիշերով գնանք:

— Բոնդարենկոյի տնակի մոտ բան չի դուրս
գա, — ասաց Ռեպկոն: — Նայի՛ր, վերելքն այստեղ ի՞նչ
մեծ ե: Շոգեքարչն առաջամասով հենց ցցվեց, անմի-
ջապես կկանգնի: Իսկ յեթե և խճաքարի մեջ մտնի
վազկաններով, յերկա՞ր կտևի Նեվինկայից բանվոր-
ներ կանչելը: Դոմկրատներով կբարձրացնեն, հետե-
վից ձիգ կտան, և ամեն ինչ ելի կարգին կլինի:

— Լավ, իսկ յեթե ավելի ներքև՝ ահա այստեղ
բաժանե՞նք:

— Ավելի ներքև թեքությունը փոքր ե: Արագու-
թյուն վերցնել չի կարող: Պետք ե դեպի ներքև այն-
պիսի անկյուն ընտրել, վոր նա գրողի ծոցը թռչի 70
կիլոմետր՝ առանց շունչ առնելու:

— Իսկ ավելի ներքև՝ ե՛լ ավելի վատ, — ասաց
Կորնելյուկը:

— Կարծո՞ւմ ես, — հարցրեց Իլյա Ֆեոդորովի-
չը: — Յերևում ե՛ լա՛վ հասկացար: Յեվ դեռ յերկա-
թուղայի՞ն ե: Դե՛հ, այստեղ նայի՛ր: Ահա Կիան կա-
յարանը և ահա 17-րդ վերստը: Հը՞, այստեղ թեքու-
թյուն կա՞, թե վոչ: Դե հենց եդ ե՛, յերկար... Հենց
այստեղ ել պե՛տք ե բաժանել:

— Ճիշտ ե, ուրխացավ Ռեպկոն: — Այստեղ շատ
պարզ կերպով կարելի յե դառիվայրով ցած գցել:
Միայն մի ուերս ե հարկավոր շուռ տալ:

— Նշանակում ե՛ վորոշեցի՞նք, — հարցրեց Պոր-
ֆիրին — 17-րդի մոտ: Դե ել ի՞նչ, այդպես ել կանենք:

Այդ ժամանակ նախասենյակի դուռը թակեցին:
Բոլորն ել ականջները սրեցին: Ռեպկոն նախագիծը
գրպանը դրեց:

Դուռը յերկրորդ անգամ թրխաց:

— Քամին ե այդ, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը:

Ռեպկոն գրպանից հանեց նախագիծը:

— Դե՛հ, ո՞վ ե գալիս 17-րդ վերստը, — հարցրեց
Պորֆիրին:

— Յե՛ս, — ձայն տվեց Ռեպկոն. — Բայց բոլորն ել
կգան:

— Վո՛չ, — ասաց Պորֆիրը: — Բոլորը չեն կարող:
Ձեզ՝ դեպոյականներիդ այստեղ չորս աչքով են հետե-
վում:

— Ութ աչքով, — ասաց Կորնելյուկը: — Ինձ ամեն
որ ջրհորից մինչև ուղիղ իմ բնակարանը հետևում են:
Մի ցնցոտիավոր ե, դեմքից ել ճանաչում եմ: Մինչև
անգամ բարևում եմ, յերբ պատահում ենք:

— Ըհը՛, նշանակում ե՛ դու չպետք ե գաս: Իսկ
մյուսներն ի՞նչպես են:

— Մյուսները, — կրկին անգամ հարցրեց հայրս: —
Մյուսներին ել են հետևում: Մանավանդ, յերբ դեպո-
յականները գործիքներով գծերի վրա թափառեն: Ամեն
ժի պահակ կհետաքրքրվի՝ ի՞նչ սատանայական բան
ե — իբր թե, — վոր դեպոյականները թափառում են
գծերի վրա: Այնտեղ չե՞ վոր իրենց բանվորներն են
ուղեւապասավորները:

— Այդպես, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը, — նշա-
նակում ե՛ բանը հենց գործի հասավ, ել գնացող
չկա...

— Գրողը տանի նրանց, — բղավեց Ռեպկոն՝ պա-
տից ընկածի պես, — թող հետևեն, միևնույն ե, ճա-
նապարհը կբաժանենք: Թեկուզ հենց հիմա, յես պատ-
րաստ եմ... Դու ել, Իլյա՛ Ֆեոդորովիչ, տանը նստող
չես:

— Մի՛ շտապիր, — ընդհատեց նրան Պորֆիրին: —

Առաջինը հենց քեզ աչքի տակ ունեն նրանք: Ամբողջ գործը կարող ես փչացնել: Իսկ մենք ահա թե ի՛նչպես կանենք: Յես մենակ կերթամ: Այստեղ ինձ վոչ մի շուն ել չի ճանաչում: Եդ առաջինը: Ինձ համար միևնույնն ե, ձեզնահարկում, թե դժերի վրա կորչել,— այս ել յերկրորդ: Իսկ վոր ամենից ճիշտն ե, յես չեմ ել կորչելու:

— Իսկ յեթե մեկը քեզ դժերի վրա բռնի՞, ի՞նչ ես ասելու,— հարցրեց Կորնելյուսը:

— Գործիքներս ցույց կտամ,— ահա բոլորը:— Գծի աշխատող եմ — իբր թե,— սեւագործ բանվոր, կալուզայից այսոր եմ յեկել:

— Բայց դու մենակ մի՞ թե կարող ես գործը գլուխ բերել,— ասաց Ռեպիոն,— գործիքներն ել չես կարող մենակ տանել: Քեզ չե՞ վոր ե՛լ լո՞մ ե հարկավոր, ե՛ պտուտակաբանալի, ե՛ կոտն, ե՛ պնդողակներով գնդերիթներ: Իսկ այդ բոլորը պետք ե ամբողջ 17 վերստ, սարից—սար քաշ տալ: Տեղումն ել ոգնություն ե պետք՝ յերբեմն պտուտակը հանել, յերբեմն պահել, մեկ—մեկ լո՞մը տակից հագցնել, մերթ մուրճով հարվածել...

— Ընկե՛ր Պորֆիրի, — ասաց Անդրեյը:

Բոլորը յես դարձան դեպի նա: Անդրեյը մեզ հետ միասին կանգնած եր դռների մոտ և վաղուց եր փորձում ինչ—վոր բան ասել, բայց նրան չէյին լսում:

— Ընկե՛ր Պորֆիրի, իմ յեղբայրը դժի վրա աշխատում ե...

— Ե՛հ, հետո ի՞նչ,— հարցրեց Պորֆիրին:

— Ահա թե ինչ: Յես նրան մի քանի անգամ գործիքներ եմ տարել դժի վրա... նշանակում ե՛ այժմ ել բոլորովին ազատ կերպով կարող եմ տանել:

Պորֆիրին նայեց Իլյա Ֆեոդորովիչին:

— Այդ ճիշտ ե, վոր նրա յեղբայրը դժի սպասուվոր ե,— ասաց Իլյա Ֆեոդորովիչը:— Թերևս խելքը գլխին բան ե առաջարկում:

— Այն ժամանակ և ինձ վերցրե՛ք,— ասացի յես,—

յես ու Անդրեյը միշտ միասին ենք դնում դժի վրա:

— Իսկ ինձ ավելի ես,— ձայն տվեց Սենկան:— 17-րդ վերստի պահակն ինձ ծանոթ ե: Նա ինձ չի մատնի: Յես նրա մոտ ե՛լ գիշերել եմ, ե՛ թեյ խմել, յերբ ուղղաճակատ եյի վազում:

Պորֆիրին ժպտաց:

Դե լավ, այդպես ել կանենք: Առաջ յես կգնամ, իսկ տղաները իմ հետևից գործիքները կբերեն:

— Յես՝ լո՞մն ու մուրճը,— ասաց Անդրեյը:

— Իսկ յես բաժանարար բանալին,— կամաց ասաց Վասկան:

— Քեզ հո չեն տանում:

— Ի՞նչպես թե չեն տանում,— զայրացած վրա տվեց Վասկան:— Յես չե՞ վոր և հրացանները...

— Լո՛ի՛ր,— սաստեց նրան Անդրեյը:

— Յես լռում եմ,— ասաց Վասկան,— իսկ ինչո՞ւ ինձ ել ձեզ հետ տանել չեք ուզում:

— Իսկ ինչո՞ւ հենց ինքդ Պորֆիրիին չես խնդրում:

Վասկան գլխով արեց դեպի հայրը և հենց ապանջիս ասաց.

— Յեթե խնդրեմ ել, միևնույնն ե, չեն թողնի: Դեռ փոքր ես,— կասեն: Ավելի լավ ե՛ ձեր հետևից դամ:

Յերբ բոլորովին մթնեց, մենք հավաքվեցինք բա՛կը՝ Վասկայենց բնակարանի մոտ: Իլյա Ֆեոդորովիչը գործիքները դուրս եր բերում և մթության մեջ մեզ եր տալիս:

— Սրանով ահա կուարեւեները դուրս քաշել: Իսկ եդ բանով գնդերիթները յետ պտտել: Բայց թեթե սեղմեցե՛ք, թե չե տեսնում եք՝ կոթը թուլլ ե, կիտարովի:

Բայց մենք վոչինչ չէյինք տեսնում:

Յերկինքը սև եր: Վոչ միայն բեւեռները, մենք բակի տներն ել չէյինք տեսնում:

— Այսոր մենք Անդրեյի մոտ կգիշերենք,— ասա-

ցի յես Իլյա Ֆեոդորովիչին, — հորս հայտնեցե՛ք:

— Լա՛վ, կհայտնեմ:

— Իսկ յես կարո՞ղ եմ նրանց հետ միասին Անդրեյի մոտ գիշերել, — հարցրեց Վասիան բարակ, փաղաքշահան ձայնով:

— Իսկ դո՞ւ ինչու համար Անդրեյի մոտ գիշերես, — հարցրեց Իլյա Ֆեոդորովիչը:

— Հենց ենպես, ցանկանում եմ, — յերկարացրեց Վասիան:

— Լավ, յեթե ցանկություն ունես՝ ի՛նչ արած: Գիշերի՛ր:

Մենք խիուշն հասկացանք, վոր նա՛ գուշակում է, թե ի՛նչ է հետապնդում Վասիան:

Իլյա Ֆեոդորովիչը ավեց մեզ վերջին պնդողակի բանալին, հրաժեշտ ավեց Վասիային, մեզ բոլորիս և տուն գնաց:

Իսկ մենք նետվեցինք փողոց: Բոլորից առաջ թռչկոտելով վազում եր Վասիան: Նրա գրպանում պնդողակները բարձրաձայն աղմկում էյին:

— Պահի՛ր նրանց ձեռքով, — ասաց նրան Անդրեյը, — թե չե ամբողջ փողոցը դղրդում է, կարծես զավալ լինի:

Պնդողակները միանգամից հանդարտվեցին, բայց այս անգամ էլ բանալին զրնգոցով ընկավ սալահատալի վրա:

— Բացրերան, — մրթմրթաց Անդրեյը, — ի՞նչ ես սնում — ամբողջ գործը խորտակե՞լ ես ուղղում: Յեթե մի անգամ էլ զրնգացրել ես վորևե բանով, յես քեզ այս բուպեյիս յետ կուղարկեմ ատեն:

Վասիան բարձրացրեց բանալին և առաջ գնաց այնքան կամաց, վոր նրա քայլերի ձայնն էլ չեր լսվում:

— Վասիա, դու այտե՞ղ ես, — հարցրի յես վերջապես:

— Այտեղ եմ, — շուկով պատասխանեց Վասիան: Մենք անցանք կայարանի մոտով: Աջ կողմում, հեռու — ներքևում վառվում էյին գյուղի հատ ու

Պէնտ ճրագները: Նրանք հանդչում էյին մեկը մյուսի հետևից: Տնակները սեանում էյին, ինչպես խոտի գեգերը տափաստանում:

Բարձր պարսպի մոտ, վորի հետևում գտնվում էր մեզ ծանոթ փակուղին, մեկը ձայն ավեց մեզ:

— Տղանե՛ր, դո՞ւք եք:

Դա Պորֆիրին եր: Նա Անդրեյի ձեռքից վերցրեց լումը, իսկ Սենկայից՝ մուրճը և լուռ, փակուղու ուղիներին վրայով տարավ մեզ դեպի իր ձեղնահարկը: Փակուղում ավելի մութն եր, քան թե փողոցում: Մենք սայթաքում էյինք կոճափայտերին դիպչելով, վազոնները վրա ընկնում:

— Ահա և հասանք, — ասաց Պորֆիրին: — Դարսեյե՛ք գործիքներն այտեղ, յելարանի տակ:

Մենք կամաց գետնի վրա դրինք մեր բեռը:

— Յեկե՛ք լուսարացից առաջ, — ասաց Պորֆիրին և աննկատելիորեն բարձրացավ սանդուխքներով իր ձեղնահարկը:

Իսկ մենք թեթևացած՝ արագ անցանք մեր հանապարհը փակող պլատֆորմների ու վազոնների միջով ու արշավակի սլացանք փողոցով, ինչպես մի կայտառ քառաձի կառք:

Տանը Անդրեյը հատակի վրա փռեց հին, բամբակե վերմակը և նետեց նրա վրա յերեք խայտաճամուկ բարձ:

— Պառկեցե՛ք, տղաներ: Միայն քնով չընկնե՛ք, — փնթփնթաց նա դեպի մեզ և հենց պատի տակ պառկեց: Մենք նույնպես առանց հանվելու փովեցինք նրա՝ մոտ՝ կողք-կողքի տված:

Ինձ ու Վասիային մի բարձ հասավ: Մենք յերկար ժամանակ կամ ճակատներս էյինք թխկացնում իրար,

կամ ծոծրակներս, մինչև վերջապես Վասկան քնեց: Սենկան ու Անդրեյը փախում էյին: Հետո Սենկան բռունցքը դիւխ տակ դրեց ու նույնպես քնեց:

Անդրեյը մի քիչ լուռ պառկեց և հարցրեց.

— Գրիշկա, դու քնած ես:

— Սկսում եմ նիրհել, — ասացի յես:

Անդրեյը նորից լռեց, հետո Սենկայի վրայում ծովեց և շնջաց.

— Պառկել ու մտածում եմ, ահա թե յե՛րբ և սկսվում մեր իսկական աշխատանքը: Սա արդեն խաղաղիք չէ, այլ մարտական մի դործողութուն: Յեթե միայն այս աշխատանքը հաջող անցնի, այն ժամանակ մենք մեր ջոկատով ուղիղ դեպի ուղիմաճախատ ենք շարժվելու: Միայն մեր ջոկատին պետք է փորձե՛ս առնուն մտածել... պատանեկակա՞ն բանակ, թե ի՞նչ... վո՛չ, այլեւի՛ լավ է՝ յերիտասարդական բանակ... Յե՛րիտարանակ:

Չեմ հիշում, ով այլելի շուտ քնեց, յե՞ս, թե Անդրեյը:

Շուտով, կարծես թե քնի մեջ լռեցի, թե ինչպե՛ս կողքիս տակ Վասկան սկսեց դես ու դեն ընկնել:

Նա խթեց իմ կողքը և ձեռքը պարզեց Անդրեյի՛ն դարթեցնելու:

— Վե՛ր կացեք, հասանք:

Անդրեյը վեր թռավ, գոտին ձգեց և բռնելով վերմակի՛ ծայրը, վորի վրա մենք քնած էյինք, ամբողջ ուժով թափահարեց:

Յես ու Անդրեյը հանկարծ մեզ գետնի վրա գլա՛ցինք: Կամա-ակամա ստիպված էյինք վեր կենալ:

— Ինչո՞ւ այդպես շուտ սկսեցիք շուռումուռ գալ, — ասաց Սենկան խուստ, քնկոտ ձայնով:

— Դե՛հ, քնի՛ր, քնի՛ր, — ասաց Վասկան, իսկ մենք կզնանք:

Անդրեյը տարավ մեզ ցուրտ նախասենյակը, վոր-

տեղ դրված էյին ջրով յերկու դուլլ: Ջրում լողում էյին սառցի հաստ կտորներ:

— Լվացվեցե՛ք, — ասաց Անդրեյը:

Վասկան մեկ այս դուլլին նայեց, մեկ այն, կծկը-վեց ու ասաց.

— Ինչ-վոր ցանկութուն չունեմ:

Այդպես ել նա չլվացվեց: Մյուսներն ել կիսաապուստ, մի քիչ թրջվեցին սառցաջրով և վերջացավ:

— Ժամանակ է դուրս գալու, — ասաց Անդրեյը և ամբեց մեզ մի-մի կտոր հաց և 7-ական հատ ել փամփուշտ:

Յերբ մենք բախը դուրս յեկանք, որը դեռ բոլորովին գորշագույն էր: Ամբողջ փողոցով սահուկել կաքելի յեր, այնպես սառել էր սալահատակը:

Մենք դժվարությամբ հասանք մինչև փակուղին, միշտ այս ու այն կողմ թեքվելով ու թեկներս թափահարելով, վորպեսզի վայր չընկնենք:

Ավելի դժվար էր աստիճաններով բարձրանալը:

Մենք յերկու ձեռքով կառչում էյինք յերերսեն ճաղաչարքից ու հազիվ մազլցում պաղած ու սառցափշտուկներով ծածկված աստիճաններով:

— Պորֆիրի, վե՛ր կաց, — ասացի յես՝ գլուխս դանից ներս պարզելով:

— Ի՞նչ եք անում, ինչո՞ւ այդքան վաղ:

— Վախեցանք, վոր քնով կընկնենք:

— Դե ի՞նչ արած, — ասաց Պորֆիրին: — Իսկույն զնանք: Վերցրե՛ք գործիքները:

Մենք իջանք և սկսեցինք հավաքել յերեկվանից յելարանի տակ թողած մեր ունեցվածքը: Ձեռքներս կպչում էյին սառ յերկաթին:

Կայարանում վոչ մի շունչ չկար: Միայն չոզեքարչը գծերի վրա ճոռալով, ծուլությամբ հրում էր վազոնները դեպի բաց պահեստը: Գծերի վրա վառվում էյին կանաչ-կարմիր լապտերները:

«Հաղթութունը» կանգնած էր դեպոյի դարպասի

առաջ: Նա վերստին ներկված ու մաքրված էր: Նրա
այն տեղերում, վորտեղ քչփորել էյին կարմիր բանա-
կային ումբերը, թարմ ներկը յերևում էր հաստ,
մուգ բծերով: Գլանաձև խողովակների վրա հազրել
էյին նոր թիթեղյա ծածկոցներ:

Ժամապահը յերկար քուրք հաղած՝ անց ու դարձ
էր անում կառամատույցի վրա: Նա ձեռները դրել էր
թևքերի մեջ: Հրացանի կոթը սեղմել էր արմունկով:

Մենք յերկար ժամանակ կանգնած հետևում էյինք
նրան կայարանի ջրայեռարանի հետևից: Ահա նա հա-
մարյա ընդհուպ մոտեցավ մեզ, հետո դանդաղորեն
յետ դարձավ և որորվելով սկսեց քայլել հակառակ
կողմը:

— Ավելի վառահ, տղաներ, — ասաց Պորֆիրին:

Մենք արագ թռանք դժի վրայով, ու «Հաղթու-
թյան» հենց քթի տակով շարժեցինք դեպի սեմա-
ֆորը:

— Այ դարձի՛ր, դեպի հեղեղատները: Ուղղվի՛ր
դեպի են բլրակը, — կիսաձայն ասաց Սենկան:

Բայց մենք առանց այն ել դիտեյինք, թե ո՛ւր
պետք է դնալ:

Միայն դժվար էր քամու հակառակ ուղղությամբ
վազել:

Բարձրացավ բուրը: Մեր դեմ-հանդիման թռչում
էր ձնափոշին, խառնված պնդացած ձնալազի հետ:
Նա ներս էր խուժում մեր թևքերից, ոճիքներից, խփում
յերեսներիս, ծեծում մեր աչքերը: Իսկ մենք չէյինք
կարողանում մինչև անգամ ձեռներով նրա առաջը
կարել, վորովհետև փեշներիս տակ պահել էյինք բա-
նալիներ, մուրճեր, պնդողակներ:

Ահա յերկրորդ լեռնանցքը: Վերևից ավելի ևս
ուժգին էր փչում ձյունահողմը և ծակոզ փաթիլները
լցնում աչքներս... Մենք գլորվելով սահեցինք հեղե-
ղատը և կանգնեցինք մի քիչ շունչ առնելու: Այստեղ
սարալանջի հետևը, ավելի հանդարտ էր:

Մեզնից դեպի ձախ, ծուռ ժայալեննի նման, ձրգ-
վում էր յերկաթուղու գիծը, ցանցառ հեռագրասյու-
ներով: Քամին սուլոցով խփում էր ձգված հաղորդա-
լարերին: Նրանք խլածայն սվվացնում էյին:

Մենք ցած դրինք մեր սառը, յերկաթե դանձր
դեանի վրա և սկսեցինք արորել մեր քթերն ու աչ-
տերը:

— Դե՛հ, դնանք շուտ, թե չե բոլորովին կսառ-
չենք, — ասաց մեզ Պորֆիրին:

Մենք նորից հավաքեցինք գործիքները և, գլուխ-
ներս ծռած՝ սկսեցինք իջնել մի նոր, ավելի ևս թեք
զառիվայրով: Գնում էյինք շղթայաձև, իրար հետե-
վից, ոճաչարքով: Առաջինը Պորֆիրին էր գլուխը դեմ
ավել ուժգին ցուրտ քամուն: Նրա հետևից մազլցում
էյին Անդրեյը, Սենկան, ապա յես: Բոլորի վերջը
Վասիկաներ քաշեքաշ դայիս:

Բուրը սարի լանջով քշում էր ձյան թանձր, միա-
պաղաղ մի շերտ և ձնալազը: Իսկ մանր, սառը հա-
տիկները մեզ շնչահեղձ էյին անում:

Քամու շվիցի ու դժոցի միջով հաղիվ էր մեզ
հասնում Պորֆիրիի ձայնը:

— Կանգնեցե՛ք... Իսկ ուր է Վասիկան:

Մենք յետ նայեցինք ու տեսանք, թե ինչպես հա-
մարյա չորս թաթերի վրա ներքևից Վասիկան մազըլ-
ցում է բլուրն ի վեր, ամբողջովին ձյունի մեջ կո-
րած:

Պորֆիրին իջավ դեպի նա և թևից բռնած քաշ
տվեց սարի գագաթը:

— Քիչ էր մնում պնդողակը կորցնելի, — ասաց
Վասիկան շնչակտուր:

17-րդ վերստի մոտ Պորֆիրին մեզ կանգնեցրեց:
Մենք նայեցինք մեր չորս կողմը: Այստեղ կավահողի
թեք, համարյա ուղղահայաց, պատերը յերկու կողմից

եւ սղմում եյին յերկաթուղու գիծը: Մի ժամանակ
այստեղ միապաղաղ սար ե յեղել: Այդ սարը նեղ նա-
խասենյակի նման կտրել են ու ռելսեր են անցկացրել:

Պորֆիրին ասաց Սենկային.

— Բարձրացի՛ր, յեղբայր, հրեն են սարի վրա և
չորս կողմից նայի՛ր: Յեթե մարդ կնկատես, շվիացրո՛ւ:
Սենկան փորձեց սուլել, բայց չըթուռները փայ-
տացել էյին:

— Սոււրցս ցրտահարվել է, — ասաց նա և սկսեց
ծիծաղել:

— Դե վոր այդպես ե՞ ձեռքով արա:

Սենկան բարձրացավ սարը, իսկ մենք սկսեցինք
աշխատանքը:

Պորֆիրը լոմով հողն եր փորփրում: Թխկացրեց
մի քանի անգամ և հայհոյեց.

— Անիծվա՛ծ, յերկաթից վատ ե:

Նա հարվածեց ամբողջ թափով և պոկեց մի սա-
ռած հողի կտոր:

— Անդրե՛յ, թխկացրո՛ւ մի մուրճով, իսկ դուք,
Ֆրիչկա, Վասկա, գնդերիթները հանեցեք:

Մենք սղմեցինք բանալու բռնակը: Պտուտակն
իրեն ենտեղը չդրեց: Սղմեցինք ավելի ուժով: Տեղից
չի շարժվում: Վերջապես պտուտակը ճզղացրեց կա-
մաց ու բացվեց:

Այսպիսով մենք չորս պտուտակ հանեցինք, իսկ
ավելին՝ այլևս ուժ չունեյինք: Պտուտակները վոչ մի
կերպ չեն յենթարկվում: Պորֆիրին մեզ հետ բռնեց բա-
նալին: Սղմում ենք ամբողջ ուժով, բայց պտուտակ-
ները նստած էյին մեռածի պես:

— Կտրեցե՛ք հատիչով:

Յես կաթսայագործի հատիչը հարմար դրի պտու-
տակի գլխիկի տակ: Անդրեյը թափահարեց կռանը և
խփեց նրան:

Գլխիկը թռավ հեռու ու ցատկեց գծի վրայով:

Մեկը, մյուսը, յերրորդը... իսկ չորրորդը կրկին
թարսվեց:

— Կտրի՛ր, — շտապեցնում եր Պորֆիրին, իսկ ին-
քը քանի ուժ ունե՛ր՝ լոմով շարժում եր ռելսը:

Ժամանակն արագ անցնում եր, իսկ աշխատանքը
դանդաղ եր շարժվում:

Արդեն արևն էլ դուրս սողաց լեռան դադաթի հե-
տեվից, իսկ ռելսն անդրգվելի յե մնում: Սենկան սա-
րի վրա բոլորովին սառել եր: Նա փչում եր ձեռները և
մի վտառից մյուսի վրա ցատկում, կարծես լարովի
լիներ:

— 17-րդ... Ահա և քեզ 17-րդը, — մթմթում
եր Պորֆիրին՝ կուրծքը լոմին դեմ տալով: Տեղ դտան:
Ամբողջովին քար ե: Այդ հերիք չե, քամին էլ մյուս
կողմից ե սատանա դարձել... ինչ ամուր էլ պտու-
տակնե՛ր պատահեցին:

— Սպասեցե՛ք, տղերք: Գործն էլ առաջ չի
գնա, — ասաց նա հետո, յերբ իմ հատիչը կտարվեց,
իսկ Անդրեյի բանալու բռնակը դուրս թռավ:

— Թո՛ւք կայարան:

— Ինչո՞ւ համար կայարան, — հարցրինք մենք:

— Գուցե այնտեղ վորևէ բան մտածենք:

Քամին պատառոտում եր մեր մուշտակների վե-
չերը, սուլում ականջներին մեջ: Ամբողջ յերկու ժամ
գնում էյինք դեպի մոտակա կայարանը՝ Կիան: Այս
կայարանը գտնվում եր միջֆրոնտային շերտում և
թողնված եր ճակատագրի քմահաճույթին: Կայարանի
չենքի չորս կողմը՝ ծղոտի կույտեր, ջարդոտված
լամպեր, կտորտված սեղաններ, աթոռներ:

— Զրահապատ գնացքը, հալանորեն, դուրս ե յե-
կել արդեն: Չենք հասցնի, — ասաց Սենկան:

— Ի՞նչ անենք հապա, — հարցրեց Վասկան:

Պորֆիրին վոչինչ չպատասխանեց և վազեց դեպի
պահեստը: Մենք կանգնած էյինք կառամատուցի վրա,
կասես ցրտահարվածներ:

Վերջապես Պորֆիրին վերադարձավ:

— Գտա, — ասաց նա և ձեռքով նշան արավ մեզ:

Մենք վազեցինք դեպի պահեստը:

Այնտեղ — յերկրորդ գծի վրա — կանգնած եր
խճաքարով բեռնված մի վագոն:

— Գլորեցե՛ք եղ բաց վագոնը, — կանչեց Պորֆի-
րին: Փոխադրենք գլխավոր գծի վրա, իսկ այնտեղից
ե՛լ՝ ներքև: Թող գլորվի և քչփորի գրահասպատին:

Մենք դիմհարվեցինք վագոնին՝ մեկը կրծքով,
մյուսը՝ ուսով:

— Բոթի՛ր... Բոթի՛ր, — հրամայում եր Պորֆի-
րին:

Իսկ պլատֆորմը կանգնած եր իր տեղում:

— Ա՛յ քեզ ստոր բան, ինչպես ե սառել: Դե՛հ, մի
անգամ ել: Բոթի՛ր... Բոթի՛ր... Թողեք մի յես մեջ-
տեղը դամ, տղանե՛ր: Մե՛կ...

Պլատֆորմը տեղից անգամ չչարժվեց:

— Իսկ զբահասպատը յերևի ամբողջ թափով վա-
զում ե, — ասաց Վասկան հուսահատված:

Մենք միայն ճղճղացինք նրա վրա և նորից բոլոր
ուժով հուպ ավինք: Վոչինչ չի գուրս դալիս:

— Գերանը բե՛ր, — ասաց Պորֆիրին, — մտցրո՛ւ
լոմն անիվի մեջ:

Անդրեյը լոմը պարզեց ճաղերի մեջ, Մենկան գե-
րանը դրեց անիվի տակ:

— Դե հա՛, սկսե՛նք... Մե՛կ... Մեկ ե՛լ... միա-
սին...:

Մենք շունչներս փոխեցինք ու կրկին կպանք:

Անիվներն սկսեցին ճոռայ:

— Դե հա՛, մեկ ե՛լ... Մեկ, յերկու, միահա-
մուռ...:

Վագոնը դնաց:

Նրա անիվները յեթե յուղեյինք, — կանչեց Վաս-
կան, — ճեղքն թացի նման կերթար:

— Այնպես ել կերթա, այժմ ել փոստատարի նման
կզնա — ասաց Մենկան՝ հաղիվ վագոնի հետևից հաս-
նելով:

Իսկ վագոնը միշտ ավելացնում եր ընթացքը, հա-
մաչափ թխկացնելով ռելսերի վրա:

Մենք արդեն վազում էյինք՝ բուֆերներից բռնած:
Կարծես սառնամանիք իսկի ել չի յեղել: Մենք սկսե-
ցինք շոգել:

— Փոխի՛ր ուղեայարը, — ձայն տվեց Անդրեյը,
յերբ վագոնը կոնարոլ սյունի կողքով անցավ:

Մենկան բաժանվեց բուֆերից և արագ յետ գցեց
սլաքի բալանսը:

Վագոնն անցավ գլխավոր գծի վրա:

— Դե՛հ, տղաներ, մի անգամ ել ուժգին հրե-
ցե՛ք, — աղաղակեց Պորֆիրին: Մենք բաց թողինք վա-
գոնը, իսկ հետո վազքով հասանք ու պինդ հրոցով
քչեցինք առաջ — դեպի գառիվայրը:

Գլորվում ե վագոնը... Թխթխկացնում են անիվ-
ները... Ահա նա այլևս չի յերևում, միայն ներքևից
հասնում ե մեզ նրա խուլ աղմուկը: Գնում են անիվները
չվլվոցով, կարծես թե ինչ-վոր տեղում մկրատով
պողպատ են կարում:

— Դե՛հ, ընկեր կարմիր բանակային, — ձեռքը
յերկարացնելով Մենկային՝ ասաց Պորֆիրին, — գուցե
այժմ վերջ տանք «Հաղթություն»-ին:

— Վերջ կանք, ընկե՛ր հրամանատար, — ուրախ
պատասխանեց Մեմյոնը, — նա մեր խճաքարի ճեղքն-
թացից պրծնել չի կարող, ճանապարհը նույնն ե:

Մենք յերկար ժամանակ կանգնած՝ լսում էյինք
հեռացող վագոնի դղրդոցը:

— Իսկ ճանապարհին չի՞ կանգնի արդյոք, —
տառնապալից հարցրեց Վասկան:

— Վո՛չ, այժմ արդեն նրան վոչ մի ուժով չես
կանգնեցնի: Քանի դեռ չի բաղխվել «Հաղթության»
հետ, նա կանգ չի առնի:

— Իսկ մենք այստեղից կլսե՞նք նրանց զրմփոցը, —
կրկին հարցրեց Վասկան:

— Իսկ մենք չենք ել լսելու, — ասաց Պորֆիրին:
Տուն պետք ե գնանք, այն ել զարտուղի ճանապարհնե-
րով, վորպեսզի զիչերային պահակները մեզ չճանկեն:

— Ե՛ր, ափսոս,— գլուխը շարժեց Վասիան,—
գոնե մի անգամ տեսնեյի՛ ինչպես ե վազոնը բաղխ-
վում զրահապատի հետ:

Մթնում եր, յերբ մենք մոտենում եյինք գյուղին:
Մայրամասերի խրճիթներում վառվում եյին կրակնե-
րը: Փակուղու մոտ Պորֆիրին մեզ գլխով արեց և
անհայտացավ դարպասի հետևը:

Իսկ մենք կայարան վազեցինք՝ իմանալու, թե
ինչ են խոսում այնտեղ:

Կառամատուցի վրա կազակներն իրար եյին ան-
ցել, յետ ու առաջ եյին վազում դրողովցիները,
խոնավում եյին արհեստավորները:

— Յերևում ե՛ հաջողվեւ ե,— կիսաձայն շնջաց
Վասիան:

— Իհարկե, իդուր չի կազակությունն իրար խոս-
նըվել: Պարզ ե, հաջողվեւ ե:

Մենք խցկվեցինք ամբոխի ամենախիտ տեղը:
այլաքաղաքացիներինց մի պատանի հենց իմ ականջի
տակ ասաց.

— Հասկանո՞ւմ ես, միայն տաշեղներ: Դոչաղ
բուլչեիկներ:

Անդրեյը նայեց ինձ: Մենք աչք-ուկնքով արինք
իրար: Պատանին նկատեց այդ և ընդհատեց խոսակ-
ցությունը:

— Ի՞նչ կա:

— Վոչինչ:

— Ինչպե՞ս չե՛ վոչինչ,— ասաց պատանին:

Յես ու Անդրեյը ծլկվեցինք ճակատամուտքով:
Այնտեղ աստիճանների վրա նստած եյին յերկաթու-
ղայինները: Նրանցից մեկը՝ սլաքավարը, պատմում
եր.

— Հենց նոր եր «Հաղթությունն» անցել սլաքի
մոտով, մեկ եւ հեռվից դղրդոց ե լսվում. «Հաղթու-

թյունը» լրիվ վաղքով հետ դարձավ սլաքի. հետևը:
Հրամանատարը դուրս ցցվեց և բղավում ե «Սլաքե-
ուղղիր, թե չե զնդակը ճակատիդ յեկավ»:

Սլաքն ուղղեցին: Խճաքարով պլատֆորմն անցանք
պահեստի դժի վրա, իսկ այնտեղ կանգնած ապրան-
քատար մի գնացք բոլորովին վայտի կտորտանք
դարձավ: Ամբողջ ճանապարհին խճաքար ե թափ-
թրիված, իսկ պլատֆորմից միայն տաշեղներ են մնա-
ցել: Ո՛ր, ինչ որի կրնկներ «Հաղթությունը», յեթե
յերկու բուլչե առաջ դուրս յեկած լիներ: Այժմ նա դա-
ռիվայրի տակ ընկած կլիներ վորևե տեղ, ինչպես մի
ծակ դույլ... Ա՛յ քեզ ճարտար մարդիկ, ա՛յ քեզ
կարիճ բուլչեիկներ:

Յերեք որ «Հաղթությունը» կանգնած մնաց մեզ
մոտ կայարանում: Վախենում եր, յերևի, ուղմաճա-
կատ գնալ, ողնության եր սպասում: Յեվ այն ժամա-
նակ միայն, յերբ նոր ուժեր հասան—հետևակ ու հե-
ծելազոր—զրահապատը նորից շարժվեց դեպի ուղմա-
ճակատ: Առաջուց նա ուղարկեց ուժեղացրած հետա-
խույզներ—ձախ կողմից՝ ձիավորների մի դասակ, ա-
ջից՝ նույնպես ձիավորների մի դասակ:

Մեր խճաքարի ձեպընթացը վախեցրել եր նրան:

XXI Գ Լ Ո Ի Խ

ԾՍԱԿԱՏԱՐ ԱՏԱՄԱՆԻ ՄՈՏ

Ամսից ավելի պտտվում-փչում եր բուլքը, իսկ
հետո, կարծես միանգամից, դարունն սկսվեց մեղմոտ:
Ձյունը սևացավ ու հալվեց, գետնից թանձր, թխա-
կապտավուն գոլորչի բարձրացավ: Դեպի Կուբան սո-
ղացին կիսահալ ձյունի ամբողջ գետեր, վոլորվելով
ու շոշափելով ճանապարհը՝ ինչպես կատվի կույր
ճուտեր:

Մենք արդեն հանել եյինք մեր կիսամուշտակները
և մարտ ամսին վազում եյինք փողոցներով միայն
վերնաշապիկներով:

Բայց իսկական դարունն յեկավ միայն առաջին

անճրևի հետ: Կուրանի վրա կախվեցին լայն ու մթա-
ղույն, ինչպես փոշի, անճրևային փողրակները: Կը-
կըլացին ջրափոսերը: Մթնեց: Այնպես մթնեց, վոր
ճանապարհից հազիվ եյին նկատուում աները:

Յես ու Վասկան կանգնած եյինք Կոնդրատյեվների
հյուրանոցի շվաքարանի տակ և մեր գունաթափ շա-
պիկներից քամում եյինք կապույտ ջրի առվակներ:

Հանկարծ հարևան ծածկի տակից դեպի մեզ վազե-
ցին յերկու փոքր կազակներ, հասարակ թավշյա վար-
տիկներով: Նույնպես թրջված, կարծես սղալած լինե-
յին:

Մեկը, ավելի մեծը— թաց փափախով գլուխը
կուացրեց և չորս կողմից Վասկային նայելով— հարցրեց.

— Ումոնցի՞ց ես դու:

— Իսկ քե՞զ ինչ:

— Այլաքաղաքացի՞ յես:

— Կազակ:

— Խաբում ես, քո վարտիկից ու շապիկից յերե-
վում ե, վոր այլաքաղաքացի յես: Կազակներն այդպի-
սի կտավ չեն հագնում: Ասա՛, վորտեղ ես ապրում:

— Ոխտը սարից են կողմը, սև անտախում. իսկ
եղ հարցը տվողին— տնադ,— հանգիստ ասաց Վաս-
կան, կեմի նման վոլորելով շապիկն ու քամելով նրա-
նից վերջին կաթիլները:

— Իսկ մենք ձեզ մոտ խուզարկելու կգանք,— ա-
սաց մյուս՝ վտիտ ու հասակով ցածր կազակիկը:

Վասկան ծիծաղեց:

— Դու գեռ չարխարդ վեր քաշի, Կուրանի ատա-
ման, հավի՛ կուտ: Խուզարկություն անելու իրավուն-
քի մանդատ ունե՞ս:

— Կգտնվի,— մի այստեղ նայի՛ր:

Վասկան դեռ աչքը չեր թարթել, մեկ էլ սպիտակ
փափախով կազակիկը մտրակով Վասկայի գլուխը
դաղեց:

Վասկան կծկվեց և ձեռներով գլուխը բռնեց:

Հարևան սրտազամբից աղաղակեցին.

— Հայդե՛, սպիտա՛կ փափախ: Ա՛յ քեզ կարիճ...
հասա՛, մյուսին ել ականջի՛ն քաշիբ:

Յես յետ նայեցի ու տեսա՛ ինչպես տեղատարափ
անճրևի տակ կուացած՝ դեպի մեզ են վազում կրկին
յերկու դեռահաս կազակ, իսկ նրանց հետևից՝ հաղ-
թահասակ, վազմաներով չուխա հագած մի միրքա-
վոր կազակ:

Յես արագ թուս-անցա ճանապարհով: Վասկան
ուզում եր նետվել իմ հետևից, բայց սայթաքեց ու
չբմիաց ջրափոսի մեջ. նրա շապիկի տակից դուրս սո-
ղաց ատրճանակը:

Սպիտակ փափախով կազակիկը մի ականթարթում
հարձակվեց ատրճանակի վրա, ինչպես բազեն՝
ճնճողուկի վրա:

— Ձե՛նք:

Վասկան վեր թռավ և բռնեց ատրճանակի փո-
ղից, բայց միրքավոր կազակը քացով տվեց նրան:

Վասկան ձեռքից բաց թողեց ատրճանակը և նորից
թմփաց ցեխի մեջ:

Դեռահասակ կազակը նստեց նրա վրա, ինչպես
ձիու, և սկսեց նրան արորել, ինչպես խմորը՝ տաշ-
տախում:

Իսկ միրքավոր կազակն այդ ժամանակ քթին
չատ մոտիկ բռնած՝ շուռ ու մուռ եր տալիս Վասկայի
ատրճանակը և մրթմրթում:

— Բուլդոզ: Վո՛չ, բուլդոզ չե, թերևս բուլդոզն
ավելի կարճ ու հագտ լինի: Դա ուրիշ բան չե, քան
ստեյեր: Միայն ստեյերի գլխիկը կոճականման է: Իսկ
սա ինչ-վոր... բեկուն է:

Յես անկյունից ուշադրությամբ լսում եյի ու
մտածում. ի՞նչ անեմ:— Յես նույնպես, շապիկս տա-
կից, դոտիկից կապած ատրճանակ ունեյի, միայն ամիտ-
վեստոն չեր, ինչպես Վասկայինը, այլ բրաունինդ:

Յեթե այս բրաունինդից մարդ յոթ գնդակն էլ
չարի միրքավորի ճակատի՛ն, բայց հետո էլ փախչել

չես կարող: Միայն խեղճ Վասկան մեջտեղ կկորչի:

Հանկարծ լսում եմ — մեկն անկյունի հետևից ասում է. — Իսկ մյուսը վո՞րտեղ անհայտացավ: Այն, վոր ավելի մեծ էր: Փնտռեցե՛ք նրան, տղե՛րք:

Յես թուա առաջին սրտահաճ բակը, այնտեղից ցանկապատերի վրայով ու նրբափողոցներով, և մյուս կողմից վերադարձա Կոնդրատյեվների հյուրանոցի մոտ:

Այժմ այնտեղ ահազին ամբոխ էր հավաքվել — կազակներ, կանայք, յերեխաներ: Բոլորն էլ աղմկում էին, ընդհատում իրար՝ ձեռները թափահարելով:

Մի սայլորդ են ճանկել, բոլշևիկյան կոմիսարի, — աղաղակում էր կլոր գլխով, հաղթանդամ մի կազակուհի:

— Անխելք: Ի՞նչ բոլշևիկյան կոմիսար, — ասաց անթևք բաճկոնակ հագած մի բարձրահասակ ծերունի, վոր դուրս էր գալիս ամբոխի մեջտեղից: Տղան գետնի վրա չի յերևում, իսկ նրան չորս ձեռքով են բռնել:

— Գիտենք մենք այդ ջահելներին, — ճղճղում էր կազակ կինը. — ումբ են գտել նրա մոտ՝ այդ քո չահելի:

— Տխմա՛ր, — հանդիստ ասաց ծերունին, — ի՞նչ ումբ, — ատրճանակ են գտել, ինչ-վոր ասիական սիստեմի և այն էլ չլցված:

— Ճանապարհ, — գոռաց մի խոսրոտ ճայն ամբոխի միջից:

Ամբոխը յետ-յետ դնաց:

Կարմիր քիթ ու մոթով մի յերիտասարդ հրացանավոր կազակ դուրս հրեց Վասկային և ճանապարհով քչեց դեպի գյուղ:

Վասկան լաց չէր լինում, այլ միայն հեկեկում էր: Նրա շրթունքը պատռված էր, աչքերը ցեխով ծեփված, ուռած: Մի ուսը մերկ, թևքը թելից կախված՝ ճոճում էր:

Դե՛, դե՛, բոկոտն, ժիր քայլի՛ր. — ասաց կազակը,

հետևից հրելով հրացանի կոթով: Վասկան թափահարեց ուսերը և կանգնեց:

— Մի՛ հրիր, — բղավեց նա, — թե չես ահա կկանդնեմ ճանապարհի մեջտեղը և տեղիցս չեմ շարժվի:

Կազակը դարձանքով նայեց Վասկային:

— Հլա տեսնում ե՞ս, ինչ ինքնասերն է յեղել: Դե՛հ, դնա՛, դնա՛, թե չես քաշ տալով կտանեմ:

Վասկան դնաց:

Այդ որը Վասկան տուն չվերադարձավ: Նրա հորն ու մորը յես վոչինչ չասացի, վախենում էյի, վոր կհայհոյեն: Կասեն՝ տղային փորձանքի մեջ գցեց ու ինքը փախավ:

Իսկ յես ի՞նչ կարող էյի անել: Չե՞ վոր նրանք այնտեղ շատ-շատ էյին, այն էլ դեռ հրացաններով, իսկ յես՝ միայնակ:

Ամբողջ որը մտածում էյի յես՝ ի՞նչ կլինի Վասկայի դբությունը:

Շատ կարելի յե՛ նրան կհասցնեն մինչև գյուղը, կվախեցնեն ու բաց կթողնեն, կամ թե չես նա ինքը կփախչի ճանապարհից, իսկ կարող է՝ նրան մեռցնելու չափ ծեծեն: Կարող է և ավելի վատ լինել — կտանեն ատամանի մոտ, կսկսեն մտրակել, իսկ նա յերկյուղից և ցավից մեր պարտիզանական ամբողջ ջոկատը կմատնի:

Ամբողջ գիշերն աղանջներս սրած՝ յես լսում էյի — չե՞ թրխում արդյոք ցանկապատի դուռը: Վո՛չ, չթրխաց դուռը, Վասկան չեկավ:

Մյուս որն առավոտյան ինքս դնացի գյուղ՝ նրան փնտռելու:

Յերեկվա անձրևից հետո գնալը լավ էր: Յեղանակը՝ թարմ, արևոտ, ճանապարհները՝ պնդացած:

Տոն որ էր: Արտասանդուխքի աստիճանների վրա փայլում էյին գուգված-գարգարված կազակ աղջիկ-

ները, իսկ ճաղերի վրա, իբր ձիերի, նստած էյին ուրախ աղերքը:

Չեռնափայտով շներից պաշտպանվելով՝ յեռ գնում էյի ճանապարհի մեջտեղով ու մտածում՝ ինչպես գտնեմ վասիլային: Վարչություն մտնել, թե բանտին մտա գնալ — պատուհանից նայելու:

Վարչությունում ինձ հետ, իհարկե, իսկի չեն ել խոսելու, իսկ յեթե խոսեն ել, ապա վոչ մի լավ բան չեն ասի: Կրնեն և կնստեցնեն: Իսկ յեթե վասիլային բանտի պատուհաններին նայելով փնտռես, զուցե և բոլորովին չգտնես: Նա փոքր է, նրան ամեն մեկը պատուհանի մոտից կարող է քշել: Բացի այդ, պահպաններն ել հսկում են:

Մտտենում եմ վարչությանը:


Հաստ ու ջլուտ կաղակները չորս կողմից շրջապատել են սպիտակ քարե տունը: Նստած են՝ կարծես թագավորի մոտ հյուր լինեն զնացած: Ով ավելի հարուստ է, նստել է շեմքի վրա — ավելի մոտիկ ատամանի դռներին: Ով ավելի աղքատ է՝ ներքևի աստիճանների վրա:

Ծխում են՝ ասեղնագործ տուրակներից հանելով ծխախոտը: Ասում-խոսում են գյուղական նոր ատամանի մասին, կաղակային հին կարգ ու կանոնի մասին, և ինչ արժե խոզը շուկայում, և ո՛ւմ շարային զամբիկն է լավը: Հենց այստեղ պտտվում է և յերիտասարդությունը, սպասարկում ծերունիներին — մեկը վազում է խանութը տանու գարեջուր բերելու, մյուսը շխիպցնում է լուցկին, յեթե ծերունու չիբուխը հանդել է:

Դեմ ու դեմ, յեկեղեցու մոտ, կանգնած են յերկար, կուպր քսած սյուները: Կախաղանն է այդ:

Յես ծլկվեցի բակը: Այնտեղ, տախտակե փոքրիկ ճաղավոր լուսամուտներով յերկար բարակի մոտ քայլում էյին կաղակ-պահապանները:

Նշանակում է՝ ձերբակալվածներն այստեղ են նստած: Գուցե և վասիլան ել նրանց հետ: Յես ցանկա-



նում եյի ներս նայել պատուհանից, բայց իմ ճանապարհը կարեց պահակը:

Թերևս մյուս կողմից հաջողվի պատուհանից ներս նայել:

Գնում եմ: Վոչ վոր բան չի ասում—արդյոք նրա՞ համար, վոր ես ծածկել եյի կազակի սև փափախ, թե ուղղակի չեն նկատում ինձ:

Հակարժ յես տեսա ամենածայրի պատուհանից մեկը ձեռքով ե անում ինձ:

Վասկա՛ն... այո՛, Վասկա՛ն: Ելի այնպես կեղտոտ և ուռած, ինչպես յերեկ եր, միայն նրա կապտած տեղերը դեղնել, կանաչ դույն եյին ստացել: Պատուհանում միայն նրա գլուխն ե յերևում և ձեռքը: Ինձ ձեռքով ե անում, — հեռացի՛ր, իբր թե:

Յե՛վ ինքս ել եմ տեսնում, վոր անպայման պետք ե հեռանալ. ուղիղ դեպի ինձ ե գալիս պահակը հորիզոնադիր հրացանով:

Վզզացի դեպի դռները, մտածում եմ— ահա և ծղկվեցի:

Հանկարծ մեկի ծանր ձեռը թխկացրեց ուսս.

— Սպասի՛ր, մի՛ շտապիր: Յես քեզ ճանաչեցի:

Տեսնում եմ՝ դա միրքավոր կազակն ե, հենց նույնը, վոր յերեկ Վասկային հրեց ջրափոսը:

Նա բռնեց իմ ոճիքից և քաշելով լայն աստիճաններով՝ բարձրացրեց վերև:

Ծերունիները, վորոնք նստել եյին ատամանի արտասանդուխքի վրա, բարձրացան և սկսեցին աղմկել:

Դեռ շունչ չեյի առել, մեկ ել ինձ կարճ ու մուխ նախասենյակում տեսա: Միրքավորը ուսով հրեց դուռը և ինձ հետ միասին ներս գլորվեց մի ընդարձակ սենյակ:

Սենյակի մեջտեղում խոհանոցի սեղանի նման մի սեղան ե դրված՝ դարակներով: Պատերի մոտ հրացանները՝ բուրգերի ձևով:

Առողջություն եմ ցանկանում, ատաման, — ասաց միրքավորը, հրեցով ինձ դեպի սեղանը, վորի

մոտ նստել եր մի ծաղկատար կազակ, վոսկրե չիբուխը բերանին:

— Բարով, Պոլիկարպ Սեմյոնովիչ, — ասաց ծաղկատար կազակը՝ տեղից չվերկենալով, — ո՞ւմ ես բեքել:

— Բոլշեիկյան մի լրտեսի:

— Հյա սրան մտի՛կ, — ասաց ծաղկատարը, — կաթը շրթունքների վրա դեռ չի չորացել, լրտեսություն ե անում: Լրտեսներին մենք առաջին կարգի պատիվ ենք տալիս, վերև ենք բարձրացնում, համարյա մինչև յերկինք: Տեսա՞ր են սև սյուները՝ պատուհանի հետևում:

— Քեռի, — աղերսեցի յես, — թո՛ղ տուր, յես մեղավոր չեմ: Մայրս ուղարկեց ծանոթների մոտ: Հացի, ճարպի... Նա ինձ սպասում ե... տանը բոլոր սոված նստել են:

Ատամանն իր ծաղկատար դուռնը թեքեց իմ կողմը, թքեց սեղանի տակ և ասաց.

— Կազա՞կ ես:

— Այլաքաղաքացի:

— Ինչո՞ւ:

— Հենց եմպես... չգիտեմ:

— Չգիտե՞ս:

— Ասոված վկա, չգիտեմ:

«Ատաման գիտե, թե ինչու յեմ այլաքաղաքացի», մտածեցի յես:

Ատամանը լռեց և սկսեց—չգիտես ինչու—սեղանի արկղները ներս ու դուրս քաշել: Արկղները 12 հասկլինեյին:

Միրքավորը նույնպես լուռ կանգնած եր, բայց հետո ասաց.

— Այս ջահելին յես դեռ առաջ եյի նկատի առել:

Նա յերեկվանի հետ միևնույն խմբից ե:

— Վորի՞ հետ, — հարցրեց ծաղկատարը: — Նրա՞ հետ, վոր Սիդոր Պորֆիրիչի մատը կծե՞լ եր: Տաքաքյուն ջահել ե, կամակոր: Հապա՛, քաշ տուր և

մյուսին այստեղ, թող մի տեսակցեն, բարեկեն իրար: Միրքավորը կրունկների վրա շուռ յեկավ և դռնից դուրս գնաց: Յես ու ատամանը սենյակում մենակ մնացինք:

Ատամանը դանդաղորեն դուրս քաշեց սեղանի միջին, ամենամեծ արկղը և ձեռքը համարյա մինչև ուտք պարզեց նրա մեջ: Խառնեց, խառնեց արկղը, թոթափեց ափերը և մտքեց մյուս արկղը:

Յես միշտ կանգնած՝ մտածում եյի — Ի՞նչ է փնտրում նա արկղներում:

Հանկարծ ատամանը աթոռի վրայից սողաց, պղպեց վոտքի թաթերի վրա և սկսեց դուրս քաշել ամենաներքևի արկղը: Արկղը յերկար ժամանակ ձեռք չէր գալիս, հետո վերջապես շրխոցով բացվեց: Ատամանն ինչ—վոր կողքից նայեց նրա մեջ և բարձր փոշտաց ուղիղ արկղի մեջ:

Այնտեղից սյունի պես բարձրացավ չոր ծխախոտի փոշին: Իմ քիթը խտուտ յեկավ, փակվեց շնչառությունս, և յես բարձրաձայն փոշտացի:

Ատամանը գլուխը բարձրացրեց և իր կլոր, ապակյա աչքերը հառեց ինձ վրա:

— Իսկ դո՞ւ ինչ ես փոշտատում, — հարցրեց նա բարկացած: Բայց հանկարծ նրա աչքերը փոքրացան, քիթը կնճռոտվեց և ինքն ել ինձանից ավելի բարձր փոշտաց:

— Ապչխի՛, — փոշտաց ատամանը:

— Ապչխի՛, — փոշտացի յես ի պատասխան:

Այդ ժամանակ դուռը բացվեց, միջանցիկ քամին ներս թափանցեց, և ծխախոտի փոշին ամպի նման ներխուժեց սենյակ:

Դռների մեջ ինչ—վոր մեկը նույնպես փոշտաց յերկու ձայնով: Վասկան ու միրքավորն եյին: Վասկան կատվի նման եր փոշտում, իսկ միրքավորը՝ ինչպես ձի:

Ատամանն արագ յես տարավ սեղանի արկղը և

պատուհանը ծածկեց: Ծխախոտի փոշին կամաց—կամաց նստեց:

— Իե՛ր այստեղ, — ասաց ատամանը և սկսեց չիբուխը լցնել:

Վասկան մոտեցավ: Նա մի ձեռով բռնել եր կտրրոված թեփըր, մյուսով՝ վարտիկը:

— Ասա՛, դու սրան ճանաչո՞ւմ ես, — հարցրեց ատամանը Վասկային:

— Վո՛չ, — ասաց Վասկան՝ դեպի ինձ չնայելով:

— Նա քեզ մոտ հյուր ե յեկել, իսկ դու, հիմար, հրաժարվում ես: Լավ չէ: Այդպիսով մարդ կարող ե իր բարեկամին վիրավորել: Նա քո մասին միշտ անհանգստանում ե, ասում ե — դու նրա հետ միևնույն չոկատից ես:

Վասկան ցնցվեց ու գլուխը դարձրեց դեպի ինձ:

— Այո՛, այո՛, — ասաց ատամանը, — դուք մեծ գործեր եք սկսել: Յեվ մեզնից չես կարող փախչել:

— Ի՞նչուրը գիտենք, — համաձայնեց միրքավորը:

Յես աչքերս սևեռել եյի Վասկայի վրա — ցանկանում եյի, վոր նա իմ նայվածքից գուշակեր, վոր ատամանը նրան թակարդ ե ուզում գցել:

Բայց Վասկան փոշինչ չէր հասկանում: Նա կանգնած եր, դժգույն, վախեցած:

Հանկարծ ատամանն աչքերը շոնեց, վիզը յերկարացրեց և խուլուտ շշնջոցով ասաց.

— Բո բարեկամը քեզ մատնել ե, բոլորը մեկ—մեկ նա պատմել ե... Մենք նրա հետ զրուցել ենք ճակատա—ճակատ:

Այստեղ յես ել չհամբերեցի — կատաղությունից շունչս կտրվում եր:

— Դուք բոլորը սուտ բաներ եք փչում, գոռացի յես ատամանին: — Մենք դեմ առ դեմ չենք զրուցել, այլ փոշտացել ենք միայն... Ի՞նչ թակարդ եք դուք այստեղ լարում:

Ատամանի չիբուխը մինչև անգամ բերնից վայր ընկավ:

— Փռչտո՞ւմ եյինք, ասում ես,— ասաց նա, դանդաղորեն բարձրանալով արմուկներէրի վրա:— Յես քո հախիցը կգամ: Նստացնել յերկտին ել:

Միրքավորը բռնեց իմ ու վասկայի ոճիքից, թիկացրեց մեր ճակատներն իրար ու քաշելով դուրս հանեց դռներից:

XXII Գ Լ Ո Ի Խ

Բ Ա Ն Տ Ո Ի Մ

Գյուղական բանտում, յերկար տախտակյա սրահում, մերկ տախտակամածների ու դետնի վրա թափ-թըփված եյին կալանավորները տալրակների նման: Բանտը փոքր է, մարդիկ՝ շատ:

Աջ անկյունում կծկված նստած էր մի ծերունի: Ժամերով նայում էր նա միևնույն կետին, առանց շարժելու:

Յես ու վասկան ճանաչեցինք նրան: Դա Լազար Յեոզորովիչ Պոլեժայեվն էր, հասարակ ձևով ասած՝ Պոլեժայը: Աչնանից մենք նրան չեյինք տեսել:

Այդ ժամանակվանից նա փոխվել էր, ծերացել:

Նստած է, մի բառ չի ասում, իսկ առաջներում բոլոր միտինգներում նա առաջին ճառասոսն էր:

Շիկակարմիր անթելք բաճկոն հագած, կարճ քթանի, պատահում էր՝ բարձրանում է հրապարակի մեջտեղում յեղած տախտակամածի վրա, վերցնում է նապաստակի մորթուց փափախը, գլուխ տալիս ծերերին: Իսկ հետո, յերբ սկսում է աջ ու ձախ թրատել՝ և՛ ատամանի՛ դեմ է խոսում, և՛ թե ինչո՞ւ այլաքաղաքացիները պետք է կազակների համար աշխատեն. իրենք ել հողաբաժին չունենան, և թե վո՞րտեղ ճըշմարտություն փնտռել—ամբողջ սրտով էր խոսում:

Գրագետ էր ծերունին, խելք: Ուսուցչի հետ, քահանայի հետ, պատահում էր, լեզվակռիվ էր անում ամեն տեսակ խաբերայությունների մասին,

այնպես էր ջարդ ու փշուր անում նրանց, վոր պապանձվում եյին, ել պաշտպանվել չեյին կարողանում:

Յեվ վո՞րտեղից էր նա այդքան բան հավաքել՝ այդ անհայտ էր: Իր ամբողջ կյանքն անց էր կացրել յերկաթուղու տնակում և դժերի վրա. յերկաթգծի պահակ էր:

Իսկ այժմ քարի պես վեր է ընկել անկյունում: Միայն այն ժամանակ, յերբ հերթապահը հայտնվում էր շեմքի վրա, ծերունին բարձրացնում էր գլուխը և ուշադրությամբ լսում:

Հերթապահը կալանավորներին դուրս էր կանչում ազգանուններով: Վո՞մանց հարցաքննության՝ ատամանի մոտ, վո՞մանց՝ ատամանի պատուհանների առաջ՝ կախաղանի:

Իմ ձեռքակալության հենց առաջին օրը հերթապահը դուրս հրավիրեց Կրավցովին և Ոլեյնիկովին:

— Կրավցով, դո՛ւրս արի, Ոլեյնիկով, դո՛ւրս յեկ:

Բարակի դանազան ծայրերից յերկուսը դուրս սողացին, մեկը կիսամուշտակով և կուբանական յուղոտ գլխարկով, մյուսը գորշագույն շինելով և թեթև գլխարկով: Նրանք դռան առաջ մի փոքր կախ ընկան, կարծես մտածում եյին՝ դնալ թե չգնալ, հետո դիտեցին բանտը և արագ անցկացան շեմքը:

— Դրանց կկախեն,— ասաց Պոլեժայը՝ գլուխը բարձրացնելով:

— Իսկ ինչո՞ւ համար,— հարցրեց վասկան:

— Մեկը գերի ընկած կարմիր բանակային է,— ասաց նա,— մյուսը՝ գյուղացի կազակ:

— Բայց իրենց կազակներին ինչո՞ւ պիտի կախեն,— զարմացավ վասկան:

— Կազակ լինելը, կազակ է նա, բայց վո՞չ իրենցից,— պատասխանեց ծերունին:

Այդ օրը նա այլևս վոչ մի բան չասաց:

Յես ու Վասիան առաջին գիշերները քնել չկարողացանք: Հեղձուցիչ էր: Դռան վրա ըթթում էր մրաձրագը՝ փոքրիկ պատրուկով մի բանկա: Ամբողջ բանտը շարժվում էր, տնքում ու քորվում:

Մենք նույնպես քորվում էինք, մի կողքից մյուսի վրա շուռ գալիս:

Հետո ընտելացանք և սկսեցինք քնել, հենց վոք մուխը վրա յեր հասնում: Իսկ ցերեկը յես ու Վասիան պտտվում էինք, ինչպես սկյուռները՝ անիվների մեջ: Խցկվում էինք ամեն տեղ, ամեն մեկի հետ խոսակցել սկսում: Մարդիկ բանտում բան չունեն անելու. յուրաքանչյուրն ուրախությամբ զրուցել է ցանկանում:

Ակիմ Վլասովը — գյուղական խորհրդի նախկին ձիապան-կառապանը — ինձ ու Վասիային պատմում էր Տյուրինի՝ գյուղական խորհրդի նախագահի մասին:

Ակիմը Տյուրինին ամռանը սայլակով էր մանածում, իսկ ձմռանը՝ քանդակներով նախշուն սահնակով: Նրանք շրջագայում էին գյուղերը, հարուստ գյուղացիներից ռազմատուգանք էին վերցնում՝ հարյուրական տոպրակ առաջին տեսակի կուբանկա-ցորեն, մեկական դույզ գորշագույն ձիեր ու նրանց հասարակ ստացազրեր տալիս, առանց շտամպի ու կնիքի, միայն ստորագրված՝ «Տյուրին»:

Տերերն ստացազրերը պտտում էին ձեռներում, ախ քաշում, իսկ հետո շուռ տալիս չերկեսկանների փեշերը, դուրս քաշում վարտիկների խոր դրպաններից փոկով փաթաթած ինքնագործ քսակ-պորտմանները և խցկում նրանց մեջ Տյուրինի անգորրագրերը:

Իսկ ձիերն ու ցորենը տրվում էին գյուղի չքավորությանը՝ վոմանց անվճար, վոմանց՝ չնչին վճարով:

— Ինչ նախագահ էր, ե՛ր, — ասում էր Ակիմը՝ ձակատը կնձռոտելով: — Գլուխ ուներ, ե՛ր: Նրա նման մեկը ել չի ձարվի: Պատահած, — ասում էր ինձ, — «Դե՛հ, Ակիմ, թո՛ւր մի Նիզիկ, քարշ տո՛ւր ինձ մոտ

Սպիրիդոն Խառատովին, յես նրա հոգին մի հանեմ... Հակահեղափոխությո՛ւն: Հացը թագցրել է»: Նու, յես ել սլանում եմ իմ սեվաթույր ձիերով: Հենց վոր մրտնում եմ Սպիրիդոնի բակը, նա արդեն շեմքին կանգնած, դողում է ու բարևում: Ակիմ Վլասովին բուրբ գյուղերը ճանաչում էին վոչ վատ քան իրեն՝ Տյուրինին:

Ակիմը վեր էր կենում թքոտված հողե հատակի վրայից, վորի վրա մենք կողք-կողքի պառկած էինք. թափ էր տալիս թևքերին կպած ծղոտը, ուղղում պտտաված ու սեացած կիսամուշտակը:

— Այո՛, — ասում էր Ակիմը մտածկոտ. — Խառատովները մեզ յերկրպագում էին: Սակայն մենք չափազանց բարի էինք դեպի նրանց: Պետք է մենք յուրաքանչյուրին անգորրագրի փոխարեն գնդակը ձակատներին տայինք, իսկ մենք այդ սրիկաներին կենդանի էլինք թողնում: Յեվ այժմ ել ահա նրանք մեզ ծաղրում են:

Ակիմը սիրում էր պատմել: Յերբ սկսեր, ել չեյիր կանգնեցնի:

Մյուս մեր հարևանը, Կլիմովը, նույնպես քշախոս էր, ինչպես և Պոլեթայը: Դրա փոխարեն նա վարպետորեն սարքում էր մեզ համար ձիեր, տուփեր, սահնակներ, ջրաղացներ:

Վերցնում է մի փունջ ծղոտ և սկսում գործել՝ ահա քեզ ձիու մարմինը, ահա և դուլիս: Այժմ պետք է ախանջները ցցել, իսկ հետո գլուխը մարմնին կցել:

Լավ ձիեր էին դուրս գալիս, մինչև անգամ չորս վոտների վրա ել կանգնում էին, — միայն տգեղ էին, չարպտուրիկ, վորովհետև ծղոտից էին:

Կլիմովը դարբին էր — յերկաթգծի կամրջի մոտի դարբնոցում էր աշխատում: Յերբ ընկերները նահանջում էին, նա կարմիր բանակայինների ձիերն էր պայտում, դրա համար ել նրան այստեղ էին բերել:

Բանտում ինձ ու Վասիային յերես էին տալիս, կարծես մեզ իրենց տղաների տեղ էին ընդունում:

Հաց էյին տալիս մեզ, ճարպ էյին տալիս, իսկ մեկ-մեկ ել՝ հավի մսի կտոր, յեթե վարեն մեկին տանից ուղարկում էյին:

Չորրորդ որը Պոլեթայեվին կանչեցին:

— Պոլեթայեվ, դուրս արի՛:

Վասկան յերկյուղից մինչև անգամ չնչահեղձ յեղավ, իսկ իմ արյունը սառեց: Բայց Պոլեթայեվը կարծես դիտեր, վոր իրեն շուտով կանչելու յեն: Վեր կացավ, կոճիկեց անթևք բաճկոնը, բոլոր կեռիկները մեր դցեց և դլխարկը ձեռքին՝ ուղղվեց դեպի դուռը: Նրա տուպրակն ու թիթեղե փոքրիկ թեյամանն այնպես ել մնացին անկյունում:

— Մի՞ թե կկախեն, — հարցրեց Ակիմ Վլասովը:

— Պարզ է, կկախեն, — ասաց Կլիմովը:

— Բայց չե վո՞ր նրան մինչև մեռնելը մնում է միայն յերեք ո՞ր:

— Թեկուզ և մի ուր մնացած լինի, բայց յեթե մտածել են, նշանակում է՝ կկախեն:

Մինչև ուշ յերեկո մենք դռանն էյինք նայում: Յերբ արդեն բոլորն ել պատրաստվում էյին քնելու, յերկու դեռահաս կազակներ ձեռների վրա ներս բերին Պոլեթային: Նրանք մինչև իր անկյունը հասցրին և ինչպես մի կոճղ նետեցին նրան ծղոտի վրա: Մերունին Փսփսացնում ու գլուխը դես-դեն եր նետում:

— Դիմացկուն է ձեր պապիկը, — ասաց պահապանը: — Մտրակի յերեսուն հարված ընդունեց և դեռ շնչում է:

Յեվ ճիշտ վոր, ծերունի Պոլեթայեվը դեռ շնչում էր: Շնչում էր արագ ու բարձր ինչպես տենդի մեջ:

Բանտ էյին խցկում միշտ նոր ու նոր մարդիկ: Բարակում ոգը ծանրացավ, կծվեց:

Մինչև անգամ Ակիմ Վլասովը միառժամանակ վհատեց ու լռեց: Մենք նույնպես դադարեցինք բա-

րակում վազվզելուց և մարդկանց հետ զրույց անելուց: Չբոսանքի մեզ չէյին թողնում: Իսկ դուրսը, ճիշտ վոր, լրիվ դարուն եր: Բանտի փոքրիկ պատուհաններից յերևում եր, թե ինչպես արդեն բակի անկյունները կանաչին են տալիս:

— Կոնստանտինով, դուրս արի՛, — աղաղակեց մի անգամ հերթապահը:

Վոչ վոք ձայն չհանեց:

— Կոնստանտինով, դուրս արի՛, ի՞նչ ես տրորվում, — աղաղակեց պահակը մի անգամ ել:

«Ո՞վ է այստեղ Կոնստանտինովը», — մտածեցի յես: Բոլորովին մոռացել էյի Վասկայի ազգանունը: Հենց ինքն ել միանգամից դլխի չընկավ, վոր ինքն է Կոնստանտինովը:

Բայց յերբ հերթապահը յերրորդ անգամ կանչեց, Վասկան վեր թռավ, չորս կողմը նայեց, — կարծես ողնություն եր սպասում, — և զնայ՝ պառկած մարդկանց վրայից անցնելով:

— Մի՛ վախենա, Վա՛սյա, մի գուցե անց կենա մի կերպ, — շշնջացի յես նրա հետևից:

Հերթապահը Վասկայի հետևից դուռը դեռ չեր կողպել, յերբ ամբողջ բանտն սկսեց աղմկել:

— Ղոչաղ են կուբանցիները, — խոխոացրեց Պոլեթայը, — միայն յերեխաների հետ կարող են կուլել...

Ակիմը նստեց ինձ մոտ և սկսեց մխիթարել, ինչպես փոքրիկի.

— Մի՛ վշտանա, Գրիշկա, նրան գուցե միայն հարցաքննության են կանչել: Կգողգողան և բաց կթողնեն: Ի՞նչ կարելի յե նրանից ստանալ:

Այդ ժամանակ կրկին բարձրաձայն զրնգաց սողնակը և կրկին ներս մտավ հերթապահ վերակացուն:

— Մի՛րո՛չ-նի-չեն-կո, դուրս արի՛:

Հերթն իմն է: Այդպես ել մտածում էյի: Որո՞ւր վելով անցա շեմքի վրայով: Ի՞նչ թեթև ող է: Շնչում ես ու կարծես միանգամից քնով ես անցնում: Յերկինքը մաքուր է: Յեկեղեցու կանաչ կտուրի վրա

ճնճղուկներն են վաստաստում: Յեթե ուղեկցող պա-
հակն ինձ հետ չլիներ, մի շնչով տասնհինգ վերաս
կարող եյի վազել, առանց կանգ առնելու: Կվագեյի
Կուբան, կցատկեյի գառիթափից ուղիղ գետի մեջ,—
ի՞նչ անենք, վոր ջուրը դեռես սառն է,— համառու-
թյամբ լող կտայի ջրի տակով և լողալով դուրս կգա-
յի ուղիղ Կուբանի մեջտեղը: Ո՛ր, և ինչ լավ է այն-
տեղից գիտել յերկաթգծի կամուրջը, մյուս ափը, ուր
խիտ թփուտներ կան, գյուղը: Իսկ, վոր ավելի լավն
է, լողանալուց հետո մեկնվել այնտեղ, ուր Ձեկնչու-
կը թափվում է Կուբանի մեջ: Այնտեղ խոտը փափուկ
է, իսկ քարերը՝ տաք: Ա՛յ թե կուշա կքնեյի:

Հանկարծ յերկինքը գլխիս սեացավ, յեկեղեցին
ծովեց, շարժվեցին աները:

Յես բռնեցի պահապանի թևից, վորպեսզի չընկ-
նեմ: Ման դալուց ու մաքուր ողից գլուխս պտտվեց:

— Ի՞նչ ես կախ ընկնում,— ամբողջ կոկորդով
բղավեց պահապանը — յերեւի վախեցած,— կանգնի՛ր
քո վտանքիդ վրա, թե չէ կհասցնեմ հրացանի կո-
թով:

Յես շունչ առա և քաշ գալով առաջ գնացի, հա-
զիվ շարժելով վտանքս: Մենք բարձրացանք ծանոթ
արտասանդուխքով և մտանք նախասենյակը: Ատամա-
նի դուռը կրնկի վրա բաց եր:

Ատամանը նստած եր իր նախկին տեղում, կարծես
են անգամվանից դեռ վեր չի կացել տեղից: Ուղիղ նրա
դիմացը կանգնած եր Վասկան, իսկ կողքին՝ Իլյա
Ֆեոդորովիչը:

Պատուհանների ու դռների մոտ շարքով կանգնել
էյին կազակները՝ հրացանները վտարի մոտ դրած:

Ատամանը դանդաղ կարգում եր մի թուղթ.

«Մենք, գյուղացիներս, այս ապրիլի 13-ին, անձ-
րևի ժամանակ... կայարանի մոտ... յերկաթուղու—
հայտարերեցինք լրտես, վորի մոտ վարտիկի գրպա-
նում գտնված է ատրճանակ, վորի ինչ սխտեմի լի-
նեղն անհայտ է, բայց տեսքով սպիտակ է, մի փողա-

նի, հինգլցային, լցվում է բաղուկները կոտրելու մի-
ջոցով, վոր սեփական ձեռքի ստորագրությամբ հաս-
տատում ենք. գյուղացիներ Պերեսունկո, Յուդին, Դե-
րիզեմլյա, Նովոխատսկի, Բորոդյուկ»:

— Ի՞նչ կասես,— հարցրեց ատամանն Իլյա Ֆեո-
դորովիչին:— Ահա քեզ փաստաթուղթ, ահա և քեզ
իրեղեն ապացույցը: Ատամանը դուրս քաշեց սեղանի
աբկղը և հանեց այնտեղից Վասկայի սմիտ-վեստո-
նը:— Այժմ հարց է — վո՞րտեղից է անչափահասի
մոտ այդ հրացանը: Ավելի պարզ ասած — վո՞րտեղից
է նա ձեռք բերել:

Իլյա Ֆեոդորովիչն ուսերը վեր քաշեց:

— Բայց յես ի՞նչ գիտեմ՝ վո՞րտեղից է ձեռք բե-
րել: Գուցե տղաներն են տվել, իսկ կարող է պատա-
հել՝ դաշտումն է գտել: Գի՞չ կար դրանցից այնտեղ
թափթփված: Տղերքը վոչինչ չուներ անելու, ահա և
նրանք փորփրում են— թեկուզ դժոխք էլ լինի, նրանք
կմտնեն:

Ատամանը յետ թիկնած՝ նստած եր և ծխախո-
տից դեղնած մատներով շփում եր փոս ընկած, չեչուտ
թշերը, կեռ քիթը, սուր, մաքուր սափրած ծնոտը:

Ժամանակ առ ժամանակ նա նայում եր ինձ վրա
բորբոքված աչքերով, կարծես ինչ-վոր բան մտաբե-
րելիս լիներ:

Հանկարծ նա բուռնցքով թխկացրեց սեղանը:
Թանաքի շիշը վեր ի վար թռավ:

— Ահա թե ինչպես: Ատրճանակները դաշտո՞ւմն
էք գտնում: Ինձ վոր չի պատահել այդպիսի բան:
Ճիշտ է, բախտավորությունն իմ ձեռքը չի ընկնում.
Իսկ դու, Պուլիկարոյ Սեմյոնովիչ, չի՞ պատահել քեզ,
վոր ջրափոսում վորեւե ստեյեր կամ մաուպերիկ
գտնես:

— Ամենևին վոչ,— պատասխանեց միրքավոր կա-
զակը թավ ձայնով:

Մյուս կազակները կոնչալ սկսեցին.
— Հենց եղ ե՛, վոր վոչ: Թե վոր նրանք թափված

լինեցին ճանապարհի վրա, եւ հրանոթային զավոդներն ինչի՞ պետք կլինեցին: Կուղարկեցինք կնանոցը՝ վճարպես թե հատապտղի, մոշի: Հավաքիր տոպրակը, իբր թե, ինչքան վոր կուղես: Հենց այստեղ եւ, թփերի վրա, և փամփուշտիկներն են բուսնում, մեկ եւ տեսար և գնդացիր, գետնից դուրս յեկավ սնկիկի նման: Այդպես չե՞: Դե՛, ինչո՞ւ յես լուում, ասա՛, ձեր գեպոյականները անձրեւից հետո շա՞տ են հավաքել հրացաններ ու գնդացիրներ:

Իլյա Ֆեոդորովիչը մուսյվեց և անհամբերութամբ ձեռքը թռթափեց:

— Ինչո՞ւ իզուր ժամանակ կորցնել, — հանդարտ ասաց նա, առանց ատամանին նայելու: — Գործով եք կանչել, իսկ ինքներդ հեքյաթներ եք պատմում: Կամ բաց թողե՛ք, կամ հարցաքննեցե՛ք:

— Բա՞ց թողնել, — հարցրեց ատամանը, խորամանկութամբ ժպտալով, — յես քեզ կազատեյի, — դու իմ ինչի՞ն ես պետք: Միայն թե նրա՛նք քեզ դռների մոտ չբռնեցին:

Ատամանը գլխով արեց դեպի կաղակները:

Կաղակները, կարծես ըստ հրամանի, հրացանի կոթերով բաղխեցին հատակը:

— Ձեն թույլ տա, ասում են, — ասաց ատամանը:

Իլյա Ֆեոդորովիչի այտերը դողդողում էին, բայց նա վռչինչ չտատասխանեց: Յեւ ի՞նչ կար պատասխանելու:

Այս անգամ մեզ յերկար պահեցին ատամանի մոտ: Ինձ ու Վասիլայի համարյա չհարցաքննեցին: Միայն Իլյա Ֆեոդորովիչին էին չարչարում: Նա մինչև անգամ բոլորովին քրտնեց, բայց լեզուն իրեն եր պահում, չեր տաքանում: Նրա կանգնած տեղից պարզ յերևում եր կախաղանը:

Հանկարծ ատամանը ամբողջ հասակով ուղղվեց:

— Ուրեմն դու բոլորովին վռչինչ չգիտե՞ս: Իսկ պարետային մասից ո՞վ ե հրացանները տարել, գիտե՞ս:

— Չգիտե՛մ, — ասաց Իլյա Ֆեոդորովիչը:

Ատամանը սեղանի հետևից դուրս յեկավ և մոտեցավ Իլյա Ֆեոդորովիչին:

— Իսկ հեռագրիչին ո՞վ ե մագուլթի մեջ խեղդել — կրկի՞ն չգիտես:

— Չգիտե՛մ:

— Այդպես, իսկ ո՞վ ե բաց վագոնը զրահապատի վրա բաց թողել: Ո՞վ ե արհեստանոցներում ժուլովբողին խելքահան անում, ռազմաճակատով բանվորներին բոլջեիկները մոտ ո՞վ ե ուղարկում: Այդ բանը գիտե՞ս:

Իլյա Ֆեոդորովիչը միայն գեղնած չրթունքներն եր շարժում:

Ատամանը լռեց և ավելի մոտեցավ նրան:

— Իսկ ո՞վ ե մեքենայի գլանաձև խողովակների մեջ ավազ լցնում, — գիտե՞ս: Դո՛ւ, բոլջեիկյան անըզդա՛մ:

Ատամանը սեղանից վերցրեց Վասիլայի ատրճառակը և ձեռքին թափ տալով՝ խփեց Իլյա Ֆեոդորովիչի աչքին:

Իլյա Ֆեոդորովիչը և Վասիլան աղաղակեցին միաժամանակ:

Իլյա Ֆեոդորովիչը միանգամից հանդարտվեց, իսկ Վասիլան յերկար ժամանակ բղավում եր, դուփում վոտքերով, գլուխը շարժում:

— Գոմը տանել նրանց, — աղաղակեց ատամանը, — պատին դեմ անել:

Արյունը լայն շերտով հոսում եր Իլյա Ֆեոդորովիչի յերեսով:

Նա թևքով սրբեց արյունը և ինձ ու Վասիլայի հետ գնաց դեպի դռները:

— Գնդակահարեցե՛ք յերեքին եւ միասին, — աղաղակեց ատամանը մեր հետևից, — իսկ մահվանից ասա՞ մի լավ հարցաքննեցե՛ք: Գուցե դեռ խոստովանեն, այն ժամանակ բաց կթողնենք իրենց աները:

Մեզ քչեցին դատարկ ու մութ դոմբ, աչքներս կապեցին, յերկու-յերեք քայլ տարան ու կանգնեցրին:

— Չո՛ր, — բղավում են, — վառները լա՛յն:

Յեռ դեռ վոտներս չեյի չռել, նրանք ուժով հե-
ռացրին իրարից:

— Շարվե՛լ, — հրամայեց միրքավորը: Այդ մեզ
չեր հրամայում, այլ կազակներին:

— Լցնե՛լ:

Փականները շրխկացին:

«Մի՞թե արդեն գնդակահարում են: Իսկ հարցա-
քննությո՞ւնը», — մտածում էյի յես:

— Համազա՛րկ: Կրակե՛լ:

Վորտաց:

Յես ճոճվեցի առաջ, բայց կանգնած մնացի վոտ-
քերիս վրա: «Կենդանի՞ յեմ, ինչ է», հարցնում եմ
ինքս ինձ և չեմ հավատում: Ձեռներով շոշափում եմ
փորս, կուրծքս, ուսերս: Մտածում եմ — յերևի ամ-
բողջովին արյուն եմ: Վո՛չ: Ձեռներս չոր են: Յեզ վոչ
մի տեղս ել չի ցավում: Գուցե դեռ տա՞ք է, չե՞մ
զգում: Թերևս վոտքս չի գործում: Շարժում եմ աջ վո-
տքս, բարձրացնում — ձախս: Նշանակում է կենդանի
յեմ և վիրավորված չեմ: Վրիպել են: Իսկ ի՞նչպես են,
մտածում եմ, Իլյա Ֆեոդորովիչը և Վասիան: Գուցե
յերկուսն ել ընկած են: Ձե՞ վոր կողքիս Վասիան եր
կանգնած, յերբ մեր աչքերը կապում էյին: Արի մի
վոտքով շոշափեմ:

Վոտներս մեկնեցի դեպի աջ — Վասիան ել նույն-
պես ի՛նձ է վոտքով հրում:

— Ի՞նչ նշանաճիգներ են, — ասում է միրքավո-
րը: — Հենց թի տակ կանգնած մարդուն խփել չեն
կարողանում: Նշանակում է, ձեր բախտն է այդպես,
ընկե՛ր դեպոյականներ: Յերկրորդ մահից առաջ, գու-
ցե, դեռ կխոսեք:

Կտպերը յետ արին մեր աչքերից և սկսեցին
կրկին հարցաքննել:

Նորից վորեւե բան չհասկացան մեզանից:

— Կգնդակահարենք, — բղավում է մեզ վրա միր-
քավորը: — Ասոված վկա, կգնդակահարենք: Առաջին
անգամ, խղճով ասած, մենք ձեր վոտքերի տակ կրա-



կեցինք, իսկ այժմ ուղիղ ճակատներիդ կտանք: Այլեւի
լով է՝ ժամանակին խոստովանեցեք:

Իեռ յերկար ժամանակ կազակը գլուխներս տա-
նում եր: Համոզում եր, վախեցնում: Նորից եր մեզ
պատին դեմ անում, յերբեմն ծղանը ձեռքն առած՝
սպառնում եր նրանով Իլյա Ֆեոդորովիչի գլուխը
պատուել: Մենք արդեն ամեն բանի ընտելացել էյինք:

Պարզ եր՝ նրանք վախեցնում էյին: Յեթե իրոք
ցանկանային զնդակահարել, վաղուց զնդակահարած
կլինեյին:

Կասես՝ ինչ-վոր քաջըչուկ է: Սարտափեցնում են,
փորձում են փորեւե ձեռով բան-ման իմանալու: Բայց
նրանք մեզանից սատանի յեղունդ ել չեն կարող պո-
կել: Մեր մասին նրանք վոչինչ չգիտեն, իսկ խոսա-
վանել՝ վոչ մի բան մենք չենք խոստովանի:

Պինդ ենք կանգնած յերեքով ել:

— Դե՛հ, սատանան տոնի ձեզ, — ասաց միբքա-
վորը, — մի որ ել ապրեք մեր բանում, իսկ վաղը
կզնդակահարենք:

Մնացինք մենք բանտում մի որ, յերկու որ, յերեք
որ, չորս որ:

Մեր մասին կարծես թե մոռացել էյին:

Պարզվեց, վոր Իլյա Ֆեոդորովիչի աչքի տակի
վերքը խորը չե: Ակիւմ վլասովն իր հին շապկի թեքը
պոկեց և նրա աչքը կապեց:

Իսկ վասկան բոլորովին փոխվել եր: Չղային եր
դարձել: Մի չնչին բան ել յերբ իր ասածով չեք լի-
նում, դողում եր ամբողջովին ու լաց լինում ինչպես
յերեսա:

— Ինչո՞ւ համար ես այժմ արցունք չաղ տալիս, —
ձեռ եր առնում նրան Իլյա Ֆեոդորովիչը, — հրացանի
դեմ ու դեմ կանգնած այդպես բարձրսծայն լաց չեյիր
լինում, իսկ այժմ ծղոտե ձիու համար գլուխդ կորց-
նում ես: Ե՛հ, դու հերոս, հերոս:

Հրացանագարկ անելու հինգերորդ որը մեզ կան-
չեցին ատամանի մոտ:

Այդ որն ատամանն ինքը վարչությունում չեր:

Նրա փոխարեն սև բեխերով յերկտասարդ մի
կազակ նստել եր նրա սեղանի մոտ:

Յերբ մենք ներս մտանք, նա մեկնեց Իլյա Ֆեոդո-
րովիչին մի թուղթ և ասաց.

— Ստորագրի՛ր, վոր կայարանից այլ տեղ չես
մեկնելու ու տուն դնա՛ քեզ համար: Բայց նայի՛ր, վոր
արհեստանոցներում ամեն ինչ կարգին լինի: Ասում
են՝ դու լավ արհեստավոր ես, իսկ մեզ այդպիսի
մարդիկ առայժմ պետք են: Իսկ այս ջահեղներին տա-
նը կապած պահի՛ր: Յեթե վորեւէ բան պատահի,
ւրանց փոխարեն ինքդ պատասխանատու կլինես:
Դե՛հ, ցտեսություն:

Կազակը մի քիչ տեղից բարձրացավ և փերուզե
մատանին մասին հագցրած ձեռքը մեկնեց Իլյա Ֆեո-
դորովիչին:

Մենք դուրս յեկանք վարչությունից և մի բոպե
կանգնեցինք արտաքին սանդուխքի մոտ: Չեյինք հա-
վատում, վոր մեզ իսկապես տուն են թողնում:

— Հայրե՛, ջահեղներ՛, — ասաց Իլյա Ֆեոդորովի-
չը: — Այժմ, նշանակում է, հարյուր տարի կապրենք՝
զնդակահարվածներս: Իսկ այս զղվելիներէ համար
արհեստանոցներում լա՛վ աշխատանք կտանեմ: Ծնոր-
հակալ կլինեն:

XXIII Գ Լ Ո Ի Խ

ՁԱՐՆՎԱԾ ԱՐՏՈՒՏԸ

Բանտից հետո յերեք որ նստեցինք տանը: Մեր
մայրերն արտասվում էյին, չեյին թողնում չեմքից
ել դուրս գանք: Դրա փոխարեն կերակրում էյին
լիուլի: Մեզ համար ամեն տեսակ բլիթներ էյին թխում,
յեզիպտացորենի հաց, կաթ էյին խմացնում:

Այդ որերը յես չեմ ել հիշում, քնով անցկացրի:

Միայն հետո իմացա, վոր Անդրեյը յերկու անգամ ինձ մտտ ե յեկել, բայց իմ մայրը նրան նախասենյակ եր չի թողել:

Իսկ հետո, յերբ ուտելուց հաղեցա, քնից կշտացա, ինքս գնացի Անդրեյի մտտ նորություններ իմանալու:

Կատարյալ դարուն ե արդեն: Փոշին ամպի նման կանգնած ե, ցանկապատի վրայի ծառերը խշխշացնում են իրենց հաստիկ ու խոշոր տերևները:

Յերեխաները վազվզում են մեր ամբողջ փողոցով, հավաքում տարած վեզերը, փոշիների մեջ փնտռում կապարի ծեծանր: Ինքս ել անցյալ տարի հենց այդպիսի բաներով եյի զբաղվում — մեզ մոտ տղաները մինչև 17 տարեկան դեռ վեզ են խաղում — իսկ այժմ ինձ այդ չի սազում:

Գնում եյի դեպի Անդրեյն ու մտածում — հլա մի ծովե՞մ դեպի լողարանները՝ Կուբան, գեթ մի անգամ սուզվեմ, կամ ավելի լավ ե հետո՝ տղաների հետ միասին ամբողջ խմբով գնալ:

Բայց վոչ, վազեմ նախ դեպի Անդրեյը:

Պետք ե նրան հարցնել՝ ի՞նչպես եյին ազդում տղաներն առանց մեզ, վո՞րտեղ ե Պորֆիրին, ի՞նչ ե լավում Կարմիր բանակի մասին: Հենց ինքս եր բան ունեմ պատմելու՝ բանտի մասին, ատամանի մասին, դամի մասին: Չե՞ վոր ամեն մարդ ել կենդանի չի պրծնում զնդակահարությունից:

Հրում եմ ցանկապատի դուռը, իսկ դուռը փակ ե: Ինչի՞ցն ե, վոր Անդրեյը ցերեկով փակվել ե սկսել: Թերևս նրան ել վորևե տեղ են տարել: Կամ, ինչ դիտես, գուցե ե ճղել ե ռազմաճակատը ե մեզ մենակ թողել:

Յես բոունցքով յերեք անգամ թակեցի, շուտ ու մուռ տվի յերկաթե սղակը:

Լսում եմ՝ դուռը թրխկաց, քայլերի ձայն յեկավ:

— Ո՞վ ե այնտեղ, — հարցնում ե Անդրեյը:

— Մերոնք, — ասում եմ: — Ինչո՞ւ յես փակվել:

— Գրիչկա, — ձայն ե տալիս Անդրեյն ե ամբողջ ուժով քաշում յերկաթե սողնակը:

Դուռը բացվեց կրնկի վրա: Անդրեյը դուրս թռավ դեպի ինձ, ներս քաշեց բակը, թիփացնում ե ուսիս, մեջքիս, ձեռքս ե թոթվում: Իսկ հետո հանկարծ յետ նայեց դեպի դուռը ե, ա՛ռ հա՛, սողնակը յետ տարավ:

— Ինչո՞ւ յես միշտ փակում, ե՛, — հարցնում եմ:

— Հանդարտ, — ասում ե Անդրեյը, — Պորֆիրին այստեղ ե:

— Քեզ մո՞տ ե: Ի՞նչ ե անում քեզ մոտ:

— Ինձ մոտ ե ապրում: Յերրորդ ուրն ե արդեն:

— Իսկ ինչո՞ւ յե փակուղուց հեռացել:

Այնտեղ արդեն շատ ժողովուրդ ե գնում-գալիս: Ջարդված վազաններից արգելակներն են հանում, զսպոցները հանում, կցորդիչները: Վազոնները պետք ե նորոգեն: Յերևում ե՛ պատրաստվում են հեռու գնալու...

— Ի՞նչ, նահանջո՞ւմ են արդեն:

— Վո՛չ, դեռ չեն նահանջում, բայց կարծես թե պատրաստվում են: Կարմիրները չե՞ վոր արդեն Ռոստովին են մտնենում: Դեպոյականները բոլորն ել զգաստ են, հենց վորևե բան լինի — պատրաստ են... Միայն մենք ենք հորանջում: Այն ուղիներից, յերբ քեզ ու Վասիլային նստացրին, Պորֆիրին մեր սանձերն այնպես ե ձգում, վոչ մի տեղ չի թողնում:

— Իսկ ինչո՞ւ դուք առանց մեզ վոչինչ չեք արել:

— Վորևե բան արել ենք: Իման Վասիլայի չի ե Գավրիլի հետ հրացանները կտրել ենք: Յեվ Սենկան ե ողնել մեզ, ե Միչկա Սգոննիկը:

— Իսկ ինչո՞ւ յեք կտրել:

— Ի՞նչպես թե ինչու: Յերկար հրացանով վոչ մի տեղ հայտնվել չես կարող: Իսկ կտրվածը փեշի տակն ել կարելի յե պահել: Յես հետո քեզ իմը ցույց կտամ:

Մենք բարձրացանք սանդուխքը ե դուռը թակեցինք: Դուռը բացեց ինքը Պորֆիրին: Նա այժմ հաղել եր կապույտ չիթ շապիկ, ամիլված եր, յերկտասարդ,

համարյա Անդրեյից մեծ չեր յերևում: Նա դուրս յեկա՞վ նախասենյակը, շփշփացնելով տախտակե հատակը մերկ վառներով:

Մենք գրկախառնվեցինք և համբուրվեցինք:

— Դե՛հ, ի՞նչպես ե, — հարցնում ե, — դու այժմ գարնված արտուա ես: Իլյա Ֆեոդորովիչն ամեն բան պատմել է: Ուղղակի հերոս տղաներ եք, դու և Վասիլան:

Ինձ այլևս բան չմնաց Պորֆիրին պատմելու: Ամեն բան արդեն դիտեր՝ և՛ ծերունի Պոլեթայի մասին, և՛ ատամանի մասին, և՛ մինչև անգամ ծղոտե ձիերի մասին:

Մի ժամվա չափ նստեցինք Անդրեյի սենյակում՝ սնդուկի վրա: Սուսում ելինք ուղմածակատի մասին: Կարմիր բանակն արդեն մոտ է, Ռոստովին է սղմում, պատրաստվում է Բելոյե Գլինկի ճակատը պատռել: Այդ մասին պատմում են զեպոյականները, և գծի սպասավորները հաղորդում են տնակից տնակ: Իսկ յերեք ուր առաջ Գավրիկը թափառում էր կայարանում և տեսել է՝ ինչպես գնացքից դուրս են յեկել չորս զորքերոված սպա: Նրանք վագոնից դուրս են բերել դրոշակը, սև մոմլաթի մեջ փաթաթված: «Ահա, — ասել են նրանք գյուղացի սպաներին, — բաբրը, ինչ մնացել է մեր զորամասից: Սատանան դիտե, — ասում են, — ինչպես պատահեց այդ: Հազիվ ենք դրոշակը կրակից հանել»:

— Նշանակում է՝ խիո՞ւմ են նրանց, — հարցնում եմ յես Պորֆիրին, — ուրեմն շուտով կարմիրները մեզ մո՞տ կլինեն:

— Լինելը՝ կլինեն, իսկ ո՞վ դիտե, շուտով արդյոք: Ռոստովից մինչև այստեղ մոտ 360 վերստ է, և ամեն մի վերստը կարմիրները կովով պետք է վերցնեն: Մենք ել այստեղ նույնպես պետք է գործ առաջ տանենք: Յերբ բոլեն մոտենա, մենք ճանապարհները կքշիորենք, գնացքները կկանգնեցնենք, թիկունքից կհարվածենք: Կրոնենք սպիտակներին, ինչպես մկան թակարդում, և չենք թողնի փախչեն:

Յես ցած թռա սանդուխքի վրայից և դռացի:

— Ահա այժմ մեր ջակասն ել կսկսի գործ տեսնել: Գիտե՞ս, Անդրեյ, արի ուղեսլաքների ուսակապերը հանենք, խորտակումներ սարքենք:

Անդրեյը նայեց Պորֆիրին:

— Թո՛ղ այդ բանը, — ասաց Պորֆիրին խստութամբ, — դու թեկուզ և հերոս ես, բայց ժամանակից չուտ մի՛ խցկվիր, առանց ինձ վո՛չ մի քայլ: Դուք առանց այն ել շատ բան եք խառնել, հազիվ ենք տակից դուրս յեկել, իսկ յեթե այժմ ել առանց հարցնելու մեջ եք ընկնելու, ապա դրանով ամեն ինչ կխորտակեք:

Յես կրկին նստեցի սնդուկի վրա և լռեցի:

— Մի՛ հուզվիր, Գրիչա, ամեն բան իր ժամանակն ունի: Չե՞ վար յես ձեզ ինձ հետ վերցրի 17-րդ վերստը և Կիան. ելի վորևե տեղ կտանեմ ձեզ:

Յերբ յես պատրաստվում եյի տուն գնալու, Անդրեյը ձեռքով խիեց ուսիս ու շնջաց:

— Գնանք, քեզ մի բան ցույց տամ:

Մենք դուրս յեկանք դռնից և ուղղվեցինք ճախ՝ շեպի գործած ցանկապատով փոքրիկ սրահը: Դռան վրա կախված էր կողպեքը:

Անդրեյը բացեց առանց բանալու և ներս տարավ ինձ ծղոտով ծածկված ցածր, մուլթ սրահիկը:

Անդրեյը բարձրացավ անկյունում գրված ինչ-վոր սնդուկի վրա, ձեռքը կոխեց ծղոտակտրի մեջ և դուրս քաշեց այնտեղից կարճ հրացանը կտրված խողովակով և սղոցված կոթով: Ամբողջ հրացանը սեղանի վտտից յերկար չեր:

— Տեսնո՞ւմ ես՝ ինչ հարմար է, — ասաց Անդրեյը և կտրվածը կոխեց վարտիկի տակ: Հետո դուրս հանեց վարտիկի տակից և դրեց վերնաշապկի տակ՝ հենց ուսի մոտ: Յեթե նա ինձ մոտ թաղցնելիս չլիներ, յես յերբեք չեյի կարող գուշակել, թե նրա վրա հրացան կա պահված:

— Յեթե այդպիսի մի հրացան ել յես ունենայի՛, — ասացի յես:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՆՇԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

— Վաղուց ե պատրաստված, — պատասխանեց Անդրեյը, — Գավրիլի մոտ կղմինդրի տակ ե: Այնտեղ ե՛ քեզ համար, ե՛ Վասիլայի համար հրացաններ կան: Մենք ձեր բռնվելու հենց առաջին գիշերը Վասիլայենց սրահից բոլոր հրացանները տարել ու տեղավորել ենք դանադան տեղեր: Այժմ յեթե մեկը դռնեն, համե՛նայն դեպս մյուսները կմնան:

— Տե՛ւր մի նայեմ, — խնդրեցի նրան: Յես կալը՝ վաճը շուռ ու մուռ տվի ձեռքերումս: Նայեցի խողովակի մեջ՝ կարվածը վոչինչ: Միայն նշանառության հատիկը մի քիչ փոքր ե՛ հազիվ սիսեռի չափ:

— Իսկ ինչքա՛ն գլխացավանք ե տվել եզ սիսեռահատիկը, — ասաց Անդրեյը: — Նախ սողոցել ենք, հետո չորս կողմից տաշել, հետո զոգել ենք, իսկ նա միշտ մի կողքի վրա յե սողում: Յերկու որ չարչարվում եյինք, մինչև վոր բոլորի հատիկներն ել կպցրինք: Միայն ա՛յժմ փորձնական նշանառություն կարելի յե սարքել:

— Փորձնական նշանառությո՞ւն: Այդ հիանալի յե, միայն թե վո՞րտեղ պետք ե կրակենք:

— Հեղեղատներում: Այնտեղից վոչինչ չի լավի: Իսկ մենք այնտեղ կերթանք յերկու-յերկու, յերեք-յերեք, իբր թե ենպես՝ զրոսանքի յենք դուրս յեկել: Այժմ ժամանակը գարնանային ե, վոչ վոք մեզ վրա կատկած չի տանի: Իսկ մեր հրացաններն այնպես են, վոր մարդ կոչկի ճաքերումն ել կարող ե պահել:

Անդրեյն իր կտրված հրացանի խողովակը ներքև շուռ տվեց ե խրեց կոչկի ճաքի մեջ: Ճիտքը դուրս ցցվեց մի կողմից:

— Չե՛, ավելի լավ ե վարտիկի տակ դնել, — ասացի յես, — թե չե վոտներն իրարից տարբերվում են:

— Լավ, — ասաց Անդրեյը ե հրացանը կրկին թաղցրեց կտրի տակ:

Այն որը, վոր յես Անդրեյի մոտ եյի, հայրս աշխատանքից չեր վերադարձել: Յերեկոյան մայրս վազեց Իլյա Ֆեոդորովիչի մոտ՝ հորս մասին հարցնելու, բայց Իլյա Ֆեոդորովիչը նույնպես տանը չեր յեղել: Այն ժամանակ մայրս սկսեց սաստիկ անհանդստանալ:

— Ահա, — ասաց նա, — յերևի դեպոյում կրկին փորեք բան ե պատահել: Գրիչկա՛, գնանք իմանանք:

Մենք վազեցինք կայարան՝ արհեստանոցները: Դարպասն ամուր փակած եր:

— Ե՛, այժմ մենք վո՞րտեղ փնտռենք, — հարցրի մորս:

Նա վոչինչ չպատասխանեց: Կանգնեցինք դարպասի մոտ ե լուռ վերադարձանք տուն:

«Ահա ե քեզ փորձնական նշանառություն, — մտածում եյի յես ճանապարհին: — Յեթե հորս ու Իլյա Ֆեոդորովիչին ձերբակալել են, նշանակում ե՛ ամբողջ դյուղում խուզարկություններ կսկսեն: Վոչ մի տեղ ել դուրս գալ չենք կարող»:

Յերեկոյան մայրս սեղան պատրաստեց, ե մենք յերկուսով նստեցինք ընթրելու: Բայց կերակուրը կոկորդներինցս ներքև չեր գնում: Թեյն այնպես ել կլտախմել մնաց սեղանի վրա, յեգիպտացորենի լավաշներն ել՝ առանց ձեռք տալու:

Յես պառկեցի հատակի վրա պատուհանի մոտ, իսկ մայրս փչեց լամպը ե այնպես ել նստած մնաց սեղանի մոտ՝ մթության մեջ:

Առավոտյան դեմ ինչ-վոր մեկը թխկացրեց պատուհանը:

«Սուզարկություն», մտածեցի յես քնաթաթախ:

Վո՛չ, հայրս եր վերադարձել:

— Վո՞րտեղ ես անհետանում, — հարցրեց մայրս՝ դուռը բանալով:

— Մի՛ աղմկիր, — դուցե մեկը հետևիցս գալիս

ե, — ասաց հայրս՝ դուռը ծածկելով: Հետո հազիվ լսելի ձայնով շնչաց: — Ռուլլովի արտաբանեցում ժողով կար: Բոլորը դեպոյականներ են: Յես ուզում եյի հեռանալ, — չի կարելի, ասում են, գործերը լուրջ են, իմացի՛ր՝ գորահավաք ե:

Հայրս հոգոց հանեց ու նստեց ուտելու՝ առանց հանվելու:

Մայրս տաքացրեց թեյը և սեղանի վրա դրեց ապրամանը՝ յերեկվա լավաշների հետ:

Հայրս դանդաղությամբ կտրում էր պատառը պատառի հետևից, թեյը խմում և ինքն իրեն մըրթմըրթում:

— Գոնե շուտ վերջանար այդ բոլորը: Թե չե բոլորովին կկորչես: Մեկն ասում է— մի՛ նորոգիր, իսկ մյուսը՝ նորոգի՛ր: Յե՛վ յուրայիններիդ հակառակ գնալ չես կարող, և՛ ճակատիդ ել դնդակ վաստակելու ախորժակ չունես:

Այդ ժամանակ յերկար ու ձիգ վռոնաց դեպոյի շչակը:

Ժամանակ էր, վոր հայրս կրկին աշխատանքի գնար:

Յերբ արևն արդեն իր լրիվ հասակով յերևաց, մենք հավաքվեցինք Գավրիկի մոտ՝ բակը:

Անդրեյը հրամայեց.

— Փոկերը՝ շապկի տա՛կ: Կարաբիները վարտիկների մեջ:

Մե՛նք միանգամից հանեցինք մեր շապիկները, փոկերը ուսներովս գցեցինք, իսկ հրացանները դրինք վարտիկների մեջ: Հետո կրկին մեր շապիկները հագանք:

— Փամփուշտները՝ գրպա՛նը:

Մենք փամփուշտներով գրպաններս լցրինք: Սուր գնդակները ծակում էյին մեր վրտները, բայց մենք դրա վրա ուշադրություն չեյինք դարձնում:

Անդրեյը մեզ բաժանեց քառյակների:

— Տափաստանով դեպի կանաչ հեղեղա՛տ, — հրամայեց նա:

Չախ քառյակի հրամանատարն ինքն Անդրեյն էր, յերկրորդինը՝ Գավրիկը, իսկ յերրորդինը՝ Սեմյոնը: Մեր յերրորդ քառյակն առանձնահատուկ էր — յերեքմարդուց:

Քանի ճանապարհն անցնում էր գյուղամիջով, մենք դիտմամբ մեզ հիմար էյինք ձևացնում: Յերբեմն քարեր էյինք շարում, յերբեմն իրար հետևից ընկնում: Իսկ յերբ դուրս յեկանք տափաստանը, շարվեցինք յերկուսական և զինվորական քայլով հասանք մինչև հեղեղատը:

Մենք անդրաժարտիկներից դուրս քաշեցինք հրացանները, փամփուշտները գրպաններիցս հանեցինք, բոլորս լուրջ, մարտակա՛ն տեսք ունեյինք: Միայն Վանկա Միխնեիչը հանկարծ գլխի վրա կանգնեց և սկսեց վրտները թափահարել ողում, ուրախացել էր, վոր կանաչ խոտ էր տեսել:

— Դե՛հ, դու, շճած, կոտրատվելդ թող, — ասաց Անդրեյը: — Ժամանա՞կ գտար կրկես բացելու: Նշավակը վերցրե՞լ ես:

— Նշավակն ինձ մոտ է, — ասաց Գավրիկը և ցույց տվեց տախտակը՝ թղթե շրջանակ կպցրած:

— Այդպես, — ասաց Անդրեյը, — այժմ քսան քայլ կհաշվենք և նշավակը կդնենք: Հապա՛, Գավրիկ, հաշվի՛ր:

— Լսում եմ, — աղաղակեց Գավրիկն ու քիչ մտածելով ավելացրեց՝ ընկե՛ր հրամանատար:

Մինչ Գավրիկը նշավակը սարքում էր, մենք նրատեսեցինք խոտերի վրա: Մեր չորս կողմը կանաչ հեղեղատում փռվել էր սիզախոտը, իսկ ամենացածր տեղից, վորտեղ փայլում էր շիկակարմիր ճահճուտը, դուրս էր ցցվել յեղեղը: Քամին ճոճում էր յեղեղի ցողունները: Նրանք փաթաթվում էյին իրար ու հագրիվ լսելի ճոռում:

— Տղէ՛րք, յեկէ՛ք զամբիկ խաղանք, — ազազակեց Վանկա Միխնէիչը:

— Թիտի՛ դա:

Վոլոզկա Գարբուզենկոն առաջ վազեց և ցածրացրեց գլուխը: Վանկա Միխնէիչը թափ առավ վազեց, ցատկեց նրա վրայից և ինքը կռացավ, ձեռները ծնկներին հենելով: Վանկայի վրայով Միչկան ցատկեց, Միչկայի վրայով՝ Պաշկա Բոչկարյովը, հետո յիվան Վասիլյեվիչը, հետո Վասկան: Յեվ այնպես առաքացան, վոր Անդրեյի հրամաններն ել չէյին լսում:

— Կանգնի՛ր:

— Ե՛յ դուք, բացփոր թուվո՞ւնե՛ր, կանգնե՛լ, — սկսեց գոռալ Սենկան:

— Ընկերնե՛ր, — ասաց Անդրեյը, յերբ վերջապես մենք շարվել եյինք: — Կիրակենք 20 քայլի վրա, յերեքական փամփուշտ: Նախազգուշացնում եմ, ով առաջներում չի կրակել, կամ զանազան պատճառներով վախենում ե կրակել, թող ինքն ազնվորեն ասի:

Դեհ, ո՞վ ե... դուրս արի՛:

Ի հարկե վոչ վոք դուրս չեկավ:

Անդրեյը Սեմյոնին դիմեց:

— Դեհ, Սեմյոն, դու մեր ռազմաճակատայինն ես: Առաջինը դո՛ւ ցույց տուր քո հրաձգությունը:

Սեմյոնը լուռ պառկեց փորի վրա շարքի առաջ և սկսեց նշան բռնել: Նշան եր բռնում, նշան եր բռնում, տաս րոպե նշան եր բռնում:

— Յեվ դեռ ռազմաճակատում ե յեղել... — ել չհամբերեց Միչկան: — Մինչ դու կպատրաստվես կրակելու, քեզ արդեն կթրխկացնեն:

— Ձեռք քաշի՛ր. եղ իմ գործն ե, — մոմոաց Սեմյոնը և սկսեց նորից նշան բռնել:

Մենք սպասում, սպասում եյինք կրակոցի, հետո ել չհամբերեցինք, ձանձրալի յեր: Հանկարծ ինչ-վոր բան սուր թրխկացրեց, կարծես հենց ախանջիդ տակ վորսամտրակը ճայթեց:

Մենք նետվեցինք դեպի նշավակը: Անդրեյը կռացավ և սկսեց ճեղքվածք փնտռել:

— Վրիպել ե, — ասաց նա:

— Վո՛չ, չի վրիպել, — սկսեց վիճել Սենկան, — նայի՛ր՝ զնդակը քերծել ե տախտակի յեզրը:

— Կարող ե շատ քերծվածք լինել տախտակի վրա, — ասաց իվան Վասիլյեվիչը: Յեվ այս կողմից ե քերծված, մյուս կողմից՝ նույնպես...

— Իսկ դու ի՞նչ ես հասկանում, — ընդհատեց նրան Սենկան: — Գնդակի հետքը միանգամից կարելի չե տարբերել: Տեսնո՞ւմ ես փոս ընկած տեղը:

— Թողե՛ք վիճելը, աղանե՛ր, — ասաց Անդրեյը, — Յեթե չըջանին չես դիպցրել, ուրեմն հաշվի չի առնըվում: Կրակի՛ր, Սենկա, մնացածները: Բայց յերկար նշան մի՛ բռնիր, թե չե անպայման կվրիպես, — աչքդ կհոգնի:

Սենկան պառկեց, ձեռքն առաջ մեկնեց հրացանի հետ միասին և մնաց անշարժ:

Մեկ, յերկու, վորոտացին մեկը մյուսի հետևից զարկերը:

— Ո՛ր, ի՛նչ գիլ յետ ե տալիս, ու իսկույն մարդու յետ ե գցում, — ասաց Սենկան՝ արորելով ուսը: Մենք նորից վազեցինք դեպի նշավակը:

— Դիպել ե, — ասաց Անդրեյը:

Թողթի վրա, չըջանալով յերկու ճեղքվածք կար: Նրանց յեզրերը դուրս եյին ցցվել, կարծես նշավակը մյուս կողմից եյին ծակել:

Սենկան ժպտաց: Տղաները մեկը մյուսի հետևից կռանում եյին դեպի նշավակը և ճեղքվածքները դիտում:

— Իսկույն յերևում ե, վոր ռազմաճակատում յեղել ե, — ասաց Գավրիկը:

— Այստեղ ի՞նչ ռազմաճակատի բան կա, — ձայն տվեց Վանկա Միխնէիչը: — Յերկու անգամ իրար հետևից դիպցնելը մեծ իմաստություն չե, այդ միևնույնն ե թե մի անգամ դիպցնել:

— Իսկ դու փորձի՛ր գոնե մի անգամ դիպցնել, — ասաց Սենկան:

— Յես յերեքն ել կգիպցնեմ: Մենք վարսի եյինք գնում և յոթ հատ տատրակ տուն բերում:

— Դե՛հ, բավականե գոռոզանաս, — ասաց Անդրեյը, — դնա սլառկի՛ր:

Վանկան յերկար սպասեցնել չամկեց: Պառկեց ու — թրը՛խկ — կրակեց:

Նայեցինք՝ կողքով ե անցել:

Վանկան կրկին՝ թրը՛խկ, թրը՛խկ. — նորից յերկու զարկ: Մենք նշավակի մոտ վազելու կարիք ել չգզացինք: Մի գնդակը յերկու քայլի վրա գեախնը փորեց: Իսկ մյուսը տղզաց ինչ—վոր վերև և կորավ տափաստանում:

— Յերեքն ել իրար հետևեց կողքով:

Վանկա Միխնեվիչն սկսեց աչքերը կկոցել:

— Բայց իմ հրացանի ձգանը բոլորովին բանի պեսք չի: Հենց մատս դրի, իսկույն չխկացրեց: Յես խկի նշան բռնել ել չկարողացա:

— Հրացանը մի տո՛ւր, — ասաց Անդրեյը:

Վանկան հրացանը մեկնեց դեպի նա: Անդրեյը մի քանի անգամ չխկացրեց փակաղակը, փորձեց ձգանը, բոլորն ել կարգին եյին:

Բայց Վանկան ինքն ել համոզվեց, վոր ձգանն այստեղ գործ չունի. նա մի կողմ քաշվեց և մըթմըր—թում եր.

— Թղթին կրակելու իսկի տրամադրությունն ել չունեյի: Իսկ յերբ թռչունն ե, կամ դայլ, այդ ուրիշ բանն ե:

Վանկայից հետո կրակեց Իվան Վասիլյեվիչը: Սա, նախքան կրակելը, մի կույտ հող հավաքեց և իր առաջ մի բլրակ կազմեց:

— Ինչո՞ւ համար ե այդ բանը. — հարցրեց Վասկան:

— Հրացանը կղնեմ, վոր չչարժվի, — բացատրեց Իվան Վասիլյեվիչը:

— Հանդամանքներն իմացող տղա յես, — ասաց նրան Անդրեյը: — Միայն շատ ես քաջ դալիս, ավելի յերկար, քան Սեմյոնը:

— Իսկ ո՞ւր եք շտապում, — հարցրեց Իվան Վասիլյեվիչը և բլրակի վրա մի առվակ շինեց:

Այդ առվակում նա դրեց իր կարաբինի փողը և սկսեց նշան բռնել:

— Կրակի՛ր յերեքն ել իրար հետևից, — կանչեց Անդրեյը: Իվան Վասիլյեվիչը կրակեց: Յերկուսը գիպել եյին:

— Դա ել վատ չի կրակում, — ասաց Անդրեյը: — Սենկայից վատ հրացանաձիգ չե: Միայն հրացանն այնպես ե ուղղում, կարծես յերեք դյույմանոց թընդանոթ լինի:

Իվան Վասիլյեվիչից հետո յերկու անգամ ել վոչ վոք չկայցրեց:

Միշկա Սզոննիկը, Շուրկա Կուզնեցովը, Պաշկա Բոչկարյովը և Վասկան մեկ—մեկ հատ գիպցրին:

Վերջը կրակեցինք յես, Անդրեյը և Գավրիկը: Յես բոլորովին չկայցրի: Անդրեյը յերկու անգամ կողքով անցկացրեց, իսկ յերրորդ անգամ կողքին կայցրեց:

— Ա՛յ քեզ հրամանատար, — ասաց Վանկա Միխնեվիչը:

Անդրեյը հոնքերը կիտեց և լռեց:

— Այդ վռչինչ չի նշանակում, — ասաց Սենկան: — Մի ուրիշ անգամ կկայցնի: Մեզ մոտ, ուղմաճակատում, ամենալավ նշանաձիգները նույնպես վրիպում են: Ինքը Սուբբոտինն ել յերբեմն այնպես ե վրիպում, վոր մարդ ամաչում ե նրա փոխարեն:

— Դադարեցրե՛ք խոսակցությունը, — ասաց Անդրեյը: — Պառկի՛ր, Գավրիկ:

Գավրիկը պառկեց, նշան բռնեց և յերեք գնդակն ել կայցրեց նշավակին, հենց ուղիղ թղթի շրջանակի մեջտեղը:

— Ի՛նչ նշանաձիգ ե, — ախ քաջեցին տղաները: — Գավրիկն ինքն ել զարմացավ:

— Եդ յա բախտ ե դիպել, — ասաց Սենկան, — հապա մի փորձի՛ր չորրորդը:

— Չորրորդը չի կարելի, — ասաց Անդրեյը: — Պայմանը յերեքական կրակելն եր:

— Ի՞նչ պայման, — սկսեցին աղմկել աղաները, —
Թող կրակի:

Գավրիկը մի անգամ ել կրակեց և կրկին խփեց
նշանին:

Ամբողջ շրջանակն այժմ ծակծկված եր ինչպես
մաղ: Բայց ծակերի մեծ մասը յեղերքին եր, իսկ
մեջտեղում սևին էյին տալիս միայն չորս ձեղքվածք —
և բոլորն ել Գավրիկինն էյին:

— Հիանալի հրացանաձիգ ե, — ասաց Անդրեյը՝
դիտելով նշավակը: — Դե վոր դուք Գավրիկին չոր-
բորդ անգամ թույլ տվիք, ուրեմն յես ել կարող եմ
նորից մի անգամ կրակել:

— Յես ել, — ասաց Վանկա Միխնեիչը:

Հանկարծ Իվան Վասիլյեվիչն սկսեց ձեռները թա-
փահարել:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց Անդրեյը:

— Կա-զակ-նե-րը... կա-զակ-նե-րը... ճանա-
պարհի վրա...

Մենք յետ դարձանք: Հեռու տափաստանում տե-
սանք հեծյալների մի շղթա:

— Լցրեք հինգ փամփուռներն ել, — հրամայեց
Անդրեյը: — Չվախենա՛ք, վոչինչ չի լինի մինչև մեր
մահը:

Անդրեյը վազեց սարն ի վեր: Մենք չխկացրինք
փականները և հեռուցինք նրան:


— Պառկեցե՛ք, — նորից հրամայեց Անդրեյը:

Լեռան վրայից մենք տեսանք, ինչպես, սմբակնե-
րը թաղելով, քառաարտի արշավում էյին դեպի մեզ
կազակների ձիերը: Լավում եր նրանց խուլ, հավասա-
րաչափ մեղմիկ դոփյունը:

— Գործը շատ ե վատ, իմ յեղբայրնե՛ր, — շնչաց
Իվան Վասիլյեվիչը:

— Մի՛ վախեցիր, դլխավորն ե՛ չվախենալ, —
ասաց Անդրեյը — միայն թող մի քիչ ավելի մոտ
գան...

Ահա արդեն լսելի յե, ինչպես խռոացնում են
ձիերը: Նրանք գլուխներն առաջ են մեկնել ու սմբակ-



ներով յետ են շարտում չորացած հողը: Ահա նրանք իջնում են հեղեղատը, կրկին բարձրանում սարը, ուղիղ մեզ վրա յեն գալիս:

Կաղակների փափախների վրա ճոճվում են սպիտակ լենտեր:

— Կրակեցե՛ք, — բղավեց Անդրեյը: — Կրակե՛ք վերևով: Գուցե խոտորվեն:

Իսկ կաղակները — ահա նրանք:

— Համազարկ, կրակեցե՛ք...

Ծխի մեջ կորանք: Համարյա նույն ընթացքին կրակը բաց արին և կաղակները: Գնդակները գրնդում էյին՝ քարերին դիպչելով, քերծում էյին հողը, մեր աչքերը հողով լցնելով: Մենք փորսող տալով իջանք ներքև, ձեռքերով խոտերից կառչելով: Բլրակի տակ Անդրեյը հրամայեց.

— Դադա՛ր: Լջրե՛ք:

Մենք կանոն առանք: Միայն վանկա Միխենովիչը և Պաշկա Բոչկարյովը դեռ սողում էյին ներքև:

— Դադա՛ր, — աղաղակեց Անդրեյը:

Այդ ժամանակ բլրի գագաթին յերևաց մի ձի: Նրա հենց բաշի վրա հավել էր լենտավոր փափախով կաղակի մի գլուխ:

Դավրիկը համարյա առանց նշան բռնելու կրակեց: Նրա հետևից կրակեց Սենկան:

Ձին պտտվեց տեղում և սմբակներով սկսեց դուրս գալ: Կաղակը սողաց թամբի յեղրին՝ ձեռներով բաշից բռնելով:

Այդ ժամանակ լավեց նորից մի դարկ — չնկատեցի ել, ով էր մեր տղաներից: Ձին հանկարծ յետ դարձավ և ներքև արշավեց, հետևից քաշ տալով ասպանդակներից կախ ընկած կաղակին:

— Սպանեցինք մեկին, — աղաղակեց Սենկան: Գեհ, այժմ հուպ տվե՛ք, տղաներ, թե չե բոլորիս կբրդեն:

Մենք նետվեցինք ներքև, դեպի հեղեղատը:

Բոլորովին ներքևում, թփերի հետևում կանգնեցինք շունչ առնելու: Դուրսում այլևս չէր լավում:

— Մի գնա՛, Դավրի՛կ, հետախուզի՛ր, ի՞նչ է կատարվում այնտեղ:

Դավրիկը կամաց սողաց սարալանջով դեպի վեր: Թփերի հետևից մենք հետևում էյինք նրան: Ահա նա հասավ գագաթը և աչքներիցս կորավ:

Մենք, շունչներս բռնած, անշարժացանք: Անցավ մի ընթաց, յերկրորդը: Հանկարծ տեսնում ենք՝ Դավրիկը կանգնած է վերևում և ձեռքով է անում մեզ:

Ի՞նչ է ուզում նա:

— Տղանե՛ր, — կանչում է Դավրիկը, — այստե՛ղ:

Մենք արագ վազեցինք սարն ի վեր:

— Տեսե՛ք, հրեն նրանք, — աղաղակեց մեզ Դավրիկը, ցույց տալով տափաստանի միջով անցնող ճանապարհը:

Կաղակները ճանապարհով արշավում էյին դեպի կայարանի կողմը: Յոթ հողի էյին: Նրանք մեզնից արդեն հեռու էյին, բայց մենք նկատեցինք, վոր ձիերից մեկը գնում էր առանց հեծյալի:

— Իսկ ո՞ւր է սպանվածը, — հարցրեց Վասկան:

— Յերևի մեկն ու մեկը նրան վերցրել է իր թամբի վրա, — ասաց Սենկան:

Մենք յերկար ժամանակ նայում էյինք կաղակների հետևից: Հանկարծ Անդրեյն ուշքի յեկավ:

— Տղանե՛ր, — ասաց նա, — պետք է արագ տները ցրվել: Թե չե նրանք կվերադառնան ոգնական ուժերով: Կկարծեն, վոր այստեղ գործում է պարտիզանական մի ամբողջ շոկատ:

Այդպես վերջացավ մեր փորձնական նշանաձուլությունը: Մենք տուն վերադարձանք, կարծես թե մոռցինք չէր պատահել, — մինչև անգամ Պորֆիրիին ել չպատմեցինք, թե ի՞նչ պատահեց մեզ հեղեղատում:

Մյուս որը գյուղում տաղնապալի գրություն էր: Կաղակները քառասմբակ սլանում էյին գյուղից-գյուղ, գյուղից տափաստան, յերևի բոլշևիկյան շոկատ էյին

փնտուում: Շուկայում ծերունիները պատմում էյին, թե շկուրոյականները 200 բուլշևիկ են զնդակահարել: Իսկ ջոկատից կենդանի մնացածները լեռներն են քաշվել և սովից կմեռնեն:

Իսկ գյուղում արհեստավարության մեջ այլ բուրեր էյին պատվում:

— Կազակները ծլկել են, — ասում էյին բանվորները: — Կանաչ հեղեղատում նրանց լա՛վ կերցրել են:

Դե վոր կարմիր ջոկատը յերևացել է, ուրեմն մի բան դուրս կգա:

XXV Գ Լ Ո Ի Խ

ԶԳՈՒՅՇ, ԱՏԱՄԱՆ

Ամեն որ մեզ մոտ՝ գյուղը նորանոր լուրեր էյին հասնում:

Պատմում էյին, իբր թե Բոգայեվսկին՝ Գոնիֆատամանը, փոխանակ Ռոստովը կարմիրներից պաշտպանելու, ինչ վոր «ինքնապաշտարանության գուգաղներ» է հավաքադրում: Բայց գուգաղավորներին հրացաններ բաժանել ատամանը վախենում է, վորովհետեւ գուգաղավորների մեջ շատ բանվորներ կան, վորոնք միայն նրա համար են ցուցակագրվել, վորպեսզի հրազեն ստանան: Պատմում էյին, վոր բանվորներն իրենք ուղղական գուգաղներ են կազմակերպում, վոր կարմիր բանակին Ուկրաինան կտրել է կազախյին ռայոններից, վոր Դենիկինը Ռոստովից իր շտաբի և կառավարության հետ փոխադրվել է Յեկատերինոզար՝ ծովին ավելի մոտ:

Ռոստովից մինչև Խաչմաղ բոլոր կայարանները լցված են մարդատար, սպրանքատար, զրահապատ ու սանիտարական գնացքներով,

Բուդյոնին սղմում է Բելայա Գլինայից: Կազակները փախչում են:

Ահա արդեն Ռոստովը զրավված է: Ամբողջ Կուրանով գիշեր ու ցերեկ ճոռում են սայլերը, կարծե-

թե թափառախմբեր են գյուղից գյուղ իրար հետևից ձգվում:

Կին-կազակներն անհյուրընկալորեն են դիմավորում անապատան դոնաբնակներին:

— Փետրահան սիրամարզնե՛ր, դո՛ւրս մեր խըրճիթներից:

— Յեկել են Կուրանի հացը ձրիաբար ուտելու:

Բանվորները դեպույտում արդեն բարձրաձայն են խոսում այն մասին, վոր որեցոր սպասում են «ընկերներին»: Վարպետը լսում է այդ խոսակցությունները և միայն վախկոտությամբ համաձայնություն հայտնում:

Գյուղում չքավորությունը նույնպես սկսել է շարժվել: Յերբ Ատամանը հայտարարեց զորահավաքի մասին, վատընություն յեկան միայն մեծամորուք ու նեվորները: Գյուղական չքավորությունից վոչ վոքի մտքով չանցավ ներկայանալու: Յեվ քիչ էյին մնացել նրանցից գյուղում: Վոմանք լեռներն էյին քաշվել, վոմանք հեղեղատում էյին թագնվել:

Իլյա Ֆեոդորովիչն ու Ռեպկոն ամբողջ որերով թափառում էյին գյուղերն ու շեները, իրենց մարդկանց էյին հավաքում: Կորնելյուկը բանվորների համար հրացաններ էր ձեռք բերել: Անդրեյն ինքը տեսել էր՝ ինչպես Պորֆիրին ու Կորնելյուկն արկղից դատարկում էյին հրացանները և համարյա թե բացբաց բաժանում բանվորներին:

— Տղանե՛ր, — ասաց մեզ Անդրեյը: Մենք պետք է հետախուզության գնանք կայարանը և գյուղը: Ասում են՝ շուտով նրանք իրենց կրուսկները դես են դարձնելու:

Ինքն Անդրեյը Գավրիկի հետ միասին կայարան ուղեվորվեց, իսկ ինձ, Սենկային, Վասիլային ուղարկեց յերկաթուղու գիծը:

Կայարանում միշտ հնարավոր էր ամենաթարմ նորություններն իմանալ:

Այդ որը կայարանի ցանկապատերին մենք տեսանք

մի հայտարարութիւնն, վարդապետն թղթի վրա տպագրված, խոշոր ու սև տառերով:

«Կազակներ: Ինձ այտեղ ուղարկել և նորին մեծութիւննը՝ Անդրխայի թագավորը նրա համար, վորպեսզի ողնեմ ձեզ քրիստոնէութեան թշնամիներէ դեմ մղած ձեր պայքարում: Մի մտանա՛ք, վոր բոլշևիկներէ հետեւից դալիս ևն չինացիները, լատիշները և ուրիշ վարձկաններ, վորոնք կամենում ևն ձեր դժուրութիւնն ու տներում արյունոտ տոնակատարութիւնն սարքել:

«Թույլ կտա՞ք դուք արդո՞ք, կազակներ՛, վոր ձեր յերեխաներն ու կանայք այդ մարդասպաններէ ծաղրի առարկան դառնան: Յես հաղորդել եմ նորին մեծութեանը, վոր դուք բոլորդ ել վորոշել եք, ինչ գնով ել լինի, վոչնչացնեք այդ մարդկանց...»:

Այդ խոսքերով վերջանում էր հայտարարութիւննը: Ներքեւի ծայրը պատուված էր: Հայտարարութեան վերջը կարգացրինք մի ուրիշ ցանկապատի վրա: Այնտեղ թերթիկը կանաչ գույնի յեր:

«Յես դիտեմ, վոր պատերազմը դժվար է: Յես դիտեմ՝ ինչպէս դուք պատերազմի հենց սկզբից, չնայելով ցրտին ու ձյունախառն մրրիկներին, արիարար կռվում եյիք Յարիցիների անծայրածիր տափաստանների բոլոր վայրերում: Յես դիտեմ՝ ինչպէս եք դուք մինչև այժմ պայքարել, զրկված լինելով անհրաժեշտագույն բաներից: Բայց այդ բոլոր բաներում յես հարող եմ և կողնեմ ձեզ, այժմ միայն հանդերձանքով ու սարքավորումով:

«Կազակներ, թող աստված ողնի ձեզ: Դուք պայքարում եք սուրբ գործի համար: Ձեզ հետ է դեներալ Դենիկինը: Յեթե այդպիսի մարդիկ, ինչպէս նա յե, շատ լինէյին Ռուսաստանում, դուք վաղուց արդեն հաղթած կլինէյիք: Հավատացե՛ք նրան, մի՛ հավատաք նրանց, ովքեր ասում են, թե Ռուսաստանը այլ է, Կուբանը և Դոնը — այլ: Ժամանակի ընթացքում, յերբ կառավարութիւնը հնարավորութիւններ կտանա, Անդրխայի ողնութեամբ կտա ձեզ մանուֆակտուրա և ապրանք: Այդ պատճառով ել, չնայած, վոր յես անդրխացի յեմ, ցավով եմ տեսնում, թե ինչպէս Ռուսաստանի մի

ջանի զավակներ այժմ — նրա վտանգավոր բոպեններին — տատանվում ևն և ջերմորեն ու արագ չեն ընդառաջում՝ վիրավորված մորն ողնելու: Թող աստված ողնի ձեզ»:

Ստորագրութիւնն այսպէս էր.

«Գեներալ-Մայոր Սոլման, նորին մեծութեան անդրխական զինվորական միսսիայի պետ, Նեգամայեխայա և Ստարոչերկասկայա ստանիցաների պատվավոր կազակ»:

Վասկան պոկեց յերկու թերթիկն ել՝ և՛ վարդապետնը, և՛ կանաչը, գրպանը դրեց և ասաց.

— Ինչպէս անեմ՝ մի անգամ այդ գեներալ-մայորին տեսնեմ: Յես հրացանով նրա ճակատին մանուֆակտուրա կտայի:

Մենք առաջ զնացինք:

Շկուրոյակիան գնացքը, գայլային դուռնչերով զարդարված, զբոսնում էր յերկաթուղու դժերի վրա:

Կայարանի գլխավոր մուտքի մոտ ձիերի վրա շարված էր «գայլային հարցուրյակը», շկուրոյակիան հավատարիմ գործը: Ամեն մի շկուրոյակիանի սպիտակ դլխանոցի վրա ձոձվում էր մի մի գայլի պոչ: Ձիերը պարում եյին տեղերում, խճաքարից կայծեր հանելով: Առաջից՝ չիկակարմիր գամբիկի վրա նստած էր յեսաուլը, մոռյլ ու չարամիտ: Մի ձեռքով նա յերկար բեխերն էր վոլորում, իսկ մյուսով սպիտակ սանձերն էր բռնել:

— Նայի՛ր՝ ինչպիսի սողուն է նստել, կասես անձոռնի նկար լինի, — շնջաց ականջիս Մենկան:

— Ի՞նչ եք բերաններդ բաց արել... Կորե՛ք, — սոռացին մեզ վրա միանգամից յերկու կազակ:

Մենք քաշվեցինք մի կողմ և կանգնեցինք: Այդ ժամանակ գլխավոր մուտքի մոտ յերևաց մի փոքրիկ կարճ քթանի մարդ, շիկակարմիր փոքր բեխերով ու բորբոքով աչքերով: Նա հագել էր վազմաներով գորշագույն չուխա: Շիկակարմիր Կուբանի գլխարկի տակից փնջերով դուրս եյին ցցված փոշով ծածկված

Մազերը: Նա ամբողջովին ինչ-վոր փոշոտված ու
գորշագույն էր: Նայում է գայրացկու: Հետևից,
նրա գլխանոցի վրա ճոճում էր յերբեմնի շատ ճոխ,
խակ այժմ քրքրված գայլի պոչը:

Կապիտանը թափահարեց մտքակը և վողջունեց:
Հարյուրյակը, քանի ուժ ուներ, ծղրտաց. «Ուռա»:

Կարճթմանին արագ նայեց չորս կողմը և քայլեց
առաջ: Կազակները կրկին յերկու անգամ «ուռա» գո-
չեցին և ձիերից ցած թռան:

Կարճթմանին կանգնեց կազակների առաջ և խռո-
պոտ ձայնով ասաց.

— Կազակներ, մենք մինչև մեր վերջին ուժերը
կրահով և արյունով կպաշտպանենք մեր փառավոր
հայրենիքը, մեր ստնաուս կուրանը:

Կազակներն ինչ-վոր ցաք ու ցրիվ աղաղակեցին.
«Կմեռնենք հայրենիքի համար»: Իսկ կարճթմանի
մարդը՝ շիկահարմիր գլխարկով, միանգամից յետ
դարձավ և անհայտացավ յերբուրդ կարգի դռները
հետև:

Գա ինքը Շկուրոն էր:

— Յեթե մարդ դրա գլուխն աղը դնի, — ասացի
յես Սենկային: — Բոլոր սպանված ընկերների համար
այնպես կհասցնեյի՛:

Մենք դեռ մի քիչ ել թափառեցինք կայարանում
և գնացինք մեր տները:

Յերեկոյան դեմ հանդիպեցին մեզ Անդրեյն ու
Գավրիկը և պատմեցին, վոր գյուղում վառվում են
հարուստների ամբարները: Գիշերը ինչ-վոր մեկը
կրակ է տվել:

Բանտը լիքն է ձերբակալվանծերով: Գյուղի վար-
չության ցանկապատի վրա մի պարանով կախված են
յերկու հոգի՝ տղամարդ ու կին: Նա՛ մի կողմից, կի-
նը՝ մյուս կողմից:

Ասում են, վոր կախվածներն են — սլաքավար
Ուտյուսկոն և բուժակուհի Նատալյա Նիկիֆորովնա
Վելբաումը:

— Ո՛հ, ի՞նչ սարսափելի յե, — ասաց Գավրիկը: —

Նրանք համարյա կանգնած են, վոտները քիչ է մնում
գետնին կպչեն:

Մարտի վերջն էր, իսկ յեղանակը վաղուց արդեն
բոլորովին ամառային էր: Միայն վերջին որերն են
անձրևներն սկսվել:

Մենք հեղեղների ժամանակ ել ասնը չեյինք նըս-
տում: Ամբողջ ջոկատով հավաքվում էյինք և՛ տա-
փաստանում, և՛ գծերի վրա:

Այժմ մենք արդեն վոչ-վոքից չեյինք վախենում:
Բուլչևիկյան ջոկատի մասին, վորը կազակների հետ
Կանաչ հեղեղատում հրացանաձգության էր բռնվել,
գյուղի ու շենի բնակիչները մոռացել էյին:

Այն որվանից հետո հեղեղատում հայտնվել էյին
բազմաթիվ իսկական ջոկատներ: Նրանք գործում էյին
սպիտակների թիկունքում, հարձակվում էյին կազա-
կային հարյուրակների ու գյուղական վարչություն-
ների վրա:

Այդ ժամանակ Բուդյոննու հեծելազորն արդեն
պատռել էր ռազմաճակատը և պատրաստվում էր Տի-
խորեցկու վրա հարձակվելու:

Մենք պարզ չգիտեյինք՝ վո՛րտեղ է Բուդյոննին,
բայց գիտեյինք, վոր նա կտորում է սպիտակներին,
գերի յե վերցնում ամբողջ շտաբներ, շրջապատում է
եչելոններ, զրահապատ գնացքներ և վերցնում և որե-
ցոր առաջ է շարժվում դեպի մեզ:

Մենք ել մի րոպե չեյինք կորցնում: Մտնում է-
յինք դեպոն և հենց այնտեղ, համարյա վարպետի աչ-
քի առաջ, փամփուշտներ էյինք կտրում, վառուղով
լցնում և նրանց վրա կապարե ինքնագործ գնդակներ
ամբացնում:

Այժմ մենք փորձված տղաներ էյինք, — չե՞ վոր
ել ինչեր ասես, վոր մենք այդ միջոցում չտեսանք,
չփորձեցինք — և բանտ նստեցինք, և գնդակահարման
յենթակա յեղանք, և կազակների հետ իսկական կռվի
բռնվեցինք:

Վերջը մինչև անգամ այնտեղը հասավ, վոր

անգլիական գեներալին պատասխան հորինեցինք և բոլոր ցանկապատերին կայրինք:

Ահա թե ինչ հայտարարութիւն գրեցինք.

«Կաղակներ': Սարում և պատվաւոր կազակ, անգլիական միասիայի գեներալ-մայոր Սոլմանը: Վոչ մի մանուֆակտուրա նա ձեզ չի տա: Իրանով ուղղակի գրավել և ուզում ձեզ: Յեզ վորովհետև դուք կիսագրագետներ եք, ապա և ձեզ տխմարացնում են, ինչպես հիմարների:

«Քնդհանրապես ձեզ հետ խոսակցութիւնը կարճ կլինի, կրունկներդ ճարպոտեցե՛ք և վողջ-առողջ արանքը ճղե՛ք: «Բուռչոննին ձեզ համար կարտոֆիլով տոպրակ չէ: Նա ձեզ ցույց կտա, իսկ առանձնապես սպաներին:

«Ձեզ վրա ետան չի նստի, վոր դուք կախել եք սլաքա-մար Ուստուկոյին և բուժակուհի Նատալյա Նիկիֆորովնա վերաբուժին, և մնացած բոլորի համար նույնպես մի լավ կատանաք:

Կարմիր բանակը վրա կտա շուտով:

«Ձգո՛ւյշ, ատաման»:

Այդ կոչը մենք հորինում եյինք ամբողջ գիշերը: Գրում ու ջնջում եյինք: Գրում ու ջնջում: Միշտ թը վում եր, թե ենպես չի դուրս դալիս: Բուռչոննու մասին Սենկան հորինեց, իսկ ատամանի մասին՝ Վասկան:

Իսկ այդ կոչը մենք փակցրել ենք ամբողջ շոկատով: Ամեն մեկը գրել եք յերկու-յերկու հատ և կամուրջով փակցրել ցանկապատերին:

Յերկար ժամանակ կախված չմնաց կոչը ցանկապատերին: Կաղակները պոկեցին:

Միայն մի ցանկապատի վրա — կայարանի մուտգեռ յերկար կախված եր թղթի մի կտորը — այս խոսքերով:

«Ձգո՛ւյշ, ատաման»:

Ապրիլի 9-ին կայարանում կատարյալ խառնաշփոթութիւն եր տիրում:

Մատուցում եյին շարժական կազմեր, փոխադրում նրանց մի գծից մյուսի վրա, տեղի-անտեղի լսվում գնացք կազմողների տաննապալից սոււրոցները: Կայարանապետը նետվում եր մի կողմից մյուսը: Սիտ ողակով նրան շրջապատել եյին ճամբրուկներով, դամբուլներով, հակերով փախտականներ՝ Ռոստովից և Բատայսկից:

— Յե՞րբ են նստեցնելու: Չե՞ վոր կարմիրները վրա յեն հասնում:

— Ինչո՞ւ շարժակազմը չէք մատուցում:

— Բուլչեիկներին՞ եք ծառայում:

Կախարանապետն ազդադրոջակներով պաշտպանվում եր կուտակված ուղեվորներին և բոլորին ել նույն պատասխանը տալիս.

— Սպասեցե՛ք, պարոններ: Այդպես չի կարելի: Յես մենակ եմ, իսկ դուք՝ բազմաթիւ:

Բայց յերբ ուղևորների ամբոխի միջից ձեզքելով վորևէ անգլիական շինելով զինվորական եր մոտենում նրան, մաուզերը կողքին, կայարանապետը շփոթված ցած եր թողնում դրոշակը և միայն մըթմըթում.

— Այս բոպեյիս: Հենց վոր սլաքը հնգին հասնի, շարժակազմն իսկույն կկազմեմ:

Չինվորականը ձեռքը մեկնում եր մաուզերին:

— Յես քեզ ցույց կտամ հնգին, սրիկա':

Յերեկոյան գեմ ժողովուրդն ամբողջապես փակել եր կառամատույցը: Գառնենի ժակետներ հագած կանայք, կոկարդով աստիճանավորներ, քահանաներ փոշոտված փարաջաներով, կրծքներին խաչեր, դեղին ուսագիրներով սպաներ, արծաթյա ուսագիրներով սպաներ, թևքերը դանդերով սպաներ, — այդ ամբողջ ամբոխը շարժվում ու դուրսում եր:

Մեր գյուղական հարուստներ՝ Խառուստովները կայարան էյին յեկել ատամանի ընտանիքի հետ միասին և նստած էյին մեխոված ահագին արկղների վրա, սպասելով առաքման: Բայց կայարանապետը թագնվել էր և այլևս չէր յերևում: Ամբոխը ջարդում էր գրասենյակի դռները, թմբկահարում նրա պատուհանների շրջանակները, կայարանապետը ծալտուն չէր հանում:

Յերկաթուղու գծերի վրա, գյուղ տանող ճանապարհին, ամբողջ շենում շրջագայում էյին յափունջիներով ձիավորները:

Այդ գիշեր յես չպառկեցի քնելու: Միշտ սպասում էյի՝ մինչև մայրս քնի, վորպեսզի վորևէ կերպ, աննկատելի կերպով դուրս պրծնեմ փողոց: Իսկ մայրս, հակառակի պես, չէր քնում, միշտ վեր էր կենում ու դեպի իմ անկյունը նայում: Յերևի գլխի յեր ընկել, վոր ծլկվել էյի ուզում:

Միայն վաղ առավոտյան ինձ հաջողեց կամաց յետ քաշել փականը և դռնից դուրս սողալ:

Ինչ-վոր հեռվում, սեմաֆորի մոտ, ճչում էր չոգեքարը:

Այրիւյան թարմ առավոտը դեռ թառած էր գյուղի վրա: Բայց հորիզոնի վրա արդեն յերկինքը գորշանում էր:

Մեր շենի փոքրիկ անակների միջից հսկայի նման բարձր ցցվել էր ցեմենտե ջրմուղ կայանը: Իսկ հեռու՝ գյուղի այն կողմում բարձրանում էր յերկգմբեթ հին յեկեղեցին:

Յես գնացի դեպի կայարան:

Հրապարակի վրա—գլխավոր մուտքի մոտ—փնչացնում էյին թամբած ձիերը: Սանձերից բռնած՝ նրանց պահել էյին քնատ կազակները, վորոնք նստել էյին կայարանի արտասանդուխքի վրա: Հենց այստեղ ցանկապատի մոտ, պատսպարվել էր գնդացրով մի սայլակ՝ ծածկված բրեզենտե ծածկոցով: Գնդացրորդները, գնդացրի անիվների վրա կռացած, բարձր խումփացնում էյին:

Յես ցանկանում էյի սլկվել կայարանի նեղ միջանցքը, բայց պահապանն արգելեց:

— Ո՞ւր ես գոռում:

Յես վոչինչ չպատասխանեցի ու յետ դարձա: Պարտեղի հետևից յեկա ներս նայեցի հեռագրատան մեծ, խավար պատուհանից: Հեռագրատանը, ապարատի մոտ, նստած էյին յերկու մարդ՝ հեռագրիչն ու սպան: Ապարատն ինչ-վոր չխչխկացնում էր, ժապավենը դանդաղ սահում էր կոճիկի վրայից հատակին, իսկ մարդիկ քնած էյին:

Ինքս ել էյի ցանկանում քնել: Հենց ես է՝ ուզում էյի տուն վերադառնալ քունս առնելու, յերբ հանկարծ ինչ-վոր տեղ՝ մոտակայքում դղրդաց թնդանոթը:

Արկը տնքալով լողաց ողի մեջ և պայթեց կայարանի հետևում: Կարծես բռունցքով հարվածեցին կայարանի բույսը ապակիներին:

Առաջին դարկից հետո թնդաց յերկրորդը, հետո յերրորդը, չորրորդը:

«Մերոնք հարձակվում են,— մտածեցի,— պետք է Անդրեյին արթնացնել»:

Յես նետվեցի հրապարակի միջով և քիչ էր մնում գետին գլորելի մի սարսափահար ախկնոջ, վոր մի ահագին ճամբրուկ էր քաշ տալիս:

— Ո՞ւր ես գոռում,— կանչեցի յես բարձրաձայն՝ կայարանի դռների մոտ ինձ կանգնեցնող պահապանի նման:

Տիկինը ձեռքից բաց թողեց ճամբրուկը և սկսեց մրթմրթալ:

— Յես գնացք եմ նստելու:

— Ի՞նչ գնացք, — հարցրի յես ահեղորեն:

— Վորևէ մի գնացք:

Այդ ժամանակ պայթեց հրացանի մի կրակոց: Տիկնոջ վոտները ծալվեցին:

— Գնացքներ այլևս չեն լինելու: Նրանք վերացվում են: Թագնվեցե՛ք շուտով, թե չե հիմա ձեզ կգնդակահարեն անկյունից:

Տիկինը վերցրեց ճամբրուկը և դուրսը կուսցնելով՝
քանի ուժ ունեք վազեց դեպի դուռը:

Իսկ յես գնացի Անդրեյի մոտ:

Չարկերն սկսում էյին ավելի ու ավելի հաճախա-
կի դառնալ:

Ճանապարհին իմ դեմ-հանդիման ուժեղ թափով
սլանում էյին հեծյալները, ոգում շփացնելով մըտ-
րակները: Իեպի կայարանը տանող վոլորանի մոտ
ձիերից մեկն ընկավ ծնկների վրա, դլորվեց կողքի,
արորելով հեծյալին:

Դուրս ցայտեց ձիու արյան թանձր շիթը: Ձին
յերկարացրեց վիզը, սկսեց վոտները սալ տափովը և
նետեց դուրսը դեանի վրա:

Կազակը դուրս յեկավ ձիու տակից, դժվարու-
թյամբ ազատեց վոտքն ասպանդակից և կաղալով
վազեց դեպի բետոնե ցանկապատը: Նստեց այնտեղ և
սկսեց վոտքից կոշիկը քաշել:

Անդրեյի մոտ էյին Վասիան, Սենկան և Իվան
Վասիլյեվիչը:

Հայդե՛ ձեղնահարկը, — ասաց Անդրեյը, — Պոր-
ֆիրին վաղուց այնտեղ է:

— Ինչո՞ւ յե նորից ձեղնահարկը գնացել, — հարց-
րի յես:

— Նա այնտեղ գնդացիք ունի, — ասաց Անդրեյը:

— Գնդացի՞ք. իսկ վո՞րտեղից է գնդացիքը:

— Նրա մոտ նա միշտ յեղել է, միայն այդ մասին
մենք չգիտեցինք: Յերբ նրան վիրավորել են, նա չի
ցանկացել թողնել գնդացիքը, դրա համար էլ մնացել
է այնտեղ: Թագրեր է փակուղում: Իսկ այժմ պետք
կգա:

— Իսկ գնդացիքը ժապավեն ունի՞, — հարցրի
յես:

— Յեվ ժապավեններ՝ յերկու արկղիկով, — ասաց
Անդրեյը: — Գնանք, տղանե՛ր:

Իվան Վասիլյեվիչը, Սենկան և Վասիան կուրտ-
կաները պրկեցին և հրացանների փոկերն ունեցով
անցկացրին:

Իմը չէյի վերցրել:

— Վոչինչ, — ասաց Անդրեյը, — գնալիս կվերց-
նես:

Յերբ մենք Անդրեյի մոտից դուրս յեկանք, արևն
արդեն ջրմուզի կայանի վրա յեր: Թռչունները յե-
րամներով, սարսափահար յեղած, թռչում էյին կուր-
սավիլայի կողմից դեպի կայարան: Չարկերը յերբեմն
հանդարտվում էյին, յերբեմն նորից ճարձատում,
առանց լուելու:

Մեր մոտով թխթխկացնելով իրար հետևից
անցնում էյին յոթ սայլակ: Գնդացորդ շկուրոյա-
կանները գնալիս ժապավենները դարսում էյին ընդու-
նարանների մեջ ու թխկացնում կափարիչները:

— Փախան ցաք ու ցրիվ, — ասաց Անդրեյը, նա-
յելով նրանց հետևից. — փախչեք, թե չփախչեք
ճիւղուլնն է, այսոր ձեր մահն է:

Մենք կանգնեցինք մեր տան մոտ:

Յես բաց արի ցանկապատի դուռը:

— Սպասի՛ր, Գրիչկա, — ասաց ինձ Անդրեյը: —
Տանից մի դուրս ջուր վերցրու հետդ:

— Ինչո՞ւ համար, — հարցրի յես:

— Գնդացրի համար, — հրամայեց Պորֆիրին:

Յես թռա բակը: Հրացանս թագրեր էյի սրա-
հում, կիսատակառի հետևում: Արագ վերցրի յես ու
լցրեցի: Հետո վազեցի մեր բնակարանի նախասենյա-
կը, մի դուրս ջուր վերցրի, վոր մեզ մոտ միշտ դրված
էր լինում տաբուրետի վրա: Մեր տանեցիներից վոչ
վոք ինձ չնկատեց:

Դուրսը ձեռքիս բռնած, հրացանը շապկիս տակ
պահած՝ նետվեցի յես դուրս, տղաներին համեւելու:

Նրանք արդեն մոտենում էյին փակուղուն:

Ճանապարհի վրա, ինչպես տարի ու կես դրանից
սոսաջ, յերբ սպիտակներն էյին հարձակվում, թափ-

Թըփոված էյին փամփուշտակալներ, կաշվե պայուսակներ, ուումբերի կոճիկներ, դատարկ փամփուշտներ, բայց այս անգամ մենք այդ բաները չեյինք հավաքում:

Հենց վոր մտանք փակուղու դարպասը, ճիշտ մեր գլխների վրա ինչ-վոր ուժգին ու ձիգ դռոաց.

— Նայի՛ր, սավառնակ,— աղաղակեց Վասկան:— Յեվ ինչքա՛ն ցածր է:

Սավառնակը մի շրջան կատարեց, ավելի ցած իջավ և հանկարծ ինչ-վոր ապակու նման փայլուն բան նետեց: Մի վայրկյանից հետո կայարանի կողմից լավեց շառաչալից հարվածի մի ձայն:

— Ռումբեր է շարտում,— ասաց Անդրեյը:— Չջարդե՞ մեզ այստեղ:

— Իսկ այդ մե՞րն է, թե սպիտակներինը,— հարցրեց Վասկան:

Պարզ է՞ մերն է, բայց միևնույնն է, կարող է խփել: Ի՞նչ գիտի նա, վոր դու Վասկան ես, կարմիրներին կողմնակից ես:

— Ներքեից, զանազան կողմերից սկսեցին թըխթըխկալ հրացանի դարկեր և հաճախ, ինչպես կարի մեքենա, ճտճտացնում էյին զնդացիները:

Սավառնակը քիթը ծռեց, նորից մի քանի ուումբ նետեց ու վեր բարձրացավ:

— Ստավրոպոլ է գնում,— ասաց Վասկան:

Մենք հասանք կտուրը ծակծկված նկուղին: Նրա դռան վրա առաջվա նման կախված էր ժանդարտված կողպեքը, մեծ՝ ինչպես ձիու պայտ: Չեղնահարկը տանող սանդուխքը շարժվում էր ու ճռռում մեր վրտների տակ այնպես, ինչպես այն որը, յերբ մենք փակուղում գտանք վիրավորված կարմիր բանակալինին:

— Ինչո՞ւ յեր այդքան ուշանում,— հարցրեց Պորֆիրին՝ ընդառաջելով մեզ ձեղնահարկի շեմքին: Յես արդեն մտածում էյի, վոր դուք ել կենդանի չեք:

Յես դույլը Պորֆիրինն ավի:

— Դե՛հ, այժմ ամեն բան կարգին է արդեն,— ասաց նա:

— Իսկ ջուրը քո ինչի՞դ է պետք,— հարցրեց Վասկան:

— Ինչպե՞ս թե ինչի՞դ է պետք: Գնդացիքը ջրելու: Թե չե փողը կրակից կտաքանա և կայայթի:

— Իսկ յե՞րբ կսկսես կրակել:

— Իսկույն ամեն բան կտեղավորեմ, ինչպես վոր պետքն է, և կսկսենք մի թեթև: Լսո՞ւմ եք, ահա այնտեղ մի փողը զնդացիք է թխթխկացնում: Իսկ մենք կփորձենք նրան հանգստացնել:

Պորֆիրին անհայտացավ ձեղնահարկի մութ անկյունում և այնտեղից դուրս բերեց մի մեծ զնդացիք: Ընդունարանի մեջ ու կախարիչի տակ փոշի ու ծղոտ եր խցկվել:

Մենք Պորֆիրիի հետ քանդեցինք զնդացիքը, խնամքով մաքրեցինք շորով բոլոր մասերը, նշանաձգից սկսած մինչև խոփիկը, ջուր լցրինք կաշե պատյանն ու կրկին սարքեցինք:

— Դե՛հ, այժմ լցնենք ավտոմատորեն,— ասաց Պորֆիրին՝ յերկարացնելով ժապավենն ընդունարանի պատուհանի մեջ և կոթը առաջ հրելով:

— Ահա այդպես է կատարվում, տղե՛րք, ավտոմատիկորենը: Իսկ յեթե մատով հուպ տանք կոճակը, նա արդեն ճլվլալ կսկսի:

Մենք այնպես տարվեցինք զնդացրով, վոր մինչև անգամ չեյինք լսում, թե ի՛նչպես մեր շուրջը հրացանի համազարկերն էյին վորոտում, նունակներն ու ձեռնառումբերը պայթում:

Յերբ նայեցինք պատուհանից, տեսանք, վոր տափաստանից զիզզազներով դեպի կայարան են շարժվում զորքերի յերկար շղթաներ:

— Ումո՞նցից են նրանք, ումո՞նցից,— հարցրեց Վասկան վիզը յերկարացնելով, վորպեսզի ավելի լավ նայի:

— Պարզ է, սպիտակներն այնտեղից գալ չեն կարող, այդ արդեն մերոնք են՝ կարմիր բանակայիններ:

Ամբողջ տափաստանը ծածկելած էր թանձր, սև ծխով ու փոշով:

Այդ սպիտակ գլխարդիականների ումբերն էլին պայթում:

Պորֆիրին հեռացավ պատուհանից, բռնեց գնդացրի կոթից, տարավ ինչպես մի կենդանու և ուղղեց նրան դեպի արտասանդուխքի հարթակը:

Հետո նա չորս կողմը նայեց, պառկեց և իր գընդացրի փողն ուղղեց այնտեղ, վորտեղից առանց լուրու ճթճթում էլին հալառակորդի գնդացիները:

Շուտով նրանց ճլխտոցի մեջ ներխուժեց մեր գնդացրի համաչափ ու թնդածայն տկուկոցը: Նրա բարձրացրած փողից կրակը դուրս էր ժայթքում փրնջերով:

— Ո՛խ, ո՛խ, — գնդացրի տակտով ցատկոտում էր վասկան, — ի՞նչ լավ է աշխատում մեքենան:

— Ահա թե ի՞նչ, տղանե՛ր, — ասաց Պորֆիրին: —

Ավելի լավ է՝ դուք կայարան գնացե՛ք:

— Ինչո՞ւ համար, — հարցրինք մենք:

— Գուցե դուք գեպոյականներին ոգնեք: Իսկ ձեր այստեղ մնալն ավելորդ է: Մեկ էլ տեսար՝ ինձ գնդացրի հետ կաղեսները բռնեցին: Ինչո՞ւ համար դուք իզուր կորչեք: Գնացե՛ք:

Մենք բոլորովին չէլինք ցանկանում մենակ թողնել Պորֆիրին:

— Լսի՛ր, Պորֆի՛րի, — ասաց Անդրեյը, — թող նրանք գնան, իսկ յես քեզ հետ մնամ: Կոգնեմ: Գուցե քեզ փամփուշտներ տալու կարիք կլինի, կամ ինչ...

— Յես ե՛լ կմնամ, յես ել, — կանչեցին Սենկան, Գավրիկը և վասկան:

— Դե մեկը, թերևս, մեկը թող մնա, — ասաց Պորֆիրին: Ահա դու, Սեմյոն, մնա՛: Իսկ մնացողներդ հեռացե՛ք, բայց միայն զգուշությամբ իջեք, վորպեսզի ձեզ վոչ վոք չնկատի:

Մենք համարյա չորեքթաթ տալով սողացինք սանդուխքից և, ինչքան ուժ ունեյինք, սլացանք կայարան:

Ուղեփոխների մոտ կանգ առանք և ուշադրությամբ սկսեցինք լսել:

Մի քանի գնդացիներ ճտճտացնում էլին զանազան տեղերից, բայց մերն իսկույն ձայնից կարելի չէր ճանաչել — տկուկացնում էր համաչափ, թավ ձայնով և ավելի ուժեղ, քան մնացած բոլորը:

Կայարանի մոտ, գծերի վրա մարդիկ ճամբրուկներով դեռ վազվզում էլին:

Կազմեցին ինչ-վոր շարժակազմ: Արշավում էլին ձիերին նստած կազակները, սայթաքում, սեխերին դիպչելով:

Ինչ-վոր զինվորականներ, շինեյներ ու չերկեսկաներ հազած՝ դեռ թակում էլին բռունցքներով կայարանապետի դուռը: Մի կազակ, թամբն ուսին դրած, — յերևի նրա ձին նոր էլին սպանել, — բռունցքով այնպես տվեց գրասենյակի պատուհանին, վոր ապակիներն անձրևի նման շաղվեցին:

— Գոհհի՛կ: Մատանա՛: Ինչո՞ւ համար չես առաքում, — գոռում էր կազակը՝ վրտնահարելով ապակուկտորները: — Գնացք տո՛ւր, թե չես հենց քեզ կթամբեմ ու կքչեմ:

Կայարանապետը գրասենյակում չէր. յերևաց, վոր կառամատույցի մյուս ծայրում է յեղել, յերկրորդ գծի վրա:

Մենք նրան դտանք կարգային վազոնի աստիճանների վրա: Նրա հետ էլին իր կինը և գիմնազիստ վորդինները: Համերաշխ ջանքերով բեռնում էլին նրանք տնային իրեր: Կինը ձեռներում բռնել էր նավթավառը:

Այս գնացքը, կարծում եմ, առանց հապաղման կուղարկեն, — ասաց Անդրեյը, — նայի՛ր, շոգեքարչն էլ արդեն կանգնած է: Ա՛խ, յեթե մարդ ուշացներ այդ գնացքը մինչև կարմիրների գալը:

Կողքի վազոնում տեղավորված էլին Պաուստովները և ատամանի ընտանիքը: Վազոնի մոտ կանգնած էր զինված պահակը:

Ընդամենը կլինենք քառասուն վազոն: Բոլոր դռներին ու պատուհաններին զինվորականներ էյին դուրս նայում:

— Ճամբու դի'ր, — աղաղակում էյին նրանք հաճախ, դեպի շոգեքարչը դառնալով: — Ինչո՞ւ յես հապաղում:

Իսկ դարկերը թնդում էյին ավելի մոտիկ, կարծես պահեստների հետևից և ջրմուղ կայանի մոտ: Առաջին կարգի վազոնի պատուհանների մոտ կանգնած կանայք տեղի-անտեղի ցնցվում էյին ու աչքերը ծածկում:

Իե ճամբու դրե'ք, ի՞նչ եք ուզում անել, — գոռում էյին նրանք մեքենավարին:

Շոգեքարչն ավելի ու ավելի յեր տնջում: Վերջապես հաստ կոնդուկտորը մեկնեց ուղեգիրը մեքենավարին և սուլիչը մոտեցրեց չրթունքներին:

Հանկարծ ինչ-վոր տեղից դուրս թռավ Իլյա Ֆեոդորովիչը և նրա ձեռքը բռնեց:

— Կանգնի'ր, ո՞ւմ ես ճամբու դնում:

Կոնդուկտորը դեռ բերանը բաց չէր արել, մեկ էլ շոգեքարչն անջատվեց գնացքից և սկսեց հեռանալ:

Մի քանի զինվորականներ մառաղներն ձեռներին նետվեցին շոգեքարչին հասնելու, մյուսները չրջապատեցին Իլյա Ֆեոդորովիչին:

— Չմոտենա'ք, — գոռաց Իլյա Ֆեոդորովիչը, — ում եք կնետեմ:

Չինվորականները ցատկեցին հեռու: Իսկ նրանցից բարձրահասակ մեկը, չերկեսկա հագած, պատյանից դուրս քաշեց նագանը և դեմ արեց Իլյա Ֆեոդորովիչին:

— Յես քաշվի'ր — մեկ էլ աղաղակեց Իլյա Ֆեոդորովիչը և կառամատույցի վրա նետեց ինչ-վոր փայլուն շիկ: Խուլ հարվածը խլացրեց ինձ և նույն բոպեյին ինչ-վոր բան դիպավ իմ ձեռքին:

Իրարանցումի ու աղաղակի մեջ վոչինչ չէր կարելի ջոկել: Յես լսում էյի միայն ատրճանակների կրակոցներ, տեսնում էյի՝ ինչպես կառամատույցով

փախչում էյին ինչ-վոր մարդիկ — զինվորականներ, տղամարդիկ, կանայք:

Յես հայանվեցի փախչող ամբոխի ամենախիտ տեղում: Գնալիս դիպա ինչ-վոր սնդուկի, սայթաքեցի և տղաներին կորցրի ամբոխի մեջ:

Այժմ արդեն հասկանալ չէր կարելի՝ ով ո՞ւմ վրա յե կրակում. կրակում էյին և՛ հետևից, և՛ առջևից — վազոններից, կայարանի պատուհաններից, անգամ, կարծեմ, և՛ կուռերից:

Իլյա Ֆեոդորովիչը վոչ մի տեղ չէր յերեկում:

Ապրանքատար վազոնի մոտ յես նկատեցի Ռեպկոյին: Ամբողջ կրծքով ընկել էր վազոնի դռան վրա, աշխատելով տեղից շարժել: Այս վազոնի ուղևորները, ինչ-վոր շլյապաներով պարոններ և տիկիներ, ներսից ամուր բռնել էյին դուռը և աղաղակում էյին:

— Ինչ ես անում, սրիկա': Չհամարձակվես դուռը կողպել, մենք ձիեր չենք:

Բայց Ռեպկոն ավելի ուժեղ էր, քան տասնյակ ուղևորներ: Նա դուռը քաշեց, փականը գցեց և բարձրաձայն ասաց:

— Նստեցե'ք այստեղ, մինչև բուլչեվիկները դաս, նրանք ձեզ բաց կթողնեն:

Փակված ուղևորները վոտներով ու ձեռներով խլաձայն թմբկահարում էյին դուռը:

Իսկ Ռեպկոն վազեց արդեն դեպի մյուս վազոնը:

Յես նետվեցի նրան ոգնելու: Հանկարծ, կարծես գետնի տակից, դուրս յեկան ու մեր կողքին կանգնեցին Գավրիկը, Վասկան, Իվան Վասիլյեվիչն ու մեր մյուս ընկերները:

Մենք ցրվեցինք դեպի վազոնները և սկսեցինք համերաչխ ու դղրդոցով փակել դռները մեկը մյուսի հետևից: Սարսափահար փախստականները մինչև իսկ չէյին դիմադրում: Միայն մի վազոնից, յերը նրա դռները կողպում էյինք, հանկարծ դուրս ցցվեց մառաղներով մի ձեռք: Բայց Գավրիկը հարմար ժամանակին այնպես խփեց այդ ձեռքին իր հրացանով, վոր մառաղերը թռավ վազոնի տակ:

— Իսկ ո՞ւր է Անդրեյը, — անհանգիստ հարցրեց ինձ Վասիկան:

— Իսկապես, վո՞րտեղ է անհայտացել Անդրեյը: Վաղուց է, վոր նրան վոչ վոք չի տեսել:

Բայց փնտռելու ժամանակ չկար: Հերթապահության տնակի կողմից, կառամատուցի վրայով, դեպի մեզ եյին վազում կազակները, հրացաններն առաջ պարզած:

Առջևից սլանում եր շյապով ինչ-վոր մի պարոն: Վազելիս նա յետ եր դառնում դեպի կազակները և բարակ ձայնով ձշում:

— Նրանք իմ իրերը կողպել են: Իմ ընտանիքը կողպել են:

— Նշանի՛ վերցրեք դրանց, տղանե՛ր, — աղաղակեց մեզ Գավրիկը: Մենք միանգամից չխկացրինք փականները:

Կազակները կանգնեցին: Յեթե կառամատուցի վրա արհեստավորներ չլինեյին, նրանք, իհարկե, մեր հախից մի լավ կզային: Բայց հենց այդ ժամանակ դեպոյականները չորս կողմից շրջապատեցին գնացքը: Նրանցից ամեն մեկն իր ձեռքում ուներ հրացան կամ նազան:

— Վոչ վոքի դուրս չթողնեյ, վազոններից, — աղաղակեց մեպկոն արհեստավորներին: — Չխնայել բուրժուկներին:

Կազակները կանգնեցին, կանգնեցին, իսկ հետո դանդաղ շուռ յեկան ու յետ գնացին: Գլխարկով պարոնը վազեց նրանց հետևից:

— Յեղբայրնե՛ր, յեղբայրնե՛ր, — աղաղակում եր նա նրանց հետևից: Այդ ի՞նչ բան է: Ի՞նչ խայտառակություն: Հրամայեցեք վազոնները բանալ:

Բայց կազակները նրան չլսեցին: Հասնելով առաջին յեղբին, նրանք, կարծես, ըստ հրամանի դեպի աջ կատարեցին մի կիսաշրջան և վազեցին փողոց:

Սպաների ու քաղաքացիների խայտաբղետ ամբուխը կարծես հալվեց: Վոմանք փախան, իսկ մյուսները

նստել եյին փակված վազոններում, հուսալի հակողության տակ:

— Գնանք գյուղ, տղանե՛ր, — ասաց Գավրիկը: — Կարող է այնտեղ հարմար գործ ձարվել:

Մենք գլխավոր մուտքով դուրս յեկանք փողոց: Այնտեղ — դնչերը ցանկապատի մեջ կոխած՝ կանգնած եյին թամբած ձիերը: Նրանց վոչ վոք չեղ հուկում: Յերևում է՝ կազակները մոռացել եյին իրենց ձիերին: Բայց այժմ ո՞ւր կարող ես սլանալ, թեկուզ և ամենակայտառ ձիով, քանի վոր համարյա հենց կայարանի մոտ, և՛ գյուղում, և՛ Կուրանի կամրջի մոտ պայթում են կարմիր բանակային ումբերը, իսկ բոլոր հեղեղատներում յեռում են պարտիզանները, կազեաների ճանապարհները կտրում:

— Հեճե՛ք, տղանե՛ր, աղաղակեց մեզ Գավրիկը:

— Մենք բացինք սանձերը և աշխույժ թռանք ձիերի վրա: Ամեն մեկն իր համար ջոկեց իր հավանած ձին: Ինձ բաժին ընկավ սև, ճակատին սպիտակ խալ և վոտքն սպիտակ ողակով մի ձի:

Իսկ այն ձիերը, վոր մեղանից վոչ մեկի ճաշակով չեյին, այնպես ել մնացին ցանկապատին կապած:

— Ո՞ւր ենք թռչելու, — հարցրեց Գավրիկը:

— Դեպի կամուրջը, — պատասխանեց Վասիկան բոլորիս փոխարեն: Նա խիզախ նստած եր գորշապույն, փարթամարաչ իր ձիու վրա:

Հենց վոր մենք պատրաստվում եյինք ճանապարհ ընկնելու, կայարանի դռներից դուրս ցատկեց Անդրեյը: Նա նայեց մեզ վրա և բերանը բաց մնաց:

— Վո՞րտեղից եք ձեռք բերել դուք այդ ձիերը, — հարցրեց նա:

— Դու ել վերցրո՞ւ, ա՛յ, այդտեղ՝ ինչքան կամենաս, — ասաց Գավրիկը և շարժեց գլուխը դեպի ցանկապատի մոտ կանգնած ձիերը:

— Իսկ դու վո՞րտեղ եյիր, Անդրե՛յ, — հարցրեց Վասիկան:

— Շոգեքարչի վրա: Յես և Կորնեյուկը շոգեքարչը կաղետական գնացքից անջատեցինք և տարանք դեպո: Այժմ այնտեղ կանգնած՝ հանգստանում ե:

Անդրեյը նույնպես իր համար ընտրեց մի ձի՝ աշխետ, վտիտ, թուով թամբի վրա, և մենք քառատրոսի արչավեցիկնք դեպի Կուբան:

Միայն ճանապարհին նկատեցի, վոր իմ ձեռքը քերծված է: Նոնակի բեկորն եր դիպել: Դե վոչինչ, կլավանա, յեթե միայն այսօր զնդակները տակ չընկնեմ: Իսկ զնդակները վզվզում էին չորս կողմից:

Կամրջի մուտքի մոտ կանգնեցինք:

Հընդոց և կամրջի վրա:

Ամեն տեսակ տնային իրերով — մահճակալներով, կաթսաներով ու տաշտերով — բեռնված սայլերը թույլ չէին տալիս հրետանային մարտկոցին անդից շարժվելու: Չիերը կատաղում ու ծառս էին լինում: Չիավոր կազակները, ոմբարկիզները ու ծանր բեռնված սայլակների միջով անցնելով՝ մտրակում էին, ով պատահում եր — և՛ ձիերին, և՛ մարդկանց: Կանայք աղմկում էին, յերեխաները լաց էին լինում:

Իսկ Կուբանի վրա սումբը պայթեց և անձրևի նման շողվեց ջրի մեջ:

Յեվ հանկարծ, հենց թնդանոթների մոտ, ընկավ սումբը: Նա, ով մոտիկ եր, նեավեց դեպի ճաղաչարը, վորն ել հենց ուղղակի Կուբանի մեջ թռավ: Մյուսները հնձած խոտի պես թավվեցին դետին, ուղղակի սայլերի անիվների տակ:

Ռումբն այնպես ել չպայթեց, բայց շատերն, անշուշտ, կորան նրա պատճառով: Կուբանի մյուս ամբը վոչ վոք չհասավ:

Միշտ նոր ու նոր սայլեր, յերկանիվներ ու կառքեր էին մոտենում կամրջին:

— Նայի՛ր, — ճչաց Վասիկան ինձ:

Լաքած կառքի մեջ նստած էին յերկու տղամարդ: Մեկը նրանցից ծաղկատար ու կորաքիթ ստամանն եր, իսկ մյուսը գյուղի ալքաղաց Իվան Մառվեյեվիչ Դերիզեմլյանն եր: Կառքի հետևից շարվել էին սայլակներ, իսկ սայլակները հետևից՝ կրկին հրետանի:



— Ե՛ր, չի կարելի այդ սողուններին կենդանի բաց թողնել, — ասաց Անդրեյը՝ ասպանդակների վրա բարձրանալով. — կարմիրները, յերևում է, կայարանն արդեն վերցնում են: Լսո՞ւմ եք՝ ինչպիսի թխթխոց է այնտեղ: Պետք է սրանց կանգնեցնել:

— Իսկ ի՞նչպես կազմես դու նրանց, — հարցրեց Իվան Վանյուկովիչը:

Կուբանի միջով ծանծաղուտն անց կկենանք ու ճակատից կխփենք: Հետևեցե՛ք ինձ:

Անդրեյը մարակեց իր ձիուն, ափով քշեց դեպի ավազակույտը: Մենք արշավեցինք Անդրեյի հետևից: Ավազակույտի ափը գահավեժ էր, քարքարոտ: Ձիերը ճանկուում էյին քարերը սմբակներով, դեպի գետն իջնելիս, բայց ասա Անդրեյի ձիու վոտների լողից ջուրն արդեն լայնորեն լափին է տալիս: Յետ չենք մնում նաև մենք: Ձիերը հասնում են մինչև խոր տեղը և ծանր հեալով, ընթանում են լողալով: Վերջապես, ասա և ափը՝ ցածր, թեթև զառիվայրը, մատող թփուտով: Մենք անց ենք կենում թփերի միջով ու սլանում դեպի կամուրջը:

— Լցրեք, — գոռում է Անդրեյը:

Մինչև կամուրջը դեռ հեռու յե, բայց մենք լսում ենք ինչ-վոր զարկեր՝ և՛ հատ-հատ, և՛ խմբովին: Կամրջի այս կողմիցն են կրակում — կադետների ճակատին: Ուրիշները, յերևում է, շուտ են անցել Կուբանը:

Այլելի յենք մոտենում: Համարյա հենց կամրջի մոտ պառկած է շղթան:

— Ապա մի նայի՛ր, նրանք չլեմներով են — բուդյոնովիկաներով: Կարմիր բանակայիններ են դրանք, — գոռում է Գավրիկը մեզ առաջ տալով:

Այո՛, դրանք կարմիր բանակայիններ են. նրանք պառկած են գետնի վրա, հրացանները բռնած, իսկ բլրակի մոտ՝ անտառում, փնչացնում են նրանց ձիերը:

— Ո՞ւր եք գնում, ո՞վքեր եք, — աղաղակեց մեզ գետնի վրայից մի կարմիր բանակային՝ շղթայի վերջինը:

— Մերոնցից, բոլշևիկներ, պատասխանեց Անդրեյը՝ յետ տալով ձին:

— Դե պառկի՛ր, յեթե այդպես է, — ասաց կարմիր բանակայինը:

Մենք ձիերից իջանք, տարանք նրանց անտառակը՝ բլուրի մոտ, իսկ ինքներս պառկեցինք կարմիր բանակայինների կողքին: Նրանք ունեյին յերկար հրացաններ, իսկ մենք՝ կարճիկ:

Աջ թևից հնչեց հրամանը.

— Կրակե՛լ:

Մենք ել բոլորի հետ միասին խփեցինք կամրջին: Առաջինը, յերկրորդը, յերրորդը...

Սկզբում կամրջից պատասխանում էյին անկանոն զարկերով, իսկ հետո հրաձգությունը հանդարտվեց, և հանկարծ ամբողջ այդ սողնավաճառը, վոր կամուրջը փակել էր, յետ դարձավ դեպի դյուրը:

Ի՞նչ էր կատարվում այստեղ: Մի սայլը մյուսի վրա յե քշում, հեծյալները համարյա դլխների վրայով են անցնում, հրետանայինները կտրատում են ձգափոկերը, թափում են իրենց հրանոթները, և ով ուր կարող էր...

Այսպիսով կարմիր հեծելավաճան այդ ուրը կադետներից դրավեց ութ թնդանոթ, յերկու տասնյակ գնդացի, մի զենրալ, յերեք գնդապետ, ստանիցայի ատամանին և գնացքը փախստականներով:

Կայարանում և ստանիցայի վարչության վրա կարմիր դրոշակներ բարձրացրին:

Նույն ուրը յերեկոյան դեմ մենք պատահեցինք Սուբբոտինին:

Միտինգումն էր այդ՝ դեպոյի առաջ: Հինգ-վեց հազար մարդ էր հավաքվել և՛ շեներից, և՛ կարմիր բանակայիններ, և՛ դյուրացիներ:

Հոկտոբրները խոսում էյին արհեստանոցների հենց պատուհանների տակ՝ բաց վազոնների վրայից:

Բոլոր ճտերը վերջանում էին միեմնույն բանով.
— Վերջ տանք շահագործողներին, բանվոր դասա-
կարգի խեղդողներին: Կեցցե՛ խորհրդային իշխանու-
թյունը:

Մեր ջոկատը միտինդի յեկավ իր լրիվ կազմով,
հրացանները ձեռներին: Ափսոս միայն, վոր ստիպված
յեղանք հեռու շարքերում կանգնել: Յես, Սենկան և
Անդրեյը տեսնում էինք խոսողներին, բայց ահա Վաս-
կան միշտ բարձրանում եր վոտքերի ծայրերի վրա և
միշտ դանդատվում եր, վոր վոչինչ չի տեսնում:

— Այդ ո՞վ ե խոսում, հարցրեց նա, յերբ վազոնի
վրա բարձրանում եր նոր ճտախոսը:

— Չգիտեմ, ինչ-վոր հրամանատար ե, թե կոմի-
սար կաշվե պիջակով, — ասաց Գավրիկը:

— Բայց դա Սուբբոտինն ե, — աղաղակեց Վաս-
կան: — Յես ձայնից եմ ճանաչում, վոր Սուբբոտինն ե:

Այո՛, դա մեր հին ծանոթն եր, մարտկոցի հրամա-
նատարը, Սուբբոտինը: Նա այնպես ծերացել եր ու
լայնատարած մորուք եր թողել, վոր մենք հազիվ
ճանաչեցինք նրան:

— Իսկ ո՞վ ե այնտեղ նախագահը, — հարցրեց Վաս-
կան:

— Իլյա Ֆեոդորովիչը:
Վասկան բավականությամբ ժպտաց, կարծես վոչ
թե իր հորը, այլ իրեն էյին նախագահ ընտրել:

Իսկ յերբ միտինդը մոտենում եր իր վախճանին,
Վասկան ձեղքելով առաջ անցավ: Նա անաբայման ցան-
կանում եր խոսել Սուբբոտինի հետ:

Սուբբոտինը նստել եր բաց վազոնի վրա Պորֆի-
րի կողքին և ծխում եր:

— Ա՛, Վա՛սկա, — ասաց Պորֆիրին: — Հը՛, ի՞նչ-
պես ե: Քեզ չե՞ն սպանել: Դե՛, մոտ նստիր մեզ:

Պորֆիրին ձեռքը մեկնեց Վասկային և քաշեց
նրան վազոնի վրա:

— Դա պարտիզան ե՛ յերիտրանակից, — ասաց նա
Սուբբոտինին, — առաջինը մեր ջոկատում:

Բայց Սուբբոտինը ինքն ել ճանաչեց Վասկային:
— Բայց ի՞նչ մեծացել ես դու, Վասկա: Բոլորովին
զնդակի էյիր նման, իսկ այժմ, տես, ինչպես ես բարձ-
րացել:

— Իսկ ինչո՞ւ, — հարցրեց նրան Վասկան, — դուք
այն ժամանակ ինձ բարև չեյիք ուղարկել, ընկեր
Սուբբոտին:

— Յե՞րբ այն ժամանակ:
— Ռազմաճակատից, յերբ Սեմյոն Վորոնովը ձեզ
մոտ եր:

— Ե՛, սիրելիս, — ասաց Սուբբոտինը, — բոլորին
եւ չես կարող հիշել: Այն ժամանակ ուղմաճակատում
չափազանց զբաղված էյինք: Բարևի ժամանակ չեր:

Բայց Սուբբոտինը ինքն ել ճանաչեց Վասկային:
— Բայց ի՞նչ մեծացել ես դու, Վասկա: Բոլորովին
զնդակի էյիր նման, իսկ այժմ, տես, ինչպես ես բարձ-
րացել:
— Իսկ ինչո՞ւ, — հարցրեց նրան Վասկան, — դուք
այն ժամանակ ինձ բարև չեյիք ուղարկել, ընկեր
Սուբբոտին:
— Յե՞րբ այն ժամանակ:
— Ռազմաճակատից, յերբ Սեմյոն Վորոնովը ձեզ
մոտ եր:
— Ե՛, սիրելիս, — ասաց Սուբբոտինը, — բոլորին
եւ չես կարող հիշել: Այն ժամանակ ուղմաճակատում
չափազանց զբաղված էյինք: Բարևի ժամանակ չեր:

Այն, ինչ պատմված է այս վիպակի մեջ, հնարովի չէ:

Ի հարկե բոլոր մանրամասնությունները հիշել չեա կարող, ահամայնից Վորեւե բան էլ պետք է հնարես:

Բայց ջոկատի մասնակիցները— վիպակիս հերոսները—իսկական են և վոչ հնարովի մարդիկ:

Նրանցից շատերը մինչև այժմ էլ կենդանի յեն և գեռ բավական յերիտասարդ: Մեր ջոկատից ամենամեծերը—Անդրեյը, Իվան Վասլյեվիչը և Սեմյոն Վորոնովն ընդամենը յերեսնական տարեկան են: Նրանք այժմ ճարտարապետներ են և աշխատում են յերկաթուղու վրա: Իզուր չի, վոր դեպոյակահանների զավակներ են:

Ամենափոքրը՝ Վասկան քսանվեցերորդ տարումն է:

Վասիլի Իլլիչ Կոնստանտինովն այժմ ծառայում է վորպես մարդատար զնայքների մեքենավար: Գնացքները տանում է հենց այն տեղերով, վորտեղ մի ժամանակ սլատերազմում էյինք: Նորերս յես նրան հանդիպեցի Միներալնիե Վոդի կայարանում: Յես կուրորտ էյի գընում: Կառամատույցի վրա, շողեքարչի մոտով անցնելիս, տեսնում եմ, վոր մեքենավարը պատուհանից դուրս ցցվել, մաքուր ող է շնչում, յերեսից քրտինքը սըրբում: Յես նրան իսկույն ճանաչեցի,— չե՞ վոր տարիներ էյինք կողք-կողքի անցկացրել:

Մենք միասին ենք յեղել վոչ միայն ջոկատում, այլև Կարմիր բանակում, վորի մեջ մտանք, հենց վոր բոլշևիկները յեկան (այն ժամանակ Վասկան գեռ նոր էր մտել տասներեքի մեջ):

Միասին յեղել ենք և՛ Բազմում, և՛ Լենքորանում, և՛ Պետրովսկում, և՛ Սաչմազում, և՛ Դերբենդում, և՛ Պարսկաստանի սահմանի վրա:

Պատերազմում էյինք Ազրբեջանի բեդերի դեմ, անգլիական ինտերվենտների դեմ և առհասարակ բանդիտների դեմ:

Ի՞նչպես կարելի յեր չճանաչել հին ընկերոջը:

Իսկ Գավրիկին, մեր ամենալավ նշանաճիգին, Պերեկոսլի տակ վրանգելականներն սպանեցին:

Հերոս էր նա մեր ջոկատում և հերոսաբար էլ մեռավ:

Յեթե ձեզ հետաքրքրում է այս վիպակի հեղինակի ճակատագիրը, մի քանի խոսք էլ նրա մասին տեմ:

Յես սովորում եմ Տոլմաչեվի անվան Ռազմաքաղաքական ակադեմիայում:

Այդ ակադեմիան պատրաստում է ուսուցիչներ և պրոֆեսորներ զինվորական դպրոցների համար:

Միայն թե ինձնից պրոֆեսոր դուրս կգա թե չէ—այդ յես չգիտեմ: Ինձ հարկավոր է գեռ բավական աշխատել:

Այն տարիներում, վորոնց մասին խոսվում է այս վիպակի մեջ, յես ու իմ ջոկատակից բոլոր ընկերները քիչ բան ենք սովորել: Ուսման ժամանակը չէր: Դրա փոխարեն այժմ մեր բոլորի առաջ լայն ճանապարհ է բացված:

Ամեն մեկը գտել է իր կոչումն ու տեղն այն յերկրում, վորը սոցիալիզմ է կառուցում:



Խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ խմբագիր՝ Ա. Գասպարյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե. Տեր-Մինասյան

Գլավիլիտի լիազոր Վ. 2039. Հրատ. 4506.
Պատվեր № 172. Տիրած 3000.
Թուղթ 62x74. Տպագրական 16 մամ.
Մեկ մամուլում 24,480 նիշ.
Հանձնված է արտադրութան 15 II 1938 թ.
Ստորադրված է տպագրութան համար 10 III 1939 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

Г. Мирошниченко
ЮНАРМИЯ
Из Арм ССР, Ереван, 1939



4 n 604

352

4304